Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

3238

28
U-31
1825

2010

ՄԱՍԻԼԵՈՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԼԵՐՄՈՆԱՑ

ՓՈՔՐԻԿ ՔԱՌԱՍՆՈՐԴՔ

Ք 2001

11215

28
4.
15-31

ՄԱՄԻԼԵՈՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԼԵՐՄՈՆԱՅ

ՓՈՓՐԻԿ ՔԱՌԱՍՆՈՐԴՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Հ· ԱՐՄԷՆ ԿՈՄԻՏԱՍ ՏՊԱԳՐԱՏՈՒՆԻ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1865

11215



5007
47

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Տասնեքին քարոզքս կամ ճառք բարոյականք Հոգեշունչ Ճարտարախօսին՝ Եպիսկոպոսին Մասիլեոնի գալլիացւոյ, խօսեցեալ են ի քառասնորդս 1717 ամին յաւետեն Լուդովիկոսի կամ Լուդուիկեայ արքայի ԺԵ, և արքունեացն և աւագանւոյն, մինչդեռ տակաւին ինն-նամեայ մանուկ կրտսեր էր արքայն՝ որդի Թոռին Լուդուիկոսի Մեծի ԺԴ: Զի սա միայն էր ապացեալ յօրինաւոր Թագաժառանգաց նորին. իսկ հէք որդի նորա և Թոռնն յուսադիր, որպէս և Ադելայիդ տիկին՝ մայր արքայի մանկանն և եղբայր մի նորա Հնգամեայ, վաղամեռիկ մահուամբ զբաւեցան՝ գրեթէ երեքին միանգամայն ի միում ժամանակի, յերկարակեաց Թագաւորութեան և ի խոր Ծերութեան Մեծին. և տէրութիւնն էր ընդ խնամապետութեամբ Փիլիպպեայ իշխանին Օռլէանայ, եղբօրորդւոյ նորին, և աւագախումբ աւենի խորհրդականաց:

Ծանր խրատաք և մեղմով իմն խիստ յանդիմանութիւնք Հոգեառնդն քարոզչիս յունկն այնպիսի ակմբի՝ մի ումեք զարմանս Թուեցին, զի առաւելագունի քան զայնս կարօտ էր ժամանակն, և ոմանք յունկնդրաց անտի, և նոյն իսկ խնամակալն պետութեան. յորոց և Ճարակեցաւ ժանան ընդ անցեալ գոյն դրեթէ բովանդակ: Սակայն ազգին և արքունեացն պատկառանքն, խոհականութիւն քարոզչին, Թերևս և զգուշութիւն նորա ի գնդիռապղելոյ մանկանն անմեղ, յայսչափ ևեթ համարձակեցին զնա. որում եթէ քաջ ոք միտ դնիցե, ոչ շատ լինչ պակաս գտցէ ապացեալ քան զարժանն, կամ հակառակ լինչ աւետարանական անպատկառ բնմբռասցի. Թէպէտ և պըտուղ՝ գհակառակն երևեցոյց դարն: Բայց են և որ կարծեն, Թէ ողջամիտ՝ արդար և անմեղ համարձակախօսութիւնք լինչ ճառից ի

նզաւառ իրաւանց ժողովրդեան՝ պատճառս իմն իցեն տուեալ անիրաւ ապարատանութեան ոամկին և մատենագրաց ոմանց, որոյ կատարածն թէ զինչ եղև, վկայէ պատմութիւնն. և գոն իսկ ցայսօր ակա-նատեսք անցիցն անցեալոց:

Իսկ 'ի ճառիցդ ասասի, ասիցէ ոք, զինչ օգուտ ազգիս մերում, ո-րոյ ոչ թագաւոր է հայախօս, և ոչ իշխան ոք պետական: — Սա-կայն են և իցեն առաչնորդք, աւագք և մեծամեծք ըստ կարգի և աշ-խարճանի՝ եկեղեցականք և աշխարհականք. և նոցա 'ի շահ մեծ կա-րէ լինել, եթէ կամիցին միայն՝ ոչ իմանալ և եթէ զատուածեղէն և ղղծնութեան խրատան, այլ և յանձինս իւրեանց պաշտաճել երկիւ-ղած մաօք և արտիւ: Թող զի 'ի հոգևոր և հանճարեղ պերճաբանու-թեան մի մի չքնաղ և նախանձելի գոհար ականք են ճառքս, 'ի փո-քու մեծապինք:

ՄԱՍԻԼԵՈՆԻ

ՓՈՔՐԻԿ ՔԱՌԱՍՆՈՐԴԻ

ՔԱՐՈԶ Ս.

Ի ՏՕՆԻ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ՕՐԻՆԱԿԻ ՄԵԾԱՄԵԾԱՑ

Ահա սա կայ ի գլուխն և ի կանգնուն բազմաց ի մէջ Իսրայելի:
Դատ. Բ. 34։

ՏԻՐ ԱՐՔԱՑ,

Ահա վճռակ է Թագաւորաց և իշխանաց աշխարհի, զի կան ի կորուստ և ի փրկութիւն մարդկան. և ի տալ Երկինից զնոսա յերկիր, մարթի ասել զնոսա շնորհս կամ պատուհաս՝ յոլորմունքենէ կամ յարդարութենէ նմին պատրաստեալս ժողովրդոց:

Այո՛, Տէր ազգաց, յաւուրն բարութեան՝ յորում ընծայեցար աշխարհիս գալ՚ի խաչելութիւն, և ածեալ ՚ի տաճարն սուրբ՝ կնքեաց զքեզ քահանայապետն ՚ի վերայ սեղանոյն՝ սրբով նշանաւն հաւատոյ, ձշմարիտ էր ասել զքեզն. Մա՛նուկս այս մեծաշուք՝ ծնեալ է ՚ի կորուստ և ՚ի փրկութիւն բազմաց:

Յիսուս ինքնին՝ ի ժառանգէն այսօր ի տաճարին զնոր Թագաւորութիւն իւր, չէ ազատ յօրինաց աստի: Օրինակք իւր և պանչէլիք և վարդապետութիւն, որ գործէ ընդ են ի զիրկութիւն յոգնահոյլ հօտին Իսրայէլի, չիցեն արդարև պատճառք պղծման և գայթագղութեան այլոց հրէից, բայց եթէ յանհաւատութենէ իւրեանց, որով առաւել անպատասխանի լինիցին. և նոյն աւետարան՝ ելոյզ կիսոց ի փրկութիւն և յազատութիւն, այլոց՝ ի կործանումն և ի դատապարտութիւն:

Երանի՛ իշխանաց և մեծամեծաց, եթէ արբուիցեն նոցա միայն ինչ պատճառ պարտուի և գայթագղելոյ արանց ապականելոց, և օրինակք նոցա՝ իբրև զՅիսուսին՝ մի լինիցին ի խոչ և ի խութ և ի գատապարտութիւն ախտի՝ բայց միայն առաւել ևս անպատասխանի զնոյն կացուցանելով, և օրինակ լինելով առաքինութեան և պատասպարան:

Վա՛ն որոյ, եղբարք իմ, դուք՝ զորս Խնամքն աստուածային բարձրացոյց քան զայլս ի մարդկանէ, մանաւանդ դու, Տէր ազգայ, զոր ձեռն աստուածեղէն՝ պահապան ազգայութեանս՝ կոչեաց ի միջոց կործանման և աւերակաց տանն ազգունի, ա՛ւ ի կանգնելոյ զքեզ ի վերայ գըլխոց մերոց, դու՝ զոր իբրև զկայծակն լինչ պատուական՝ արծարծեաց ի ծոց ստուերաց մահու, ուր զմեծափառ տոհմն քո չնջոյց, ուր և դու լինքնին ի չնջանել կայիր, այո՝ Տէր ազգայ, դարձեալ առնուա՛ ասել, այդ աւադիկ է պատրաստեալ քեզ յերկինից վիճակ. կաս դու ի կորուստ և ի փրկութիւն բազմաց. Ա՛ա կայ ի գլորումն և ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայէլի:

Իշխանաց և մեծամեծաց օրինակք ի մի յայս կամ ի միւս կողմ շրջին անհրաժեշտ. անմարթ է նոցա միայն առանձինն կորնչել կամ փրկիլ: Այս ճշմարտութիւն մեծ՝ լինիցի հիմն ճառիս:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԻՐ ԱՐՔԱՅ,

Քանզի առաջին յօժարութիւն ժողովրդոց է՝ ի նմանութիւն կրթիլ թագաւորաց, և թագաւորաց առաջին պարտք են՝ օրինակ բարի տալ ժողովրդոց: Դուշնաքեայ մարդիկ՝ անձանց ևեթ ծնեալ թուին. յոտնութիւնք նոցա կամ՝ լատնութիւնք՝ իբրև զբախտ նոցին՝ նսեմ են. խառն ընդ խուճն խուժանին, թէ անկցին, թէ հասատատուն կացցեն, անծանօթ մնան յաշխարհին. կորուստ նոցին կամ փրկութիւն անձամբք չափ իւրեանց սահմանի. կամ դէթ օրինակ նոցա, թէ և հրապուրեալ սաբրիւրեսցէ երբեմն յառաքինութենէ, սակայն հարկ առնել և համարձակիլ զչարութիւն ոչ ունի:

Իսկ իշխանք և մեծամեծք՝ վասն այլոց թուին ծնեալք: Աշխարհանն՝ որ՝ ի սեսիլ և յերևանի կացուցանէ զնոսա, նոյն և կաղապար զնոսին արկանէ. բարք նոցա անդին վալվալակի փոխին՝ ի բարս հասարակաց. համարեալ լինն այնպէս, թէ արժանաւորքն մեծարանացս՝ չիցեն անարժան նմանութեան մերում. խառնաղանձին չիք այլ լինչ օրէնք քան զօրինակս իշխեցողացն. վարք նոցա՝ որպէս թէ բուսեալ բողբոջեն՝ ի ժողովրդեան. և թէ ախտք նոցին դառնիցեն լինչ պարսաւագիտս, բազում այն են՝ որ՝ ի նմանելոց նոցա խակ իցեն:

Վասն որոյ՝ մեծութիւն, հաճոյակատար կարեացս, ճշնշէ և նեղէ զնոսին, և որպէս ոմն՝ ի հինոց ասէ, ըստ համարձակութեանս զոր բարձ և պատիւ թուին տալ մեզ իշխանութեամբն, նոյնչափ և հատանեն՝ ի մէնջ վայելչութեամբք պատշաճութեանն [1]:

[1] Այսպէս՝ ի վերադրն բախտ՝ նուագադրն է համարձակութիւն: ՍԱԼՈՒՍՏ:

Այլ ուսոյ ծնանիցին միշտ այս անհրաժեշտ արդասիք օրինակի մեծամեծաց ի ժողովրդեան: Աւասիկ պատճառքըն. ի վնասց ժողովրդոց՝ անախտութենէն և փոյթ հաճոյ լինելոյ, ի վնասց աւազորերոյն՝ ընդարձակութենէն և մշանջենաւորութենէն:

Ջանախտութենէն դնեմ ի վնասց ժողովրդոց. և արդարև յիրաւի, եղբարք իմ. աշխարհ միշտ անթարգմանելի, յամենայն ժամ միապէս յամօթ մատնեաց զյոռութիւն և զլաւութիւն. ծայր առնէ զայր արդար. բիւր սաքօք խոցոտէ զայր անառակ. ախտք և գործք բարութեան նոյնպէս պատճառս տան նմա ծաղու և ըստգտանաց. և այլանդակութեամբ լինի՝ զոր հաճոյք իւր ևեթ գիտեն իրաւացուցանել, գտեալ է հնարս՝ քամահանս ածելոյ զյոռութեամբ, և միանգամայն զառաքինութեամբ ծաղս: Արդ, օրինակք վեհութեան մեծամեծաց՝ համարձակեալ զսխան, ի փառս ածեն զամօթ նորին և զանարգութիւն, և մերկանան ի նմանել զանդոանելին յաչս ժողովրդեան. կարկք նոցա փութով փոխին յայլս՝ ի նոր նշանակս պատուոյ, և անապարծութեան միայն է հանել նոցա նախանձաւորս:

Ազգս մեր մանաւանդ՝ առաւել իմն անախտ կամ թեթեւամիտ, որպէս բամբասի, և կամ, առ ուղիղ ևս ասել ի պատիւնդին, առաւել սիրասէր և մեծարող աւազացն, փառս իւր համարի օրինակել յանձին զբարս նոցա, որպէս և զսխրեքն զնոսա՝ պարտս. հեշտալի իմն է նմանութիւն նոցին, որ մերձեցուցեալ զմեզ ի գնացս նոցա՝ թուի իմն և հուսալ մատուցանել ի կարգս նոցունն: Որ միանգամ ըստ աւազամեծար օրինի լինչ լցեմ, պատուաւոր լինի ամենայն. և զանախտութենէն բաղում անգամ տանի հանէ ըզմեզ յանչափութենէն՝ յոր ի բնէ ոչ լինչ յօժարեմք: Քաղաքս խորհանալ կարծէ, եթէ ոչ ձգիտեսցէ յանձին ըզբարս արքունեացն. աննշան քաղաքացին գիտէ կրթելոյ մեծամեծացն անկարգութեան՝ գմեծութեան և զանձնաւա-

կանուխեան դրոշմն համարի տպաւորել յախտս իւր. և զանառակուածին՝ յորմէ ախորժակն իսկ ընդ փոյթ տաղտկանայ, միանգամայն առնէ անափառուածն:

Իսկ նմին հակառակ, Տէր արքայ, 'ի սիրուեցեան՝ յորում աւագորեաքն և մանաւանդ թագաւորն առատաձեռնք էին՝ ամենայն ինչ յիւր կարդ մնանէր: Ի պատուի է բարեպաշտուեցիւն՝ ուր մեծամեծ օրինակք էին նորա. ոչ ևս երկնչէին արդարքն 'ի ծաղրուէն՝ զոր աշխարհ հեղու զառաքինուեցեամբ, որ և խոչ և խուեցի ընդ ոտս է ոչ ոց տկարաց. զոյ երկնչել յԱստուծոյ՝ աներկիւղ 'ի մարդկանէ. առաքինուեցիւն՝ չէ օտար յարքունիսն. անկարգուեցիւն ինքնին ոչ բարձր 'ի գլուխ շրջի անդ, հարկի թաքուցանել զանձն, և զիմաստուեցեան առնուլ կերպարանս. չյօրանոյ անառակուեցիւն՝ արքունի ճոխուեցեամբ փերևեեալ. և յոռուեցեան՝ եթէ չպակասիցէ ինչ, նուազ զնոսէ զոյեցագղուեցիւնն: Միով բանիւ, բարեպաշտուեցեան պարտք անցանեն 'ի կարգ հասարակաց, զառնան 'ի բարեվայելչուեցիւն՝ 'ի նմին իսկ աշխարհէ պատուիրեալ. արհամարհեցի Թերևս տակաւին պաշտօնն յամպարշտէն 'ի ծածուկ, բայց գէթ զվրէժ նորա խնդրէ մեծափառուեցիւն և հասարակաց վայելչուեցիւն: Տաճարն սուրբ՝ տեսցէ դեռ ևս մեղաւորս և անհաւատս առ ոտս արքունեան սեղանոցն, այլ ոչ ապականարարս. նախանձ վեհափառ հաւու [1] հօրն քոյ՝ անաչառ օրինօք պատուհասակոծ առարեալ էր յաշխս, և միշտ ցասմամբ իւրով և ընդ վայր հարկանելով ծիւրեալ ծնգեալ յարքայուեցեան իւրում զայս գայթագղուեցիւն: Գտանիցին դեռ ևս արք ապականեալք՝ որ զտացին զսիրտս իւրեանց Աստուծոյ, այլ ոչ ժպրհեցին զանալ զհարկ պաշտաման նորա: Հակիրճ ասացեալ, մարթ էցէ տակաւին կորնչել դիւրաւ, բայց գոնէ ոչ ամօթ ինչ էցէ վրկիլն:

[1] Լատուիկեայ ԺԴ. առնզերաշնչակ Թագաւորին Գալլից:

Արդ, աւագացն օրինակ Թէ և առ այլ ինչ չօգնէր, բայց 'ի համարձակել զառաքինութիւն և մեծարոյ ընծայեցուցանել յաշխարհի, 'ի թօթափիլ 'ի նմանէ զանօրէնն և զանզգամ ծաղրն՝ յաշխարհէ անտի ածեալ զնովաւ, և 'ի պահել զարդարս յապղտղութենէ ձաղանաց և խծբծից, և 'ի յայտ առնել՝ Թէ ոչ ամօթ ինչ է մարդոյ պաշտել զԱստուած զարարիչ իւր և զնամսող, և Թէ պաշտօն նորա՝ պարտք են արարածոյ փառացի և մեծապատիւ, և Թէ անուն ծառայի Քարձրելոյն՝ բիւրոց իմն մեծ և ճշմարիտ է քան զամենայն շքեղ և մնոաի փառս, որ բակ ունին զԹագաւորաբքայից. Թէպէտ և չէր յայլ ինչ օգուտ օրինակ մեծամեծաց բայց յայս Աւետ, քանի պարծանք էին կրօնից, և քանի առատաձիր օրհնութիւնք 'ի վերայ տէրութեանն:

Երանի ժողովրդեան, Տէր աղբայ, որ 'ի տեարս իւր գտանէ իւր օրինակս. որում մարթի զնմանութիւն բերել զայնոցիկ՝ զորս պարտի մեծարել, որ անդստին յօրինակաց նոցա ուսանի հնազանդ լինել օրինաց նոցին, և ոչ ասիպի դարձուցանել զերեսս յայնցանէ՝ որոց զհարկ ծառայութեան պարտի հատուցանել:

Բայց Թէպէտ և անապարծութիւն ժողովրդոց էից ի միայն բաւական առ 'ի նմանութիւն կրթելոյ օրինակի մեծամեծաց, փոյթ և յորդորումն հաճոյ նոցա լինելոյ՝ այնչափ նախանձաւորս յարուցանէ գործոց նոցին, որչափ իշխանութիւն նոցա ըղձակերտս առնէ զընտրհս նոցուն:

Մանուկ արքայն Ռոբովամ մոռանայ զնորատս հօրն՝ 'ի մատնագունին 'ի Թագաւորս, մանկան անհանճար կոչի անդէն յառաջին բարձս, և անկարգութեանց իւրոց նմանող եղեալ՝ մանմուտ առնի 'ի շնորհս նորա:

Մեծամեծք գովութեան ցանկան. և զի քան զամենայն գովեստ քաղցր է նմանութիւն և անեղկեայ, 'ի կրթի նմանութեան նոցին՝ անշուշտ հաւասարիք հաճութեան համարին. խնդալից լինին ընդ գտանելն 'ի նմանողս իւրեանց զիբաւունս ախտից, և ախտիւ հաճութեամբ որոնեն 'ի շար-

ջակայս խրատանց՝ որով յապահովացին ընդդէմ անձանց խրատանց։

Վասն որոյ, փառասիրութիւն՝ որոյ միշտ երկայն են և տաժանաւոր ձանապարհք իւր, ուրախ լինի հոգեդէ իւր ուղի կարճ և զուարճալի. հեշտութիւնն՝ գոգցես միշտ անմիաբան ընդ պայմանի կենաց, ձարտարապետ և սպասաւոր մնանէ այնմ. ախտք զգուեալք ինքնին՝ ի յօժարութեանցս, գոանեն նոր լինի հրապոյրս եռանդեան յակնկալութեան փոխարինացն. համօրէն զրկիւք ձակատ տան միագունդ ընդդէմ առաքինութեան. և եթէ գժուարին ի զգոյշ կալ՝ ի հաճոյական ախտէ, քանիօն գժոխամարտ եղէ՝ ի բաց ձողոպրել՝ ի նմանէ՝ յորժամ պատուիրէ և զմեզ։

Այս աղէտք են, Տէր արքայ, մեծամեծաց զորս՝ ի քարշ ածեն անիրաւութեան կարիք. օրինակ նոցա եղծանէ զամենեսին զհնազանդեալս իշխանութեան իւրեանց. ընդ բաշխոյս ընտրհացն ափեալ տարածանեն զբարոյս իւրեանց. որ գամ մի ընդ նոքօք եցեն, կամին և կեալ իբրև զնոսա։ Տէր արքայ, մի՛ ինչ յարդեր՝ ի մարդիկ՝ բայց զնամ պատուոյ, և երախտիքդ չանկանիցեն յանարժանս. զոր՝ ի քեզ չմոռնան արդարացուցանել՝ դատաստ արտեա յայլս։ Որք զմեծամեծացն ախտս յանձինս բերեն, ՝ի նոսա կերպարանեալ՝ այսն առնեն զնոսին։ Աղէտք անհնարին են, յորժամ թագաւոր՝ ոչ չատացեալ մատնել զանձն յանառակութիւն, թուլցի և սուրբ առնել զայն՝ ընտրհօքն պատուեալ զայն՝ ի նախանձաւորս նորին, կամ յամօթալից սպասաւորան. որպիսի՛ կորանք տէրութեան, որպիսի՛ քարուականք շքոյ տեսչութեանն, քանի՛ վհատութիւն ազդին և յաջողակ և առաքինի հպատակաց՝ յորոց կատարեն ախտաւորութիւն զպարգևան որ անկ են ձարտարութեան նոցին և վատակոց. քանիօն քամահանք և անարգութիւն արքային՝ ՝ի միտս այլոց արքունեաց. և անտի ուրան հեղեղ չարեաց՝ ի ժողովուրդն։ Ի բարձս եկեալ բազմեալ արք ապա-

կանագործք· ախտք՝ որ ցանգ արհամարհանօք պատժին՝ ա-
րահետ եղեալք պատուոյ և փառաց· իշխանութիւն՝ որ ՚ի
պահ ղրուշութեան հաստատեալ է կարգի և պատկառա-
նաց օրինաց՝ օրինազանց չարեօք ժառանգեալք· բարք ան-
դըսանին յայլբերէն ժանտաբուղնք· աստեղք առաջնորդք
ձանապարհին՝ փոխեալք՚ի բաց մոլար՝ մեզ՚ի մոլորութիւն·
նոյն իսկ աշխարհին բարեվայելչութիւնք, ընդ որս մախայ
միշտ ախան, իբրև վաղեմի ինչ խափանեալ սովորութիւնք՝
յեռս՚ի հինաւուրց անդր զգօնութիւն հարցս հարեալք·
անկարգութիւն՝ արձակեալ և՚ի կապանաց ակնածութեան·
համեստութիւն յախտս՝ գոգ հանգոյն առաքինութեան և-
ղեալ ծանակ:

Իսկ եթէ, Տէր արքայ, զկարիս և զապարատանութիւն
փոխանակեսցեն արդարութիւն և բարեպաշտութիւն, ար-
ջասի օրհնութեանց ուղիք՚ի ժողովուրդն: Ընտրհաբաշխ՝
առաքինութիւնն, նոյն ինքն և պարգեւառու· փառք և պա-
տիւք եւանեն խնդրեն զարժանաւորն զայր խնամատուն՝ որ
փախչի յայնցանէ, և փախչին յառնէ վաճառակուբ անօ-
րէնութեան եղելոյ, որ գՀեան ունդի· պաշտամանց պետու-
թեանն հաւատարիմ լինին՝ սիրօղք բարւոյն հաստարակաց·
անուն և նենգ առ ոչ ինչ հաստացանեն· արժանիք և վա-
տակք՝ ինքնաբաւ են· ինքն իսկ արքային ախորժակ՝ չէ
ընտրոյ տէր՚ի պարզեւս իւր· ոչինչ՚ի հնազանդեալս իւր
արժանի թուի նմա վարձահատոյց լինելոյ՝ բայ՚ի ձրիոյ
օգտակարաց աշխարհին· շնորհք՝ նշանակ են միշտ արժա-
նաւորութեան, կամ գինի երթան՚ի մօտոյ· չիք ոք ածգող
՚ի տէրութեան՝ բայց միայն՚ի դաստարկ և յանպիտան մարդ-
կանէ· հեղգութիւն և փանաքութիւն միայն քրթմնջեն
զնմանատութենէ և զարդարութենէ ընտրութեանց· ձար-
ատարութիւնք բարգաւաճեն փոխարինացն ակնկալու-
թեամբ, ամենայն ոք ջանահնար լինի պիտանացու լինել
աշխարհին, և ամենայն հնարագիտութիւն փառամոլու-
թեան յայն եւթ կրթի, զի արժանի դասինցի յանկալի

բարձին: Համայն ասել, ժողովուրդք սիոփին, կաղդուրին անաւադք, ախտաւորք լքեալ մնան 'ի գայռին, փառաւորին արդարք, Աստուած օրհնաբանի 'ի մեծամեծան՝ որ յերկրի սատ ընորա տեղին ունին. և եթէ նախանձ ընդ միտ մտանելոյ նոցին՝ բուսուսցէ կեղծաւորս, թող զի թէ վաղ թէ անագան՝ անկանի դիմակն, և կեղծաւորութիւնն ինքնին ուստեք նշաւակէ միշտ զանձն, գոնեայ մեծարանք իմն է այն զոր յոռութիւնն առնէ լաւութեան՝ նորա կերպարանօքն պատռուհեալ:

Այդ աւադիկ են 'ի դիմաց ժողովրդոյն՝ զոր ինչ յօրինակէ անտի մեծամեծաց միշտ առեալ ածէ անափառութիւն և փոյթ հաճոյանալոյ նոցին. իսկ 'ի նոցա դիմաց՝ ընդարձակութիւնն է և միանձնաւորութիւն՝ որ զայն ամենայն իբրու նշան իմն ամբառնան անկարգութեան կամ առաքինութեան առ մարդիկ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ընդարձակութիւն ասեմ՝ ընչաքաղութեանն. որչափ կամակատարս ախտից առեալ արկանեն 'ի դատապարտութիւն իւրեանց և 'ի վնաս:

Եթէ անչափ իմն փառամոլութիւն սրարբեցուսցէ զնոսա, ամենայն ինչ աւեր և պատերազմ ընէ 'ի նոսա. և յայնժամ, Տէր արքայ, որչափ ազգք և աղինք 'ի սպանդ վարեալք առ կուռս ամբարտաւանութեան իւրեանց. որչափ արեանց ձագաղնք՝ որ 'ի վրէժ բողոքեն գլխոց նոցին. որչափ արկածից զըմբաղք հասարակաց՝ որոց նոքա միայն են պատճառք. քանի՛ ձայնք ողբոց յերկինս ամբառնան զարանց ծնելոց 'ի թշուառութիւն այլոց. քանի՛ մեղանք 'ի միոյ միայնոյ մեղաց ծնանին: Բաւական՛ եցեն արտասուք նոցա լուանալ զդաշտս՝ այնչափ անչափ անմեղաց արեամբ

ներկեալը. և վկայ նոցա միայն լոյծ լինէ կարօղ վէնընկէց առնել զերկինից ցասումն, մինչդեռ Թողու տակաւին վկիւ իւր ի վերայ երկրի այնքան ազմուկ և աղէտս:

Զպատերազմ, Տէր ազբայ, կալջիր միշտ առ ահագին պատուհասս ասատուածասասս՝ որովք տանջէ զԹագաւորութիւնս. քան Թշնամեացդ յաղթել, հնարեցիր ցածուցանել զնոսա: Ի պահպանութիւն ժողովրդոցդ միայն եաս քեզ Աստուած զսուսերդ, և ոչ ի Թշուառութիւն դրացեացդ: Տէրութիւնն՝ յոր կացոյց զքեզ երկինք, լայնածաւալ է յոյժ. ուստի նախանձայոյզ լեր սիրել զտառապանս իւր, քան ընդարձակել զսահմանան. ի փառս քեզ համարեա դարման տանել աղէտից պատերազմացն անցեալոց, քան ի նորանորս ձեռն արկանել. անմահացո զԹագաւորութիւնդ երջանկութեամբ ժողովրդոցդ, քան աշխարհակալութեանցդ յաճախութեամբ. մի զարդարութիւն դրծոցդ՝ զօրութեամբդ չափեր. և մի լեսցին քեզ մուսացօնք, զի և յարդար պատերազմունս անգամ՝ այնչափ աղէտս զհետ իւրեանց միշտ աղետալեալ ձգեն յաղթութիւնք յաշխարհն, որչափ նոյն ինքն արիւնայեղց խորտակումն:

Իսկ եթէ հեշտասիրութիւն քան զփառս դնեցէ ի Թագաւորն, եղիւկ. ամենայն ինչ ի կարիս նոցին արբանեկէ, ամենայն վտութայ ի սպաս պաշտամանն, ամենայն հարթէ զեղս երացն, ամենայն զցանկութիւնսն բորբոքէ, ամենայն ինչ զէն կարկառէ հեշտութեան. նպաստս լինին անարժան ծառայք, սուտակատաղաք ատն նմա շքոյ անուանս, յարտաքնոց վնասատանք նուաղեն զայն և պաճուճեն, արուեստք զամենայն ձիսն Թափեն ի ստեղծանել գունակս գունակս հաճոյից, ամենայն ձարտարութիւնք յարտրչէն բնութեան հաստատեալք ի պէտս կարգի և զարդու ընկերութեան՝ ախտին եւեթ պճնութեան սպաս տանին. ամենայն ինչ պաշտօնեայ լինի, ուսոյ և դործակից անկրաւ կարեացն: Ո՛րպէս զի ոչ բաւէ մարդ ի մեծութեան, Տէր ազբայ. ախտք որ մաշինն ժամանակաւ, անդ յաւերժանան դար-

մանոց հնարիւք. տաղտուկ՝ անբաժան յանառակութենէ՝ փարատի անդ ակնարկս հեշտութեանցն դաշնակօք. սղմուկն սուկ և շիտի պատեալ զգահիւն՝ ի բաց վտարէ ըղմտադիւրութիւն, և ոչ վայրկեան մի թողու զքաղաւորն լոկ առանձինն: Կաթանք և՝ մարգարիէք Տեառն՝ լեռն և մեղկին ի մատչելն առ նա. ամենայն ինչ ցանգ առաջի առնէ նմա զփառս իւր, ամենայն զգօրութենէ իւրմէ բարբառի, և ոչ ոք խլնէ՝ և ոչ ի հեռուստա՝ ցուցանել նմա զհիքութիւնան:

Յընդարձակութիւն իշխանութեան յաւէլ և զհռչակին. ոչ առ ազգ իւրեանց եւթ սահմանի ազդեցութիւն և ժանտաբեր արդասիք օրինակաց նոցա: Մեծամեծք տեսիլ են սիեղերաց. արարուածք նոցա ընթանան բերանոյ ի բերան, յաշխարհէ յաշխարհ, ազգէ յազգ. չիք ինչ առանձնակ ի կեանս նոցին, ամենայն համաշխարհի է. այլազգին և ի հեռագոյն անդ ազգուսիս՝ բաց ունի զաչս իւր ի վերայ նոցա իբրև զբնիկ քաղաքացին. երթան կազմեն նմանողս իւրեանց մինչ ի վայրս՝ յորս զօրութիւն իւրեանց յարուցանէ նոցա սիսերիմն. աշխարհ համօրէն հաղորդ գտանի լաւութեանց կամ յոտնութեանց նոցուն. եթէ օրէն ինչ ասել, աշխարհաքաղաքացիք ոմանք են. յամենայն ազգս և ազինս պատահէն ինչ ինչ՝ որ յօրինակաց անտի նոցա գան յառաջ, արդարութեան կամ անօրէնութեան ազանց բերեն ի նոսա է բարձեալ առաջի Աստուծոյ, և սիակից նոցա կամ առաքինութեանց ընդարձակագոյն են սահմանք քան զսէրութեան նոցին:

Մանաւանդ աշխարհս գալիլեացւոց, յոր ի վաղուց ամենայն աչք Եւրոպայ կառուցեալ կան, քան զամենայն ազգս առաւել ի տեսիլ կայ. խուռն դիմեն այսր հիւրք՝ ընդ կիրթ անցանել մերոց բարուցս, և առնուլ տանել ապա զայնս մինչև ի կողմանս հեռաւորս. նա և զմանկունս թագաւորաց տեսանելիք առ՝ անջատեալ ի հաճոյից և ի փառաւորութենէ արքունեաց իւրեանց, եկեալ այսր իբ-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՒԶԵՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՒԶԵՈՒՄ
5007
47

ըև սոսկական ոք՝ վոխանակ լեզուի և գնացից ազգին իւրեանց՝ զմերոյս առնուլ վայելչութիւն. և զի քան զամենայն՝ աշխոն արքունի զօշոսէ զաչս նոցին, յայն հայեցեալ յօրինել զանձինս ըստ խնաստուութեան և համեստութեան կամ՝ ըստ բարձրայօնութեան և անառակութեան բազմեցան՝ ի նմա Թագաւորին: Ցոյց նոցա, Տէր արքայ, Թագաւոր՝ որում կարասցեն նմանիլ լինել. լաւութիւնք քո և վարչութեանդ խնաստութիւն՝ զարմացուացեն զնոսա քան Թէ զօրութիւնդ. քանզի փառաւորութիւն արքունեացդ՝ ընդ արդարութիւն արքայութեանդ սիրացին. մի ըզդանձադ ցուցաներ նոցա իբրև զարքայն Յուդայ հիւրոցն Եկեղց՝ ի Բաբելոնէ, ցոյց նոցա զգուեշ քո առ Հպատակդ և զսէր նոցա առ քեզ, որ ճշմարիտ գանձն է Թագաւորաց. լեր օրինակ արքայից բարեաց. և՝ ի զարմացուցանել անդ զօտարս, ժողովրդոցդ կազմեացես երջանկութիւն:

Բայց ոչ ժամանակին ևեթ որերոյ պարտական են իշխանք և մեծամեծք. օրինակք նոցա դրոշմ լիմն ունին մշտնջենաւորութեան, որ ժամանէ մինչև յաւյապայ յաւիտեանն:

Յուսութիւնք կամ լաւութիւնք ոսկին՝ բազում այն է զի ընդ նոսին մեռանին. յիշատակ նոցա ընդ նոսին կորնչի, օրն յայտնութեան միայն մերկասցի զգործս նոցա առաջի տիեզերաց. այլ մինչև յայն ժամ Թաղեալ կան գործք նոցա, և ինան յաղջամուղջ տապանի աճիւնոյ ոսկերացն:

Իսկ իշխանք և մեծամեծք, Տէր արքայ, ամենայն գաւուց են. կեանք նոցա՝ իսուն ընդ անցից աշխարհին գաւուց՝ ի գալս անցանեն ընդ նոսա. կարիք նոցա աւանդեալ յարձանս աշխարհին, կամ՝ անմահացեալք՝ ի պատմութիւնս, և կամ երգեալք՝ ի ցոփ տաղս, որոգայթ պատրատեացն մինչև՝ ի վերջին յեանորդս. լի է տակաւին աշխարհ վնասակար գրուածովք՝ որոց հասուցեալ է ցմեզ զտապահակութիւնս առաջնոյ արքունեացն. զեխութիւնք մեծամեծաց ոչ մեռանին, օրինակք նոցա քարոզեացեն և

առ հեռի Թուռնա մեր զախտս նոցա կամ զառաքինու-
թիւն, և զոյդ ընդ պատմուճեան դարուն՝ ձգեցի և նոցա
կրօնիցն։

Աղքայիկ և աւադօրեղոյ, Տէր աղքայ, զմր ցանկալի
հարկ ոչ առնիցէ վիճակ նոցին՝ ի բարեպաշտութիւն և յար-
դարութիւն։ Եթէ առաւել իմն հրապոյրս գտանեն անդ
առ ախտս, զմր ուժգին խրախոյս ոչ գտանիցեն անդ և յա-
ռաքինութիւն. մր աղնուական սանձ ոչ նուաճիցէ ըզ-
գործան՝ որ՝ ի գիր անչնչելի դրոշմելոց լցեն՝ ի մատեանս
յեանոց. մր վառք պանծալի և վայելուչ՝ քան չլինել անձ
նատուր յախտս և՝ ի կարիս, որոց պղծիցէ յիշատակն ըզ-
պատմութիւն ամենայն ժամանակաց և զմարդիկ դարուց
բոլորեցուն. զի՞նչ բարեյորդոր նախանձ քան զայն գովե-
լի՝ զի Թոզուցու ոք օրինակս որ լինիցին՝ ի մեծամեծար
պարծանս Թագաւորութեանն, և աշխարհին յարձանս
յիշատակաց արդարութեան և առաքինութեան. հուսկ
ուրեմն, զի՞նչ մեծ քան ծնեալ լինել յերջանկութիւն
հանդերձեալ յաւիտեանցն, ակն ունել՝ թէ օրինակք մեր
միայն յարուցանիցեն՝ ի մարդիկ ժառանգս առաքինու-
թեան և երկիւղի Տեառն, և զի յաճիւնէ մերմէ ծնանիցին
աղգէ յազգ Թագաւորք մեզ նմանեալք։

Այս է, Տէր աղքայ, բանս ընծայիր Թագաւորաց, և այս-
պիսի երևեցաւ մեծափառ հայրդ հաւուն քոյ, Թագաւորն
մեծ՝ զոր յամենայն ժամ առաջի դիցուք քեզ յօրինակ.
ահ, եղիցի նա և ամենայն Թագաւորաց ապագայից։ Մի՛
մոռացիս քնաւ զչեռին վայրկեանն՝ յորս դիւցազնա-
գեալ ձերսունին, բարձեալ զքեզ՝ ի գիրկս իւր՝ որպէս այ-
սօր Սիմէոնին, և հայրապօրով արտասուօքն ուռղեալ և
նուիրեալ Աստուծոյ հարց իւրոց զմեծագին նշխար Թա-
գաժառանգ տոհմին, ուրախութեամբ եղ՝ ի կենաց ատեն,
զի տեսանէին աչք իւր զքաղնէլահրաշ ապրին՝ զոր գեռ ևս
պահէր Աստուած՝ ի փրկութիւն ազգին և՝ ի փառս Ի-
րայելի։

Մի, Տէր ալեքայ, մի երբեք անհետասցէ յաչացդ մեծն այն առեալ. Թագաւորահայրն մանկունէ մերձ 'ի մահ, ո-
րոյ առեալ 'ի քեզ միայն կենդանի զյոյս համօրէն շինեալ ազգատոհմին իւրոյ, յանձն առներ զմանկութիւնդ 'ի դո-
րովագութ և 'ի մեծարոյ աւանդառուն [1] նահանկար դաս-
տիարակութեանդ, որ 'ի կրթել անդ զնախաթոյս յօժա-
րութիւնդ, և դոդ զառաջին բարբառդ, փոքր մի և ահա
զվերջին շունչդ էր ժողովելոց. Հաւատայր զնուիրական ա-
ւանդ անձինդ 'ի բարեպաշտ իշխանն՝ [2] որ արժանի զար-
միդ ընէ 'ի քեզ խնասաս. 'ի հոյանուն սպայապետն [3], որոյ
իբրև առաքինութիւն ժառանգութեան ընկալեալ ես զդի-
տութիւն դաստիարակութեան Թագաւորաց, և եղեալ մի
յառաջնոց հպատակաց սէրութեանն՝ ուսուսցէ քեզ լի-
նել մեծն 'ի Թագաւորս դարուդ. յառաջնորդն [4] հաւա-
տարիմ՝ որ յեա խնասութեամբ անտեսելոց զՆկեղեցի,
պատրաստեսցէ նմա 'ի քեզ զմեծ նախանձայոյզ պաշտ-
պանն իւր. Հուսկ ապա յաղգն բովանդակ՝ որոյ որբն ես
ցանկալի, միանգամայն և հայր:

Յանկարծ անկինզ ունէր Տէրդ 'ի մոլ զնորատան զգօնու-
թեան, զոր մեծն այն Թագաւոր աւանդեաց քեզ 'ի վերջ-
ին անդ վայրկեանան՝ իբրև ժառանգութիւն քան զիւր
Թագն պատուականն:

Յորդորեաց նա զքեզ գիւրել ժողովրդոցդ. լեր նոցա
հայր, և կրկին տէր եղիցես նոցա:

Արկ նա 'ի քեզ սոսկումն 'ի պատերազմէ, և ազգ արար
չառնուլ յայնմ մտանն զինքն օրինակ. լեր իշխան խաղա-
ղութեան. զերազոյն աշխարհակալութիւնք այն են որ
շահին մեզ զսիրտս:

1 Տիկինն սեպհին Վանդատուս:
2 Սեպուհն Մէն:
3 Սպարապետն Վիլլոս:
4 Փլեւրի՝ երբեմն եպիսկոպոս Փռեժիւսոյ, և յայնժամ պաշտօ-
նեայ պետութեանն:

Յերկիւղ Տեառն խրատեաց նա զքեզ. զնա առաջի նո-
ցա անմեղութեամբ. որչափ սրբութեամբ՝ այնչափ և եր-
կանիկաբար Թագաւորեսցես:

Տէր ալքայ, վերջին բանիք մեծի Թագաւորին, նահապե-
տի ալքայական ազգատոհմիդ, եղիցին իբրև զՀայրապետին
Յակոբայ առ մահուն իւրով, կանխատացութեամբ ապաս-
նեացն յաւուր միում՝ հանդերձելոց զարմին իւրոյ. և ո՛
տայր Թէ՝ վերջին հրահանգք իւր մարգարէութեան լինէին
քոմ՝ Թագաւորութեանդ: Ամէն, եղիցի:

ԿԱՐՈՋ Բ

ՑԱՌԱՋԻՆ[1] ԿԻՒՐԱԿԻՆ ԿԱՌԱՍՆՈՐԴԱՑ

ՅԱՂԱԳՍ ՓՈՐՁՈՒԹԵԱՆՑ ՄԵԾԱՄԵԾԱՑՆ

Վարեցաւ Յիսուս յանապատ ՚ի Հոգւոյն՝ փորձել ՚ի սատանայէ։
Մատթ. Դ. 1։

ՏԷՐ ԱՐՔԱՅ,

Հրաշափառ նշանք երևեալք ՚ի ծնունդ և ՚ի մուտս կենացն Յիսուսի, չատոյն անդիտանալ դիւրին՝ թէ առ մեծամեծս է սահմանեալ զնա բարձրելոյն։

Որչափ ընդ աղօտ նշմարէ զնորընծայ նշոյլս հանդերձելոյ մեծութեան նորա, այնչափ փութայ ձեռն լարել նմա որոգայթս։ Սերունդ նորա ՚ի թագաւորազանցն Յուդայ, իրաւունք ՚ի թագ նահանեացն, կանխապուշակ մարգարէութիւնք յարուցանելոյ Տեառն յաւուրս յեղինս յազգէն Դաւթի իշխան խաղաղութեան և փրկիչ ժողովրդեան իւրոյ, որ զինչ և զմեծութիւնն Յիսուսի՝ բորբոքէ զչարութիւն փորձողին հակառակ անմեղութեան նորա։

Մեծամեծքն, Տէր ազգայ, առաջին կէտ ուշի մտաց գազանութեան նորա են. վաղագոյն ձեռն արկանէ պատրաստել նոցա հրապոյրս և ծուղակս, զի մօտակաց իսկ յայնա

1 Ըստ մեզ երկրորդ։

էն քան զայլս ՚ի մարդկանէ. և քանզի նոցա անկումն՝ է՝ բաշխաւորէ նմա և զամենեցուն գրեթէ զորոց ընդ ձեռամբ նոցա էն, գուամարէ զամենայն նեաս իւր կորուսանել զնոսա:

Փոխեա զքարկնս ՚ի հաց, ասէ ցՅիսուս. հեշտութեամբ նախ կուռի ընդ նմա. և այս առաջին վարմ է նորա արկեալ անմեղութեան:

Քանզի որդիս Աստուծոյ, յաւելու, առաքեսցէ զհրեշտակս իւր պահել զքեզ. յառաջ խաղայ փաղաքշանօքն. և առաւել վտանգաւոր է այս զէն՝ որով յոգիան լինի թուլնամախ:

Հուսկ ապա, ասաց քեզ զմատաւորութիւնս աշխարհի և զամենայն փառս նոցա. ՚ի փառասիրութիւն յանգուցանէ. և այս վերջին և անվթեպ հնարք էն, զոր ՚ի գործ արկանէ յաղթել սիարութեան նոցա:

Ա յսպէս հեշտութիւնն սկսանի ապականել զսիրտն, շողոքորթութիւնն հաստատէ ՚ի մոլորութեան, և փակէ նմա զամենայն ճանապարհս ճշմարտութեան. փառասիրութիւնն ՚ի կատար հասուցանէ զկուրութիւն և փորէ ՚ի ապառ զհորխորատն: Ցուցցուք զկարևոր ճշմարտութիւնքս, հայցեալ նախ, և այլն: Ողջոյն էջ, Մարիամ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԻՐ ԱՐՑԱՅ,

Առաջին վտանգ անմեղութեան մերոյ՝ հեշտութիւնն է: Ա՛յլ կարիք յամրաշարժք՝ ոչ բոլբոջին և ոչ հասանէն, զի այսպէս ասացից, բայց ընդ բանաւորութեան. իսկ սա կանխէ քան զնա, և գրեթէ մինչ չև ծանուցեալ զանձինս, գտանիմք ապականեալ. այս չուառական յօժարութիւն՝ աղտեղիչ բովանդակ գնացից կենաց մարդկան՝ ՚ի նախընծայ բարուց բղխէ, առաջին նեաս թուհատուր է՝ խոցոտիչ

հոգւոյ. այն իսկ է որ զսկզբնատիպ վէղ նորա եղծանէ, և անուն սպա խաղան էլանէն այլ ամենայն ախտք:

Բայց այս առաջին խոչընդոտն կէնայց մարդկան՝ դառնայ լըր՛ի դրդեալ և գործեալ խուէթ կէնայց մեծամեծացն: Յայլ մարդիկ՝ այս ողբալի կարիք կէս՛ի կէս վարէ միշտ զաէրուէթիւն իւր. խափան անկանին արդելք, կասկած ամենեցուն բամբասանաց՝ նահանջէ, ընչից հոգք և բախտին խնամ՝ արկանեն բաժինս:

Իսկ՛ի թագաւորս և՛ի մեծամեծս, կամ չգտանէ ինչ խափան, կամ թէ արդելքն դիւրաւ մերժեալք՝ բորբոքեն զայն և զայրացուցանեն: Աւաղ, զինչ արդեօք այսմ եղիցի երբեք կամք նոցա՝ յորոց՛ի ձեռս են աշխարհին դանձք: Դէպք յառաջեն գոգցես քան զտենչանսն. աչք նոցա, թէ մարթիցի ասել, գտանեն ամենայն ուրեք մեղս՝ որ՛ի պատրաստի կան ծնան նոցա. լինութիւն դարուն և արքունեացն անարգութիւն՝ հաչակաւ պատուաբանեն զյօժարացուցիչ հրապոյրս դեղեցկութեանց. անարժան մեծատանք ընծային ամօթալից լըբութեան. նախանձելի վարկանի այսպիսի բաստ խայտառակ՝ փոխանակ նզովից, և սրտիանք բաղմութեան ծածկեն զքարուհասիս մեղաց աշխարհին: Ո՛չ, Տէր ողբայ, թագաւորք ախտամոլք այլ ինչ սանձ քան զկամն ոչ ճանաչեն, և կարիք նոցա իբրև ըզհրամանն՝ անարգել և անդիմադարձ են:

Կամ է Դաւթի վայելել՛ի մեղն. անդէն ընտիր ընտիր քաջք բանակին վարին՛ի սպանդ, և այնպէս կորնչի մի միայն անառանելի վկայն անժուժկալութեան իւրոյ: Մեծամեծացն ախտից չիք ինչ ծանր և ոչ դիմակաց. վասն որոյ և կաթեցան դիւրութիւն առաւել հին զօշոտէ. հարթ և հոտղ և դիւր են առաջն նոցա ամենայն ճանապարհք մեղաց, և որ քաղցր և հաճոյ ինչ է՝ նոյն անդէն և անդ և հնարաւոր:

Երկիւղ բաղմութեան այլ հին սանձ է խեղութեան խառնաղանձին: Թէպէտ և կարի ապականեալ լիցեն բարքս, չև է ախտին կորուսեալ առ մեղ զամենայն ամօթ. կայ հին

տակաւին ամենազածուխիւն ազգային՝ որ ծածկել սիրէ զայն, և աշխարհ ինքնին՝ որ Թուի պարծել նուաւս, անարգանս ինչ տակաւին և կորանս արիանել զնուաւս. ձեռնտու է կարեցաւն, բայց պատուիրէ և բարեվայելչութիւնս տպենպիչս. տայ հրապարակաւ օրինակս սիրոյն և հեշտ ցանկութեան, բայց և ծածկութիւն և զգուշութիւն ինչ պահանջէ յախտաւորացն:

Իսկ իշխանք և մեծամեծք ընկերեալ են զայս լուծ. չունին զմարդիկ առ մեծ ինչ՝ երկնչել 'ի սպասանալ նոցին. մեծարանք ընծայեալք նոցա յամենեցունց, անհոգս առնեն զնոսա 'ի գաղտ քամահանացն. ոչ ինչ զանգիտեն 'ի բազմութենէ՝ որ երկնչի 'ի նոցանէն և ակն ածէ. և յամօթ ժամանակին, երաւամբք յուսան՝ Թէ որպէս յանձանց խրեանց՝ և 'ի կարեցաւն ակն ածէին: Ընկըղմեան որ ընդ նոսա և ընդ ժողովուրդն՝ այնչափ 'ի մեծ հեռաստան երևեցուցանէ զնա նոցա, զի իբրև 'ի չինչ ինչ նային 'ի նա. անդամանն զնեռս արձակեալս յայնքան հեռաւորութենէ և ապիկարս 'ի ժամանել առ նոսա. և գրեթէ ցանգ միայն նշաւակ ուրձանացեալք պարսաւանաց բոլորեցուն, ինքեանք ևեթ անվիտանան զայն:

Ուսոյ, Տէր ազբայ, ըստ մեծութեան յաձախեն և պարզանք առ ժողովուրդն: Բարձրութիւնն ինքնին խայթ ամբարտաւանութեան հպատակաց, առնէ զնոսին առաւել խիստ և արակնագոյն պարսաւադէտս ախտից մերոց. Թուի Թէ զոր հպատակութեամբն կորուսանեն, ըստգտանօքն չահել կամիցին. ազատախօս բանիւքն զծառայութեանն վրէժ հանեն: Ոչ, Տէր ազբայ. զամենայն ինչ օրէն համարին անձանց մեծամեծքն, և մեծամեծաց չներել ինչ ոք. այնպէս կեան, որպէս Թէ չունկնդրին զոք առեսոլ, և սակայն նոքին ևեթ են յաւէժակայ առեսել աշխարհի:

Հուսկ ապա փառամոլութիւն և բախտի խնամ՝ յայլս 'ի մոլորեցանէ՝ բաժանէ զհեշտասիրութիւն. փոյթ և չան զոր նայն պահանջէ՝ վայրկեանք են զոլացեալք 'ի հեշտ ախ-

ան. բարձրաձգութեան առնչ ընդդիմիկ գէթ զախտս միշտ խափանարարս նմին. անկար է զղջմն և զկշիռ քայլս վառասիրութեան միաբանել ընդ դիւր և ընդ յօժարութիւն՝ և դրեա թէ ընդ անպարտադ շիտթս և առահակութիւնս ախտն. հակիրճ ասել, անառակութիւն հանապազ խոչ և խութ է անհրաժեշտ առաջի գահերկոցութեան. և մինչև ցայսօր հատին հեշտախառութիւնք զբազում ակնհայութեամբ բախտ, և դուն ուրեք յառաջեցուցին զայն:

Բայց թագաւորք և մեծամեծք՝ որ ոչ ևս կարօտին իմիք ի բախտէն, չպատանեն և ոչ ինչ որ զնոցա հեշտանան ի նեղ և յանձուկ արկանիցէ. ի ծնէ ունին զամենայն, չինայ ինչ, բայց՝ զի այսպէս առացից՝ վայելել միայն անձամբք յանձինս. նախնիք իւրեանց վառատակեալ են վասն նոցա, հեշտութիւն եւեթ է նոցին զբաղումն. զբարձրութենէ իւրեանց վառահատեալ կան յերաւունան. ամենայն ինչ այլ զկարեօքն գայ:

Վասն որոյ և շատք այն են յորդւոց վառաւորացն՝ որ ժառանգեն զբարձ և զպատիւ հարցն, այլ ոչ զպարծանան և զառաքինութիւնս. բարձրութիւնն ինքնին յոր ի զարմէն հատանէն՝ խափան լինի արժանաւորութեանն. մեծի անուան եղեալ ժառանգորդս, անօգուտ թուի նոցա առնել և սեփական անձանց առանձինն. ըմբռնչանեն զպատուս վառաց՝ զորոյ չեն ձաշակեալ զդառնութիւն. նախնեացն ալիւն և տաժանիք՝ լինին երաւունք վարիկութեան նոցա և դատարկութեան. բնութիւն զամենայն ինչ վճարեալ է վասն նոցա, և ոչ ինչ թողեալ վառատկոց. և բազում անգամ շքեղ ժամանակ բարձրութեան զարմի, սուղ ինչ յետոյ ընդ անարժան ժառանգաւ, սկիզբն լինի կործանման իւրոյ և անարգանաց. որոյ յամենայն աղբիւս են և յամենայն դարս օրինակք:

Սաղոմոն զվառս անուան իւրոյ ածեալ էր մինչ ի ծագս երկրի, պայծառութիւն և վառաւորութիւն արքայութեան իւրոյ անցեալ գանգեալ էր քան զամենայն թագա-

ւորացն ասելով. որպէս մի անմիտ՝ ծաղր կայ իւրոց հպատակացն, և տեսանէ զսուտն ցեղն՝ զի զայլ ոք ընտրեն իւրեանց տէր: Սանկումնք փառաց և ճոխութեան՝ հաղիւ երբէք լինին մանկունք խնամատուութեան և առաքինութեան. և քան անձամբ ստանալ զփառս և զպատիւ՝ առաւել ապիկարաց է զժառանգեալն պահել:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Արդ, առաջին խոչ և խոսք մեծամեծաց է հեշտութիւն, և սկիզբն անոյ առնէ փորձիչն հրապուրել զնոսա. փաղաքշանօքն ջոյց դադար: Հեշտութիւն զսիրտն ապականէ ախտիւն, շողոմութիւն խնու զայն՝ ի սպառ առ աքինութիւն: Հրապոյրք դարանակալք աթոռոյն՝ հեշտանկութիւն ընչեն յամենուստ, շողոքորթութիւն լրառունս տայ: Անառակութիւն թողու միշտ՝ ի խորս հոգւոյն որդն լինչ կրծիչ, բայց ընթօրն՝ սկսրութիւն անուանէ զգխիզն, զմեղացն երկիւղ՝ ի յանդգնութիւն ածէ, և հատանէ զմիայն յոյս զգաստութեան և դառնալոյ՝ ի պատկառանս կարգի և բանին:

Որպիսի պատուհաս էնչեն մեծամեծաց, Տէր ազգայ, ազգն ծնեալք՝ ի դրուատաւէ զախտս նոցին, կամ՝ ի հաղբս լսրել նոցա անմեղութեանն. որպիսի աղէտք ժողովրդոյ, յորժամ իշխանք և գլուխք մեան լինին անձանց՝ ի թշնամիս փառաց իւրեանց. վասն զի նոքին և սխերիմք են խնամատուութեան և ճշմարտութեան: Հարուածք պատերազմանց և ամլութեան երկրի՝ հարուածք անցաւորք են, և աչող ժամանակք ածեն անդրէն վաղվաղակի զնաղաղութիւն և զառատութիւն. նեղին ժողովուրդք, բայց սեռութեանն հանճար՝ տայ նոցա յուսոյ ակնկալութիւն:

Շողոմութեանն աղէտք չեթողուն խիլք ակն ունել. թէ-

շուառութիւն են աշխարհին, և այլ ևս նորանորս սպառնան. հարստահարութիւն ժողովրդոցն պատրուակեալ յաղքայէն՝ ոչ այլ ինչ տայ կասկածել նոցա, բայց ևս ծանրութիւն հարկաց. աղխողորմ հեծութիւնք առատապանաց բազմութեան՝ խակ և խակ՝ ի սրտառունչ հաշուին. զկրաւացն և զցածուն ազգարարութիւնն՝ այլափոխէ սուտակապատութիւնն՝ ի ժպրհութիւն արժանի պատժոց, և անկարութիւն հպատակութեան ոչ այլ ինչ անուանի, բայց ապստամբութիւն և ստամբակ խեռութիւն: Տէր, ասէր երբեմն Թագաւոր ումն սուրբ [1], յամօթ արասցէ զքեզուս նենգաւորս և զչըմարտսն սուտս՝ որ խնդրեն կորուսանել զմեզ. զի ոչ այլ ինչ կրթին՝ քան ի շղոմել զմեզ:

Մի հաւատար, Տէր ազքայ, որոց համարձակիլ կամելով զանբաւ զեխութիւնս Թագաւորաց՝ առուարացուցանեն անդադար յաչս նոցին զՀոխութիւն ժողովրդեանն: Պայազատ ես արդարև ծաղկեալ Թագաւորութեան, բայց այժք ամացն անցելոց տառապեցուցին զնա. անսպառ է հառանդն հպատակացդ, բայց մի այնու չափիր զքրաւութիւնդ ի վերայ նոցա. կար նոցա ոչ գոյն ընդ երկար քան հառանդեանն. սէրք աշխարհին ընչացեալ արարին զնոսա. Թոյլ արա ոգի առնուլ յանձկութենէն. աճեցուցեալ զգութիւնոցա՝ աճեցուսցես զգանձդ: Ո՛ւնկն դիր խրատու խմաստնոց և ծերոց՝ յորս յանձն է մանկութիւն քո, որ և յաւագակացքն խակ էին խորհրդարանի մեծափառ հաւուր հօր քոյ. և յուշ լեցի քեզ ազքային Յուդայ՝ զորոյ կանխեցի ցուցի քեզ զօրինակն, որոյ ընտրեալ զնորհուրդ անմիտ մանկութեան քան զիմաստութիւն և զհասուն միտս այնոցիկ՝ յորոց խրատուցն գիտէր հայր իւր Սաղոմոն զփառս և զբարգաւաճանս ազքայութեան իւրոյ, ոզք և Թեղաթիր նմա լինէին՝ ամրացուցանել զկիզքն իւրոյ Թագաւորութեանն Թեթեւաբեռնելով զժողովուրդս իւր, յաւերակաց

[1] Սաղմ. ԺԸ. 4:

թագաւորութեանն Յուդայ զայլ ինն նոր հաւս կանգնեալ. և ի կամէն ի վեր քան զպարտս հպատակացն պահանջել, անկաւ ի սիրոյ նոցին և յօրինաւոր հնազանդութենէ: Մտահաճոյ և կամակ խորհուրդք հաղիւ ուրեք թէ օգտակար լինէին. և որ ինչ սիրելին է ազգայից՝ յաճախ թշուառութիւն նմին հպատակաց:

Այո, Տէր ազգայ, վասնաքշանօք ախտք մեծամեծաց զօրանան, նա և լաւութիւնք նոցին յոռանան: — Ախտքն զօրանան. և ո՞ր յոյս կայցէ ախտից, որ բաց ի գովութենէ ոչ ինչ այլ գտանեն զիւրեամբք: Եղիւկ. զնաթրդ նցէ առել և ուղղել զթերութիւնս որ գոլիցին, ուր ըստգեաւքն իսկ գտանեն ի մեզ ինքեանս՝ ոչ յօժարութիւնս ևս թէ, այլ և իրաւունս ինն ի ջատագովութիւն: Մեք ինքնին պաշտպան կամք ախտիցն մերոց. նցէ մարթ վարատել պատրանացն, յորժամ որ շուրջ զմեօք նցեն՝ առաքինութիւնս զնոսին մեզ կարծեցուցանիցեն: —

Լաւութիւնք իսկ նոցին յոռանան. փորձ է այս ամենայն դարուց, ասէր Արտաշէս. շողոմաթար թեզադրութիւնք չարաց թիւրեցին միշտ և զգոլեզի յօժարութիւնս լաւագունից թագաւորաց, և վաղնջուց պատմութիւնք տան մեզ զօրինակս ևրին: Եա՛ ի հնոց պապմութենանցն յայտ է... ևրզեա չար հրապուրանօք ոմանց ապականին բարեյօժարութիւնք նագաւորաց [1]: Թագաւոր անհաւատ էր՝ որ խոստովան լինի զայս հրապարակաւ առ հնազանդեալն իւր. առ աչս և անօրէն խորհուրդ սրտիզղի ուրուք՝ պղծելոց էր զամենայն զիտաւս թագաւորութեան իւրոյ. միայն հաւատարմութիւն Մուրթքէի արդել կարճեաց զբազումն՝ որ յանկանել կայր ի վերայ անմեղացն: Մի ևեթ ծառայ հաւատարիմ հասատատ բազում անգամ զերջանկութիւն արքայութեան և զփառս թագաւորի. և մի միայն սուտա-

1 Եսթեր. ժԶ. 7. քան լատին թարգմանութեան:

կասպաս՝ բաւական է եղծանել զնաւ զիտաւս ալքայի, և պատճառ լինել համօրէն ազէտից աերութեանն:

Վասն զի մարդահաճութիւն զամբարհաւաճութիւն ծնանի, և ամբարհաւաճութիւն է մահահոտ վտանգ առաքինութեանց: Մարդահաճոյն՝ ընդհուպ մեծամեծաց առնել լով անդոյ լաւութիւնս, ապ նոցա կորուսանել և զբնաձիրն. միտութիւնք՝ որ չոյս առաքինութեան էին՝ ի նոսա՝ վոխել զայն յաւիթս յոռութեանց. արութիւնն այլանդակի՝ ի յանդգնութիւն, ահաւորութիւնն՝ ի սերնդեն ազգեալ և չոյժ վայելուչ առն Թագաւորի՝ ոչ այլ ինչ է այնուհետև՝ բայց զրահապանծ գոռոզութիւն յարհամարհանս նմին և յանարգութիւն. սէրն վտառաց՝ որ խաղայ՝ ի նոսին ընդ արեան նախնեացն իւրեանց Թագաւորաց, վոխի յանմիտ անապարծութիւն՝ որ զսիրելիս առհասարակ կամի տեսանել չոտս նոցա խոնարհեալ. ցանկայ պատերազմաց՝ առ՝ ի ժառանգել զնոսին պարծանս չաղթութեան, և ոչ միայն չնուաճել զթշնամիսն, այլ և նորս բուսուցանել, և զինել ընդդէմ նոցա զսահմանորդսն և զդաշնաւորս. մարդասիրութիւնն՝ սիրելի՝ ի բարձրութեան, և դիպ առաջին ազդումն՝ ի մանկութենէ հետէ հեղեալ՝ ի սիրտս ալքայից, ամիսոկի յանչափ առատութիւն և յանխոնիր ընտանութիւն սակաւուց ոմանց սիրելեաց, և չթողու ինչ այլ՝ ի նոսա՝ բայց խստասիրտ անզգայութիւն՝ ի տառապանս ժողովրդեան, և ինքն խակ կրօնից պարտք, որում առաջին պահապանք նոքա էին, և խնամոտ պարտապուն էր տղայական հասակին, ոչ ևս ինչ երևին նոցա՝ բայց մանկուց խաղք և զբօսանք տղայութեան: Ոչ, Տէր ալքայ. Թագաւորք՝ առաքինի ծնանին յաձախ, և յօժարութեամբք՝ կարզին իւրեանց արժանաւորօք. սերունդն տայ մեզ ընտա՝ որպիսիս պարտին լինել. մարդահաճութիւնն միայն առնէ որպիսիս ենն:

Ի գովութեանց զամ՝ մի ապաւասպեալք, ոչ ոք այնուհետև իշխէ խօսել առ նոսա զնեղու ճշմարտութեան. նոքա

միայն անպիտանան՝ ի սէրս Թեան խրեանց՝ զոր նոցա ևեթ անկն էր գիտել· առաքեն զեսպանս յարքունիս և՝ ի Թագաւորութիւնս հեռաւորս խնամալ զգալստիս նոցա, և որ ինչ յարքայութեան անդ իւրեանց անցք անցանեն՝ ջիշեմ ոք ցուցանել նոցա· շաղաւաշուրթն բանք գարանեալ կան զաթոռուիքն, պաշարեն զամենայն անցս, և չուան մուտ ձըչմարտութեան: Ւ՚ան որոյ Թագաւորն միայն հիւր է՚ի ժողովոգեան իւրում· կարծէ՚ի ձեռին ունել և վարել զամենայն Թագաւորութիւնս սէրս Թեանն, և հրապարակագոյժ անգամ եղելոցն անծանօթ է· ծածկեն՚ի նմանէ զինասան, առուարացուցանեն զօգուտսն, զոտառապանս աշխարհին նուազեն· բազում մեծարանօքն խաբեն զինա· ոչ ինչ առուգութեամբ տեսանէ, ամենայն ըստ սրտի իւրում Թուի նմա:

Ա՚յս դառն կատարած է շողոքորթութեան: Սակայն, Տէր ազգայ, այս ախտ հատարակ է ամենայն ազգաւնեաց, և յատկապէս Թագաւորացն խուռն: Մանուկ ազգային Յովհաննայ պետն Յովհիգայէ՝ զնամատուն խնամակալ մանկութեան իւրոյ, և զայր՝ ընդ որ միայն հատանէր դէռ ևս ձչմարտութիւն մինչև առ դաս աթոռոյն, և ահա հրապուրեալ՚ի շողոմն գրանկացն, ասէ գնոսն, մատնեաց զանձն՚ի խորհուրդս նոցա և՚ի կարիս իւր· Շ՚ՐՔԵՑԻՆ ԳՒՊԱՆ ՅՈՎՀԱՒԱ· ՅԱՆՁԱՄ ԼՈՒԱՒ ՆՈՑԱ ԱՐՓԱՅ [1]:

Զ՚Թագաւոր բարի՝ շողոմութիւնն առնէ Թագաւոր ծըննեալ՚ի Թշուառութիւն ժողովոգեան իւրոյ· նա է՝ որ ըզդաւաղանն փոխէ՚ի լուծ բռնութեան, և չնեխելով Թերութեան ազգային՝ զառաքինութիւնն ևս յանարգութիւն տանի:

Ա՚յո, Տէր ազգայ, որ սրտիկ տերանցն, նենգէ նոցա· պատրօղ գաւաճանութիւն՝ ոչ ինչ ընդհատ տիրապետուժ

1 Բ· Մնաց· ԻԴ· 17:

է յաթոռոյ ընկենլոյն. առաջին պարտական մեծ արանք առնոսա՝ ձշմարտութիւնն է. չեք ինչ՝ ի միջի ընդ խարդախութիւն սրտիւղն և ապատամբի. ոչ ևս աղերս ինչ կայ նմա ընդ պատուոյ և ընդ պարտուց, ուր զամ մի հատաւ ոք՝ ի ձշմարտութենէ՝ որ միայն պատուէ զմարդ և հիմն է ամենայն պարտուց: Անարգութիւն՝ պատուհասն նենգութեան և ապատամբութեան՝ դրոշմելի էր և՝ ի ձակատս սուտ կապատաւութեան. յապահովութիւն աչխարհին պահանջէ լնուլ զթերին օրինաց, որք ապախտ արարեալ են հաշուել զայն ընդ մեծամեծ ոճիրս՝ որոց պատիժս սահմանեն. զի նոյն յանցանք են դրժել հաւատարմութեան ուրքայից՝ և դաւել անձանց նոցա օծելոց, զանազ՝ի նոցանէ զսուտս Թիւն՝ և զանազ զհաւատս. զի ոչ այնպէս ինչ ահագին է Թշնամին որ՝ի կորուսս մեր յոլոյ, որպէս շաղաւաշութիւն որ հնարի հաճոյ մեզ լինել:

Բայց չար և է մարդահաճութիւն՝ ի բերանս այնոցիկ՝ որ ըստ սրբութեան պաշտաման իւրեանց սպասաւոր կարգեալ են ձշմարտութեան: Երթ ասէ, ասայ Տէր առ հոգին սուտ, մուտ՝ ի բերանս մարգարէից սրբոյն Աքաաբու. յաջողեսցիս, պատրեսցես, և անվրէպ է մեղբոյն Թիւն նորա. Պոպրէոցես և կարասցես [1]: Ո՛վ ապէտք. եթէ այնչափ քաղցր են փաղաքշանք, ևս և յորժամ՝ ախտք և անհաւատութիւնք փաղաքշողին ակարացուցանեն զզօրութիւն բանիցն և յերկեսցս արկանեն, զո՞ր հրապոյրս ոչ արբուսցեն՝ եթէ և կերպարանօք առաքինութեան սքեալ երևեսցին: Չինչ անարգութիւն չկայ մեզ, եթէ և զձշմարտութեանն պաշտօն՝ դարձուսցուք՝ ի սպաս շահուց և սուտ. եթէ և յաթոռոյ սուի հրահանգաց և ուղղութեան մեծամեծաց՝ տացուք նոցա գովութիւնս սուտս առ՝ ի սպառ մոլորեցուցանելոյ զնոսա. եթէ մի միայն արահետ հասանելոյ ձշմարտութեան առ նոսա՝ ա-

[1] Գ. Թագ. իԲ. 22:

զօտ [illegible] պատրուակեան տարցի ևեթ առնուա, զրով առաւել ևս անճառելի լինիցին անձանց. եթէ ի վար առնուցուք զիաղաքուշ և զդեանաքարշ լեզուն արքունեայ ի մատչելն պատմել նոցա զաղատագիմ և զբարձրեալ պատգամն Տեառն, և եթէ ոչ միայն չկարեմք ասա վարդապետք և ուսուցիչք Թագաւորաց, այլ և լինիցիմք անարդ տրուակք անապարճութեան և բախտի: Բայց և որ ազէտք չկարեն մեծամեծացն, հանդիպել Յառագովաց ախտին լեզուանց յայնցանէ՝ որոց արժան էր լինել պարսաւիչս նոցին. լսել զգահիւն լեզուանց զագաւառս և զվարդապետս կրօնից զի խօսիցին երբեմն զդրանիկ ոք, և գտանել ողբիչս՝ ուր արժան էր գտանել Աւետարանս:

Ո՛վ դու, Տէր արքայ, զոր եդ Աստուած ի հրամանատար մարդկան, մի սիրեր ի մարդիկ՝ բայց զՔրիստոս. Թիւն, նա միայն սիրելի առնել զնոսա. խնդ զուարճին առ արտուկ բանս. արտկոցն առեալ զանձն քո, և միայն զՔրիստս քո սիրէ. գովութիւնք՝ որ առատապարիր լաւութիւնս մեզ ընծայեն, երբեմն զհրատարակաւ յանդիմանութիւն յոռութեանց մերոց ձշմարտից՝ այնպէս լուր զնոսա. յիշեա՝ զի սէր ժողովրդոց է անկասկածագոյն գովեստ Թագաւորի, բարի և խոտան Թագաւորք միատեղ գովեցան ի կեանս իւրեանց. նա և Թուի ևս՝ Թէ առ յեռինդ առաւել ջնայլեալ են մարդիկ յանարդ պաշտօնուիս. հատարակաց առաւելութիւնն տուր է Թագչել ընդ մարդահաճութեամբ: Այլ արժանի գովութեան, Տէր արքայ, և արհամարհեսցես ըզգովութիւնս:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Արդ, շղթայակապութիւնն վտակիւ զսկզբան առ Ձկնալուսնեայ է, եւ վտառապիրութիւն եւս ընդ եւս գայ՝ ժանտ սլաքուղ կուրութեանն յոր արկանեն շղթայքն, եւ մորի հանիւ յանդ զեռրեւորեան. այս յեռին լար է սիրեալ այսօր՝ ի գիւղն առաջի Յիսուսի. «Տայ քեզ զթագաւորութիւնս երկրի եւ զամենայն փառս նոցա»:

Այո, Տէր ազբայ, շղթայակապութիւնն է որ վարէ միշտ զվեճամեծան յանիւս եւ յանհեգեգ փառս դահապիրութեան. եւ այս անհանճար յանկութիւն փառաց՝ յո՞ չ առնիցէ զսկզբան գերեալ՝ ի նոյն:

Այս սիրտ ազգիւքն՝ Թշուառացուցանէ նախ զփառասէրն որպէս սիրէ. ապա անարգէ եւ նուաստացուցանէ, հուսկ ուրեմն տանի զնա՝ ի պատիր փառս ընդ Ճանապարհս Թիւրս՝ որ՝ի Ձմարիտ փառացն արկանեն զնա. այս են ամօթալից նշանակք փառասիրութեան սիրոյն՝ որով մեծարէ աշխարհ զդիւցազունս իւր, որով եւ ինքեանք խոկ գովին յոյժ:

Ոչ եթէ անդատապարտ արձակել կամ էցէ ինձ զմեծամեծան, որպէս եւ ոչ զայլ՝ ի մարդկանէ, ՝ի դիրդ եւ՝ի մեծին կենաց, յանարգ եւ՝ի վատասիրտ խորհրդոց, եւ պատճառանօք պարսաւելոյ զփառասիրութիւն՝ սուրբ առնել զդատապարտութիւն եւ զպղերգութիւն:

Գիտեմ զի է աղնուական ինն նախանձաւորութիւնն՝ որ ընդ հետս պարտուց ածէ՝ ի փառս. սերունդն ազդէ՝ ի մեզ, կրօնքն համարձակէ. այն խոկ է որ հանէ սիրութեանց նշանաւոր քաղաքացիս, խնամատուն եւ ժրապլուխ պաշտօնեայս, զօրավարս առաքինիս, մատենագիրս հռչակաւորս, իշխանս արժանապովելիս աւուրցն յեռանոյ: Ճշմարիտ քա-

բեպաշտութիւն ոչ է ուխտ վաստութեան և հեղգութեան. կրօնք ոչ նկուն առնեն և ոչ մեղկեն զսիրտ, այլ ազնուացուցանեն և ամբառնան, նա միայն պիտէ յերկիւղել արս մեծամեծս. փոքր է միշտ մարդ՝ եթէ ընդունայնութեամբ եւեթ մեծ լցէ. վասն որոյ զրգռութիւն և անզօրծութիւն հակառակ են ևս օրինաց բարեպաշտութեան և պարտուց քաղաքական կենաց, և անպիտան քաղաքացին տարապիղծ է՝ ոչ միայն յընկերութենէ, այլ և յԱստուածէն:

Իսկ փառամոլութիւն, առնչ անյագ բարձրանալոյ՝ ի վեր, ևս և՝ ի վերոյ աստիճան այլոց, որդն՝ որ կրծէ զսիրտ և չտայ լինաւ հանգիստ, ախտ՝ որ է գրգիռ մեծ՝ խոտանեղ հնարից և ամենայն յուզից արքունեաց, պատճառ յեղափոխ սահմանակութեանց պետութեանց, և ցուցիչ աշխարհի նորանոր տեսլեանց հանապազօր. ախտ՝ որ յամենայն ձեռներէց է, և չկը լինչ նմա ծանրագնի, նոյն ինքն առաւել ժանտագործ է տերութեանց քան զծուլութիւն ինքնին գլխովին:

Արդ Թշուառացուցանէ նախ զգերին իւր. փառասէրն չտէնչէ վայելէ. ոչ՝ ի փառան, զոր աղօտանուաղ տեսանէ. ոչ՝ ի բարձս պատուոյն, առաւել ինդրէ վերանալ. ոչ՝ ի բարեկեցութեանն, աղաղն և ոսկի՝ ի լիութեան անդ իւրում. ոչ՝ ի սպաս հարկի մեծարանացն, մահադեղ խառնեալ է նմա՝ ի նոսին մեծարանքն՝ զոր ինքն պարտի հատուցանել այլում. ոչ յարքունատուր չնորհան, գառն է նմա և այն, զի բազորդ են ընդ իւր և նախանձորդքն. ոչ՝ ի հանգիստ իւր, Թշուառական է որչափ տխուր՝ ի հանդատութեան կալ. Համառ է, ցանկալի և նախանձելի ամենեցուն, բայց պատիւ մի եւեթ զըլացեալ տարապայման խշխանութեան իւրում՝ իւրում իսկ անձին անհանդուրժելի առնէ զինքն:

Այս ուրեմն Թշուառացուցանէ զնա փառամոլութիւն, բայց և անարդէ և՝ ի ստոյն արկանէ: Ո՛րչափ նուաստութիւնք՝ ի հասանել բարձի և պատուոյ. երևեալ պարտ է՝ ոչ

որ ինչ եմքս, այլ օրպիսիս կամինն զմեզ: Նուաստութիւն պաշտօն առնելոյ, խոնարհ և երկրպագութիւն մատուցանել անարգ կուռցն. նուաստութիւն վաստութեան, գիտել կլանել լերդն լերդն պատառս, հանիւերել զըլացութենանց, և իբրև շնորհս ինն ընդունել զնոսա. նուաստութիւն կեղծեաց, ոչ մի ինչ միտս ունել անձին սեփական, այլ ըստ այլոց ևեթ խորհել. նուաստութիւն ցոփանաց, մեղսակից լինել՝ Թերևս և ապաստաւոր՝ կարեաց այնոցիկ որոց ընդ ձեռամբ կայցէ, և հաղորդ անառակութեանցն լինել առ՝ ի բաժանորդ անշուշտ շնորհացն լինելոյ. հուսկ ապա նուաստութիւն պատճառանաց, պատճառիլ երբեմն՝ ի կերպարանս բարեպաշտութեան, այր բարի ձևանալ առ՝ ի մեծանալ, և՝ ի սէտս փառամոլութեան առնուլ զկրօնսն իսկ՝ որ զատապարտն զայն: Ոչ մատացածին ինչ պատկեր է այս. ալքատնեաց բարք են, և վարք յոլովից՝ որոց անդն կենցաղավարին:

Թող յետ այսորիկ ասասցեն մեզ՝ Թէ մեծանձն ոչուց է այս ախտ: Դրուշմ է այդ անարգ և վայրաքարշ սրտի, յայտանիկատ նկարագիրը ոչուցն վաստութեան: Պարտուցն միայն խնամ պիտէ ածել զմեզ՝ ի փառս. իսկ որ՝ ի նուաստութենանց անտի և՝ ի հնարիմաց խորամանգութենէ փառասիրութեանն գայցէ, ընդ իւր բերէ միշտ կերպարանս ինչ ամօթոյ՝ մեզ՝ ի նախատինս. ոչ խոստանայ զվաստութիւնս աշխարհի և զամենայն փառս նոցա, Եթէ ոչ՝ որոց անկեալ երկիր պագանիցեն առաջի անօրէնութեան, և անարգիցեն զանձինս իւրեանց խայտառակաբար. ԵՒԽ անկեալ երկիր պագանիջիս ինձ [1]: Նուաստութիւնքդ կշտամբանք են միշտ բարձրութեան ձերում. բարձքդ և պատիւք յուշ առնեն անդադար զիւրանալդ որովք արժանի եղեալդ էք. և անուանք իսկ պատուոյդ և պաշտամանց՝ զինք լինին՝ ի ձեռս ժողովրդեան՝ ի նշաւակել զձեզ: Բայց,

[1] Մատթ. դ. 9:

՚ի միտս փառասիրին, յաջողութիւնն ծածկէ զանձն հնարողութեանն. կամ ՚ի վէր ՚ի վէր ժամանել, և որ ինչ անդր տանի ջինքն՝ այն ևեթ է զոր խնդրէ իւր փառս. և զհռովմէական առաքինութիւնն որ ոչ խիղք կամին պարտապան լինել՝ բայց միայն լաւութեան՝ պատուոյ և վաստակոց, համարի վկապատանական և Թատերական առաքինութիւնս, և կարծէ Թէ խորհրդոց բարձրահայեցութեան էր երբեմն դիւցազունս յարդարել փառաց, իսկ բախտի՝ զարդիս նուաստութեան է ստեղծանել և անարգութեան:

Վասն որոյ՝ անիրաւութիւն ախտիս այսորիկ է վերջին հանգամանք իւր, յաւէտ ևս առելի քան զանհանգստութիւն իւր և քան զամօթանան: Ա՛յո, եղբարք իմ, փառասէրն ոչ այլ ինչ օրէնս ճանաչէ՝ բայց զոր նպաստամատոյց նմա լինիցի. եղեռն՝ որ ինա բարձր առնիցէ, առաքինութիւն աղնուագործ է առ նմա: Ինքն բարեհամ անհաւատարիմ, ոչինչ է առ նմա բարեհամութիւն՝ երբև ինքասակար Թուիցի բախտին իւրում: յոսի քաղաքացի, ոչ յարդի առնմա առութիւն՝ բայց եթէ օգտակար նմա եղիցի. արժանիք որ ընդ նմա ՚ի հակառակս մտանեն, Թշնամի անհերքելի են նմա. օգուտ հասարակաց տեղի տայ միշտ իւրում շահու. հեռի առնէ զաջողական ՚ի հպատակս, և ՚ի տեղի նոցա տպրդի. զիրկութիւն աշխարհին պատրս բաշխի տայ իւրոց մխանայողն. և ոչ այնչափ ցաւեցոյ նմա կորուստ իրաց աշխարհին ՚ի ձեռս իւր, որչափ պահպանութիւն նոցին՝ խնամովք և խնայութեամբ օտարին:

Ա՛յսպիսի է գահասիրութիւն առ բազումս ՚ի մարդկանէ, անհանդարտ, այպանալից, անիրաւ: Բայց, Տէր արքայ, եթէ այս Թոյն ճարակեսցի ՚ի սիրտ առն Թագաւորի և սրճեսցէ, եթէ մուտացեալ ազգայի՝ զի պահապան է ինքն հասարակաց խաղաղութեան՝ առաւել զիտառս իւր ընտրիցէ քան զսէր և զիրկութիւն ժողովրդեան իւրոյ. եթէ աշխարհս տիրել սիրիցէ՝ քան նուաճել զսիրտս. եթէ մեծ ևս փառս համարիցի աւերիչ լինել դրացեացն՝ քան հայր

իւրում՝ ժողովրդեան. եթէ սուտ և վիշտ հպատակացն էին միայն երկ ցնծութեան յաղթանակացն իւրոց. եթէ զբօսութիւնն զոր տուեալ է նմա յերանաւետել եւթ ջնջանդեալն՝ յիւր օգուտ միայն վարկեալ. բովանդակ ասել, եթէ՝ ի չուառութիւն եւթ մարդկան էին թագաւոր, և հանգոյն բաբելացւոց թագաւորին՝ ոչ յայլ ինչ կանգնել կամիցէ զպատակերն ամպարշտութեան, զկուռս մեծութեան իւրոց, բայց եթէ յարտասուս և յաւերակս աշխարհաց և ժողովրդոց. ահ, Տէր, որպիսի պատուհաս երկրի. զինչ պատուհաս արձակես դու՝ ի մարդիկ՝ ի բարկութեան քում՝ ի սալ քում նոցա աչր մի այսպիսի:

Փառք նորա, Տէր արքայ, հանապազ արեամբ շաղախեցեալ. անպակաս ոչնուազեցեալ թերևս զյաղթանակն նորա, բայց գաւառք և քաղաք և անդաստանք ոչբաւցեն. կանգնեցին նմա արձանք ամբարտաւանք անմահացուցանել զպաշարհակալութիւնն, բայց ահիւն տակաւին ծխեալ քաղաքաց՝ որ երբեմն ծաղկազարդքն էին, բայց աւերած և ամայութիւն անդաստանաց կապուտ կոլոզուտ եղելոց յառաջին դեղոյն, բայց քանդմունք պարսպաց՝ ընդ որով հանդարտեալ ժողովք քաղաքացւոց՝ թաղեալ ձնացին, բայց աղէտք բազում՝ և յետ նորա տեւեալ բաւեալ, սպառազէնք յիշատակք եղիցին անմահացուցանել զընդունայնութիւն նորա և զանմտութիւն: Անցցէ իբրև զհեղեղատ՝ ի գերիվեր զերկիր, և ոչ իբրև զգետ մեծասքանչ՝ որ նօթձիցէ ուրախութիւն և առատութիւն. անուն իւր գրեցի՝ ի յիշատակարանս ազատնեաց ընդ աշխարհակալս, այլ ոչ ընդ ընտիրս թագաւորաց. և չյիշեցին վէպք արքայութեան իւրոյ՝ բայց՝ ի յիշատակել զջարիսն զոր գործեաց մարդկան: Այսպէս ամբարտաւանութիւն նորա [1],

[1] Եթէ եւանիցէ յերկինս հպարտութիւն նորա, և գլուխ նորա յամպս մերձենայցի, ապա ուրեմն իբրև զաղբ կորիցէ. (Յովբ. ի. 6, 7. ըստ լաւինին:)

ասէ Հոգին աստուածեղէն, համբարձցի մինչև յերկինս, պլուխ նորա յամպս կցեսցի. ըստ ցանկութեան սրտի իւրոյ եղեն նմա յաջողուածք իւր, և այս ամենայն փառաց ամբարտակ՝ լինցի ասպա շնչակոյտ ոսկոյ որ ոչինչ Թոզուցու զինի իւր՝ բայց ժահ և թշնամանս:

Ամենակալ Տէր, պահապանդ մանկութեան Թագաւորաց, մանաւանդ որբացեալ Թագաւորաց, մերժեա զամենայն զհաղթս զայսոսիկ՝ ի մեծագին մանկանէս՝ զոր պահեցեր մեզ յողորմութեան քումմ: Կարէ կարդալ առ քեզ որպէս երբեմն ալքայն ըստ սրտի քումմ. «Հայր իմ և մայր իմ Թողին զիս»: Այն ինչ բացեալ իմ զաչս՝ ի լոյս, անդէն մահ կանխահաս փախեաց զաչս Ադեղայդի, որ առաքաւ զիս յարգանդին, որոյ և սիրելի և մեծաշուք ախոյք կերպարանացն նկարեալ կան յերեսս իմ. նոյնպէս և զբարեպաշտն ալքայաղին՝ որ հայրն է կենացս, որոյ և առաւուածասէր խնամոք դրոշմեցան անջինջ՝ ի սրտի իմում. Հայր իմ ե՞ մայր իմ ետուին զիս[1]: Այլ դու, Տէր, որ հայրդ ես Թագաւորաց և Աստուած հարցն իմոց, ընդ քոյով պահպանութեամբ առեր զիս, և՝ ի հովանի Թեւոցդ և հայրապորով խնամոցդ ծածկեցեր զիս. Ե՞ Տէր ընկալաւ զիս[2]:

Մեծանուն Տէր, պահեա արդ զանմեղութիւն իւր իբրև զբանձ մեծարժէք քան զքեզ, զարդացո զայն ընդ հասակին. առ՝ ի ձեռս զնորա, և անտուրբ հուր հեշտացանկութեան մի երբեք սկզբեսցէ զսրբարանն՝ զոր՝ ի քէն ստեղծեալ սերմանեցեր. Պահեա զամբիծութիւն[3]:

Հայեաց՝ ի սերմանս ուղղութեան և ճշմարտութեան՝ զոր վարեցեր՝ ի հոգի նորա. ՝ի միտս արդարութեան և իրաւանց՝ որ օր ըստ օրէ բարգաւաճեն և ընդաբոյս բնածին Թուին՝ ի նմա. ՝ի գեռաբոյսըդ առեալ ստեղծութիւնն առ խորհրդանգութիւնս և առաքեան գովեստս շողմարարին. և մի տար

1 Սաղմ. ԻԷ. 10:
2 Անդ:
3 Սաղմ. ԼԷ. 37:

Երբէք Թոյլ մարդահաճութեան՝ ապականել զբարեպաշտութիւնս նշանս հանդերձեալ երջանկութեան մերոյ. Ե՞ւ թէ պղծութիւնն[1]:

Թագաւորեսցէ՛ի մեր բարեբաստութիւն, և՛ի փառս իւր լիցէ Թագաւորեալ: Փառասիրութիւն իւր եղիցի միայն երջանկացուցանել զհպատակսն. պարծանք իւր սիրելի քան զամենայն՝ լիցի անուն բարեբար և խաղաղասէր Թագաւոր. այնչափ ևեթ մեծ եղիցի, որչափ սիրելի ժողովրդեան իւրում: Ամենայն Թագաւորաց բարեաց՝ կացցէ օրինակ, և խաղաղարարս այս իշխան՝ Թողցէ և զհետ իւր իշխանս նմին նմանս. Զի գոն ճաշուաճչ առն խաղաղարարի[2]: Ընկալ, ով Տէր, զուխտս մեր զայսոսիկ, և լիցին մեզ առհաւատչեայ խաղաղութեան այսր կենացս, և յոյս հանդերձելոյն: Ամէն, եղիցի:

---

1 Ագդ:
2 Սաղմ. ԼԲ. 37:

ՔԱՐՈԶ Գ

ՑԵՐԿՐՈՐԴ ԿԻԻՐԱԿԻՆ ՔԱՌԱՍՆԱՐԴԱՅ

ՅԱՂԱԳՍ ՄԵԾԱՄԵԾԱՅՆ ՄԵԾԱՐԵԼ ԶԿՐՕՆՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

Եւ ահա երևեցան նոցա Մովսէս և Եղիա, որք խօսէին ընդ Յիսուսի:
Մատթ. ԺԷ. 3:

ՏԷՐ ԱՐՔԱՅ,

Երկոքեան արքն մեծամեծք՝ երևեալք երբեմն յերկրի՝ գան այսօր ՚ի սուրբ լերինն ապաստարկուք փառաց և մեծութեանն Յիսուսի.

Մովսէս՝ աստուածն փարաւոնի, օրէնադիրն ժողովրդոց, յաղթօղն թագաւորաց, բնութեանն խլեակօղ, և առաւել մեծն անուամբ հաւատարիմ ծառայի տանն Տեառն.

Եղիա՝ այրն զարմանագործ, ահարկուն խլեամբ ամպարշտաց, կարօղն հուր երկնաւէզայց կրկուցանել, կամ ինքնին անդր յերկինս վերանալ ահեղաշուք և բոցաձաձանչ կառօք, և քան ամենայն սքանչելեօք կենացն՝ առաւել անուանին սուրբ նախանձուն որ ուսեր զնա:

Եւ սակայն՝ երկոքեան և ոչ այլով իւիք եղեալ էին մեծ, բայց օրինակն լինելով Յիսուսի: Եւ արդ գան յերկրպագութիւն օրինակեցելոյն, և յաւանդել ՚ի սկզբնաւորիսն

զզօրութիւնն և զփառս՝ որ նորա միայնոյ են, որոմ ին քեանք կարապետք եւեթ էին և աւանդատարք :

Ա՛յս է, Տէր արքայ, վիճակ թագաւորաց և մեծամեծաց երկրի. այնիւ եւեթ մեծ են՝ ալ պատիւք են փառաց Տեառն և աւանդառուք կարողութեան նորա : Պարտ է ապա նոցա թեւին ածել Աստուծոյ, զորոյ յանձին կրեն վեճվայելչութիւն. և մեծարել զաստուածպաշտութեան կրօնսն, ոլ միայն առնէ զնոսա մեծարժան :

Առեմ մեծարել զկրօնսն. պահանջէ այն՝ ի նոցանէ մեծարանս հաւատարմութեան, օրինակեալ՝ ի Մովսէս, տալ նոցա պահպանել զպատուիրանս նորա. և մեծարանս նախանձայուզութեան, տպաւորեալ Յեղիա, առնել զնոսա պաշտպանս վարդապետութեան նորա և ճշմարտութեան :

Հաւատարիմս՝ ի պահպանութեան պատուիրանացն, նախանձայոյզս՝ ի պաշտպանութիւն վարդապետութեանն և ճշմարտութեան : Ողջոյն ձեզ Մարիամ :

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԻՐ ԱՐՔԱՅ,

Մեծ ծնանել և քրիստոնէաբար կեալ՝ չեն ինչ հակառակ միմեանց, ոչ՝ ի պաշտամունս իշխանութեանն, և ոչ՝ ի պարտս կրօնից. կրօնս իմն խաւնաղանձի և ազանդ աննշան մարդկան զաւետարանն համարել, անարգել է զայն և ընդունել զպատուական հայհոյանս Թշնամեաց նորա :

Կայսերք և հզօրք ըստ աշխարհի՝ արդարև չհաւատացին նախ՝ ի Յիսուս. բայց ոչ ալ վարդապետութիւն նորա խոտոր ինչ զկարդ նոցին. զանաս նոցա եւեթ խոտոր նա. նա և հարկ եւս էր ցուցանել աշխարհի, թէ զօրութիւնն Աստուծոյ չկարօտեր մարդկայնոյն. թէ ճոխութիւն և բազուկ աշխարհական չէր ինչ պիտանացու առ վարդապե-

առնելուն ի յերկինից լլջեալ. թէ նա ինքնին բաւական էր ի կայկայել ընդ սիեղէրս. թէ ամենայն զօրութիւնք յաւիտենից յարուցեալ ի վերայ և հալածեալ զնա՝ հաստատելոց էին զնա. և զի եթէ ոչ նախ ոսոխէին ընդ նմա մեծամեծք, վըէպ մնայր ի մեծ ազգմանէն որ ապա աշակերտեաց զնոսա:

Արդ՝ օրէնք աւետարանականք ամենայն վիճակի են օրէնք. ըստ բարձրութեանն յոր ամբառնայ զմեզ տոհմն քան զայլս ի մարդկանէ, նոյնչափ և պատճառս ան մեզ կրօնք առ Աստուած հաւատարմութեան: Պատճառս ա՛սեմ ընդհատարտութեան և արդարութեան:

Այո՛, եղբարք իմ, ոչ դիպուածոյ տուրք են ծնանելդ մեծ և հզօր. Աստուած ինքնին ի սկզբանէ աշխարհի սահմանեալ էր զձեզ ի ժամանակիս վիճակդ, զրոշմեալ ի ինձ իւրոյ մեծութեանն, և որոշեալ յամբոխէն՝ մարդկօրէն մեծապայծառ պատուով և աւագութեամբք: Զի՞նչ ինչ արարեալ ձեր նմա՝ առաւել մեծարեցոյց քան զայլ մարդիկ, մանաւանդ քան զայնչափ անչափ տառապեալսն, որ հաղիւ հաց արտասուաց և դառնութեան ճաշակեն: Ո՞չ և նոքա իբրև զձեզ գործք ձեռաց նորա են, և նոցին գնոց պնեալք. ո՞չ ի՛նձին հաւոյ եղէք, չլցի՞ք թերևս առաւել ծանրաբեռնիք մեղօք. արիւնն՝ որոյ սերունդ էք, թէպէտ և չքեղ յաչս մարդկան, ո՞չ ապաքէն ի նմին Թուխաւոր ականէ բղխէ՝ որ ապականեաց զազգ մարդկան առհասարակ: Անուն մեծափառ ժառանգեցէք ի բնութա, բայց առի՞ք և հոգի այլաբուն և յայլ նմին յաւիտենական արքայութիւն սահմանեալ քան զդուշնաքեայս ի մարդկանէ: Զի՞նչ առաւել նոցէ ձեր առաջի նորա՝ որ յարարածս իւր չդիտէ այլ ինչ անուանս և խաչիս բաց ի պարգեւաց ընդհայ իւրոյ: Սակայն Աստուած, հայր նոցին որպէս և ձեր, մատնէ զնոսա յաշխատութիւն, ի վիշս, ի ցաւս և ի տառապանս, և ձեզ պահէ զուրախութիւն, զհանդիսիս, զփառս և զյղկութիւն. նոքա ծնանին ի չարչա-

բանս, ՚ի բառնալ զծանրութիւն աւուրն և զոմն, ՚ի պա-
ճարել վաստակովք և քրտամբք իւրեանց զփափկութիւնս
ձեր և զշռայլութիւնսդ. ՚ի ձգել՝ թէ իշխիցեմ ասել՝ հան-
դոյն անարդ անասնոց զկառս մեծութեան ձերոյ և անխնա-
մութեան: Այս անկըսկիծ ահագին՝ զոր Թողու Աստուած
ընդ ձեզ և ընդ նոսա, լսէ՛ք մուրհակ երբեք պատճառս
ձեզ մոռախոհութեան, Թող Թէ չնորհակալութեան: Ի
ծնէ ժառանդ գոայք այսմ ամենայնի առաւելութեանց.
և առանց զմիասդ ՚ի վեր առ գերապոյն պարգևատուն ա-
մենայն մարդկեղինաց տանելոյ, համարեալ էք Թէ կարևոր
ինչ պէտք էին ձեզ այն ամենայն, քանզի միշտ ՚ի նոսին
վայելեցէք: Եղուկ. դուք ՚ի ձեռահասաց ձերոց պահան-
ջէք գոհացողութիւն սերտ՝ նշանաւոր և անընդհատ, յե-
րախտաւորելոցդ՝ ծառայութիւն յայտնատեսիլ. չմարթի
նոցա և ոչ վայրկեան մի մոռանալ զառ ձեզ պարտան. բա-
րերարութիւնդ ձեր առյ ձեզ ՚ի վերայ նոցա իրաւունս՝
ունել զնոսա ՚ի միանչիւնաւոր ծառայս: Այսու չափեցէք
զոր պարտիքն առ Տէր՝ առ բարերարն հարց ձերոց և բո-
լոր զարմից: Իսկ զինչ. չնորհք ձեր զերծիս ձեզ կացու-
ցեն, իսկ երախտիքն Աստուծոյ՝ անչերախտս և ապաստամբս
ևս Թէ յարուսցէն նմա:

Վասն որոյ, եղբարք իմ, ըստ չափոյ պարգևացն պա-
հանջէ և նա ՚ի ձենջ զփոխարէնն: Այլ աւաղ. այս օրինք
երախտահատուցից՝ զոր քարոզէ ձեզ ամենայն որ շուրջ
զձեօք է, զոր և արժան էր գոգցես գրել ՚ի գրուն և յոտմս
ապարանիցդ, յապարակսդ և ՚ի պատիւսդ, ՚ի շուք բար-
ձիցդ և հանդերձից, չէ գրոշմեալ և ոչ ՚ի սիրտս ձեր: Հան-
ցե ՚ի ձենջ Աստուած զպարգևան իւր, եղբարք իմ. զի ոչ
միայն չտայք նմա զօրինաւոր փառան, այլ և ընդդէմ նմին
գարձուցանէք զայնս. ոչ անցցեն ՚ի սերունդս ձեր. փո-
խեսցէ զփառսդ զայդ յապդ հաւատարիմ: Ողբիք ձեր քա-
ւեսցեն Թերևս ՚ի վիշտս և ՚ի տառապանս զմեղս ապաիատա-
ւորութեան ձերոյ, և աւերակք բարձրութեան ձերոյ ե-

ղնոյին արձան յաւէժական՝ յոր մասն ասառւածեղէն գրեա-
ցէ մինչև ՚ի սպառ զանիրաւութիւնն յոր վարեցեքդ զայն:

Զինչ ասեմ. բազմացուսցէ Թերևս զպարգևս իւր, նո-
րանոր երախտիս զեղուցու ՚ի ձեզ, բարձրացուսցէ զձեզ
քան զնահանիս ձեր. այլ զայս շնորհս ՚ի բարիութեան իւ-
րում արասցէ ընդ ձեզ, բարիք իւր ՚ի պատիժս լինիցին,
յաջողուածքդ լցցեն զչափ կուրութեան ձերոյ և ամբար-
ատւանութեան, պերճութիւնդ նոր՝ նոր իմն խանձ եղիցի
ախտիցդ, և բախտիդ բարգաւաճանք յորդեսցեն նոյնչափ
զղեխութիւնս ձեր, զամպարշտութիւն և զանզղջութիւն:

Մղորութիւն է ուրեմն, եղբարք իմ, ապաստութեան
ինչ օրինս համարել զրուք ատհմի և ատխճանի ՚ի նուազել
և ՚ի մեղմել ձեզ զպարտս ձեր առ Աստուած, և զանաչառ
պատուէրս Աւետարանին. նա մանաւանդ՝ որոց առաւելն
շնորհիցէ՝ առաւել ևս պահանջեսցէ ՚ի նոցանէ. երախտիքն
իւրովք չափեսցին պարտիքդ. և որպէս նա յորդառատ
պարգևօքն զատեալ է զձեզ յայլոց, կամ զի և դուք հա-
ւատարմութեամբ մեծաս որոշիցիք ՚ի նոցանէ: Բայց Թող
զպարտս շնորհահատոյց առ նա լինելոյ, որչափ առաւել
են լուցիկիք ախտից ՚ի ձերում վիճակիդ, առաւել և ձեզ
արհնութեան պէտք են ՚ի զգուշութիւն: Մեծաց՝ մեծա-
մեծ պիտոյ են և առաքինութիւնք. յաջողութիւն՝ անդու՛
հալածումն է հաւատոյ. և եթէ չկացեն ձեզ սրբոցն ոյժ և
քաջութիւն, առաւել կացին ձեր պետք և մեղկութիւնք
քան զայլոց՝ մերձ ընդ մերձ:

Սակայն ի՛ւր կամիք մեղմանալ Աստուծոյ ՚ի շնորհս երե-
ւոյց ձերոց, և նուազ ՚ի ձէնջ պահանջել քան յայլոց հա-
ւատացելոց: Նուաճ ինչ կացեն ձեր հեշտ ցանկութիւնք ՚ի
քաւել. կոչ ձեզ անմեղութիւն՝ իրաւունք նեղոտեալոց
Թեան իւրում. միթէ սակաւ քան զնոսա հեղեալ կացէք ՚ի
կարիս մաքնոյ, զի ապաստ զձեզ համարիցիք ՚ի խաստու-
Թեանց՝ ՚ի մեռուցանել և ՚ի պատժել զնա: Բարձրագահք
ձեր յաձախեալ են զմեղանագ, իսկ արդ քաղցրացուսցէն

զապաշխարութիւնդ: Քան զաշխատանդ՝ չարիք ձեր առաւել մեհենալ են զձեզ յամբոխէն, և խնդրեցէք առ այդ գոանել յաստուածպաշտութենէ՝ ազատութիւնս ձեզ՝ ի նպաստ:

Զի՞նչ կարծեցեալք զԱստուած, եղբարք իմ. որպիսի՞ ոք Աստուած մարմնոյ և արեան առեղծանեմք մեզ: Իսկ զնա՞րդ յաւուր անդ ահեղի յորում Աստուած միայն լեցի մեծ, ուր թագաւոր և ծառայ ընդ մի համարեսցին, ուր գործք եւեթ կշռեսցին, ակնառութեամբ ուրեմն գաւեսցի Աստուած զմարդիկն՝ զորս մեք մեծս անուանեմք. զմարդիկն՝ զորս լցուցեալ էր բարեօք, որ աշխարհի՝ երջանիկքն էին, որոց առ անիրաւ երանութիւն անձանց յարդարեալ էր, և գրեթէ առհասարակ մոռացեալ զբուն պատճառ բարեկենդանութեան իւրեանց՝ անձանց եւեթ կեցեալ էին. և սպառազինեսցի առժամայն ամենայն սաստկութեամբ առաքեան՝ զոր հանապազ տառապեցոյց, և զամենայն խըստութիւն դառնատանացն պահեսցէ առ հէքան, որոց աչուրս սգոյ և գիշերս ցաւագինս անցուցեալ է համակ՝ ի վերայ երկրի, և օրհնեալ զնա յաշխա՝ ի վիշտս իւրեանց, և յանձկութեան և՝ ի դառնութեան զնա կարգացեալ: Արդար ես դու, Տէր, և դառնատանիք քո ուղիղ եղիցին:

Բայց, Տէր արքայ, Թէպէտ և այս իրաւունք արդարութեան և գոհութեան չտեսիլէին զմեծամեծան՝ ի հաւատոյիմ ծառայութիւն զոր պարտին՝ ի բազում գլխոց առ Աստուած, ոչքափ ևս չգտանիցեն պատճառս յանձինս իւրեանց:

Ո՞չ ապաքէն զգօնութեան է և երկիւղին Աստուծոյ միայն՝ սիրելի առնել ժողովրդոց զթագաւորս և զմեծամեծ որեարն: Նովաւ, ասէր անդ ուրեմն թագաւոր ոմն մանկահասակ, կալայց փառս՝ ի մէջ ժողովրդոց, և պատուհասցեն ծերք զմանկութիւն իմ. խչհանք որ շուրջ զաթոռովս՝ ակն ածիցեն յերեսաց իմոց. դրացիքն իմ թագաւորք ահաւորք՝ երկիցեն յինէն. ՚ի խաղաղութեան եղէց սիրելի,

և ահաւոր ՚ի պատերազմի. Սարեաց՚ին չինեն բոլոր սուկալիք, ՚ի մէջ բազմութեան երեսեցայց առաք, և ՚ի մէջ պատերազմի առաքինի[1]: Նովաւ հաճոյ լինի արքայութիւն իմ Ժողովրդեան քում, Աստուած իմ. արդարութեամբ առաջնորդեցից նմա, և եղիցի արժանի աթոռոյ հարցն իմոց: Դարձեալ պնդեսցայց զնովաւ արդարութեամբ, և եղիցի արժանի աթոռոյ հօր իմոյ[2]:

Ոչ, Տէր արքայ, ոչ զօրութիւն բանակացդ, ոչ լայնածաւալ սէրութիւնդ և ոչ արքունեացդ փառաւորութիւն չարասցեն զքեզ Ժողովրդեանդ սիրելի, այլ առաքինութիւնք արքայից բարեաց, արդարութիւն, մարդասէր քաղցրութիւն և երկիւղն Աստուծոյ: Թագաւոր մեծ ես ՚ի ծննդենէ քումմէ, բայց առաքինութեամբդ միայն լինիցիս սիրելի Ժողովրդոյդ: Ախտք հեռացուցեալ զմեզ յԱստուծոյ՝ անիրաւս զմեզ կացուցանեն միշտ, և մարդկան առելիս. հանապազ չարչարին Ժողովուրդք յախտաւորութենէ թագաւորին: Ամենայն ինչ որ ըստ իշխանութեանն չափ ելանէ, ակարացուցանէ զայն և արկանէ ՚ի չքոյն. թագաւորք՝ որ ընդ կարեաց ՚ի նեղքոյ անկեալքն լսեն, սեալք են վէպք և ծանուռնք. յորժամ լինքն տէրն առանց երկիւղ օրինաց լցէ, անօրէնն գտանի և վարչութիւն աշխարհին: Ոչ ևս իմաստութիւն և օգուտ հասարակաց առաջնորդէ խորհրդոց, այլ կարեացն շահաւորութիւն. ոչ բարեկարգութեան սէր տայ զՀրամանան, այլ հաճոյք և յօժարութիւն, և զօրագոյն պատճառ ամենայն խորագիտութեան տէրութեանն՝ հեշտութիւնն լինի: Ա՛յո, Տէր արքայ, իմաստութիւն և բարեպաշտութիւն արքային միայն գործէ զերջանկութիւն հպատակաց, և թագաւոր երկիւղած յԱստուծոյ՝ նա միայն է սիրելի Ժողովրդեան իւրում:

Իսկ եթէ երկիւղն Աստուծոյ սիրելի առնէ զիշխանութիւն թագաւորաց և աւագանեաց, նոյն և փառաւոր առ

1 Իմաստ. Ը. 15:
2 Այդ թ. 12:

նէ: Ամենայն բարիք և ամենայն յաջողուածք, ասէր դարձեալ Թագաւոր ոմն խնամատուն, ընդ նմա եկիցեն ինձ, և վասն և պատիւ նուաւս կացին ընդ իս անմեկնելիք. Եկին ինձ բարութիւնք ինչպիսի ընդ նմա, և անհիւ ընծայութիւնք ի ձեռին նորա [1]: Զառնու Աստուած ընդ հովանեաւ իւրով՝ զորս ոչն կեան ընդ իւրով հրամանաւք:

Զի յինէն զանխուել, զի յաջողեալ է երբեմն ամպարիշտն, երևի բարձրացեալ երկիր զմայրս Լիբանանու, և Թուի անկուշել զերկինս իշխանապանծ վասն՝ զոր յանձնէ կարծէ ունել: Բայց անտացէք, բարձրութիւն նորա հատցէ նման ինքնին զնորհատուս իւր. ձեռն Տեառն խլեսցէ զնա վաղվաղակի յերեսաց երկրի: Վախճան ամպարշտի դրեթէ միշտ է անպատիւ. Թէ վաղ Թէ անագան՝ հարկ է հուսկ ապա կործանել շինուածոյն ամբարտաւանութեան և անիրաւութեան: Ամօթ և աղէտք հատցեն և ասա զհետ վասաց յաջողուածոց նորա, տեսցի Թերևս ընդ քարշ տանել ծերութիւն զժնդակ և Թշնամանալից, և երթեալ վախճանեսցի խայտառականօք: Հատցէ և Աստուծոյն ժամ, և վասն սուն անհրաւի մի իջցեն ընդ իւր ի գերեզման:

Անցէք ընդ գարան առաջինս քան զմեզ, որպէս ասէր երբեմն իշխան ոմն եբրայեցի ցորդիս իւր: Աջէ՛ վ՛պա՜ ... ըսպ աղգս աղգս [2]. և տեսանիցէք՝ զի վիշեաց միշտ Տէր յաղգս ամբարտաւանս և յամաքեցոյց զարմատս նոցա, զի զբաւիղ ամպարշտաց ոչ երբեք ժառանգեցին զաւակք նոցա, զի և աթոռք նոցին և պայազատութիւն Թագի պակասեցին ընդ անգործ և Թուլամորթ Թագաւորօք, և զի պատմութիւն մեղաց և մոլութեան մեծամեծաց՝ է համանգամայն պատմութիւն աղէտից նոցա և անարգութեան:

Իսկ, Տէր արքայ, որով առաւել անհնարին են իշխանք և մեծամեծք ի Թողուն զԱստուած՝ այն իսկ է, զի քան զգ-

1 իմաստ. է. 11:
2 Ս. Մակաբ. ը. 61:

խառնապանձն նորա յաշխարհ ազնուագոյն յօժարութեամբք ծնանին և յանկագունիք յառաքինութիւն:

Դեռ ևս մանուկ էի, ասէ արքայ Սաղոմոն, բայց տեսանէի ինձ գհանճար անցեալ հասակի, և՝ ի միտ առնուի՝ զի՝ ի ծնէ էր ինձ հոգի բարի և քան զայլոցն միտք բարձրագոյն. Մանուկ էի նպաւարժ, և ոգւոյ բարւոյ դիպեցայ [1]:

Ընդունակութիւն և դասախարակութիւն և նախանեացն պատմութիւնք արկանեն՝ ի սիրտ մեծամեծաց և արքայից սերմանս, և իբրև աւանդութիւն իմն առաքինութեան բնաւորական: Ոմանիկն լքեալ անդասին՝ ի ծննդենէ՝ ի բնութիւն իւր՝ ի կորդ և խոպան, չգտանէ ինչ յանձին առ վսեմական պարտս հաւատոց, բայց միայն զթանձրութիւն և զանարդութիւն ինքնաւար բուսոյ բարուցն. բարեձևութիւնք անբաժանք յատկանէ և իբրև առաջին վարժարան առաքինութեան, ոչ ձնչէն զկարիսնոցին. սովորութիւն զօրացուցանէ զախտս ծննդեանն, որ շուրջ զիւրև իւրք արհամարհք՝ նուաստացուցանեն զսիրտ նորա և զմիտս, ՝ի վեր քան զինքն խմանայ և ոչինչ. ՝ի զգայութիւնան և՝ ՝ի ստմի ծնեալ՝ դժուարաւ ամբառնայ ՝ի վեր քան զինքն: Ի նմին յաւետարանական պատուէրն բարձրութիւն՝ ուր ոչ գիտեն ժամանել սիրտք անարգք և գեանանախանձք. աստուածատաշտ կրօնք՝ որ զմեծ հոգիսն կատարեն, վասն նոցա և Թուին եղեալք. և պարտ է մեծս գոլ կամ գառնալ լինել՝ առ՝ ի քրիստոնեայ լինելոյ:

Ոչ անգիտանամ՝ զի շնորհք ընտն զթերին բնութեան, մարմին և արիւն չտան ինչ երաւունս առ արքայութիւնն Աստուծոյ, առաջին դիւցազունք հաւատոց՝ ի ժողովրդենէն եկին, անօթքն խեցեղէնք՝ ՝ի ձեռս բարձրելոյ Ճարտարապետին՝ լինին վաղվաղակի անօթ փառաց և մեծութեան, և ամենայն քրիստոնեայ ծնեալ է մեծ, զի վասն երկնից է ծնեալ:

1 Իմաստ. Ը. 19:

Սակայն ծնունդ բարձրապատիւ՝ պատրաստակ ինն զմեզ յաղնուական և՛ ի դիւցազնային խնասոս զոր պահանջեն հաւատք. արիւն զուտ և վճիտ դիւրաւ ևս բարձրանայ, առաւել անաչխատ նուաճելն կարիք յորոց՛ ի յաղթանակել ծնեալքն են. սաուԹիւն և մեղմեխանք դժուարաւ մնանեն՛ ի սիրա՝ որում ոչինչ սանանկ ձշմարտուԹիւն, և չունի ինչ երկիւղ կամ յոյս՛ ի մարդկանէ: Փառասոյր դոյն ինչ բախտ ակնկալուԹիւն՝ ոչ գիտէ եղծանել զբարուԹիւն նոցա, որ չեռանեն ինչ բախտ՛ ի վեր քան զիւրեանցն, և՛ ի ձեռին ունին զբախտ և զվիճակ ամենեցուն: ԱկնածուԹիւն՛ ի մարդկանէ՝ ոչ խեղԹ և ոչ խուԹ անկանի առաքինուԹեան աւագացՙ յորոյ աշխարհ համբրէն՛ ի նմանուԹիւն կրԹել՝ պարծանս գրէ, և բարք նոցա յօրինս լինին միշտ խառնաղանձին: ԱնարդուԹիւն ապականացն և ցոփանաց՝ ոչ յոյժ մերձին՛ ի հոդի կարդեալ՛ ի ծնէ առ մեծամեծս. օրէնք և պարտք չեն ինչ կարի օտարք յայնցանէ՝ որ հաստատեալ են՛ ի պահպանուԹիւն կարգի և օրինացՙ ի ժողովրդեան: ԵԹէ յառաւել ինչ վարմն պաշարեալ լցեն, զտանեն և առաւել սանձս և հնարս յանձինս իւրեանց. բնուԹիւն ինքնին պատապարեալ է զոդիս նոցա պարեկապանօք պատուոյ և փառացՙ և գլուխ ամենայնի, առաջին յօժարուԹիւնք մեծամեծաց յառաքինուԹիւն են, և ընդ փոխել՛ ի յառուԹիւն՝ խորԹանան: Արդ, պարտ ուրեմն է նոցա առնել կրօնից մեծարանս հաւատարմուԹեան՝ պահելոյ զպատուիրանս նորա. այլ պարտին և մեծարանս նախանձուՙ պաշտպանելոյ վարդապետուԹեան նորա և ձշմարտուԹեան:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ամենայն խորհրդոցն Աստուծոյ՝ ի վերայ երկրի՝ կրօնքն է վահճան. զամենայն ինչ վասն նորա միայն արար յաշխարհի, ամենայնի պարտ է դալ՝ ի սէս ինչ բարգաւաճանաց այսր աղքայութեան Յիսուսի: Աստուածութիւնք և յոռութիւնք, մեծամեծք և խաժամուժ, աչող եղք և ձախող, լինութիւն և տուայտանք հաստատակաց, բարձրութիւն և անկումն թագաւորութեանց, ամենայն՝ ի կարդի յաւիտենական խորհրդոցն՝ գործակից պարտի լինել՝ ի շինութիւն և յաճումն այսր Երուսաղէմի սրբոյ: Բռնակալք սրբեցին զայն հալածանօք, հաստատակեալք յաւէժացուցանեն սիրով, անհաստատք և խառնափնդոք փորձեն և պնդեն գայթագղանօք. արդարք վկայ են հաստատ նորա, հովիւք՝ աստանդապահք ոսման նորա, սէրք և հարուստք՝ պաշտպանք ճշմարտութեան նորա:

Ըստ նոցա բանական՝ օրինաց նորա կալ հպատակ, այդ պարտք են ամենայն անձին հաստատակելոյ. մեծվայելչութիւն պաշտամանն նորա, սրբութիւն պատուիրանացն և ճշմարտութեանն աստանդ՝ ի նոցա իշխանութեանն և՝ ի նահանձաւորութեան գտանելոց են ամուր ապաւինի:

Մեծվայելչութիւն պաշտամանն ասեմ: Ձկք ինչ, Տէր ազգայ, աւազել պարծանք կրօնից՝ քան տեսանել զաւազորեարն և զթագաւորս խառն ընդ այլ հաստատակեալն առ ոտս սրբոյ սեղանոյ՝ ի հաստատակաց և յարտաքին պարտս հաստատոցն. նոցա է զայայանգիման և զխոնարհ մեծարանս իւրեանց՝ ի տաճարին սրբում ընդդէմ կանգնել մերկապլուխ անպատակառութեան և անսրբութեան, և գալ ցուցանել ամբոխին՝ քանի անվայելուչ է հպատակաց լինել լրբաբար և ամենակոտոր առ ոտս սրբութեանցն, առ

որովք իշխանք և Թագաւորք անգամ յոչինչ դառնան. զոր ինեակս զայս պարտին նոքա Ժողովրդոց, և զմեծարանս զայս՝ ահաւորութեան պաշտամանն արբոյ: Աւաղ. պատշաճութիւն համարին կարդի իւրեանց՝ անձամբ երևել յարդել համարձակել զհաստատակաց զբօսանսն, և կարծիցէ՞ն Թէրևս նուաստանալ՝ եթէ երևիցին պարապուբս օրհնութեանց ցնծութեան և արբութեան հանդիսից ստուածպաշտութեան: Փոյթ և խնամ՝ տէրութեան վարկանին մեծարել օրինակաւն իւրեանց զԹաւերցն խաղս և զնոսին տեսիլն աշխարհական. մինէ նուաճել ինչ փոյթ նոցէ Եկեղեցւոյ՝ զի օրինակք նոցին մեծարեացեն և զնուիրեալսն հանդէս ստուածպաշտութեան հաւատոցն:

Աշխարհօրէնն զուարճութեանց չեն ինչ պէտք պաշտպանութեան: Եղիւկ. ապահանութիւն մարդկան բաւական է երաշխաւորել զհանապազորդութիւն յարգի նոցա և զտևողութեան. և եթէ կարևոր ինչ էին պետութեանցն, չէք ինչ հարկ իշխանութեան խառնիլ՝ ի նոսա. յամենայն պիտոյից աշխարհին՝ առաւել անվտանգ նոքին իսկ են:

Իսկ ստուածպաշտութեան պարտք՝ որ չպատանեն ինչ վան իւրեանց՝ ի սիրտս մեր, մեծամեծ օրինակք պիտոյն նոցա ձեռնտուք. յանփոյթ առնելոյ արբոյից և աւադայ՝ ի սպառ անարգի պաշտօնն: Եթէ նեղութիւն ինձ ասել, ոչ ևս այնչափ մեծ երևի Աստուած՝ յորժամ երկրպագու նմին խաժամուժն ևեթ գտանիցի. ոչ ևս լսելի լինի բան նորա, կամ կորուսանէ իսկ զզօրութիւն իւր օր ըստ օրէ, իբրև աղքատացեալ և փոքրկանց միայն պաշտեցի՝ ի հայ: Աշխարհայորդոյ պարտք բարեպաշտութեան՝ ի բաց խափանին, անկանիլ ամենայն և նուազել՝ եթէ արբայնն և մեծամեծացն ստուածպաշտ կրօնք ոչ կանգնեալ զօրացուացեն: Պաշտամանն օգուտ և տէրութեանն՝ ստանիօր՝ ի մի ձուլեալ միանան. զի Թագաւորի անկ է պահպանել և զարտաքինս մեծաշուք կերպարանս կրօնից և զվարդապետութեանն միութիւն՝ որ պատուպարանքն են աթոռոյն, և ընդելուցա-

նել զկպատակսն ի հաստուցանել Աստուծոյ և Եկեղեցւոյն ջրընտաւոր մեծարանսն և զհնազանդութիւն, զի մի գուցէ և նոքա զլացեալն ապա նմա զայնս։ Վրդովմունք Եկեղեցւոյ չեն երբեք հեռի ի շինմանէ սէրութեան. չիք խոնարհել ընդ լծով իշխանութեանց՝ իբրև բաւական գտանիցի ոք զհաւատոյն լուծ զընկենուլ. և զուր Յանայ հերձուածն [1] քերել յանձնէ զայս կէտս, նա էլոյց ընդ աշխարհ զհուր ապստամբութեան, ինքն իսկ ի սատմբակութեան է ծնեալ. ի խախտել զհիմունս հաւատոյ՝ սատանեցոյց զաթոռս և զսէրութիւնս, և յարուցեալ աղանդաւորս ընդ համբ ըէն երկիր՝ դրդեաց Եհան ապստամբս. ընդ վայր բարբան ջէ՝ թէ հալածանք իշխանաց վառեցին զձեռս նորա ի զէն արդար պաշտպանութեան. Եկեղեցի՝ ոչ այլ ինչ ախոյեան կանգնեաց երբեք ընդդէմ հալածմանց՝ բայց միայն զհամբ քերութիւն և զսիրգութիւն. հաւատք միայն էին նորա սուր որով յաղթեաց բռնաւորաց։ Ոչ հեղմամբ արեան հակառակորդացն ածեցոյց իւր աշակերտս. արիւն ևէթ վկայիցն սերմն եղև հաւատացելոց։ Նախաքարոզ ուսուցիչք իւր չառաքեցան ընդ սիեղերս իբրև առիւծունք ոմանք՝ ածել ընդ հանուրս սատակումն և նախճիրս, այլ իբրև զգառինս՝ երթալ ի զենումն. ոչ մարտիւ պատերազմաւ, այլ մեռանելով ի վերայ հաւատոցն՝ ցուցին զհնազանդութիւն քաղցրութեան իւրեանց. ի դառ վարէին առաջի թագաւորաց իբրև ոճրագործս, և ոչ երբեք զէն ի ձեռին երևեալք՝ սակաւ զնոսա ի թիկունս օգնականութեան անձանց. պատուէին զգաւազանն ազգունի ևս և ի ձեռս սկզբ և կրապարիշս. և անպատիւ առնել և եղծանել վարկանէին ըզգործն Աստուծոյ՝ առ ի հաստատութիւն նորա ապաւինել ի հնարս մարդկեղէնս։

Արդ, ի կազդուրել թագաւորաց զգջութիւն կրօնից՝ զիշխանութիւն իւրեանց հաստատեն. ուստի զառաջինն պայ-

[1] Յոմն մանաւանդ զարեմտեան հերձուածոց վերստաման դարուն։

ծառութիւն իւր ՚ի նոցանէ իսկ հառ պաշտօնն: Ընդ հոյակապ թագաւորութ ցելին Դաւթի՝ եռեւ տաճարն Տեառն կանգնեալ զիառս իւր և զմեծվայելչութիւն: Առ Աեւտարանաւն՝ կայսերք թափեցին զնկելեցի ՚ի խրճնութեն նէն յոր թողեալ էին զնա հալածանք: Կարօ՛նս մեծն, սուրբն Լուդովիկոս բարձրացուցին զիառս ալքայութեան իւրեանց՝ ամբարձեալ զկրօնէն պաշտամանց, և աշխարհասեռիկ արձանք բարեպաշտութեան իւրեանց՝ անեղծք յերեսաց ժամանակին և պատկառելիք ցայսօր ՚ի միջի մերում, առաւել պատուեն զնիշատակս նոցա քան զպատկերս և զվերնագիրս, որ յանմահացուցանել անդ զյաղթութիանակս և զաշխարհակալութիւնս՝ ոչ այլ ինչ սովոր են անմահացուցանել, բայց միայն զթագաւորացն մնոան պերճանս և զնարութիանս հպատակաց:

Բայց յոր դէմս սահմանն մեծամեծք պահպանել զլուք և զարտաքին վայելչութիւն պաշտամանն, նոյն և պաշտպանս կացուցանէ զնոսա սրբութեան պատուիրանաց նորա. պարտին ուսուցանել Ժողովրդեան մեծարել զբարեպաշտութիւն՝ մեծարելով իւրեանց զբարեպաշտօնան. զայս յայտ յանդիման պաշտպանութիւն պարտապան են հաստուցանել առաքինութեան:

Ա՛յո, Տէր արքայ, բարեպաշտք միայն են պատճառք երջանկութեան և շինութեան աշխարհին. ՚ի հնուհս եւեթ երեսաց նոցա պարգեւէ Աստուած ժողովրդեան զշինութիւն և զնաղաղութիւն: Եթէ գտեալ էին տան արդարք ՚ի Սոդոմ, չնջանէր հուրն երկնատեղւոյ ՚ի վերայ վթիժագործ քաղաքին: Կորնչէր աշխարհս, տապալէր գահն, քաղաք մեր անպնդատոյղ լեալ յաձիւն գառնային, և մեք ՚ի մահ վիճակի Սոդոմայ և Գոմորայ հասանէաք, եթէ չեռանէր տակաւին Աստուած ՚ի միջի մերում ծառայս իւր հաստատելոյն, եթէ չթողոյր դեռ ևս մեզ զաւակ սուրբ, եթէ թերևս անմեղութիւն մեծափառ մանկանս պատուականի, որ միայն է մնացեալ մեզ սերմն յարենէ թագաւորացն

մերոց, յարուցեալդ զանձինս զոր վաղուց հրաւիրելոց էր՝ ի պլուխս մեր հաստատակաց վարուցս անառակութիւն. Ընդ ոլ Տէառն զբուռնանաց ընդէաւէր մեզ զառաք, իբրև պՍոդոմ լինիցի և Գոմորոյ նմանիցի[1]: Ապա հարկ է Թագաւորաց, Տէր արքայ, պաշտպանել առաքինութեան. քանզի ախրութիւնք և Թագաւորութիւնք և ամէնքըք համօրէն ոչ կացցեն, եթէ չգուցէ լաւութիւն յերեսս երկրի:

Սակայն, Տէր արքայ, ոչ լոկով մեծարանօք պարանի Թագաւորըք շուք դնել բարեգործաց, այլ և մուերմութեամբ. ոչ գոցեն ձմարիտ բարեկամն, բայց միայն՝ ի հաւատարմացն առ Աստուած: Այլ և գործակալութեամբք երաց աշխարհին. չէ անկասկած և արժանավայելուչ իշխանութիւն, եթէ ոչ՝ ի ձեռս երկիւղածաց Տեառն: Այլ և նախատուութեամբ. միասակաւագոյն են երբեմն ձիրք մեծամեծք բնութեան, եթէ երկիւղն Աստուծոյ ոչ յօգուտ վարեսցէ զայնս: Այլ և մերձեցուցանելով զնոսա առ ինքեան. ընտանութիւն յատկահովս է յերեսաց նոցա, որ և՝ ի մերժելն և յարհամարհել՝ տակաւին ակն ածեն՝ ի մէնջ: Այլ և հուսկ ուրեմն չնորհօք. բարեբարութիւնք ոչ ապահատաւորս առնիցեն զայնոսիկ զորս պարտք միայն և մուացն խնդիր յանկուցեալ են՝ ի մեզ:

Ո՛վ բարեբախտութեան դարուն ախրութեանն և ժողովըրդոց, Տէր արքայ, յորժամ յողորմութեան իւրում պարգևէ նոցա Աստուած Թագաւորս աստուածատեսս: Նոքօք բարգաւաճեն և խրախուսեն առչութիւնք յայլազուածոց օգտակարըք Եկեղեցւոյ. նոքօք կազմին և պահպանին հաւատարիմ մշակք՝ կարգեալք՝ ի ծաւալել զգիտութիւն փրկութեան, ՝ի խլել զգայթագղութիւնս յարքայութենէն Յիսուսի, և յարծարծանել զհաւատսն հոգեբուղս և հոգեշէնս մասունիւք. նոքօք կանգնին՝ ի միջի մերում բնակարանք արքութեան, յորիք բարեպաշտիկք՝

1 Հռոմ. թ. 29:

ապաւէնք անմեղութեան, ուր ախտին պատասպարեալ՝ ի նաւաբեկութենէ՝ գտանէ անքոյթ նաւահանգիստ. նոքօք և Թոռունք մեր գոյին ջհասարակաց ոչխաց փրկութեան, որ են երանաւէտ յաւէրժ յիշատակարանք բարեկրօնութեան՝ ի սէրութենէնս, երաշխաւորք շնորհակալութեան ապառնի գարուց առ Թագաւորս. որ և ըղձակերտս զնոսին առնիցեն յեռանդուց և դիւցազնս ամենայն յաւիտեանց:

Ոչ, Տէր ալքայ. արձանք որ յամբաստանութենէ համ՝ ի շողոմից են կառուցեալ, փառք նոցա Թագեացին ժամանակաւ՝ ի մոռացութեան, կամ՝ ի սգաստանաց և յանապատիս դառաստանաց յեռնոցն ջնջեցին. ազգք ապագայք՝ ի հենգնի կայցեն պարծանաց և պատուոյ արքայից բազմաց, զորս ժամանակ իւրեանց շնորհեալ ևցէ նոցա. խակ փառք հասարակաց նպաստից մատուցելոց բարեպաշտութեան և յաւէրժացելոց զկնի իւրեանց, կացցեն անեղծական. և Թէպէտ և մեծ ևցէ յոյժ Թագաւորն զոր ապամբ տակաւին, սակայն յամենայն յիշատակաց երաւամբք կանգնելոց յանմահացուցանել զփառս Թագաւորութեան իւրոյ, երկոքին բարեպաշտօն և հոյակապ շինուածքն[1], յորոց՝ ի միում՝ արութիւն քաջութեան, և՝ ի միւսում՝ կանանց աղնուութիւն՝ գտանիցեն անսպառ և անվրէպ աշխարհայորդոր խնամս, են կոթողք՝ որ առաւել քան զամենայն՝ երաշխաւոր կան նմա գրուատից և գոհաբանութեանց առյաւպա եկելոցն:

Զայս նախանձ պարտին Թագաւորք և մեծամեծք ունել՝ ի պաշտպանութիւն արքունեան օրինացն կրօնից. բայց զնոյն պարտին և առ աւանդն սուրբ՝ վարդապետութեան նորա և Ճշմարտութեան. և մանաւանդ առաքեալք մեր՝ յորս

1 Մեծագործ անկեղանոցն խեղ և հաշմ զինուորաց, և տուն դատախարակութեան աղնուատոհմ օրիորդաց բազմաց Համօրէն աշխարհին:

այսչափ յառաջադէմ է ամպարշտութիւն՝ առաւել զարթուցանել պարտին յայս զվոյթ նոցա և զքեան :

Վկայեմ ես ի դարս իւրաքանչիւր եղեալ են անկրօնք · ամենայն ժամանակ և ազգ ամենայն՝ տեսեալ է մեծամիտ և մրաթամաքախ ոգիս , ես ոչ ի սիրտս իւրեանց միայն և ի գաղանիս ասէին՝ թէ ոչ գոյ Աստուած , այլ և բարձրաբարբառ հայհոյէին · և անդադար յաւուրցն Սաղմոսին մինչդեռ և նոր և առաջամայն էր յիշատակ սքանչելեացն Տեառն որ յԵգիպտոս և յանապատին , զամենայն աստուածեղէնն պաշտօն Բարձրելոյն արհամհէին ընդ ամպարիշտ երկբայութիւնք՝ որ հասարակաց լեզու եղեն անհաւատութեան :

Սակայն , Թէպէտ և երևեցան երբեմն ամպարիշտք , աշխարհ լինքնին սոսկմամբ հայեցաւ ի նոսա , և Թշնամիքն Աստուծոյ ոչ յայլ լինչ յայտնեցան ի վերայ երկրի՝ բայց ի նզովս և յարհամարհանս լինել ամենայն մարդկան :

Իսկ այսօր , եղբարք , ամպարշտութիւն առեալ է կերպարանս իմն մեծութեան և փառաց , անուն շքեղ է , և յաճախ անձամբ յանձինս մատուցանեն զայն՝ քահանայքն պարծանաւք , մինչ դեռ տակաւին մտացն խորհուրդ չիշեալ Թօթափիլ զլուծ և չներել : Քաջութիւն իմն է այն այսօր՝ որ արժանի առնէ մերձաւորութեան մեծամեծաց , բարձր առնէ գոգ ցեսս զանկածութիւն անուան և զտոհմի , արանց անհնազնից տայ շնորհս իմն առանձին ընտանութեան ընդ իշխանս ժողովրդեան , ընդ որ և բարք մեր խեղաթիւրք շտապունին . և ամպարշտութիւն որում՝ անգոնել արժան էր ըզպայծառութիւն տոհմի և զփառաց , զճնէ և փառաւորէ զանարգութիւն և զվատթարութիւն : Ամպարշտին մեծամեծք եղին շուք , նոցա է անկ արհամհել զինս ի պատուոյն և յամօթ մատնել :

Քանի՛ կորանք կրօնից , եղբարք իմ · մեծամեծ որեարն հեթանոսութեան՝ պատկառանօք խոսէին զնոսին պաշտամանցն կուռց՝ զորս գիտէին խաղոյ և շամբշութեան իրս լի-

նել. ընդ իմաստուն խորհէին, բայց չիշխէին խօսել այլ ինչ ազգ ՚ի խառնաղանձէն, ամենայն հոչակելի անուամբ իւրեանց և պիտուէիամբք ոչ ժառէին թշնամանել համար-ձակ զիմաստուէեան պաշտօնն, զոր ահեղութիւն օրինացն աշխարհին և հնութիւն ժամանակաց մեծարոյ գործէին. Սոկրատէս ինքնին, հելլենացն պարծանք, առաջին իմաստասէրն ասիղերաց՝ դրուատէլին ամենայն դարուց՝ և ի-րուն սերտիւ սիրելի, ՚ի մահ դատակնքի յատենէ աթէնացւոց՝ վասն փոքր ի անզգոյն խօսելոյ զայլանդակ աստուածոցն, քան զորս առասել մեծարանաց արժանի էր ինքն ՚ի քաղաքացւոց իւրոց:

Իսկ առ մեզ՝ Աստուածն երկնից և երկրի համարձակաձայն հայհոյի, և նախանձն ազգային ոչ ընդոստնու. և ընդ իշխանութեամբ իսկ հաւատոյ՝ արք վատթարք և տգէտք ծալը առնեն հրապարակաւ զառ ՚ի յերկինսն իջեալ վարդապետութիւնն, և գովութիւն առնու ամպարշտութիւն. և ՚ի թագաւորութեան՝ յորում անուն քրիստոնէի պարծանք էն արքայից մերոց, անկրօնութիւն անպատուհաս գառնոյ լինի և յորջորջումն պատուոյ հպատակաց: Դրօշեալքն անուանք ունկնցն՚ն ուրեմն արքունի սպասաւորս ՚ի վերինդրութիւն գիտնոց և իմաստնոց, և միայն Աչմանրիան Աստուած չունկնցի՞ լինչ ՚ի սասս խեռելոց և անզգամաց:

Հապա խնդրեցէք զվերէ պատուոյ և կրօնից դուք, եղբարք իմ, որոց քաջանուն նախնիք՝ եղեն նոցին առաջին ա-ռանդաւորք. վասն որոյ և ձեզ պարտ է լինել նոցին գվնա-ւոր պաշտպանս. մերժեցէք ՚ի ձէնջ զամպարիշան. մի զաս-տուածամարտսն առ բարեհաճս կալջիք երբեք. փառք մեծ են մեծամեծաց չառնել անտես զթշնամանս և զանարդու-թիւն հաւատոյ հարցն իւրեանց առաջի իւրեանց. յարհա-մարհանս կարգիք համարել պարտիք զանարդանս կրօնից դաւանութեան ձերոյ. լերք է լեզու մեղանչական ՚ի պատ-հառանան և ՚ի զգուշութենն՝ որ վայելէն առ ձեզ. անգոս-

նել առաջի ձեր զԱստուածն զոր դուք պաշտէք՝ զձեզ անպոռնել է: Զիսոս անհաւատութեան լուխքնք զայրացմամբ որ կարկեսցէ զբերան անհաւատին. քանզի զրախտութիւն նեթ է ծնօղ ամպարշտաց, յարհամարհին՝ և նուազ եղիցին:

Լեզի՛ ի ձեզ աղնուական լինի և կրօնասէր ակնածութիւն՛ ի Աչմարտութենէ հաւատոյ. Աչմարիտ մեծանձնութիւն այն է՝ բաւական լինել խոնարհ բովանդակ զմեծութիւն և զբարձրութիւն հաւատոյ: Մեծամեծ գիտութիւնք ինքնին առաջնորդեն մեզ՛ ի հլութիւն. ապիկար և անձուկ միտաց ախտ է անհաւանութիւն. զամենայն ոգիատանալ է՝ կամելն գիտել զամենայն: Ընդ անձինն բանք հակառակք և անդունդք ամպարշտութեան՝ առաւել անհաս են քան զնորին խորհուրդս հաւատոյ. և առաւել անհնարին է մտաց խզել զընկերութիւն զամենայն սամեռէս՝ քան հնազանդ և հպատակ լինել:

Օ՛ն այսուհետև մեծարանքդ ձեր և նախանձ կրօնից հարցն ձերոյ՝ միակեալ աՀեցուսցէ և զդեռաբողբոջ սրբայիս՝ ընդ որում զօդեն զձեզ անուանք ձեր և առաքութեան բարձք, որոյ և դաստիարակութիւն զոգեպես յամենեսին՛ ի նոսա է հաւատացեալ որ պատուհասքն են նորա հպատակութեամբն. ՛ի ձեզ գոցէ զառաջինն երաշխաւորս հաւատոյն՝ զոր նախահարքն նորա առեալ հանին յանթոռ թագաւորութեան. եւանդն պաշտպանութեան Եկեղեցւոյ՝ ընդ արեանն խաղացեալ՛ ի նմա, և քան զևս վառեալ խրախուսեսցէ ձերովքդ օրինակօք. մոլորութիւնք և օտարոտի նորաձեւութիւնք լեզին նորա գլխաւոր Թշնամիք՝ ընդ որս գիջէ՛ ի մոխ տալ պատերազմ. և առաւել նախանձայոյզ լեզի անխախուտ պահել զհին սահմանս հաւատոյն քան զվիահեծան տերութեանն:

Աստուած իմ, խաղաղութիւն արքայութեան իւրոյ՝ եղիցի և Եկեղեցւոյ. խռովութիւնք յուզմանց նորա ցածցին՝ մինչ չև նմա՛ ի ծանօթութիւն եկեալք. միակամութիւն և

միաբանութիւն՝ ի միջի մերում՝ սերտեալք՝ մի տայցեն տէր նախանձու խրատ. արքայութիւն իւր եղիցի արքայութիւն խաղաղութեան և շնորհաւորութեան. առիւծ և գառն հաւանիցին ընդ միասին մանկտեացին ընդ ցոլով նորա, և մանուկն այս աքանչելի, որպէս Եսայիաս ասէ, ածցէ զնոսա և՝ ի մի ագօտ տեսցէ Քարտիաւորս. Եւ Տանուտ Տպաղ ածցէ զնոսա [1]: Մի և նոյնինայ և վիշտացեալ բանակ՝ խնդասցեն՝ ի վերայ երկպառակութեանց մերոց. և թէ լուիցեն և ապաշաւ շուրջ զառաքեալսն, մի լինցի այն՝ ի նշան նորահաս վտանգաց և տէրունի խրատ, այլ յաղթանակաց իւրոց և փառաց: Ամէն, եղիցի:

1 Եսայ. ԺԱ. 6:

ՔԱՐՈԶԴ

ՅԵՐՐՈՐԴ ԿԻՒՐԱԿԷՆ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ



Ի ՎԵՐԱՅ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՄԵԾԱՑ ՈՐ ԹՈՂՈՒՆ ՋԱՍՏՈՒԱԾ

Յորժամ այն պիղծ ելանիցէ ի մարդոյ, շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ և ոչ գտանէ:

Ղուկ. ԺԱ. 24:

ՏԷՐ ԱՐՔԱՅ,

Ահա այս պիղծ և անհանգիստ՝ որ ելանէ և մտանէ անդրկէն ի մարդն ուստի ելլ, փոխուխել անդադար տեղւէ ի տեղ ըոլչէ, փորձէ զամենայն վայրս՝ և ոչ ի միում հեշտանայ առնուլ զկայ, ընդհանայ հանապազ տեսանել իւր ձանապարհս զեղեցիկս և հեշտալիս, և միշտ ընդ երէկ և ընդ երաշտ շրջեալ՝ խնդրէ դադար և ոչ հանդիպի, պատկեր է բնաւորութեան և բարոյից մեծամեծաց երկրի, որ ցանդ անհանգարտ՝ տատանեալ և չուառական են քան զտակ ժողովուրդն, յորմէհետէ մտանեալք ի կարիս իւրեանց և կինք քեանն՝ Թոզին զԱստուած:

Օրինակ բնական է այս այնմ՝ աշխարհի բարձրութեան և բարեկենդանութեան՝ որում տենչայ աշխարհ, և քան Աստուծոյ անարժան է փափաքման: Երջանկութիւնն, Տէր արքայ, ոչ է կից ընդ պայծառութեան բարձի և պա-

տուոյ, այլ ընդ անմեղութեան կենաց: Ոչ որ ինչ բարձր առնէ զմեզ քան զայլս, նոյն և երանեակս գործէ, այլ որ հաշտեցուցանէ ընդ Աստուած: Զգեղեցկագոյնն՝ի թագս ասէզբայց ունիս դու՝ի գլուխ, այլ եթէ բարեպաշտութիւն ոչ օգնեսցէ քեզ՝ի կրել զայն, բեռն տապնատոյ լինիցի քեզ այն: Բովանդակ ասել, ուր չիք հանգիստ՝ չիք երջանկութիւն, և ուր չէ Աստուած՝ ոչ գոյ անդ և հանգիստ:

Ապա բարձրութիւնն եւեթ ոչ գործէ զերջանկութիւն մեծամեծաց, եթէ չկային ընդ նմա առաքինութիւնն և երկիւղ Տեառն. նա մանաւանդ՝ ըստ մեծութեանն և առատութեան թշուառական է մարդ, եթէ ոչ ընդ Աստուծոյ կեցէ:

Ճշմարտութիւն կարևոր, որ լինիցի նիւթ ճառիս: Մատթեոսբ, և այլն: Ողջոյն փեղ Մարիամ:

ՏԻՐ ԱՐՔԱՑ,

Եթէ երկրի միայն հասանելոյ էր մարդս, ըստ մեծութեան վայրացն զոր թէ գրաւէր՝ նոյնչափ երջանիկ լինէր և ինքն:

Այլ մարդ՝ երկինից է ծնեալ, և՝ի սկզբան իւր պարտական կրէ զչքեղ և զանչինչ նշանակս ծագման իւրոյ. կարէ առնարտել զայնս, այլ ոչ ջնջել: Թէպէտ և սիեզերք համօրէն ասացուած իւր լցեն և ժառանգութիւն, սեռցէ միշտ զի անկանի՝ի փառաց, և ոչ հաճեսցի զերազ անդ առնուլ. ամենայն ինչ որ ընդ ստորև զինա սևեռիցեն, շորթեն զնա դոզդեա՝ի ծոցոյ անտի Աստուծոյ, յիւրմէ սկզբանէն և՝ի յաւիտենական հանգստեներն, և Թողուն՝ի հոգւոյն վերս ինչ խեղճ մտացն խղճի, զոր ոչ ևս կարողասցին ինքեանք հցել. զգոյ հանապազ Թաքուն ցաւոց պատառուածոյն և խրամատին, և որ ինչ խանդարտ ածէ՝ի զօդ միութեան իւրոյ ընդ Աստուած՝ անհաշտելի առնէ զնա ընդ իւր ինքեան: Եւ ստիպն մեք խոստանամք միշտ անձանց երջանկութիւն ինչ անկրաւ յաշխարհի ատս: Յանջրդի երկրիս ընթանամք

ամենեքին իբրև զայն Աբեսաղոմիս, զինի երանութեան և հանգստեան՝ զոր անմարթ է մեզ գտանել: Ի վայելս լինչ իրաց հաղիւ զերծեալք ի պատրանաց երջանկութեան՝ որ անդ մեզ առաջեաւն Թուէր, այլ ինն ցանկութիւն արիանէ զմեզ ի նոյն խաբէութիւն, և անցեալ անդադար ի յոյսդ ի տաղտկութիւն և ի տաղտկութենէ ի յոյս, որ լինչ միանգամ տայ մեզ ի միտ առնուլ զվերնական մեր, նոյն լինի մեզ ի հրապոյրս՝ յաւէրժանալոյ ի նոսին:

Թուի նախ զառաջինն, թէ ի մոլորութենէ այսի՝ ամէն կին եւեթ երկիւղ կայցէ: Քանզի նուաստութիւն բախտին իւրոյ անջրպետ անհուն Թողու ի վեր քան զնա, ոչ մեծ լինչ զարմանք լցեն ցնորակոծ նմա լինել՝ թէ ի բարձրանալ վիճակին՝ յորս լինքն չզօրէ ժամանել՝ կայցէ լինչ երջանկութիւն մտացածին, և կարծել, զի այս իսկ է մարդն, թէ զոր լինքեան չմարթի ըմբռնել՝ այն իսկ է խնդրեալ երջանկութիւնն:

Բայց բարձն և պատուոյ և տոհմի փառաւորութիւն՝ վտանգով փարատէ զունայն ցնորսն: Ի նանիր է գեր ի վերոյ այլոց վերանալ և վարգել ի Թէս բախտին, երջանկութիւնն գարձեալ միշտ ի վերագոյնն քան զմեզ գտանի կայանիւ. որչափ և բարձրանայցեմք, նա առաւել ևս հեռանալ Թուի ի մէնջ: Վիշաք և տխրերանգ անձկութիւնք համբարձեալ գնան բազմին ընդ ազքային իսկ յաճառն: Խոյրն՝ մեծաշուք զարդ ձախաւոյ Թագաւորաց, սլաքօք և վիշուք զինեալ է յաճախ՝ որ ծակոտեն զայն. և ոչ միայն երջանիկ չեն մեծամեծքն, այլ մանաւանդ Թախծալից վիճակք են՝ զի չմարթի յերկրի երջանկանալ Թափուր յառաքինութենէ:

Ճշմարիտ է ևս՝ Թէ բարձրութիւնն առաւել ևս Թշուառացուցանէ զմեզ, եԹէ ոչ հաւատարմագոյնս առ Աստուած յարդարեսցէ զմեզ: Անդանօր բռնապետն են ախտք, տաղտկութիւնն՝ ծանրագոյն, նեղսրտութիւնն՝ անհրաժեշտ. այս է, ունայնութիւն ամենայնի որ չէ Աստուած, ազգապետն և տոհմալի:

ԽՈԿՈՒՄՆ Ա.ՈՒԱՋԻՆ

Ախտքն բռնապետնք : Այո՛, Տէր ալքայ, ամենայն ազէ-
տից վերոց ախտք են պատճառք. և որ ինչ ոզբք զայնս և
դրդէ, բազմացուցանէ զվիշտս մեր։ Մեծ ոք հեշտասէր՝
թշուառագոյն է և յաւէտ ողբալի քան զկեանն և զանար-
դագոյն ՚ի ժողովրդականաց. ամենայն ինչ օժանդակէ նմին
՚ի յապեցուցանել զանկրաւ կարիսն, և որ ինչ ընդ զայն՝
դրդռէ. ընդ մեղացն ամենն ցանկութիւնքն : Որչափ ՚ի յո-
ժարութիւնս իւր մատանէ զանձն, դերվի լինի նոյնչափ և խա-
զալիկ նոցին. յաջողութիւն իւր բորբոքէ անդադար զամե-
նաքաղց բոցն ագահութեան, և ՚ի մոխրոյ անաի իւրմէ արծարծեալ
յարուցանէ զնոյն. զգայութիւնք ախրացեալ նմա՝ լինին
նորա բռնաւորք, զմայլի հեշտութեամբք, և յապեցութիւն
իւր լինի նմա ՚ի տանջանս. և հեշտութիւնք ինքնին, ասէ
Հոգին աստուածեղէն, ծնանին զմրդն՝ որ կրծէ զինս և ու-
տէ. և Քաղցրութիւնքն նորա՝ որդոյնք [1]: Այսպէս անձկութիւնք
նորա ՚ի լինութենէ իւրմէ ծնանին. ցանկութիւնք իւր կա-
տարեալք միշտ՝ չթողուն ինչ նմա վայելելի, զինքն ընդ
ինքեան լքանեն ախտաբար. անչափութիւն հեշտութեանցն
լայնէ ընդարձակէ օր քան զօր զունայնութիւնն, և ըստ
վայելելոյն՝ նոյնչափ և թաղծի և դառնանայ :

Նոյն իսկ աշխատանք իւր և բարեվայելչութիւնք և պարտք՝
առ հասարակ թուենեն զմեղանչական կարիս իւր : Աշխա-
տանն իւր. որչափ բարձր լոյէ, այնչափ և դժուարին է գո-
ղանալ զայնս յաչաց և ՚ի պարտաւանաց աշխարհին : Բա-
րեվայելչութիւնք իւր. որչափ նախանձաւոր նոցին լոյէ,
նոյնչափ դժնդակ է խնդիր կատարածանացն՝ թէ գուցէ անբնա-

1 Ցոբ ԻԴ. 20. ըստ լատին Թարգմանութեան :

բողոքելիւն ինչ՝ ի գերև առնելոյ զնոսանն իւր և զհայթայթանս։ Պարտք իւր՝ զի հարկ է միշտ հարստահարել նոքօք զհաճոյսն իւր։

Ոչ, Տէր ազգայ՝ ամենուն յոր նախ՝ առաւել պաշտելոյ է պատնիշօք յերեսաց հեշտութեան, քան որպայթադիր հրապուրանօք։ Եթէ ամենայն ինչ վարմն սիրէ մանկութեան ազգային, ձեռն տայ և ամենայն յօգնութիւն զգուշութեան։ Նոքիրեա զանձինդ առ ժողովուրդդ՝ որում և պարտիդ խակ զքեզ, հեշտութեանն թոյն ոչ գոյէ պատրաստ՝ ապականել զսիրտդ՝ ընդ դատարկութեան բնակէ նա և հաճի՝ խնամք թագաւորութեանդ լինին քո ցանկալի հեշտութիւնք։ Անձին ևեթ կեալ՝ չէ թագաւորել՝ թագաւորք՝ առաջնորդք ժողովրդոց են՝ ապաքէն զայդ անուն և զիրաւունս՝ ի ծնէ ունին, բայց խնամովք և մտադրութեամբ միայն լինին այնմ արժանի։ Վասն որոյ, պարտպորդ թագաւորութիւնք վիհ իմն խաւարչական կացուցանեն՝ ի ժամանակագրութիւնս մեր, որոց և ոչ արժանի համարեալ է՝ ի թիւ արկանել զամս կենաց դատարկանաճն թագաւորաց, որպէս թէ չէթագաւորեալք արդեամբք, և ոչ խակ կեցեալ էին։ Անդունդք իմն խաւարամած են՝ զոր դժուարին է լուսաւորել մինչև ցայսօր՝ ոչ միայն չզարդարեն զպատմութիւնս մեր, այլ և նեխացուցանեն և շառագանեն՝ և քան անձամբք իւրեանց՝ առաւել ծանօթ են՝ ի մեծամեծ որերդին որ կացին յաւուրս թագաւորութեան իւրեանց։

Ոչ խօսիմ ես առ աչեղեաւս զայլոց կարեաց, որ քանզի ամենագործն են՝ ի գերասանձանան, դառնագոյն և խորամանկ երաշխեցս գործեն՝ ի սիրտս մեծամեծաց։ Անչափ անհնարին է անդ փառասիրութիւն։ Եղեւ՝ անհնարն քաղաքացին գոհութեամբ կեալ՝ ի չափու բախտին իւրոյ՝ ժառանգորդ ընչից հարցն, չերանէ ըստ սահման անուան նոցա և վիճակին՝ առանց նախանձու հայի յոր ինչ չմարթէ առանց ժպրհութեան փափաքել՝ ամենայն ցանկութիւնք

իւր ամիսական կան յայն զոր ունի, և թէ անկանիցի ինչ երբեք ՚ի խորհուրդս մեծութեան, եղջերաւաքաղք են զբաւարձալիք ՚ի զբօսանս պարտապորդ մուտց, ոչ ՚ի տագնապ ոգեսպառ:

Մեծին չէ ինչ շատ, զի կարէ ձգտիլ առ ամենայն. զանիւթիւնքն ածեն ընդ բախտին. որ մեծ ինչ է քան զնա, փոքրկացուցանէ զինքն յաչս իւր. ոչ այնչափ դրդի ՚ի տեսանել զյոլովագոյնս ՚ի ստորև իւր, որչափ հաշի և մաշի ընդ որս ՚ի վեր են տակաւին քան զինքն. ոչինչ համարի ունել, եթէ չկալցի զամենայն. ցամաք և ծարաւուտ է անձն նորա. և յոչինչ վայելէ՝ բայց ՚ի թշուառութիւնս իւր և ՚ի նեղութիւնս:

Չեւ է այս բովանդակ. ՚ի փառասիրութենէն ծնանին մախանք, և ախտս այս անարգ և վատ՝ բիծ և ապէսք մեծամեծաց են: Յաչալեն զհամբաւ այլոց, և փառք որ ոչ իւրեանց ինչ կցէ՝ հեղգ լինի է առ նոսա ՚ի խամրել զնոսա և յանարգել: Խանգան ընդ պարգևան որ զեղուն յայլ առ նոքօք. և թուի նոցա՝ թէ որ յայլս ինչ ախտիցին, զբարկիցեն զինքեանս: Նախանձին ընդ հնարս, և որ բարեկամութեան և մտերմութեան տեառնն արժանի ոք կցէ, ժառանգէ զատելութիւն նոցա և զարհամարհանս: Զարանիեն և զյաջողութիւն փառաց աշխարհին, և համաշխարհի ցընծութիւն՝ նոցա արտմութիւն է գաղտ և առանին. յաղթանակք ՚ի նախանձորդաց իւրեանց կանգնեալք ՚ի վերայ թըշնամեաց՝ գառնագոյն են նոցա քան ոսխացն խակ մերոց. տուն նոցա՝ իբրև զչամանային՝ է տուն սգոյ և արտմութեան, փոխանակ զի Մուրթքէ յաղթանակէ և դրուատի ընդ ոսանն ՚ի բաղմութենէն, և ոչ շատ համարեալ զանզգայութիւն իւրեանց ընդ փառս եղելոցն, ափոփանա անձանց խնդրեն չանալով մխացուցանել զայնս չարաչար դառնամբ և ըստգանօք, հուսկ ուրեմն, այս անիրաւախտ՝ զամենայն ՚ի դառնութիւն դարձուցանէ, և հայթայթին հնարագիտութիւնք ոչ երբեք յերջանկութիւն հա-

սանելոյ, կամ անձին չարեաց, կամ բարեաց եղելովք այլոց:

Հուսկ ապա, ամենայն ախտից հանդէս արարիչք, դժընդակ և դառագլ բանուԹիւն վարեն 'ի սիրտս ասաուածամուռացս մեծամեծացն: ԹշուառուԹիւնք նոցա առաւել ծանրաւորագոյն են. քան ապրապայման հալածուԹեանն՝ զոր ժանագոյն են և կորանքն: ԱռելուԹիւն նոցին անհնարին. քանզի փառասիրուԹիւն յոյժ փքացուցանէ զնոսա, մինչեդինս և անողոքս գտանել զնոսին արհամարհանքն: Երկիւղ նոցին անչափ. 'ի ձչմարիտ չարեաց յապահովացեալք՝ անձամբք անձանց առեղծանեն մուացածինս, և հոգմաշարժ խարշափուն աերև՝ նոցա լեառն իմն է որ գայ տապալել 'ի վերայ իւրեանց: ՀիւանդուԹիւնք նոցա ցաւագինք. որչափ հարեալ 'ի կեանս իցեմք, նոյնչափ որ զոյն վտանգէ՝ զարհուրեցուցանէ զմեզ: Սովորեալք յամենայն անուշոնս և հեշտալիս զգայուԹեանց, ԹեԹև ինչ ցաւ իսնդարէ զերջանկուԹիւն նոցին, և անհանդուրժելի է նոցա. ոչ գիտեն մի՛ տացեբար վարիլ՝ ոչ խօԹուԹեամբ, ոչ առողջուԹեամբ, ոչ բարեօք և ոչ չարեօք՝ որ անբաժանելի են 'ի մարդկէղէն բնուԹենէ: Չաւուրս նոցա կարձեն հեշտուԹիւնք, և տրտմուԹիւնք՝ անմեկին ուղեկիցք նոցին, ձեռեն տագնապեալեն զմնացուած ամաց նոցա: ԱռողջուԹիւնն անժուժկալուԹեամբ խարխափեալ՝ 'ի յաձախուԹենէ դեղոցն խաԹարի: Անչափ փոյԹ զգուշուԹեան խնամոց յանդ հանեն՝ զոր հեշտուԹեանցն անչափուԹիւն չէր մարԹացեալ. և եԹէ յանչափուԹեանց փախուցեալք լցեն, փափկուԹիւնն և դատարկուԹիւն լինքնին լինի նոցա հիւանդուԹիւն ինչ և հիւծումն՝ ապատամբ յամենայն հնարից ձարատարուԹեան, և նոյն իսկ հնարքն մաշեն և ապառեն զոյն: Հուսկ ամենայնի՝ հպատակուԹիւն նոցա Թախծալից. անեալք 'ի կեանս քմայ և հաճոյից, որ ինչ նեղէ և տագնապէ զնոսին՝ խեղդ ընդ անձն անկանի նոցա: Հեռի յարքունեացն՝ համարին 'ի տխուր աքսորս կեալ. զուսաջեաւ առաւանն,

քրիստոնէին անդադար զհպատակութենէ պարտուցն և զնեղութենէ բարեվայելչութեանց. ոչ կարէն տանել՝ ոչ հանգրտեան սոսկական պայմանի, և ոչ փառաց աւազամեծար կենացն:

Անկեղծ անտանելի է նոցա հանգիստ՝ որպես ամբոխութիւն, կամ մանաւանդ ամենայն ուրեք ինքեանք ինքեանց բեռն են ծանր: Որ ապերասան և անօրէն կամի կեալ՝ լուծ ծանր է նմա ամենայն:

Ոչ, եղբայրք իմ. մեծ ոք որ՝ի մեզ եցէ՝ Քրիստոսապոյն է քան զայլ մեզաւոր. բարեկեցութիւն զանգանէ իմն զնա ընդ հեշտանս, և ոչ Թողու զգալ՝ բայց եթէ վերացց: Այնպէս կամեցար, Աստուած իմ, զի գթութեան հանճարեալ մեծամեծաց աւագութիւն՝ որոց մոռացեալ եցէ զպատուիրանս քո, այն լեցէ նոցա՛ի ձանձիր և՛ի տանջանս:

ԽՈԿՈՒՄՆ ԵՐԿՐՈՐԴ

Առեմ՛ի ձանձրոյթ. և է այս խոկումն երկրորդ՝ զոր ասացի ինձ Քրիստոսութիւն մեծամեծաց որ Թողին զԱստուած: Յերջանիկ կարծեցեալ վիճակի անդ յաչս աշխարհի՝ ոչ միայն բռնապոյն են ախտք, այլ և տաղտուկն անդ անտանելի:

Այո՛, եղբայրք իմ. որ ոսկին սեփականն Թուի տաղտուկն՝ որքացեալ է գոգցես առ մեծամեծան. որպէս Թէ սոսկեր նոցին եցէ՝ որ ընդ ամենայն տեղիս զհետ նոցա ընթանայ: Հեշտութիւնք՝ զրեթէ առհասարակ ապառելք վասն նոցա, ոչ այլ ինչ առաջի առնեն՝ բայց անախորժ նմանահեռութիւնս, որ խոնջ և Թմբիր բերեն. զուր ջանան փոխոխել զնոսա, զտաղտկութիւն իւրեանց փոխոխեն: Ի նանիր նաղին երևել՛ի զլուխ ամենայն զբօսանաց հասարակաց. աշխոյժք են այդ առ՛ի ցոյցս, և սիրան զրե-

թէ անմահ է՛ի նոցունց. հնացեալ սովորութիւն հեշտութեանց անհամոքելի է նոցա զնոսին. փուտ և զաղփաղփուն հայթայթանք են, որ անձամբ զանձինս վիթարեն զօր հանապազ: Ցմահեալք ախտացելոյ՝ որում առ երկար հիւանդութեան անհամեալ են ամենայն կերակուրք. յամենայնի ձաշակեն, և ոչ միւն ազդէ՛ի նոսա և ոչ զուարթացուցանէ. և անդէն ձանձիր անհնարին, ասէ Յոբ, զհետ գայ անոսի յուսոյ հեշտութեան՝ որում ակն ունէր անձն նոցա. Յոյս նոցա խորտոպ է անհանոյ ի՛բենց [1]:

Կեանք նոցա բովանդակ ոչ այլ ինչ են, բայց տառապանի զգուշութիւն յերեսաց տալակութեան, և ինքն իսկ կեանք նոցին չէ ինչ այլ՝ քան եթէ վշտալից տալակութիւն, զոր և կանխեն ևս՝ ՛ի փոյթ և ՛ի ձեռ յոլովելոյ հեշտութեանցն: Ամենայն ինչ՛ի մուտս իսկ անդ կենացն՝ հնացեալ և մաշեալ է վասն նոցա, և յառաջին ամ ախոյն զգիտուն առնուն զձանձրութեան և զանհամութեան, զոր կիթոտութիւն և երկար վայելք ամենայնի՝ թուին լծորդել ընդ ծերութեան:

Արդարոյ սակաւ ինչ հեշտութիւն պիտոյ է, և առաւել երջանիկ և խաղաղական են աւուրք իւր: Անմեղ սրտի՝ ամենայն ինչ սքանչումն է: Քաղցր և օրինաւոր հեշտութիւնք՝ ընձեռեալք ՛ի բնութենէ, անհամք և տաղտուկք զերկնեալումն, առն բարւոյ անկորուստ ունին բովանդակ գնութեանց հեշտասիրութիւն. և արտաքոյ անմեղ հեշտութեանց՝ չկան ինչ որ թողուցու՛ի հոգւոյ անտակ անխառն զուարճութիւն. որ ինչ աղտեղի զնա՝ թախծեցուցանէ և մուխ ածէ: Ամբիծ ընտանութիւնք և պարկեշտ և զգաստ խաղք Սահակայ և Ռեբեկայ յարքունիս գերեզմանի՝ բաւական էին ոգւոյն անարատից և բարեպաշտաց: Զուարճութիւն մեծ էր Դաւթի՝ նուագել քնարաւ զգուվութիւնս Տեառն, կամ՝ կաքաւել ընդ ժողովրդեան իւր.

[1] Յոբ ԺԳ. 20:

լուամ զարբուհեան տապանակաւն : Նահապետացն առաջնոց ասէք ցնծալիցք՝ էին ինձոյք հիւրասիրուհեան, և ոչ խաթային դէր՝ շատ էր ի դրդանս անմեղուհեան կոչնոցն :

Սակաւ ուրախուհիւն պիտոյ է արտաքուստ՝ այնմ որ զգեցեալ է զայն ի սրտին. անտի ամուի այն յորկոփեա երանակ եթէ չունիս ի ներքս ի քեզ զաղբիւրն ճշմարիտ ուրախուհեան, զնապատուհիւն նմա զմտացդ խղճի և զարդաւի անմեղուհիւն, վայրապար խնդրես արտաքոյ : Ժողովեա առ քեզ զամենայն զբօսանս, ի խորոց հոգւոյդ ծաւալեսցի միշտ դառնուհիւն Թունաբեր : Ճարտարամտեա յամենայն հեշտուհիւնս, անօսրացո զինուս, արկ ի բոլս, յամենայն պէսպէս կերպարանաց անտի՝ բնաւ ոչ այլ ինչ եղիցէ և ծնանիցի՝ բայց միայն ձանձրոյթ :

Ո՛վ Տէր, որ ինչ օգտէն զմեզ ի քէն՝ այնմ լաւ արժան էր կոչել զմեզ առ քեզ. որչափ յաջողուհիւն բազմացուցանէ զհեշտուհիւնս մեր, նոյնչափ և զպատրանան նշաւակիչ. և առանց ներելոյ և Թշուառական են մեծամեծք, զի չմերձենան առ քեզ, Աստուած իմ, վասն զի Ճարտար և յաճախ առնուն ի միտ զուսոյնուհիւն ամենայնի՝ որ չես դու :

ԽՈԿՈՒՄՆ ԵՐՐՈՐԴ

Եւ ոչ միայն մշտագոտ տապալուհեամբն Թշուառանալիք են, այլ և անհեզեզուհեամբ և անսպառ նեղսրտուհեամբ և կարճմտուհեամբ՝ որ անմեկնելի են ի նմանէ : Յորժամ յարեսցի, ասէ Յոբ, Թախծեալ և անանդորը երևեսցի հոգի նորա. անհարթուհիւն յօժարուհեան նորա նմանեսցէ յողջողզուհեան ալեաց ծովու, և մթին և խաւարին խորհուրդք անկցին ընդ անձն նորա. Յորժամ հա-

Տրբեսցի ինէ ահա լեալ ինէ՝ նեղէսցի. ամենայն պատճառ հասցէ՛ի վերայ նորա [1]:

Ահա է ահա, Տէր ազգայ, սատուածամոռաց ազգայիդ և մեծամեծացն վիճակ, որ զյաջողութիւն՛ի գրգանս զգայութեանցն վարեն: Տաղակացեալ յամենայնէ վաղվաղակի, ամենայն ինչ ծանրանայ նոցա, ծանր են և ինքեանք անձանց իբրեանց. խորհուրդք նոցա զմիմեանս եղծանեն, և ոչինչ յառաջ գայ անոքի՝ բայց վարան ամենևին՝ սառեղծուած հաճոյիդ, որոց միայն է տալ նմա հաստատութիւն. հրամանք նոցա՝ յետ վայրկենի՝ ոչ ևս են հաւատարիմ թարգմանք կամաց նոցա. թէ հնազանդեսցի ոք՝ անհաճոյ լինի. հարկ է գուշակել զայնս, բայց առեղծուածք են՝ նոցին իսկ անլուծանելիք: Ամենայն գնայք իբրեանց, ասէ Հոգին սուրբ, յողդողդ և տարակուսեալ և անհաստանելի են. Զնչի՞ն ճանապարհի՞ նորա, և ու՞ յայտնի՞ [2]: Զուր է զհետ սնդիլ նոցին, ի քթթել ակն անհետ լինին յաչաց, փոփոխեն զյաւիտեան. աղամողեալ ոք ընդ նոսա՝ և տակաւին չժամանէ. տապալանան յերերոյն առ նոսա մեծապատաց, և յորոց չընծայինն՝ խոյին: Ծառայք հաւատարիմք նեղեալ տագնապեն զնոսա պարզմտութեամբ իբրեանց, և ոչ առաւել ինչ ընդ միտ մոանեն կամակատարութեամբ իբրեանց: Տեառք են ցասկոտք և նեղիչք, ամենայն որ շուրջ զնոքօք ինչ է՝ կրկ զբեռն ծանրութեան ցնորմանց նոցա և խեղ բարոյից, որոյ՝ ինքեանք իսկ չկարեն տանել. ոչ յայլ ինչ թուին ծնեալ, եթէ ոչ՛ի թշուառութիւն անձանց իբրեանց և որոց ծառայեն նոցա:

Տեսէք աղէ զԱւուրն՛ի յաջողութեան իւրում՝ և՛ի վտանգ: Ո՞ւմ ուժք զոյր անցուցանել աւուրս առաւել ցանկալիս և երջանիկս: Ցանկալի և՛ի սուկական բախտէ՝ տեսանէր զինձն ամբարձեալ՛ի գահ ազգայական, Թագա-

1 Յոբ ի. 22:
2 Առակ. ե. 6:

ւորութեան իւրոյ սկիզբն եղեն յաղթանակք, որովին՝ արժանաժառանգ պայազատ՝ Թուէր յապահովել զթագն ազգի իւրում, ամենայն ցեղք հպատակեալ՝ սպաս հարկանէին վառաց նորա և հաճոյից, և իբրև զմի այր կային նմա հնազանդ: Ի՞մ այլ խմիք կարօտեր յերջանկութիւն, եթէ էր հնար առանց Աստուծոյ:

Կորոյս զերկիւղն Տեառն, և ընդ նմին զհանգիստ իւր և զամենայն երանութիւն կենացն: Ստանեալ այսոյ չարի և Թուխ և այլանդակ մրրկաց փոթորկելոց, ոչ ևս ոք ձանձանչէ զնա, և ոչ ինքն զինքն: Տաւիղ հոլուի միոյ փոխանակ զբօսուցանելոյ զսիրութիւն նորա, բորբոքէ զմոլութիւնն: Դրուատիք նորա և յաղթանակք նուագեալք ի գառեբացն Յուդայ, պարսաւ լինին և պախարականք են նմա: Խոյս տայ ի մեծարանաց աշխարհին, և չմարթէ խուսել յանձնէ: Դաւիթ առ ոտս գահուն երևեալ՝ առեալ լինի, և ի հեռանալն՝ գիտէ անշուշտ առաւել առելութեան պատահել: Խանդաղատեալ ընդ մոեռմութիւն նորա՝ գովէ զնա, և քան զնա մեղաւոր և անիրաւ գտանի զանձն. խակ ի վաղիւ անդր դարան գործէ նմա՝ ըմբռնել և արկանել զնա յարեւէ: Դժկամակ լինի և ընդ գութ սիրոյ որդւոյն, և ի խէթ կառափծանաց ընդ այն մտանէ: Ամենայն դրանիկք արքունի ջանան խնդրեն՝ թէ ի՞ւ քաղցրանայցէ սխուր և վնասական գառնութիւն նորա. զուր ջան, ինքն խակ ոչ գիտէ: Արհամարհեաց զԱմնուէլ առ կենդանեաւ մարգարէին, և հնարի կոչել զնա ի գերեզմանէն և խորհուրդ հարցանել յետ մահուն: Ոչ ևս հաւատայ յԱստուած, և դիւրահաւան գտանի դիւահարց լինել: Ամպարիշտ է, և անապաշտ. վճռակ՝ ի հարևանցի ասացեալ առաքեալն՝ յոյժ սովրեալ առ անհաւանն: Խաբեբայս անուանեն զԱմնուէլն, զմարգարէս առաքեալս երբեմն առ ի յԱստուածոյ. կորով մտաց համարին լինն արհամարհել զպատկառելի Թարգմանս խորհրդոցն յաւիտենականաց, և ծաղր առնել զկանխասացութիւնսն՝ յելից իրացն առա-

գեալս. ժխտեն Խարձրելոյն զգիտութիւն հանդերձելոյ, և զկարողութիւն պարգևելոյ ընդդէմ հաւատարիմ ծառայից իւրոց, և ապա զինքեաւ՝ ի տիարամոութիւն ասելին՝ երթան հարցանեն զՎհուին:

Այո՛, եղբարք իմ. Թշուառական պայման մեծամեծաց՝ ի մեզն՝ յայտ յանդիմանութիւն է տեսչութեանն Աստուծոյ՝ ի վերայ գործոց մարդկան: Եթէ գոյր երջանկութիւն աստուածատեսից, գէթ՝ ի գահոյսն գտանէին զայն: Բայց որ ոք, ասէ իսկ ումն Թագաւոր, որ միանգամ ոք, Թէպէտ և տէր լցէ տիեզերաց, օցաւի յօրինաց և յիմաստութենէ, օցաւի և՝ ի միայնոյ երջանկութենէն՝ որում հնար լցէ տեղիչալ մարդոյ՝ ի վերայ երկրի. Զի որ գիմաստունին ե գլխաւոր անարգէ, ընտաւտական է[1]:

Եւ ըստ չափոյ բարձրութեան ձերոյ՝ նոյնչափ և Թշուառական էք: Վտանգն չէք լինէ որ հարկ՝ ի վերայ գնիցէ ձեր, նմին լսել և ոչ լինէ որ՝ ի հաստոյ պահիցէ. ազատասցեալք յայլոց նշանութենէ, առաւել մատնեալ կայք՝ ի ձեռս անձանց. լինքնահաճ ախորժակք ձեր՝ ծնունդ են կամակատարութեան ձերոյ, ՝ի ձեզ լինքեանս գարձուցանէք գնչանութիւնդ ձեր: Ախտք ձեր՝ ի կիր առեալ զամենայն և մաշեալ, չմնայ լինէ այլ ձեզ՝ բայց ծախել զանձինս ձեր. յեղյեղուկ բարքդ միայն պատճառ լինին տաղտկութեան ձերոյ և յափրութեան: Ոչ ունելով փոխոխել զհեշտութիւնան սպառեալս, չէք ձեզ գտանել ուրեք այլ եւս լինչ գունակ՝ բայց՝ ի յաւէրժ անկայուն յողդողդութեան լինքնակամ հաճոյիցդ, և հանապազ ընդ անձինս ոգորիք զունայնութենէն՝ զոր Թողու՝ ի ներքս՝ ի ձեզ ամենայն որ շուրջ զձեօք է:

Եւ չէ այս առ աւելեաւս պատիեր սին՝ բանապատճոյճ սեթևեթեալ յանթերի նմանութիւն: Մտանիք առ մեծամեծան, արկէք ձեզին սին՝ ի մի ոք՝ ի զառամելոցն յախտս, զոր երկար վայելք հեշտութեանց արարեալ են ան-

1 Յոբայ գ. 11:

բաւականս ՚ի յոտնութիւն և ՚ի լաւութիւն: Որպիսի՛ մա-
ռախուղ անփարատելի ՚ի բարան, որքան մեծութիւն
թեան և ցնորից: Ոչ ինչ քաղցրանայ, զի ինքն անձին իւ-
րում քաղցրանալ ոչ գիտէ. կեղեքիչ թաքուն արտունչ
թեանց քինախնդիր լինի՝ յորոց շուրջն կան. գոյեաս ՚ի
յանցանս այլոց զրէ զանկարուեթիւնն հաւատարելոյ նոցա
՚ի մեղս. յոր ինչ ոչ ևս զօրէ ինքն, զայն նոցա մեղ դնէ ՚ի
գաղանիս, և զցնորական հաճոյիւն հեշտութիւնս վարկանի:

Ոչ, եղբարք իմ. գարձարձուք յամենայն կողմանս. մե-
ծամեծքն որոշեալք Աստուծոյ՝ ոչ այլ ինչ են, բայց ո-
ղորմ խաղալիկ ՚ի ձեռս կարեաց, յեղյեղուկ խորհրդոց,
գիպուածոց և ամենայն մարդկելէն երից: Նոքա միայն
զիտութ առնուն զաղետից հոգւոյ՝ մտանելոյ ՚ի ձեռս անձին
իւրոյ, յորում ամենայն գիւտք զգայութեանց և հեշտա-
նաց՝ չիմոլուն ինչ նշմար, այլ միայն վիհ լիեն ունայն տա-
կալի, որում և աշխարհ համօրէն՝ ամենայն յորդութեամբ
փառաց և ծիսոյ զնովաւ պատելով՝ անպիտան լինի, եթէ
Աստուած չէ ընդ նմա. վկայք լիեն են փառասիրքն անգա-
ւականութեան արտարածոց և կարեպէտ լինելոյ Աստուծոյ
և կրօնից ՚ի վերայ երկրի: Նոքա ինքնին ցուցանեն մարդ-
կան՝ թէ յատաքինութեան և յանմեղութեան հետ է ա-
կընկալութիւն երջանկութեան ընդ արեգականբ. թէ որ
ինչ յաճախէ զանաս՝ յաւելու մեղ վիշտս, թէ բարեկե-
ցիկք աշխարհի՝ առաջին տանջանաւորքն են նորա, և թէ
Աստուծոյ միայն է լինուլ զսիրա՝ զվան նորա հետ հաս-
տեալ:

Աստուած հարցն լմոց, ասէր երբեմն Թագաւոր ոմն
պատանեակ, իբրև զքեզ, Տէր արքայ, ՚ի մանկութենէ ամ
բարձեալ յաթոռ, Աստուած հարցն լմոց, զու եղիր զիս
իշխան ժողովրդեան քոյ և գաստատուր որդւոց Իսրայէլի:
Գրեթէ անդամին ՚ի խանձարրոց նաստուցեր զիս ՚ի գահ. և
՚ի հասակի՝ յորում և անձին ոք չգիտէ հրամայել՝ ընտրե-
ցեր զիս առաջնորդ ժողովրդեան մեծի. Աստուած հարց . . .

Դու ընդբներ զին Նագաւոր ծողովրդենան փառ [1]: Պատկեցեր զնա փառաւք, յաղողութեամբ և լուսեամբ, այլ մեծութիւն նակ պարգեւացդ լինիցի պատճառ աղետից և վշտաց, եթէ չյաւելուցուս զքեր պատուիրանաց քոց և զնմանատուութիւն: Առաքեա ինձ զքա 'ի բարձանց երկնից՝ ուր կայ ցանգ առ քե դարանակալ. նա է իշխան խորհրդոց բարեաց, և ատգէ մանկութեանն զամենայն հանճար ծերոց, և զամենայն փառս նախնեացն իմոց Թագաւորաց. նա միայն դիւրեսցէ ինձ զհոգս իշխանութեան և զբեռն Թագիս. Զի ենէալ դա դարձոյնէ առ իս [2]. նա ատգէ ինձ կեալ աւուրս երջանկութեան, և օգնական լիցի ինձ 'ի նեղութիւնս և յանձկութիւնս՝ զոր ընդ իւր բերէ Թագաւորութիւն. Ի ինէ... Ինէ նարիլ հոգոց ես պրպտութեան [3]: Ոչ գոյց հանգիստ և 'ի մեծութեան ալբունեացս և 'ի մեծարանս որ անդ ինձ հատուցցի, եթէ ոչ նուաճ. Սպեալ 'ի գոն իմ՝ հանգիստ նուաճ [4]: Հեշտութիւնք 'ի դառնութիւն կատարին. գահն ինքնին, Տէր Աստուած, եթէ չիցես դու աթոռակից ազքայի, կայան է մթազգած հոգոց, իսկ զերկիւղ քո և զնմանատուութիւն ոչ փոխանակէ ապաշաւ. չիք տագտուկ 'ի ժառանգութեան նորա, և չիք ուրեք ուրախութիւն և խաղաղութիւն՝ բայց եթէ ընդ նմա. Զի ոչ ունի պատնութեան պնակ ցուրեան նորա, և ոչ ցաւս... այլ ուրախութեան և խնդութեան [5]:

Աչատհետև երանի՛ Թագաւորի, Աստուած իմ, որ յայնժամ համարի սկիզբն առնել Թագաւորութեան՝ յորժամ սկսանի երկնչել 'ի քէն, որ գնէ 'ի մոլ առաքինութեամբ միայն ընթանալ 'ի փառս, որ թշուառութիւն լինի համարի հրամանատար այլոց լինել, եթէ չիցէ ինքն քեզ հնազանդ:

1 Յիսուս. Ե. 1, 7:
2 Անդ 10:
3 Անդ Ը. 9:
4 Անդ 16:
5 Անդ 16:

Արդ շնորհեա, Տէր Աստուած, զիմաստութիւն քո և զերաւունդ ազքայի, և զարդարութիւնս քո որդւոյս Թագաւորաց[1]: Որ օգնութիւնդ ես որբոյն, լուծեալ օրհնութեանցդ տուր նմա զոր բարձեր՝ ի նմանէ զկիզելովդ զնա յօրինակաց հօր բարեպաշտի և՝ ի խրատուց մեծահասակ հաւու հօր իւրոյ. զարմանան տարք զկանացն յորդութեամբ շնորհացդ և բարեբարութեանց: Դու միայն, մեծդ Աստուած, լեր նմա՝ ի տեղի ամենայնի՝ որում կարօտի. հայեաց հայրախնամ աչօք՝ ի մանուկս մեծաշուք, զոր զոգեցեր ինձ տալոյ Թողեր յերկրի, վասն որոյ դու ես նորա առաջին խնամակալ և հայր. մանկութիւն իւր՝ սերտ սիրելի ազգիս՝ զարթուսցէ զդութս ողորմութեան քոյ և զգորովդ. արկ զպատահանեկութեամբ իւրով առանձինն զհովանի պահպանական աջոյդ: Տիոյն տխեղծ հասակ և որ այժմիկն յառաջին առնս վայելեալ շնորհ.ք՝ քամեն զօրհնաբազդ յաջոյ մերոյ ալտաստուս երկիւղն և խանդաղատանաց: Ցածո զարհաւիրս մեր՝ վարաւեալ՝ ի նմանէ զամենայն վասնզ խնԹալն զկենաց նորա, և զԹոյս փոխարէն՝ տուր լինել և նմա զԹաւսէր և գորովալից առ ժողովուրդս իւր: Տուր զնա յերանութիւն՝ պահելով՝ ի նմա զերկիւղ քո, որ միայն է բարեբաղդութիւն ժողովրդոյ և Թագաւորաց: Զերկնանութիւն Թագաւորութեան իւրոյ ամրացո բարութեամբ սրտին և անձեղութեամբ կենացն. օրէնք քո սուրբ՝ գրեացին՝ ի խորս հոգւոյ իւրոյ և շուրջ զԹագիսն՝ դիւրել նմա զբեռնն. հոգք ազքայութեան լսցին նմա գութք իւր միայն՝ ի տառապանս աշխարհին, և երկիւղածութիւն իւր մնասցի՝ քան զօրութիւնք և յաղԹութիւնք՝ յօրինեսցէ ըզբախտ իւր և զմերս: Ամէն, եղիցի:

1 Սաղմ. ՀԱ. 1:

ԿԱՐՈՋ Ե

Ի ԶՈՐԲՈՐԴ ԿԻՐԱԿԻՆ ՓԱՌԱՍՆՈՐԴԱՑ

ՅԱՂԱԴՍ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՄԵԾԱՑ ԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Բարձ 'ի վեր զաչս իւր Յիսուս, և տեսեալ զի ժողովուրդ բազում գայր առ նա . . .

Յով. Զ. 5։

ՏԻՐ ԱՐՔԱՑ,

Ոչ ամենակար զօրութիւնն Յիսուսի և սքանչելիք բազմանալոյ հացիցն բանիւ իւրով լեալ՝ շարժեացէ զմեզ և զարմացուացէ այսօր։ Արարիչն ամենայնի՝ կարօղ էր ապաքէն ամենայնի յարարածան՝ 'ի գործս իւր. և որ առաւել զուշակաւարն է 'ի նշանի աստ յայսմիկ, ոչ զայն առնուամ ես այսօր 'ի մխիթարել զմեզ և յուսացանել։

Այլ զմարդասիրութիւնն նորա առ ժողովուրդն։ Տեսանէ ամբոխ Թափառական և սովալլուկ առ լեռնոտամբն, յուզին խնամք նորա, 'ի գութ խանդաղատի, և ոչ միայն զնպաստս իւր ջղանայ 'ի պէտս առատապէսցին, այլ և ոչ ըզվշտակցութիւն իւր և զաղօրմութիւն։ Եթէ ժողովուրդ բազում, գիւղացիս 'ի նոսա [1]։

1 Մատթ. ԺԴ. 14։

Ամենայն ուրեք ընծայեցուցանէ նշանս մարգասէր կա-
մաց առ Ժողովուրդն: Ի տեսիլ մօտալուտ սպառնացեալ
աղետից Երուսաղէմի՝ սիրէիւ զցաւսն արդահատեալով և
արտասուօք:

Իբրև երկոցք յաշակերտացն հուր կամին իջուցանել յերկ-
նից ՚ի քաղաք մի սամարացւոց, ընդ հակառակս նախան-
ձու նոցա՝ քաղցրութիւն իւր դուէթ ածէ բնակչացն, և
սաստէ նոցա՝ զի ոչ գիտեն տակաւին՝ որում հոգւոյ հե-
զութեան և սիրոյ լինելոց նցեն սպասաւորք:

Յորժամ Առաքեալքն մերժեն խաւխու զերամ մանկըտ-
ւոյն խառնելոց զնովաւ, վճռանայ բարութիւն իւր ընդ խա-
փանիչն ՚ի գիւրամատոյց լինելոյ. և որչափ անհանճար մե-
ծարանք ՚ի բաց վարեն ՚ի նմանէ զհեքս և զփոքրիկս, այն-
չափ գթութիւն իւր և քաղցրութիւն մերձենայ առ նոսա:

Խրատ մեծ՝ մարգասէր խնամոց առ Ժողովուրդն, զոր
տայ այսօր Յիսուս իշխանաց և աւագորելոց: Ոչ յայլ ինչ
մեծ են նոքա, բայց ՚ի պէտս այլոց. և այնչափ աւելի սուռ-
գիւ վայելեն ՚ի մեծութեան, որչափ յօգուտ այլոց զայն
վարիցեն:

Այս է. առաջին պարտք մեծամեծաց՝ է մարգասիրու-
թիւն առ Ժողովուրդն, և մեծութեան գործ հեշտալի քան
զամենայն՝ է մարգասիրութիւն առ Ժողովուրդն:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԻՐ ԱՐՓԱՑ,

Ամենայն իշխանութիւն առ ՚ի ԱՍտուծոյ է, և որ ինչ
միանգամ ԱՍտուծոյ է՝ ՚ի պէտս մարդկան աւելի է կար-
գեալ: Մեծամեծք անպիտան լինէին յերկրի՝ եթէ չգոյին
աղքատք և տառապեալք. վասն պիտոյից աշխարհին սը-
ւեալ է նոցա բարձրութիւն աշխճանին, և ոչ եթէ ժողո-

վուրդք վան նոցա, այլ մանաւանդ նոքա վան ժողովրդոց են՝ որ ինչ և են:

Որպիսի սոսկալի խնամակալութիւն լինէր, եթէ համոզէն մարդկութիւն ոչ յայլ ինչ կային յերկաս երկրի, քան թէ 'ի պաշտօն հաճոյից սակաւաթիւ երջանկաց՝ բնակչաց նորա, որ և ոչ իսկ ձանձրանան յաճախ զԱստուած՝ զառաստապարգև բարերար իւրեանց:

Յայն աղագս ուրեմն ամենահնոյ Աստուած զմանկս, զի օգնական և ձեռնկալու այլոց լինիցին: Ի նոսա յանձն առնէ զնոսա ամարաց և փոքրկանց, նովիմբ մնանեն նոքա 'ի կարգ խորհրդոց յաւիտենական խնամատարութեանն: Որ ինչ սերտ արդիւնք նկատեն 'ի մեծութեան նոցա, այն իսկ է՝ զի 'ի պէտս տառապելոց վարեսցին նովաւ. այս ևեթ է 'ի մեզ խոկր աստուածադիր. ողորմութիւնք միայն են նոքա բարութեան իւրում՝ և խնամոց, և յիրաւանց և յանուանէ իսկ մեծութեան անկանին, եթէ անձանց ևեթ մեծ լինել կամիցեն:

Արդ առաջին պարտք մեծամեծաց է մարդասիրութիւն առ ժողովուրդն, և մարդասիրութիւն բովանդակէ զքաղցրութիւն, զպաշտպանութիւն և զառատութիւն:

Առեմ՝ քաղցրութիւն: Այո, Տէր ասէքայ. մարթի ասել թէ մեծամեծացն ախտ սովորական՝ հպարտութիւն, ամենից կին և աննշան միայն որերոյ ողորմելի բաժին լինելոց էր: Որոց իբրև 'ի գայուն ինն ծնեալքն նկատեն՝ առաւել ներելի է նոցա վիքանալ, բարձրանալ, և ծածուկ ուռուցմամբ ամբարտաւանութեան գուն գործել 'ի հարթ հաւասարութիւն այնոցիկ ելանել, քան զորս յոյժ 'ի խոնարհ 'ի ծնէ գտանեն զանձինս: Ձկնք ինչ որ այնպէս գառնացուցանիցէ զանտոհմն և զդուշնաքեայս 'ի մարդկանէ, որպէս անհնարին անքրտեան՝ զոր արիւեալ է բախտին ընդ մեծամեծան՝ և ընդ նոսա. զայս անտի փարատապս ատան անձանց հանապազ, թէ անիրաւեալ է բնութիւն՝ 'ի վատազգիս ծնուցանել զնոսա, և զամենայն փառս զարմի և պատուոց՝ այ-

լոյ բազմոյ պահել, որոյ անուն ևեթ է նոցա ամենայն պարծանք· որչափ սաորինս տեսանեն զանձինս, նոյնչափ ոչ՝ ի բնիկ կայան կարծեն լինել: Ա՛ման որոյ լըբութիւն և գոռոզութիւն՝ անարգ խառնազանձին են բաժին· և վայելչ ջուց միահեծան թագաւորութիւնք տեսին զնա բազում անգամ վտարանդեալ՝ ի թօթափել ղուծ ազատանուոյն և զնեծամեծաց, և դաւաճանել ՝ի բնաբարձ կորուստ նոցին և ՝ի սատակումն:

Իսկ մեծամեծքն՝ ՝ի բնէ ՝ի բարձու կացեալք, ՝ի խոնարհելն միայն դիտեն գոռանել փառս· չեք նոցա յաւելուած առնել կարդի և ոտհմի, և առնուլ անձանց շուք, բայց միայն քաղցրաբարոյութեամբ· և թէ գուցէ ինչ տակաւին ամբարհաւաճութիւն ներելի նոցա, մարդասէր և դիւրահոտան լինել է:

Նա և Աշմարիտ խակ է, թէ երբէք գրոշմ իմն անեղծ և անպատիր կնիք մեծութեան է քաղցրութիւն: Պերճախօսք և նախնական զարմիցն սերունդք, որոց ոչ ոք զլանայ ըզփառս անուան և հնութեան ազգի, ոչ բերեն ՝ի ձախատս իւրեանց զամբարտաւանութիւն տոհմի· և ոչ ծանօթ ևս ձեզ առնելոց փոյթ տանէին, եթէ գոյր ինչ այնմ հնար յանծանօթս լինել: Առանց ինչ նոցա խօսելոյ՝ արձանք աչխարհաքարտոզք շատ խակ բարբառին· բարձրութիւն նոցա լսիւղ ազնուական պարզութեամբն գոյ յերեսան· առաւել ևս մեծարոյ լինին՝ հազիւ ակամայ տանելով զպատուասիրաձ մեծարանսն· և ՝ի բազում նշանակս պատուոյ իւրեանց՝ ցանկալի միայն է նոցա փառք բարեխոհութեան և քաղցրաբարոյութեան: Խակ կեղակարծ հնութեամբ զարմի փերևեռեալքն՝ որոց ժխտեն այլք ՝ի ծածուկ զփառս նախնեացն նոցա և զպերճութիւն, կասկածեալ միշտ՝ թէ գուցէ անծանօթ ինչ նցէ մեծութիւն զարմին իւրեանց՝ հանապազ ՝ի բերանի ունին զայն, և հաւատեալ ձշմարտել զայն կարծելով պաճուճեալ կերպարանօք հպարտութեան և բարձրայօնութեան՝ փոխանա-

կեն ընդ անուանդ պատուոյ զգուռզուԹիւն, և ՚ի վեր քան զարժանն պահանջելով՝ տան ժխտել և զարժանն:

Որ ՚ի մեծուԹիւն է ծնեալ՝ ասպաքէն ոչ մեծ ինչ փոյԹ է նմա զբարձրուԹենէն. իսկ որ շլացեալն է ՚ի պերճ աշխարհանէն՝ յոր ծնունդ իւր և բախտ հանին զնա, յայտ արար ԹէՀ չէր ըմբռն այնմ՝ բարձրուԹեան: Խարձրապոյն բարձք ՚ի վայր են միշտ քան զմեծանձն հոգիս. և ոչ մի ինչ փքացուցանէ և շլացուցանէ զնոսա, զի չէք ինչ բարձր քան ըզնոսին:

Ապա ուրեմն գուռզուԹիւն սկիզբն առնու ՚ի նուաստուԹենէ, կամ ԹէՀ է խորամանգեալ հնարք Թաքուցանելոյ զայն, և յայտ յանդիմանուԹեան նշան է՝ զի եԹէՀ յոյժ ՚ի մօտոյ երևեսցի, կորնչելոյ է. ամբարտաւանուԹեամբն ծածկին ԹերուԹիւնք և անկարուԹիւնք՝ որոյ նոյն ինքն ամբարտաւանուԹիւնն մատն և գուշակ լինի. լսումն արժանեայ՝ ԹէՀ օրէն էցէ ասել՝ գուռզուԹեամբն առնի, անգիտացեալ ԹէՀ չէք ինչ այլ քան զգուռզուԹիւն՝ անհանգէտ արժանեայ:

Սմին իրի, Տէր արքայ, արք մեծամեծք և մեծ Թագաւորք հեզահամբոյր եղեն միշտ քան զամենայն: Կին մի ոսկԹեհուացի գայր պատմել ԴաւԹի պարզմտուԹեամբ ըզվիշտս իւր. և եԹէ փառաւորուԹիւն գահուն մեղմացեալ էր քաղցրուԹեամբ արքային, քաղցրուԹիւն արքային փառս և շուք յաւելոյր գահուն:

Թագաւորք մեր, Տէր արքայ, ոչ ինչ կորուսանեն ՚ի գիւրամատոյցն լինել. սէր ժողովրդեան՝ երաշխաւոր է նոցա արժանի մեծարանացն: Ամբարձեալ է աԹոռն՝ լինել ապաւէն դիմելոցն յաղերս պաղատանաց արդարուԹեանդ քոյ և գԹուԹեանդ. որչափ գիւրամերձենալի առնիցես զայն քոյ հպատակացդ, այնչափ գփառս նորա և զշքեղուԹիւն առձեռնացես: Եւ ազգ՝ որ առաւել ընդ սիեղերս սիրասէրն է, չիցէ նմա օրէն և առաւել հուպ առ տէրսն մատչել: Հանդէս արա, Տէր արքայ, առաջի ժողովրդեանդ՝

այնմ ամենայնի զոր հեղեալ էն ՚ի քեզ Երկինք ընդհան և պարգեւս ցանկալիս. Թոյլ արա նոցա ՚ի մօտուստ տեսանել զերջանկութիւնն՝ որում ՚ի քումմէ Թագաւորութենէդ ակն ունին: Ընդհաշուք մեծվայելչութիւն անձինդ, բարութիւն և ուղղութիւն սրտիդ՝ առաւել քան զլիշանալի կանդ սաստ և զգօրութիւն՝ հաստատեսցեն միշտ զարժանաժառանգ մեծարանս գահիդ:

Անտես և կնամարդի Թագաւորք, Արտաշէսքն այնոքիկ՝ որոց առաջի մահապարտութեան ոճիր էր Եսթերայ անգամ համարձակիլ երևիլ անհրաման, որոց և տեսիլն ևեթ սառուցանէր զարիւն յերակունս աղաչաւորաց, ՚ի մօտոյ նկատեալք՝ ոչ այլ կնչ էին՝ քան կուռք սպիկաբ՝ անհոգի, անկենդան, անարի, անտառաքինի, մատնեալք ՚ի ձեռս անարդ գերեաց ՚ինեղբքին անդ ալս արքունեացն. մեկնեալք յամենայն կենակցութենէ, իբրև անարժանք ոմանք երևելոց մարդկան, կամ որպէս թէ նոցին հանդոյն մարդիկ՝ չեցեն արժանի զնոսա տեսանելոյ. խաւար և ամայութիւն ևեթ էին նոցա մեծվայելչութիւն:

Ի քաղցրաբարութեան՝ է լիմն վստահութիւն յանձին որ վայելուչ է մեծամեծաց, որ աներկիւղ առնէ զնոսա ՚ի քամահելոյ՝ թէ ընդ խոնարհս ցնծանիցեն, և է լիմն քաջութիւն և արութիւն խաղաղական. անմատոյցն լինել և գոռոզ՝ ակարութիւն է և երկչոտութիւն:

Բայց, Տէր արքայ, իշխանք և մեծամեծք՝ որ հանապազ դաժան և արհամարհոտ դէմս ցուցանեն ժողովրդեան, այնու առաւել են անպատասխանի, զի դիւրին յոյժ է նոցա շահել զսիրտս. ոչ ջան և ոչ ճիգն լինչ պիտի առ այդ. բան մի ևեթ, ժպիտ մի ընդհալչ, ակնարկութիւն մի միայն բաւական է: Ժողովուրդն զամենայնի ունի նոցա մանր զհամար, աշխճանն նոցա յարգի ընծայէ զամենայն: Աչալրջութիւն ևեթ երեսաց արքայի, ասէ Գիր, կենդանութիւն է և երկանկութիւն ժողովրդոց, և կերպարանք նորա քաղցր և մարդասէր՝ ՚ի սիրտ հպատակացն է իբրև զցօղ երեկորոյ

յանդաստան անկղդի և ծաղաւուտ. ի պատրիարքին Երեսաց նափաւորի՝ կենաք, ո գերութեան նորա՝ երբեք պանչեք անափան [1]:

Եւ ինչ մարթ սարսուցանել զսիրտս՝ զոր այսքան դիւրաբեկն գոյ շահել. չինչ անսպրդել զանձն՝ այսչափ արհամարհելն զմարդկութիւն առհասարակ. և մեծի անուան ինչ ոք արժանաւոր, յորժամ և ոչ գլարդ մարդկան գիտիցէ առնուլ՝ ի միտ:

Սիրէ բնութիւն ինքնին չինչ արկեալ վնասս մեծ զժողովրդովք և զտառապելովք, տալով նոցա ծնանել ընդ իշխանութեամբ և իբրև՝ ի սարկութեան. չինչ շատ՝ զի նուաստութիւն և եղկութիւն վնճակի նոցա՝ իբրև օրինօք հարկ լինի առնել նոցա դեռնաքարշ սողալ և սպառ պաշտաման հաստուցանել. արժանի ինչ և ևս ծանրացուցանել զլուծն արհամարհանօք, և գոռոզութեամբ լինի՝ որ ինքն իսկ է այնմ արժանի: Չինչ նոցա բաւական հպատակութեանն վնասս. վայրէ ինչ և շատագունանա ածել զնոքօք իբրև ընդ մեզս ինչ. և եթէ՝ ի դէպ ինչ ինչ ուժիք առնել ընդ վնասուածս պայման իւր, վաղվաղեր տառապելոցն ինչ անկ, եթէ մեծին՝ որ անկածութեամբ նորին զերծանի:

Բաղում այն է արդարև՝ զի՝ քանց եթէ հաճոյքն միայն են, և ոչ թէ հպարտութիւն, որ յերեսաց մեծամեծացն եղծանեն զզուարթութիւն՝ որով դիւրամատոյց լինելոց ինչն և քաղցրաբարոյք. անհարթութիւն հաճոյից կամացն է, քան եթէ գոռոզութիւն: Յափշտակիչք՝ ի հեշտութիւնս իւրեանց, և ձանձրացեալք՝ ի մեծարանաց, տալոկանօք ընդունին զայնս. քաղցրութիւն՝ իբրև՝ ի պարտս լինի եղեալ նոցա պարտասիչ, բեռն լինի ծանր: Ի բաղում պատիւս վայելեալք՝ վաստակաբեկ գտանին՝ ի մեծարանացն առ նոսա եղելոց. և բաղում անգամ խոյս տան՝ ի պատուասիրութենէ բազմութեան՝ առ՝ ի ձողոպրիլ յաչխատութենէ արդահատելոյն: Բայց հարկ է անկարեւիր՝ ի ծնէ

[1] Առակ. ԻԲ. 15. ըստ լատին թարգմանութեան:

լինել՝ առ՝ի ծանր համարել և զայդպս անպատ մարդասի-
րութեան: Ձկնէ խժդժութիւն, ոչ միայն ճանդատատել,
այլ և տաղտկութեամբ ևս ընդունել զնշանակս սիրոյ և
մեծարանաց հպատակացս. ո՛չ ապաքէն յայտ յանդիման
առնել է՝ թէ չեմք արժանի սիրոյ ժողովրդեան, յորժամ
և զպորուկանացն ցուցակութիւն արհամարհիցեմք: Իսկ լինչ
և անդ պատճառել զվայրկենի քմացն հաճոյս և զթախիծ,
զոր հոգք մեծութեան և իշխանութեան բերեն ընդ ի-
րեանս: Հաճոյք քմոյ ևցէն լինչ ուրեմն սեփական շնորհք
մեծամեծաց՝ յանմեղադրութիւն ախոյդ նոցին:

Ո՛հ. եթէ էր երբէք օրէն ախուր լինել՝ վէս և դժպհի և
ծանրակիր այլոց և անձին, տառապելոցն այնոցիկ՝ի դէպ
էր լինել, զորովք պատին քաղց, վիշտք, աղէտք, առանձին
կարօտութիւնք և ամենայն միգատարր անձկութիւնք. ա-
ռաւել նոքա էին արժանի անբասիր լինելոյ, եթէ որ առէպն
կրեն՝ի սրտի զսուտ, զդատնութիւն, զչուտահատութիւն,
տայցեն լինչ վրխպակաւ և նշանս արտաքուստ: Իսկ զի մե-
ծամեծք և երանիկք աշխատիմ, առ որս ամենայն լինչ ծիծա-
ղի, և ուրախութիւնք և հեշտութիւնք առընթեր կան ընդ
ամենայն տեղիս, նոքա կամիցեն՝ի նմին իսկ երջանկութենէ
իւրեանց իշխանութիւն դատանել անբամբաս էլանելոյ յան-
հեղեղ դժխեմութենէ իւրեանց և՝ի ցնորական հաճոյից,
և զի օրէն իցէ նոցա բարիասիրտ լինել, անհանդարտ, ան-
մերձենալի վասն առաւել երջանկութեանն, և զի իրաւունս
բարեկեցութեան իւրեանց համարիցին ձնշել և ընդ բե-
ռամբ առժամեան քմացարդ հաճոյիցն զհնքացեալս՝ որ
ինքնին իսկ հեծեն և յոգոց հանեն ընդ լծոյ իշխանութեան
և բռնութեան նոցա. իցէ արդ այս, ով Տէր, մեծամեծացն
շնորհ սեփական, թէ պատիժ զեղծանելոյ նոցին մեծու-
թեամբն: Քանզի ցնորք հաճոյից և ախրերանք զխաղք
բաժին թուին մեծամեծաց, իսկ խնդութեան անմեղու-
թիւն և զուարթութեան՝ ժողովրդեան միայն է:

Բայց քաղցրութիւն՝ բղխումն մարդասիրութեան՝ չէ

իբրև զմի ՚ի վեր ՚ի վերոյ առ երեսս լաւութեանց · այլ ազդումն է՝ ծնունդ զԹոյ և առաստ սրտի : Ի Թշնամանս և յայպանումն տառապելոցն փոխել քաղցրութիւն, եթէ հեղաս հայեաց և զուարթերես երևեալ առ նոսա՝ փակիցէ ՚ի նոցանէ զգուշութեան, և չտայցէ մուտ հեծութեանց նոցա՝ բայց առ առաւել իմն անզգայս առնելոյ առ վիշտս նոցին :

Տառապելոց և հարատահարելոց յիրաւի է մտաւճել առ նոսա՝ միայն ՚ի գիւտ պաշտպանութեան որում կարօտին : Ա՛յո, եղբարք իմ, օրինք որ ՚ի Թիկունս կան անաւադայ՝ չեն բաւական ՚ի պահել զնոսա ՚ի զրկանաց և ՚ի բռնադատելոյ · հապա՛ Թէ իշխէ հնարութիւն բողոքել ՚ի պաշտպանողական օրինադրութիւնն, և բաղում՛ այն է՝ զի յարդարութիւն ուրուք հրամայէ նոցա լուռ լինել :

Մեծամեծաց անկ է ուրեմն ընդ պահպանութեամբ օրինացն պատասխարել զժողովուրդն · այրին և որբն և ամենայն առ ոտն հարեալք և զգուեալք՝ արդար իրաւունս ըստացեալ ունին առ իշխանութիւն նոցա և առ հարստութիւն՝ որ ՚ի նոցին եւեթ պէտս տուեալ է նոցա · նոցա է մատուցանել առ ոտս գահուն արքունի զողբումն և զհեծութիւնս զրկելոցն · նոքա են իբրև միջնորդ կցորդութեան և յօդակապ ժողովրդոց ընդ Թագաւորին, զի և Թագաւորն ինքնին ոչ այլ ինչ՝ բայց հայր և հովիւ միայն է ժողովրդոց : Վասն որոյ և ժողովուրդք միայն տան մեծամեծաց իրաւունս մատչելոց յաԹոռն արքունի, և վասն ժողովրդոց միայն կառուցեալ կանգնեալ կայ նոյն իսկ աԹոռն արքայական : Միով բանիւ, մեծամեծք և Թագաւոր ոչ այլ ինչ են՝ քան Թէ իշխանաւորք ժողովրդեանն :

Իսկ եթէ փոխանակ պատասխարան ակարութեան լինել՝ մեծամեծք և դործակալք արքայից ինքեանք լինիցին հարստահարիչք, եթէ իբրև զանազգոյն խնամակալս որբոյն նկեն՝ որ ինքեանք մերկացուցանեն զնոսա, ո՛հ Տէր, բողոք անանկին և խուճապն եղեն առաջի քո, նզովեսցես զազգսն անողորմս, արձակեսցես զՀրեշտան բարկութիւնս

քո՝ ի վերայ սկայիցն, տապալեսցես հիմնայատակ զբուրմն ամբարտաւանութեան՝ անօրէնութեան և բարեկեցութեան, որ ամբարտակն կանգնիցի՝ ի վերայ աւերակաց այնչափ անչափ տառապելոյ, և բարեկենդանութիւն նոցա թաղեսցի ընդ փլածիւն:

Վասն այսորիկ յաղողութիւն մեծամեծաց և պաշտօնէից արքունի որ հարստահարողք ևեթ եղեալ են ժողովրդոց, զամօթ ևեթ ժառանգեալ է, զկեղտ անուն, և զանէծս՝ ի վերայ որդւոց իւրեանց: Ի բնոյ անտի անօրէնութեան տեսան բղխեալ շառաւիղք թշնամանալից՝ ի նախաստին անուան իւրեանց և գարշուն: Փչեաց Տէր՝ ի շեղջ անիրաւ ամբարիշ ընչից նոցա, և ցնդեաց իբրև զփոշի. և ե՛թէ թողու զեռ ևս զեռալ յերկրի զթշուառս մնացորդս զարմի նոցա, արձան յաւիտենից յիշատակի առնել է զնոսա վրիժուց իւրոց, և մշանջենաւոր՝ զպատուհաս մեղացն, որ գոգցես՝ ի սպառ ընդ իւր յաւերժացուցանէ՝ ի թագաւորութիւնն զհամաշխարհական վիշտս և զաղէտս:

Արդ իշխանութիւն և հարստութիւն օրինաւոր է՝ միայն՝ ի պէտս պաշտպանութեան ակարաց. իսկ նպաստաք և ձիրք զոր՝ ի մէջ առաստութենէս են գոանեալոց՝ կատարեալ դրոշմ մարդասիրութեանն են:

Այո՛, եղբայրք իմ. եթէ որ ինչ էքդ՝ առ՝ ի յԱստուծոյ եղեալ էք՝ ի ծննդենէ, զի՞նչ խորհուրդք էին նորա՝ ի զերծն ձոխաբար՝ ի վերայ ձեր զբարութիւնս երկրի: Միթէ կամք էին նորա դիւրել ձեզ զղեխութիւն, զախտս և զհեշտութիւնս զորս առեալ. էին արդեօք պարգևք բարկութեան նորա: Եթէ այդպէս էին, եթէ վասն ձեր ևեթ տըւեալ է ձեզ ծնանել՝ ի յաղողութեան և յընչաւէտութեան, բարիք, օ՜ն առեալ վայելեցէ՛ք. արարէ՛ք ձեզ, եթէ կարէք, երանութիւն անիրաւ՝ ի վերայ երկրի. կեցցի՛ք՝ որպէս թէ ամենայն վասն ձեր էին եղեալ, յաճախեցէ՛ք ըզփափկութիւնս ձեր: Հապա, ձեզ ասեմ՝ ի վայելուդ, կարճ ձեալ է ժամանակդ: Մի այլևս՝ իմիք ակն ունիցիք այնու-

հեռև, բայց մահուն և դառաւատանի. ընկալայք դուք առ-
ուն զհատուցումն ձեր:

Իսկ եթէ 'ի խորհուրդս կամացն Աստուծոյ՝ բարիքդ ձեր
լինելոց էցեն պատճառք և առիթք փրկութեան ձերոյ, ա-
պա ոչ յայլ ինչ թողու նա յերկրի ապրեաս և առա-
պեալս, բայց եթէ 'ի ձեր սակս. ապա փոխանակ Աստու-
ծոյ կայք դուք նոցա յերկրի աստ, դուք էք նոցա զոգեպ
նախախնամութիւն տեսանելի. իբաւունս ունիմ կարդալ
առ ձեզ և ցուցանել զկարիս իւրեանց. ինչք ձեր՝ նոցա են
ինչք, և առատաբաշխութիւնք ձեր միայն իւրեանց հայրե-
նի սատցուածք՝ զոր 'ի վերայ երկրի ժառանգեցուցեալ է
նոցա Աստուծոյ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Եւ զի՞նչ այլ կայցէ 'ի վիճակին ձերում արժանի նախան-
ձու, բայց զի կարօտք էք երջանիկս առնելոյ: Եթէ մար-
դասիրութիւն առաքինի պարտք են մեծամեծաց առ ժողո-
վուրդս, ո՞չ ապաքէն և հեշտալի պաշտօն մեծութեան այն
իսկ իցէ:

Եթէ աստուածպաշտութիւն ինքնին չէր բովանդակ 'ի հա-
ւատոյ պատճառս երջանկութեան, և մարդասիրու-
թիւն մեր առ նոսա՝ վարձս առնոյր զհեշտութիւն ևթե ե-
րանեակս գործելոյ և ախորժելոյ զվշտացեալս, պիտէր ինչ
այլ սրտի բարւոյ: Որ անզգայն է սերտ և սեռն հեշտու-
թեանս գոլովականի և արժանաւորի սրտի մարդոյ, չէ նա
ծնեալ մեծ, և ոչ իսկ մարդոյ անուան արժանի: Անգոնե-
լի է, ասէ սուրբն Ամբրոսիոս, որ ոք ձեռնհասն իցէ երջա-
նիկս յարդարելոյ, և ոչ կամիցի. Թշուառական է յորոյ 'ի չե-
է պայնչափ ընչից ոգիսն փրկել 'ի մահուանէ, ևս էիցէն կամք[1]:

1 Ա. Ամբր. 'ի վարս Նաբ. 13:

Նա՝ Թուխ ևս այդ՝ անէծք կառուեալ՝ի մեծամեծան։ Աբք՝ աննշան և սոսկական բահաւ ծնունդք, ոչ ընդ այլ ինչ նահանձին՝ի մեծամեծան՝ բայց զի կարօղ են շնորհս ընձեռել և յերջանկութիւն այլոց լինել նպաստաւոր։ ազդ լիցի՝ի հոգիս նոցա լինել, զի եթէ՝ի նոցա տեղին էին՝ բարեբախտ յոյժ լինէին ծառայել զուրախութիւն և զբերկրանս՝ի սիրոյ՝ ախոռելով՝ի նոսա զբարիս, և ժառանգել անհատուտ զնէր նոցա և զնորհակալութիւն։ Եթէ՝ի չափաւորութեան ցնորիցի ոք երբեք յերազական ցանկութիւնս՝ի մեծամեծ աւադութիւնս հասանելոյ, առաջին գործ զոր՝ի մտին դնէ յաշխարհանի անդ՝ի նորում, բարեբար լինել է առ ամենեսին որ զնովս, և հաղորդս ունել զնոսա։ այս է առաջին խրատս բնութեան, և առաջին ազդումն զոր խմանան յանձինս ոամիկք։ Ի մեծամեծան միայն չնկճեալ է այն։ Թուխ Թէ այլ նմին սիրտ ունայ նոցա մեծութիւնն, խնամ և անզգայ քան զայլոցն։ որչափ կարողագոյն ոք է՝ի սիրելի զոտնատեալս, նոյնչափ անկարելիկր է՝ի խարուսանս նոցա։ և որչափ բաւական ոք նոցէ յինքն ձգել զնէր և զնիրտս մարդկան, այնչափ ևս ընդ վայր հարկանէ։ և շատ խակ է կարօղն լինել ամենայնի՝ առ անընդոստ ծնեալ առ ամենայն։

Խակ մինչ այլ քաղցր և ախորժ պէտս ունկնգիք, եղբարք իմ, վարել զառագութիւնդ ձեր և զնոխութիւն։ Ի մեծատոհմս յանձն կորզել։ բայց հպարտութիւնն խակ ինքնին տապալականայ։ Ի հրամայել այլոց և օրէնս տալ։ այլ այդ՝ հոգք մեծութեանն են, ոչ հեշտութիւնք։ Ի տեսանել զգաձեօք խանեալ զանբաւ տնօրհնութիւն ծառայիցդ և տըրկացդ։ այլ տեսօղք են դոքա՝ նեղելիք և տագնապելիք, քան հանդէս շքեղութեան։ Ի բնակել յապարանս հոյակապս։ բայց շինեք ձեզ, ասէ Յոբ, անապատս՝ յորս գան վաղվաղակի յարկակից ընդ ձեզ լինել հոգք և մտահալածատ տխրութիւնք։ Առ՝ի ժողովել անդր զամենայն զուարճութիւն։ լցեն Թերևս զընդարձակ շինուածդ, բայց դառարկ Թողուցուն միշտ զսիրտս ձեր։ Ի գտանել զոր ամենայն՝ի

Ձոխութեան անդ ձերում անապատ աղբերս մոահաճոյ ցնորիցդ. պէսպէս աղբերակունքդ ցամաքեն փութով. ա-մենայն ինչ ընդ փոյթ ապառի. հարկ է անդրէն յետս ընդ կրուկ դառնալ, և անդադար սկսանել վերսանին՝ զոր ան-համ տաղտկութիւն և կարևոր պիտոյ առնէ անգործու-թիւն: Արիկեք ի վար՝ որչափ և կամիք՝ զինչս ձեր և զիշխա-նութիւն յամենայն պետս զոր ամբարտաւանութիւն և հաճոյք մոլութեալ զօրեացեն. յագեսջիք, այլ ոչ շատաս-ջիք. ցուցցեն ձեզ զուրախութիւն, այլ ոչ թողուցուն ի սիրտս ձեր:

Ի կիր արիկեք զայնս ի պէտս երջանկութեան այլոց, ի մեղմացուցանել և սփոփել զտառապելոցն կեանս՝ զորս ծանրութիւն թշուառութեան սոսկեալ է թերևս բիւր անգամ փափաքել իբրև զՅոբ, զի սիւն որ հառս զծնունդ նոցա՝ լինէր նոցա յաւիտենական դիշեր դերեզմանի. յայն-ժամ ի միտ առջիք զհեշտութիւն մեծութեանդ, ձաշա-կեսջիք զձշմարիտ քաղցրութիւն վիճակիդ. այս ևեթ շնորհ է՝ որ առնէ զայն նախանձելի: Այն ամենայն որ զձեօքդ պերձանիք, յոտոգս այլոց է. իսկ ձեր է միայն այս հեշ-տութիւն: Այլն ամենայն ունի զիւր դառնութիւն, իսկ այս ևեթ հեշտութիւն քաղցրացուցանէ զամենայն: Ուրա-խութիւն բարի առնելոյ՝ դեր ի վերոյ քաղցր է և արտաքոյ քան զընդունելոյն: Դարձ անդրէն ի նոյն արարէք, հեշ-տութիւն է՝ որ ոչ երբեք հնանայ. որչափ ձաշակիցէ ոք, այնչափ արժանապէս լինի ձաշակացն. դոյ սովորել ի բա-րեկենդանութիւն՝ որով և անդադարել, բայց է միշտ ան-պակաս կրել յանձին՝ զուրախութիւն պատճառ լինելոյ բարեկեցութեան այլոց. ամենայն բարերարութիւն ընդ իւր ածէ ի սիրտս մեր զքաղցր և զմեծաքուն արիւնս զայս. սովորութիւն՝ որ կարծրացուցանէ զսիրտ առ ամենայն հեշտութիւն, ատամնօր օր քան զօր առաւել ազդուր ինա յարդարէ:

Եւ ի նոյն իսկ ի միտս դահճին արքունի՝ զինչ առաւել

կայցէ հեշտական քան զկար չնորհատորութեան: Զի՞նչ լինէր Թագաւորացն զօրութիւն, եթէ ընդ հարկաւ լինէին ինքեանք միայն առանձինն յայն վայելելոյ. ոխութ ամայութիւն, հպատակաց արհաւիրք, և պատուհաս Թագաւորին: Անուշակ հեշտութիւն իշխանութեան է վարել զայն, և քան զամենայն վայելս իշխանութեան քաղցրագոյն է զթութիւն և երախտաւորութիւն՝ որ սիրելի առնեն զինա:

Եւ այլ ինն պատճառք: Թող զհեշտութիւն բարերարութեան որ անդէն առ ձեռն հասուցանէ մեզ զբարիս, արա քաղցրութիւն և մարդասիրութիւն 'ի գործ իշխանութեանդ, ասէ Հոգին աստուածեղէն, այն են ատոյգ և ճշմարիտ փառք՝ յոր մեծամեծաց գուցէ ժամանել. Զգուշ ա հնդստնեամբ վարեսջիր, և յարանց ընդբելոց սիրեսցիս [1]:

Ոչ, Տէր ազգաց, ոչ բարձ, ոչ պատիւ, ոչ իշխանութիւն սիրելի առնեն զԹագաւորս. և ոչ իսկ ձիրք բնութեան շքեղք՝ զքանչելիք յաչս աշխարհի, ոչ քաջութիւն, ոչ հանճարոյ բարձրութիւն, ոչ արուեստ վարչութեան ոգւոց և տեսչութեան ազգաց. այս մեծամեծ չնորհաց տուչութիւնք՝ այնչափ միայն սիրելի ընծայեցուցանեն զնոսա հպատակացն, որչափ եթէ և մարդասէրս և բարերարս զնոսին յօրինեսցեն: Ըստ նոցա առ քեզ սիրոյն՝ նոյնչափ եղիցես դու մեծ. սէր ժողովրդոյն է միշտ ճշմարիտ և աներևոյթ փառք Թագաւորաց, և ժողովուրդք ոչ այլ ինչ սիրեն 'ի Թագաւորս՝ բայց միայն զառաքինութիւնս երանելոյ արքայութեան նոցին:

Զի և ինչ՞ ինչ այլ փառք իշխանաց սէն և սերս՝ քան զԹագաւորել 'ի վերայ սրտից: Աշխարհակալութեանց փառք՝ միշտ յարիւն են շաղախեալ, նախճիրք և մահունք հասուցանեն զմեզ յոյն, և առ 'ի ոչինչ զնոյն ուներլոյ՝ հարկ է Թշուառացուցանել զբազումս: Որ զնուաճ հանդերձանք՝ մահաձոտ և եղեռնական. և բազում՝ այն

[1] Սիրաք Դ. 19:

է՝ զի ահեղբարկաւն ինքնին գլխովին, եթէ մարդասէր ոք լցէ, ասիպն հեղուլ արտասուս ՚ի վերայ իւրոց յաղթանակացն:

Խակ փառք, Տէր արքայ, սիրելի Ժողովրդեան լինելոյ և տալոյ զնա յերջանկութիւն, պահակեալ է ինդութեամբ և լիութեամբ. չեն ինչ պէտք կանգնելոյ դրօշեալս և արձանս ամբարտաւանս յանմահութիւն նոցին. ինքնին նա կառուցանէ իւր ՚ի սիրտս ամենայն հպատակաց՝ յիշատակ յաւէժակաց քան զարծոյր և քան զպղինձ. զի ձարտարապետ նորա սէր՝ հզօր է քան զմահ: Անուն աշխարհակալի դրոշմի ՚ի կուռս ևթե, անուն հօր Ժողովրդեան՝ ՚ի սիրտս է քանդակեալ:

Ո՛վ երանութեան Թագաւորի՝ որ ՚ի սէրութիւն իւր երբեք յաղգատոհմ իւր հայեցեր, ՚ի հպատակն՝ երբեք յորդիս, և զսիրտս նոցա առաւել իւր համարիցեր քան զինչս նոցին և քան զանձինս, և գոհ տեսանիցէ իմն՝ զի մին մի յաւուրց հասատաւեն զառաջինն ընտրութիւն ազգին՝ որ զհարս նորա ամբարձ ՚ի գահ: Փառք երկրակալութեանց և յաղթանակաց ունիցի՛ ինչ այսմ զուարճութեան համեմատս: Նա աւանիկ, Տէր արքայ, եթէ աշխարհակալացն փառք քաղցր ինչ է քեզ, սկիզբն արա ՚ի շահելոյ զսիրտս հպատակացդ. այս սէրութիւն երաշխաւոր լինիցի քեզ ահեղբարկալութեան: Թագաւոր սիրելի ազգի քոյին որպէս զքոյդ՝ ոչ յայլմէ ինչ խնբէ երկիցէ, բայց յանչափութենէ յաջողուածոց իւրոց և յաղթանակաց:

Լո՛ւր ամբոխին զոր յագեցուցանէ այսօր Յիսուս յանապատին. Թագաւոր իւրեանց կամին առնել զնա. Գալոց են յափշտակել զնա, զի արասցեն զնա Թագաւոր [1]: Կանգնեն նմա յաւուրսդային գահ ՚ի սիրտս իւրեանց, զի անկարողք էին ամբառնալ զնա և յաթոռն Դաւթի և Թագաւորացն Յուդայ՝ իւրոց նախահարցն. ոչ այլով իւիք խոստովանին զի-

1 Յովհ. զ. 15:

ըաւանս նորա ՚ի Թագաւորել, բայց նորա մարդասիրու-
Թեամբն: Ո՛հ. եթէ մարդիկ ինքեանք կացուցանէին ի-
րեանց տեարս, ոչ զառհմիկս և ոչ զքաջս ընտրէին, այլ
զիմաստս և զքաղցրաբարոյս, տեարք՝ որ և հարք կոչեն
նոցա:

Երանի՛ ազգի, ում Տէր, որում յողորմութեան քում
պատրաստես դու նման Թագաւոր այսպիսի: Բարեդէպ
դուշակութիւնք խոստանալ Թուին մեզ զայն. զԹուԹիւն
և մեծվայելչութիւն նկարեալ ՚ի ճակատ վերհասու ման-
կանս, կանխաւ աւետաւորեն մեզ զերջանկութիւն ժողո-
վըրդոց. քաղցր և երախտագործ յօժարութիւնք նորա՝
ամրացուցանեն և աճեցուցանեն օր ըստ օրէ զոյս մեր:
Մշակեա արդ, Աստուած իմ, զառհաւատչեայս երանու-
Թեան մերոյ. արա զնա դոյզնագութ առ ժողովուրդ իւր՝
իբրև զբարեպաշտ Թագաւորն՝ որոյ է ծնունդ, և զոր ցու-
ցեր նմա[1] դու երկրի: Նա ոչ կամեր Թագաւորել, դիտես
դու, բայց եթէ ՚ի մեր երջանկութիւն. տառապանքս մեր՝
իւր էին տառապանք, վիշտք մեր՝ իւր էին, և սիրտ իւր՝ մի
սիրտ էր ընդ մերում: Աճեցին ազէ ընդ սխոցն գԹու-
Թիւն և ողորմութիւն ՚ի մեծագին մանկանս, և խաղացեն
՚ի նման ընդ արեան հօր մարդասիրի և ողորմածի. քաղցրու-
Թիւն և շուք դիմացն՝ զհոգւոյն միշտ նկարեացեն պատկեր.
այնպէս սիրելի լեալ նման ժողովուրդ իւր, որպէս ինքն սի-
րուն է ժողովրդեան իւրում. ՚ի սիրոյ ազգին առ ինքն՝ առ-
յէ զօրէնս և զչափ իւրոյ սիրոյն առ նա, որով եղիցի մեծ
իբրև զհաւ հօրն իւրոյ, միառաւոր քան զնախանիս իւր զա-
մենայն, և մարդասիրութիւն իւր աղբիւր յորդառատ բըղ-
խեսցէ երջանկութեանն մերոյ յերկրի, և իւրոյ երանու-
Թեանն յերկինս: Ամէն, եղիցի:

1 Ջի վաղամեռիկ վճարեցաւ, որպէս ասացեալ եմք ՚ի նախաշա-
ւիղ տեղեկութիւնն:

ԿԱՐՈՂ Ջ

ՅԱՒՈՒԲ ՄԱՐՄՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ [1]

Ի ՎԵՐԱՅ ՆՇԱՆԱՑ ՄԵԾՈՒԹԵԱՆՆ ՅԻՍՈՒՍԻ

Նա եղեցի մեծ։

Ղուկ. Ա. 32։

ՏԷՐ ԱՐՔԱՅ,

Յորժամ զմանուկ աղքայ օրհնեն մարդիկ՝ զի եղեցի մեծ, ոչ այլ ինչ իմանան՝ բայց յաղթանակս և ժամանակեայ յաջողութիւնս. զհանդերձեալ մեծութիւն նորա՝ ի հասարակաց աղէտս կառուցանեն, և նշանք գուշակաւորք շքոյ փառաց նորա՝ գուժկանք իմն բօթաբերք են հարուածոց ամենայն երկրի։

Բայց ոչ սովին անոսկի և աղէտաւոր նշանակօք մեծութեան սեեակ այսօր հրեշտակին առ Մարիամ՝ թէ մեծ եղեցի Յիսուս. երկնից և ՃՀամարտութեանն բարբառ՝ անմանն է մեղորութեան և նանրութեան մարդկեղէն ոգեբանաց, և ոչ իբրև զմարդ խօսի Աստուած։

Մեծ եղեցի Յիսուս, վասն զի Սուրբ և Որդի Աստուծոյ եղեցի. Սուրբ է, ե որդի Ասպուծոյ կոչեսցի [2]. վասն զի փրկեսցէ

1 Ըստ մեզ՝ Աւետեաց Սրբոց կուսին։
2 Ղուկ. Ա. 35։

զԺողովուրդ իւր։ Զի նա ինքնոյն պԺողովուրդ իւր [1]։ վասն զի արքայութիւն նորա ոչ սպառեսցի։ Եւ նագաւորութիւնն նորա վախճան մի լինի [2]։ Այս են դրոշմք մեծութեան նորա։ մեծութիւն արքութեան, մեծութիւն ողորմութեան, մեծութիւն տէրականութեան և միանգնաւորութեան։

Եւ այդ են աւագիկ նշանք Հմարիա մեծութեան։ Արքայից և մեծամեծաց, Տէր արքայ, չէ պարտ խնդրել զայն յաւագութեան զարմի, 'ի շուք պատուոյ և յաղթութեանց, 'ի մեծութեան զօրութեան և իշխանութեան։ իբրև զՅիսուս՝ ոչ այլազգ լինչ մեծ էղեցին, բայց սուրբ լինելով, պիտանի Ժողովրդեան, և վարուց իւրեանց և արքայութեան՝ օրինակ լինելով յաւէրժական յաղգս աղգաց։ այս է՝ յանձին բերելով իբրև զՅիսուս՝ մեծութիւն արքութեան, մեծութիւն ողորմածութեան, մեծութիւն տէրականութեան և միանգնաւորութեան։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԷՐ ԱՐՔԱՅ,

Անակնկալական ծագումն Յիսուսի, աստուածորդի անունն, որ էական դրոշմն է արքութեան իւրոյ, նոյն և մեծութեան նորա է և բարձրութեանն։ Ոչ յայն լինչ մեծ կոչի, զի 'ի նախնիս իւր Համարի Թագաւորս և նահապետս, և զի արիւն վեհափառ քան զամենայն աշխարհի յերակունան խաղայ։ այլ մեծ է, վասն զի Սուրբ է և Որդի Բարձրելոյն։ ամենայն մեծութիւն իւր 'ի ծոցոյ անուն Աստուածոյ բղխէ՝ ուստի էլեալն է։ և մեծ խորհուրդ յաւիտենից Հանապարհայ իւրոյ՝ յայտնեալն այսօր, յաստուա-

1 Մատթ. Ա. 21։
2 Ղուկ. Ա. 33։

ծեղէն ծննդենէ անոի նորա առնու զամենայն զփառաւորութիւն իւր :

Մեր այն միայն է մեծ՝ որ յԱստուծոյն գայ : Այո՛, եղբայրք իմ, թո՛ղ պարծեսցին մեծամեծք՝ ունել իբրև զՅիսուս իշխանս և թագաւորս ՚ի նախահարս իւրեանց . եթէ չեք նոցա այլ փառք բաց ՚ի հաւուցն, եթէ մեծութիւն նոցա բռնակալ՝ յանուան իւրեանց է, եթէ ամենայն առաքինութիւն նոցա՝ միայն պատիւքն են իւրեանց, եթէ զանոնցեալ դարս պարտ եղէ յուշ ածել՝ առ ՚ի գտանել զնոսա մեծարանացս արժանի, զարմ նոցին անարգէ և արհամարհէ զնոսա՝ և ս և ըստ աշխարհի : Անձանց նոցա ընդդէմ դնի միշտ անուն իւրեանց . յիշատակ հաւուն ՚ի նախատինս նոցա լինի . արձանագիրք պատմութեան պանծալի հանդիսից հարցն՝ հակառակ վկայք են ընդդէմ իւրեանց : Յանարժան պայազատան խնդրին նախնիքն փառաւորք, յանուանց իւրեանց պահանջին առաքինութիւնք՝ որ զարդարեցին երբեմն զՀայրենեացն, և զանձեալ փառք ժառանգութեան նոցա՝ բեռն միայն է ամօթոյ ՚ի ձնիլ զնոսա և չընկալեալ :

Եւ սակայն բազումք յերեսս իւրեանց ցուցանեն զամբարտաւանութիւն տոհմին : Զաշխարհական բարձրութեան իւրեանց Թուէն յանդոյ դարան, ՚ի գործս զոր չեք նոցա ապրեալ, ՚ի նախահաւս՝ որոց անարգ լինչ փոշի և եթէ մնայեալ է, յարձանս՝ զորս եղծեալ են ժամանակք . և ՚ի վեր քան զայլս կարծեն զանձինս, վասն զի առաւել կան նոցա ընտանի աւերակք արքունեաց անցից ժամանակին, և կարօղ են առաւել քան զայլս ՚ի մէջ ածել նշանակս ունայնութեան կենցաղականացս :

Մեծ իմն անշուշտ առաւելութիւն է քաջատոհմութիւն, ընդ որում յամենայն ժամ միաբանութիւն ազգաց լծորդեալ է աշխարհաս պատուոյ և մեծարանաց . բայց անուն լոկ է այն, և ոչ առաքինութիւն . հարկ իմն է փառաց, և ոչ առիչ . խրատ է ընդակից՝ և պատուաւոր առիթ մեծու-

Թեան, այլ ոչ ինքն առնէ զմեզ մեծս. ժառանգութիւն է պատուոյ և պարծանաց, բայց պակասէ և չիջանի ՚ի մեզ, եթէ զանուն ևս ժառանգիցեմք՝ արտաքոյ առաքինութեանցն որոց զայն շքեղազարդեալ է: Իբրև թէ նոր իմն ազգ մեզէն սկսանիցիմք, լինիմք մարդիկ նոր. անուան մեր՝ ևեթ է աղնուականութիւն, իսկ անձանց մերոց՝ անարգութիւն:

Արդ, եթէ բարեհամբաւութիւն առանց առաքինութեան յաչս իսկ աշխարհի մեռոյ անուն ևեթ է, որ յանդիմանէ մեզ անդադար զանպիտանութիւն մեր և զվատթարութիւն, իսկ զինչ իցէ առաջի Աստուծոյ, որ ոչ լինչ մեծ և ճշմարիտ տեսանէ ՚ի մեզ քան զձիրս չնորհաց իւրոց և ըստ հոգւոյն իւրոյ զորս ինքն եդ ՚ի նմա:

Ապա շքեղ քան զամենայն պարծանս է ծնունդն մեր ըստ հաւատոց: Ահնու ևեթ եմք մեծ, զի ըստ Յիսուսի որդիք եմք Աստուծոյ, և զի պահեմք զաղնուականութիւն և զբարձրութիւն երկնաւոր ծննդեանս: Ահն է որ համբառնայ զբրիստոնեայն ՚ի վեր քան զթագաւորս և զիշխանս երկրի, նովաւ լինիմք այսօր ժառանգակիցք Յիսուսի, մեր է ամենայն, ուրեքեք համօրէն վանք մեր են, նահատակք և ընտրեալք առ հասարակ յաւիտեանցն գնացեալ՝ մեր են նախահարք, անանց թագաւորութեան լինիմք ժառանգաւոր, գաղելոյ եմք զհրեշտակս և զմարդիկ, և յաւուր միում առ ոտս մեր տեսանելոյ զաղգս ամենայն և զգօրութիւնս աշխարհի:

Ահա է, Տէր ալքայ, յառաջահաս պատիւ որդւոցն Աստուծոյ. վանն որոյ և թագաւորք մեր՝ զանուն քրիստոնէի եդին ՚ի գլուխ ամենայն պարծանաց որ բակ առեալ պատկեն զթագ իւրեանց, և սուրբն քան զբնաւ նախնիս քո՝[1] զսկիզբն և զպատճառ մեծութեան իւրոյ ոչ ինդրեր ՚ի թիւս քաղաքաց և գաւառաց նուաճելոյ ՚ի գաւազան իւր,

1 Սուրբ արքայն Լուդուիկոս թ:

այլ միայն ուր միաւորեմբն ի համար մեռեալ էր որդւոյն Աստուծոյ:

Սակայն, Տէր արքայ, չէ շատ, ասէ Յովհաննէս, զանուն հաւն հաւէր կրել, պարտ է լինել և արդեամբք. Չի որբի Աստուծոյ կոչեսցուք և եմք [1]: Եթէ արքայորդիք՝ օտարախորթ եղեալ ի մեծափառ զարմին, անարդ և վշտաւն յօժարութեանց տայցեն զանձինս, եթէ ի բախտ անառակ ուրուք ձեռագիսն նկրտիցեն՝ երբեմն յարժանաւոր լինչ սրտի իւրեանց և բաւական ի լրումն մեծամեծ ակնկալութեանցն, եթէ ըստ ակն անկեալ ի նոցանէ զահուն՝ յոր յաւուր միում համբառնալոց էին, ոչ այլ լինչ մեծ պիտիցեն՝ բայց ընդ գեհէն թաւալել, և սրտիւ և գործովք խառնիլ ընդ խառան խաժամուժն, քանի նախատինք էին անուան իւրեանց, և ազգին՝ որ սերանց այսպիսեաց ակն կալեալ մնային:

Այսոխի են, Տէր արքայ, և առաւել մեղանչականք՝ որքան Աստուծոյ անկեալք ի պատուոյն մինչև ի վարս որդւոց աշխարհի: Միաւորեանգ հնարհ առաւել բարձրացուցեալ է զքեզ քան զիսաւս զարմիդ, Թէպէտ և վեհապոյն է դա քան զամենայն ծագաց երկրի: Դովաւ՝ Թագաւոր միայն ես ժամանակեան, միւսն՝ ժառանգ կացուցանէ զքեզ յաւիտենից արքայութեանն: Առաջինն՝ արքայորդի եւեթ առնէ զքեզ, միւսովն՝ որդի Աստուծոյ ես եղեալ: Տեսանեմք մեք զոր ամենայն, զի առնեն և արձակիւն ի մեծափառ անձինդ խնասաք և յօժարութիւնք արժանի սերընդեան նախնեացն քոց Թագաւորաց. այլ ոչ լինչ էր այդ՝ եթէ չցուցանէիր և որ լինչ անկն է մեծութեան ծննդեանդ առ ի յԱստուծոյ, որ ի համար որդւոց իւրոց կարգեալ է զքեզ կնքովք:

Արդ, յորոց Թագաւորական սերունդն պահանջէ, Տէր արքայ, սես և ի միտ առ անտի՝ զինչ աստուածեղէն ծը-

1 Յովհ. Ա. կաթ. գ. 1:

նունդն պահանջեցէ: Եթէ արքայորդիք գեր՛ի վերոյ լինեցոյ են քան զայլս՝ի մարդկանէ. եթէ փոքր լինչ նուաստութիւն անպատուէ զնոսա, եթէ խուն լինչ վատասրտութիւն՝ բծկան արատաւոր է փառաց սերնդեան նոցա, եթէ նոցա՝ի մեղս դրի սակաւ լինչ յողդողդութիւն բարուց, եթէ առաւել քաջ, խնամասուն, զգոյշ, քաղցր, մարդասէր, հեզ և վեհ քան զայլս արժան է նոցա լինել, եթէ այսչափ լինչ պահանջէ աշխարհ յորդւոյ երկրի, զի՞նչ լինչ ոչ խընդրեցէ Աստուած յորդւոյն երկնից. զքո անմեղութիւն, զքո ամբծութիւն սրտի, զքո բարձրութիւն խորհրդոց, որպիսի դերակայութիւն քան զզգայութիւնս և զկարիս, որպիսի արհամարհութիւն ընդ չկայս և չնաչիս. քանի՛ մեծ լինել արժան է՝ի պահել զփառս մեծի այսր ծննդեան: Առաջին նշան մեծութեանն Յիսուսի, մեծութիւն սրբութեան. Նա էղիցի մեծ, և որդի Բարձրելոյ կոչեցի:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Իսկ երկրորդ անգամ՝ մեծ էղիցի նա, զոն զի փրկելոց է զժողովուրդ իւր. Զի նա ինքնէսք զծողովուրդ էր. երկրորդ նշան մեծութեան իւրոյ, մեծութիւն ողորմութեան:

Ոչ յայլ լինչ կարէ նա փրկիլ, բայց՝ի ընդ ելանել երախտեաւքն զմարդիկ: Ընդ գերութեամբ և ընդ անիծիւք կայաք, գայ նա խզել զկապանս և հանել զմեզ յազատութիւն: Թշնամիք էաք Աստուծոյ և տարագիրք յուխտից աւետեացն, գայ նա հաշտեցուցանել զմեզ ընդ նմա, և առնել զմեզ քաղաքակիցս սրբոց և որդիս նորոյ ուխտի: Առանց օրինացս և ըմբռ և առանց Աստուծոյ կէաք յաշխարհի, գայ նա լինել մեզ օրէնք, ճշմարտութիւն և արդարութիւն, և սիրել զչէզոքսն պարզեւաց իւրոց և շնորհաց ընդ ամենայն սիրելիս: Միահամուռ ասել, գայ նորոգել զերկիր առհա-

առրակ, սրբել զպղծեալս, զօրացուցանել զակարս, փըր-
կել զկորուսեալս, ժողովել զցրուեալս: Որպիսի մեծու-
թիւն. զի չիք ինչ այնպէս մեծ՝ քան ամենայն մարդկան
օգուտ լինել:

Այսմ մեծութեան տենչալ պարտին իշխանք և թագա-
ւորք և ամենայն անուն մեծ անուանեալ յերեսս երկրի.
անհնար է նոցա մեծ լինել՝ առանց պիտանի ժողովրդոց լի-
նելոյ, և առանց բերելոյ նոցա ըստ Յիսուսի զազատութիւն՝
զնաղաղութիւն և զլիութիւն:

Ազատութիւն ոչ զայն ասեմ՝ որ զախտս և զստամբա-
կութիւն համարձակիցէ. զի մահաբեր լինութիւնդ՝ նոր
լինի լուծ է և ծերութիւն ամօթալից. և օրինաւորութիւն
կարգաց և կրօնից՝ առաջին սկիզբն է երջանկութեան և
ամրութեան տէրութեանց: Եւ ոչ զայն ինչ ասեմ, որ կամ
օրինաւոր իշխանութեան հակառակ ամբառնայ, կամ որ
Թագաւորին ևէթ սեփականն է՝ յայն ձեռն արկանել ձըգ-
տի, և պատճառանօք հաւ այնմ դնելոյ՝ բառնալ զայն 'ի
միջոյ և կորուսանել: Առանց կարդի և հպատակութեան
չիք երանութիւն ժողովրդոց: Եթէ մէտ մի ևէթ դոյզն խա-
տրեսցին ըստ կէտ հնազանդութեան, չինայ ինչ տեսչու-
թեանն կարգ. ամենայն ոք իւրում՝ անձինն կամի օրէնս
լինել. խառնութիւնք, աղմուկք, հերձուածք, ոճիրք և
անպատուհաս համարձակութիւն ծնանին անդէն յապե-
րասան ազատութենէ ածուի. և անմարթ է Թագաւորաց
երջանիկս յարդարել զընդ ձեռամբ կացեալսն, բայց եթէ
հպատակս իշխանութեան զնոսա ունելով, համայն և քաղցր
և ցանկալի առնելով նոցա զնուաճութիւնն:

Ազատութիւն, Տէր ասէաց, զոր իշխանք պարտին ժողո-
վըրդոց իւրեանց, է օրինացն ազատութիւն: Տէր ես դու
կենաց և բախտի հպատակացդ, բայց ոչ կարես՝ եթէ ոչ
ըստ օրինաց միայն տալ 'ի վերայ նոցա հրամանն: Ի վեր
քան զքեզ զԱստուած ևէթ ճանաչես, ճշմարիտ է. բայց
պարտ է օրինաց իշխանապոյն լինել քան զքեզ: Ձես գե-

բեաց հրամանատար, իշխան էս ազգի ազատի և քաջի, որ որպէս սիրասիրութեանն՝ նոյն և ազատութեանն է նախանձաւոր, և որչափ՝ ի սիրասիրութենէն հաստատեալ էցէ ծառայութիւն նորա, այնչափ և անդեղեւուն է: Թագաւորք երբ՝ ամենայնի կարօղ են՝ ի նմա, զի գոմէ նորա և հաւատարմութիւն չունեն ինչ սահման հնազանդութեան իւրում, բայց արքայք նորա պարտին գնել իշխանութեան իւրեանց. և որպէս սէր նորա չգիտէ ինչ այլ օրինա քան զկոյր հպատակութիւն, նոյն և Թագաւորք նորա մի առաւել ինչ պահանջեսցեն՝ ի հպատակութենէ նորին՝ քան զոր օրինքն ներուն պահանջել. ապա թէ ոչ, ոչ էս հարք եղեն և պաշտպանք ժողովրդոց իւրեանց, այլ թշնամիք և հարստահարիչք. ոչ եթէ Թագաւորին հպատակացն, այլ լուծ՝ ի վերայ դնեն:

Իշխանութիւն դերագիտաւ նախահաւուդ՝ ի վերայ ազգին՝ զանցոյց քան զամենայն Թագաւորաց՝ նախնեացդ քոց. երկար և շքեղ Թագաւորութիւն ամրացուցեալ էր ցայն, խնամատութիւն նորա մեծ՝ զայն պինդ ունէր, և հպատակացն սիրասիրութիւն՝ չունէր ինչ գրեթէ չափ և պայման: Սակայն դիտաց նա, ոչ սակաւ ուրեք, զկնդացանել զայն առաջի օրինաց, դատաւոր առնուլ զնոսա ընդ ինքն և ընդ հպատակն, և զօգուտ իւր մեծանձնութեամբ՝ ի նեղքոյ դնել ընտրութեան նոցա:

Ապա ոչ Թագաւորին, Տէր արքայ, այլ օրինացն է իշխել ժողովրդոց: Ոչ այլ ինչ էս դու, բայց պաշտօնեայ նոցին և գլխաւոր առանդապահ: Նոցա է ուղղել զպէտս իշխանութեան, և՝ ի ձեռն նոցա իշխանութիւնն ոչ էս լինի լուծ՝ ի պարանոցս հպատակաց, այլ կարգ առաջնորդութեան, զօրավիգն պաշտպանութեան, հայրական հսկողութիւն՝ որ յայն սակս էւթէ սէրտիւ պահանջէ զնոցա հնազանդութիւն, զի այն է երաշխաւոր սիրոյ նոցին: Յորժամ՝ օրինօք միայն առաջնորդեսցին մարդիկ, զանձինս առ ազատս ունին. հնազանդութիւն՝ զերջանկութիւն նոցա

դործէ յայնժամ, զի նա բերէ նոցա զամենայն անդորը և զամենայն վստահութիւն. կարկը, կամք անկրաւ, անչափ և փառաւոր յանկուցիչք՝ զոր ընդ պէտս իշխանութեանն իառնեն իշխանք, նուազեն զայն, Թող Թէ ընդարձակիցեն. ընդ կամէն առաւել քան զօրինեան լինել՝ ակարանան, շահել կարծելով՝ կորուսանեն: Որ ինչ անկրաւ և առել առնէ զիշխանութիւն, չնաւսէ զայն և անօսրէ. աղքիւր զօրութեան նոցա 'ի սկրտս հպատակացն է. Թէպէտ և տիրապետութիւնք Թուիցեն, մարթի ասել՝ Թէ յանկանեն 'ի սկրոյ ծառայից, անկանեն և 'ի ճշմարիտ կարողութենէն:

Ասացի և զհաղորդութիւն և զկնութիւն, որ են միշտ երանաւէտ պատուիք նախաձառեալ աղատութեանն. և այն իսկ են բարութիւնքն՝ զոր դայ Յիսուս բերել յերկիր. այնիւ է մեծ՝ զի բարերար առ ամենեսեան է:

Այո, Տէր ասքայ, առ 'ի մեծ լինել 'ի միտս մարդկան՝ պարտ է պիտանի մարդկան լինել: Գոհացողութիւն շարժեաց զնոսա երբեմն՝ աստուածացուցանել զբարերարն. 'ի պաշտօն առին զերկիր՝ զկերակրիչ իւրեանց, զարեգակն՝ լուսատու իւրեանց, զիշխանան երախտաւորս, զԱրամազդ՝ ասքայ կրեատցոց, զՈսիրիս՝ զերկիրպատցոց Թագաւոր, որ օրինս հանճարեալ տուեալ էին հնազանդելոց իւրեանց, հարք եղեալ ժողովրդոցն, և 'ի Թագաւորութեան իւրեանց երանաւէտեալ զնոսա. զայն իմն հառնդն սկրոյ և մեծարանաց ընչեաց 'ի նոսա ընդհակալութիւնն, մինչև 'ի պաշտօն զառածս:

Պարտ է յանկուցանել զմարդիկ 'ի սէր փառաց մերոց՝ Եթէ անմահութեան նորա ցանկամբ, և Եթէ ոչ երախտաւոք՝ չիք այլով իւիք այնմ գամագիտ լինել: Մեծամեծ ձիրք բնութեան և անուանք՝ որ բարձր առնեն զմեզ քան զնոսա և ոչ ինչ ազդեն յերջանկութիւն նոցին, շլացուցանեն զնոսա, այլ ոչ շարժեն, և նախանձուիս սրկանեն յամենեսին՝ քան Թէ սէր և յարգանս: Գովութիւնք՝ զոր այլոց մատուցանեմք, մատամբ իւիք 'ի մեզ ինքեանս ակնար-

կեն միշտ. շահ կամ անախտութիւն է նոցին Թագուն պատճառք. զի ամենայն որ անախտ է, և գոլ վասն իւր ևեթ գործէ, և չէ սովոր վարկպարապն ի գովեստս այլոց յօժարել՝ որ զինքն խոնարհեն, և իբրև յայտ իմն յանդիմանութիւն են առաւել լինելոյ այլոց քան զինքըն. իսկ շնորհակալութ սիրտ յաղթէ անախտութեան, և ամբարտաւանութիւն հեշտեաւ առնու յանձն՝ երախտագործաց մերոց լինել ևս վերակացուս մեզ և տեարս:

Ոչ, Տէր ազքայ. Թագաւոր՝ որ զինուորական առաքինութեամբք ևեթ ևս զարդարեալ, ի խեթի կայ՝ չլինել մեծ առ յապայն: Վասն իւր միայն է Ջանացեալ, և ոչ ինչ արարեալ ժողովրդոյն. և ժողովրդոյն է միշտ՝ յատակ հոգել զփառս և զմեծութիւն Թագաւորին: Համարեսցի Թերևս աշխարհակալ որ մեծ, այլ ոչ երբեք Թագաւոր մեծ. յաղթեսցէ պատերազմաց, այլ զհպատակացն սիրտ նուաճեսցէ ոչ. սիրեսցէ ի տար աշխարհս, այլ սպառեսցէ զիւրան. հակիրճ ասացեալ, զօրավարեսցէ բանակաց քաջութեամբ, այլ չարաչար անուեհեսցէ զհնազանդեալսն:

Իսկ Թագաւոր, Տէր ազքայ, որ միայն յերջանկութեան հպատակացն խնդրեսցէ իւր փառս, առաւել ընտրեսցէ ըզխաղաղութիւն և զհանդարտութիւն՝ որում միայն է երանելիս առնել զնոսա, քան զմարտից յաղթութիւնս՝ որ իւր միայնոյ իցեն, և զնոսոյն պարծանսն փառաբաշխեն. Թագաւոր՝ որ ոչ այլ ինչ համարիցի զանձն՝ բայց պաշտօնեայ ժողովրդոյն, և գանձ պատուական՝ զսիրտս հպատակացն. Թագաւոր՝ որ օրինացն և օրինակացն զգօնութեամբ՝ հալածիցէ յաշխարհէն զանկարգութիւնս, զջրպին սովորութիւնս յուղղութիւն ածիցէ, ի հասոյզ պահիցէ զվայելչութիւն վարուց հասարակաց, զամենայն որ ի կարգին ունիցի, զղեխութիւն և զատահակութիւն սանձիցէ՝ որ քան զմարտս պատերազմաց և քան զդժնդակ հարուածս առաւել օրհասաբեր են տէրութեանց. պաշտամանն և կրօնիցն հարցն համարձակութիւն տայցէ՝ պայծա-

առաքիւն և մեծվայելչութիւն, և միահարթ հաւասարութիւն՝ որ զմեծարանս նոցին անկորուստ պահէ ի ժողովրդեան. պինդ կալցի զսուրբ աւանդ հաւատոցն՝ ընդդէմ ամենայն յանդգնութեան խեղ և ստամբակ ոգւոց. որ ըզհպատակեալ երբեմն որդիս տեսանիցէ, զարքայութիւնն՝ երբեմն զազգատոհմ իւր, և զիշխանութիւնն վարիցէ համակ յերջանկութիւն որոց հաւատացին նմա զայն. Թագաւոր այս պիսի՝ յամենայն ժամ եղիցի մեծ, զի և ի խակ ի սիրտս ժողովրդոցն: Պատմեսցեն հարք որդւոց զերանութիւն կենաց իւրեանց առ բարեգործ տէրամբն. ազգս զուսցեսցեն զԹոռուն իւրեանց. և յիշատակն ազգէ յազգ պահեալ ի տունս տունս, եղիցի արձան ընդակիւց՝ կանգնեալ ի ցանկի որմոյն հայրենականաց, յաւէրժացուցանել յամենայն յաւիտեանս զանուն բարեհամբաւ Թագաւորին:

Ո՛չ, Տէր ազբաց, ոչ եթէ անդրիք և արձանագիրք եղեն՝ որ անմահացուցանիցեն զԹագաւորս. Թէ վաղ Թէ անագան այն ամենայն իսպառևիկ լինելն ժամանակին և յեղափոխութեան առօրեից: Հռոմ և յունաստան ի նանիր յաձախեցին երբեմն յանբաւս զպատկերս Թագաւորացն իւրեանց և կայսերաց, և զամենայն հանճար արուեստին Թափեցին՝ պատուական ընծայեցուցանել զինոսա հանգերձեալոց յաւիտեանցն. ի խրոխտ արձանաց անտի բոլորեցուն՝ հաղիւ մի ևեթ հասեալ կայ ցմեզ: Որ լինչ ի կուռ և ի պղինձ դրոշմի՝ փուխով եղծանի. խակ որ ի սիրտս՝ յաւիտեան կայ:

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

Վասն որոյ՝ վերջին նշանակ մեծութեանն Յիսուսի է ուր և յաւէրժութիւն արքայութեան իւրոյ. Եւ Նագաւորութիւնն նորա վախճան մի լիցի: Էր նա երկիւղ, և այսօր, և եղիցի յամենայն յաւիտեանս. բարերարութիւնք իւր յաւէրժացուսցեն զարքայութիւն իւր և զզօրութիւն: Խոստովանեսցեն զնա մարդիկ հանուրց ժամանակաց, պաշտեսցեն իբրև զկենս իւրեանց, իբրև զաղաւեցուցիչ, իբրև զքահանայապետ մշտնջենակեաց՝ որ ցանգ մատուցանէ հօր իւրում զանձն իւր վասն մեր պատարագ. լինի ևս իշխան յաւիտենից՝ Թագաւորեալ՝ի վերայ ամենայն ընտրելոց յերկինս, և Եկեղեցին յաղթանակող յերկինս՝ լինի արքայութիւն նորա և ժառանգութիւն, որպէս պատեպազմեալն յերկրի: Այս աւասիկ է մեծութիւն մշտնջենաւորութեան և տէրութեան:

Եւ կարի քաջ յիրաւի. սուտ են ամենայն փառք՝ որ ընդ մեզ են վախճանելոց: Քան աւաքինութեանց մերոց՝ մեծամեծ անուանցս էին շնորհեալք. փայլումն իմն պատիր էին բակ առեալ զբարձիւքս, ոչ՝ի միոջ ցոլացեալ: Պարս զարմացելոց շուրջ ունէաք անդուլ, և՝ի նեղութեան թափուր էաք՝ի զարմանալի հանգամանաց: Փառքն այն՝ որ պատկէք էին վերնակէն և շողմից, և չէ ինչ նորանշան՝ թէ ընդ նոսին և վախճանեսցին: Անյագխի են փառք ոչ սակաւուց՝ի թագաւորաց և յաւազանաց: Ի միացորդս դրուատեաց պատուին և աճիւնք նոցին տակաւին ծխեալք, յաւելու և այս մեռոյ պաճուճանք՝ի պերճանս հանդիսի յուղարկաւորութեան նոցա: Խակ՝ի վաղիւ մնդր՝ խաւարչ ամենայն և չիք լինի. գովութեանցն մատուցելոց՝ ամօթ՝ի վերայ հասանէ. լեղաւ է այն հնացեալ և անհամ՝ զոր ոչ

և ոք խլեսէ խօսել այնուհետև. ամաչեցեալ երևին զոգ-
ջեա արձանք աշխարհին՝ յորս դեռ դրոշմեալ կան, և Թուին
կալ ՚ի քըքրել ևեթ աշխարհօրէն զնիշատակն՝ որ յա-
րատև յայնցանէ լինի: Այսպէս ահա շողոքորթութիւնք
չերկարեն զնիւանս քան զդիւցազունս իւրեանց, և վարձ-
կան գովութիւնք՝ փոխանակ զնուաս իշխանացն անմահա-
գործանելոյ՝ զանարդութիւն նոցին անմահացուցանեն, և
զշահասիրութիւն և զվատութիւն այնոցիկ՝ որ կարօղ ե-
ղեալ են գովել զնոսա:

Առ ՚ի վերայ կալ հատատոխ մեծութեան Թագաւորաց
և ատգրերոց՝ յատկագոյ դարման խնդրելի է զայն: Ըստ
հետանալ նոցա ՚ի միմեանս՝ ամէն և հատատոխ փառք նոցա՝
որ ՚ի սիրոյ Ժողովրդոց ծագեալ: Դեռ ևս յերկիւղս են
ցայսօր մեծամեծ գովութիւնքն մատուցեալք առաւել քան
զառաւել միութեն[1] ՚ի քաջացն քոց նախնեաց ՚ի դարու-
անդ իւրում, և յետ Մարիփնանեան պարծանոց ևս՝ տա-
կաւին երկեան է, Թէ օրէ՞ն լոկ արդեօք քաջութեան՝ խոս-
նել զնա յազգահատնոյ մեծոց Թագաւորացն որ կալան
զաթոռ. և նուազագոյն բնատուր ձրիւք փառատուրու-
Թեան դիւցազանց, և առաւելագոյն խաղաղասէր առաքի-
նութեամբք Թագաւորացն բարեգործաց՝ մեծ եղիցի միշտ
՚ի վէպս մեր՝ նախնին[2] նորա, զի սիրելի լինիցի միշտ ազգին՝
որում հայր եղև: Յոչինչ համարին գովութիւնք Թագաւո-
րաց առ Թագաւորութեամբ իւրեանց, եԹէ ոչ կրկնեսցին
ապա ընդ գահակալօք նոցին: Ընդ յայնժամ յեռինք նո-
ցա միշտ արդարակորով՝ կամ ընկենուն զնոսա ՚ի փառաց՝
զոր ուժգնութեամբ և բարձիւն էին ժառանգեալ, կամ
պահեն նոցա զպատիւն՝ զոր առաքինութեամբն քան Թէ
զօրութեամբ ստացան: Վարուց մեծի արքայի, Տէր ար-

1 Փրանկիսկոսի առաջնոյ, որ պարծանս մեծ քաջութեան կալաւ
՚ի Մարիփնանեան պատերազմին:

2 Լուդովիկոս ԺԲ:

քայ , արժան է օրինակ կալ յաջորդացն , և ազքայութեան նորա կաղաղակար լինել ամենայն ազքայութենից որ լսա նմանէն . յայնժամ, եթէ իշխիցեմ ասել , առանց անցանելոյ յաւխաեան կացցէ իբրև զԹագաւորութիւնն Յիսուսի . Ե՞ Բագաւորութեան նորա վախճան մի լիցի :

Թագաւորութիւն Դաւթի օրինակ եղև միշտ բարեպաշտ Թագաւորացն Յուդայ և տեսեաց զայդ ընդ աթոռոյն Երուսաղէմի : Ոչ եթէ յաղթութիւնք իւր միայն էղեն զնա օրինակ աթոռակալացն իւրոց Թագաւորաց . — հանգոյն նմին և Սաւուղ նշան յաղթութեան կանգնեալ էր ՚ի վերայ փղշտացւոց և ամաղեկացւոց . — այլ առաւածպաշտութիւն նորա , սէր առ ժողովուրդ իւր , նախանձ օրինաց և կրօնից հարցն , հպատակութիւն առ Աստուած ՚ի ձախողանս , համեստութիւն ՚ի յաղթանակս և ՚ի յաջողուածս , մեծասրտութիւն առ մարդարէսն՝ որ յաստուածակոյս կոչմանէ դային խրատել զնա և բանալ զաչսն ՚ի դիտել իւրում, յայտ յանդիման արտասուք ապաշխարութեանն և բարեպաշտութեան՝ որովք եթաց զգահոյս իւր առ ՚ի քաւել զդայթագղութիւն դլորմանն , անբաւ գանձքն՝ զոր մեծ բեաց ՚ի կառուցանել զտաճարն Աստուծոյ հարց իւրոց , մեծարմութիւն իւր ընդ քահանայապետին և ընդ պաշտօնեայս սրբութեանցն , խնամքն ՚ի տպատուրել ՚ի Սաղոմոն որդի իւր զօրէնս առաքինութեան և խնամատութեան , և բարեկարգութիւնքն և իրաւանցն արդարութիւն՝ զոր հաստատեաց ընդ ամենայն Իսրայէլ :

Ա՛յդ աւագիկ է մեծութիւն , Տէր ազքայ , յոր կէտ և դեալ նկրտել պարտի վեհափառ տէրութիւնդ : Ա՛յնպէս Թագաւորեա՝ զի յաւխաեան կացցէ ազքայութիւնդ քո . զի ոչ միայն անկասկած պահեացէ քեզ զանմահ Թագաւորութիւն որդւոցն Աստուծոյ , այլ և յամենայն առ յապա դարս օրինակ բարւոյ Թագաւորի զքեզ դնիցեն յաջորդացն քոց ազքայից :

Ոչ յաղթանակս եւեթ կանգնելոյ եղիցի քեզ լինել Թա-

գաւառ մեծ. այլ գուէթ քո առ Ժողովուրդդ, Հաւատալ մուէթիւնդ առ Արարիչն, նախանձ հայրենի կրօնիցդ, փոյթդ յերկրանկուէթիւն հպատակացդ, արասցեն զարքայուէթիւնդ քո գեղեցկապոյն մեան մերոց պատմուէթեանցս և օրինակ ամենայն ապագայ Թագաւորուէթեանց:

Սիրեա զԺողովուրդս քո, Տէր արքայ, և բանքս այս յաչս յեղյեղուկ յաճախս քո՝ հեշտալուր լիցին 'ի սիրտ քո հանապազ: Լեր գթած, մարդասէր, քաղցր, վշտակից 'ի տառապանս նոցա, ողորմած 'ի կարիս նոցին, և լինիցիս Թագաւոր մեծ, և արքայուէթիւնդ քո յաւէրժական զոյգ ընդ միահեծան տէրուէթեանն: Կացոյց զքեզ Աստուած 'ի վերայ տիրասէր ազգի, որ և նմին խակ կրկի աղագաւ հեթ արժանի է սիրոյ տերանցն: Յաշխարհ տէրուէթեան ուրեք, ուր գոգցես իմն սէրս հպատակ ծնանին Ժողովուրդք, արժան է և Թագաւորացն անդստին 'ի բնէ առաստ տեարս ծնանել: Տեսանես այժմին՝ զի ամենայն սիրտք առ քեզ ԹռԹռեն. Տէր արքայ, սիրոյ չիք փոխարէն՝ բայց սէր, և դու չլինիկիր արժանի սիրոյ Ժողովրդոցդ, եԹէ զլանայիր նոցա զքոյդ:

Թագաւորաց չիք այլ փառք. մեծուէթիւն նոցա բռնադակ՝ է 'ի սէր Ժողովրդոցն. նոքա են որ զիշատակ ընտիր Թագաւորաց՝ դարուց 'ի դարս անաղօտ պահեն: Եւ ո՞ր փառք չիցեն արդարև առն Թագաւորի՝ սիրել և յետ մահու 'ի սիրտս հպատակացն, անեռկմիտ լինել՝ զի ընդ բնաւ ապառնի ժամանակս կարօտացեն Ժողովուրդք առ նորա Թագաւորուէթեամբն կենալ, կամ՝ խնդասցեն ընդ նմանօրինակ արքայիւ լինելոյ: Որպիսի՛ փառք, Տէր արքայ, տալ առնել զանձնէ ընդ ամենայն հանդերձեալ յաւիտեանն, որպէս զչնոյն Սաբայ առեր զԱսղոմոնէ. Երանի՛ որոց տեսին զնա և կեցին ընդ քաղցրուէթեամբ օրինացս և տէրուէթեան նորա: Երանի՛ դարուն որ երևեցուցանէ երկրի զայսպիսի տէր բարերար: Երանի՛ քաղաքացն և ազարակաց՝ որ առ արքայուէթեամբ նորա տեսին կենագործեալ զլուէթիւն,

զհաղաղութիւն, զլինդութիւն, զարդարութիւն, զանմեղութիւնն երանաւէտ աւուրցն: Երանի ազգին՝ որում չբնորհեսցեն երբեմն երկինք Թագաւոր նմին հանդուրնակ:

Ո՛վ Տէր, քո միայն է սալ ժողովրդոց Թագաւոր բարի, և այն խակ է մեծն ի ձերս. քո զոր պարգևեսցես երկրի: Տակաւին ի ձեռսդ ունիս զմեծաշուք մանուկդ՝ զոր ի Թագաւորութիւն պատրաստես: Հասակ իւր և անմեղութիւն՝ տակաւին սկիզբն է գործոց ողորմութեանց քոց: Զև է լեալ ըստ ձեռնն՝ որ կերպարանէ զնա և կատարէ: Ո՛վ մեծդ Աստուած, զեռ ևս դոյ ժամանակ, հաստեա զնա յերանութիւն ժողովրդոց՝ որոց պահեցեր զնա. և պարգևեա այս՝ առեալ մատուցեալ աստուածոր՝ մի զբարութիւնդ քո Թախանձեցուսցէ, զի ի կարևոր պէտս է փրկութեան և երջանկութեան ազգի՝ որում յառնային ժամ հովանի եղեր:

Ընդ բարեգործ Թագաւորօք ի հատուկ կոչ պաշտօնդ քո, մելորութեանց յաղթեն հաւատք, տոկալն անհատութիւնն հալածական լինի կամ տխալի ի Թաքուստ մտանել, տարագիր լինին նորածին վարդապետութիւնք, ոգիք ապստամբք՝ անօգնական և անապաւէն մնան, եթէ ոչ հնազանդեսցեն և եկեսցեն ի մի միաբանութիւն. պաշտօնեայք քո՝ հանդարտեալք ի սպասաւորութեան գործոց իւրեանց և անհանգիստ աքնեալք ի պահպանութիւն աւանդիցն, տեսանեն զպետական խնամոյ ձեռն ի ձեռն ընդ քահանայականին զօգեալ, և ամենայն սիրտք միացեալք առ ոտս գահոյն արքունի՝ զնոյն բերեն միութիւն և զղջութիւն առ ոտս տերբ սեղանոցն: Այսուհետև օր ըստ օրէ յաւել ի նմա, Աստուած իմ, զբարեմտին տիպս կերպարանաց՝ որ Թագաւոր բարի աւետեն ժողովրդոց. ողորմութեանցդ հաստուած՝ զօրհանատարձ աձեսցէ և առատացի ի նմա ընդ տիոցն: Ոչ խնդրեմք ի քէն՝ զի յաղթօղ լինի Եւրոպէի, այլ խնդրեմք միայն՝ զի եղիցի հայր ժողովրդեան իւրում: Զօրութիւն բազկի քոյ պա-

հեաց զնա մեզ՝ ի հարկանելն շուրջ զորրոցաւ իւրով՝ ողջոյն զաղգատոհմն Թագաւորական. նոյն նա ինքն յօրինեաց զնա մեզ և պատրաստ արասցէ: Ա՛նուշ է նա, երբև զՄովսէս, ապրեալ՝ ի Թաղմանէ բոլոր զաշխարհն, լեցի հանդոյն նմին փրկիչ և ազատիչ իւրում ժողովրդեան. և առաջնին աքանչելիքն՝ որ՝ ի ձեռաց մահուն Թափեցին զնա, եղիցին առհաւատուչեայ կանխապուշակ որոց յուսացուցանեան զմեզ առ իւրով Թագաւորութեամբն: Ամէն, եղիցի:

ՔԱՐՈԶ Է

Ի ԿԻՒՐԱԿԷՆ ՁԱՐՁԱՐԱՆՑԻ [1]

ՅԱՂԱԳՍ ՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓԱՌԱՑ

Եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ ոչինչ են:
Յովհ. Ը. 54:

ՏԷՐ ԱՐՔԱՅ,

Եթէ փառք աշխարհիս առանց երկիւղին Աստուծոյ՝ էր ինչ հաւատալի, ոչ ոք յայնժամ երեւեալ յերկրի արժանի քան զՅիսուս՝ փառաւորելոյ զանձն:

Թող զփառս Թագաւորի սերնդեանն, և ընդ նախահարս իւր՝ ի համար արկանելոյ զԴաւիթ և զԱղոմոն, որ րմի փայլմամբ երեւեցաւ յաշխարհի:

Անցէք մօտ ընդ ամենայն վարս կենաց նորա: Բնու-Թիւն համօրէն հնազանդեալ նմա, ջուրք ընդ գարշապարս իջան սալացեալ, մեռեալք ձայնի նորա հլուք, դէպ սատանեալք՝ ի զօրութենէն՝ փախուցեալ Թաքուցեալք յերեսաց իւրոց • զգլխով նորին երկինք պատառեալ, և ինքնին գփառս նորա և զմեծվայելչութիւն քարոզեալ՝ ի մարդիկ • կաւ՝ ի ձեռան՝ լոյս ծագեալ կուրաց, յամենայն ոտնատակս անցից գնացից նորա՝ նշանք աքանչելեացն դրոշմեալք •

[1] Ըստ մեզ՝ վեցերորդ աղուհացից, կամ գալատեան:

քննէ զսիրտս, զհանդերձեալն տեսանէ իբրև զմօտաւոր, զհետ իւր առեալ ձգէ զքաղաքս և զամբոխս. ոչ ոք յաւազ քան զինքն խօսեալ էր՝ որպէս նայն խօսի, և կանայք Յուդայ՝ սիրացեալք ընդ ճարտարապետութիւն նորա՝ ե՞րբ ան՞կ որովայնին որ կրեաց զնա:

Ո՞յր ուրուք երևեալ էր յերկրի այսքան փառաւք պատկեալ, և սակայն ինքնին նա ուսուցանէ մեզ, զի եթէ անձամբ անձին առնուցու զայն և մարդկեղէն միայն լցեն փառքն իւր, ոչինչ են. Ընդ ես խոնարհիմ զանձն իմ, խոտն իմ ոչինչ են:

Ըստ աշխարհի լաւութիւն, մեծամեծ ձիրք բնութեան, շքեղ յայղուածք, ոչինչ են ուրեմն՝ եթէ մարդոյն ևեթ լցեն առաքինութիւնք, և չիք փառք ճշմարիտ՝ առանց Աստուծոյ երկիւղին: Ա՛յս լինելոց է նիւթ ճառիս:

ՄԱՍՆ ԱՒԱՋԻՆ

ՏԻՐ ԱՐՔԱՑ,

Մարդիկ՝ միշտ ընդունայնամիտք՝ ի վայրկենից հետէ ի պաշտօն առեալ են զփառս. բազում՝ այն են, որ ի խընդրելն զայն՝ կորուսանեն, և համարին գտանել՝ յորժամ անափառութեան իւրեանց ընծային գովեստք, որ առաքինութեան միայն անկ են:

Չիք ոք իշխան կամ աւագ, թէպէտ և անարդ և ցուխ վարուք և յօժարութեամբք, որում զըրախաւ շողոմք չխոսասանայցեն փառս և անմահութիւն, և չյուսասցի ի հաճութիւն յեանորդաց՝ առ որս և ոչ իսկ հասանիցէ թէ րևս անուն իւր, կամ թէ յուսութեամբքն ևեթ ծանօթ եղիցի: Աշխարհ ինքնին ապաքէն, որոյ կանգնեալ էր ըզկուռն զայնոսիկ զկաւեղէնս, կործանէ զնոսին ի վաղիւն օրդ, և հանէ պարապով յաւյատա գարս՝ զվրէժ բռնի և անիրաւ գործութեանցն ապատաբերան պարսաւանօքն:

Նա՛ և ոչ այսչափ իսկ յերկար յապաղէ. դրուատիքն մատուցեալք բազմաց յաւազդոյ՝ ի կեանս իւրեանց հրապարակաւ, զորին միշտ դրեթէ նոյնժամայն գալանի դատողութեամբք և խօսիւք: Գովութիւնքն զերծուելիս նոցին յուշ արկանեն, և այն ինչ եւեալք ընդ շրթունս քաղցրագէն, երթան՝ եթէ ասել օրէն նոցի՝ մեռանին՝ ի զրոյ անդ նորուն, որ յուրասա կայ զնոցանէն:

Իսկ արդ, եթէ մարդկեղէն փառք անկանին դրեթէ միշտ և յաստեղի իսկ աշխարհի, մինչեւ ունկնցի՞ն ինչ ձգմարտիւ յաչս Աստուծոյ, առ որում չիք ոք առոյգ մեծ բայց յորոց երկնչելոն՝ ի նմանէ. Այլ որ երկիւղածն է՝ դա մեծ է յաւիտեան[1]:

Այլ առ՝ ի զայս ձգմարտութիւն բովանդակ ակնարկ մեզ յանդիման առնելոյ, միտ դիք՝ ազաչեմ, եղբարք իմ, զի մարդկան յամենայն ժամանակս փառս համարեալ է զգաստիս անձին և զլաւութիւն, զմեծութիւն և զառաւելութիւն բնաւորի ձրիոյ, և զյաջողուածս փառաւորութեան:

Իսկ արդ՝ ամենայն մարդիօրէն լաւութիւն առանց երկիւղին Աստուծոյ՝ սուտ է, կամ ոչ է դէմ հաւատարիմ. պարգեւք մեծամեծք վտանգաւոր լինին պանծացելուն յայնս, կամ յորոց պէտս ի գործ զայնս արկանիցէ. խոկ մեծապայծառ յաջողութիւնք՝ կամ պատճառս ի մեղաց առնուն, կամ ինքեանք խոկ բազում ուրեք ոճիրք են փառացիք. Ելիր ես փառասիրեմ զանձն իմ, փառս իմ ոչինչ են:

Աեմ նախ, թէ մարդկային լաւութիւն առանց Աստուծոյ երկիւղին՝ սուտ է զրեթէ միշտ, կամ դէմ չէ հաստատուն:

Ոչ եմ անտեղեակ՝ զի աշխարհ պարծի միշտ յառաչօք ցնորս լինչ պատուոյ և բարեբարութեան առանց խոկ կրօնից. կարծէ հաւատարիմ լինել առ մարդիկ՝ մերկ յառ Աստուած հաւատարմութենէն. պճնիլ ամենայն առաքինութեամբք զոր ընկերութիւնն պահանջէ, թափուր յո-

1 Յուդիթ ԺԲ. 19:

ըոց պատուիրէ Աբեսաղոմն. միով բանիւ՝ լինել այր լաւ, լոկ և սոսկ ՚ի քրիստոնէութենէ:

Մարթ է թողուլ յաշխարհ անդր զընչին միխիթարու-թիւնս զայս, մի՛ ղերծուլ ՚ի նմանէ զնոսին և ղչքոսին փառսն իբրև զինքն, և զի լինքնին հրաժարէ ՚ի սրբոցն ա-ռաքելուբեանց, չնորհել նմա դէթ զմարդկեղէնսն: Կամել հանել ՚ի նմանէ և զանուն իսկ բարւոյ՝ զիայն մնայեալն նմա և զմխիթարն իւր ընդ կորուստ այլուս ամենայնի, և կապտել զնա ՚ի պատուոյ և ՚ի լաւութենէ՝ զոր լինքն միայն կարծէ ունել և արդարոյ իսկ զանազ յաձախ, հար-կանել է այդ զնա ՚ի կարևոր մասին և ՚ի վերջին պատնիշն իւրում:

Արդ մի՛ վհատեացուք զնա ՚ի խաղալ և յանիրաւ ժա-ռանգութենէն: Հաւանեացուք թէ յեղծման ատա և յա-պականութեան վարուց աշխարհիս՝ տակաւին ևս զերծու-ցեալ լցէ աշխարհի յաւերածոյ անտի նշխարս լինչ պա-տուոյ և ուղղութեան, և յետ ամենայն մխոից և կարեաց տիրացելոց՝ դեռ ևս երևիցին ընդ դրօշուք նորա արք հա-ւատարիմք առ բարեկամութիւն, նախանձայոյզք հայրե-նեաց, անաչառ ճշմարտասէրք, երկիւղածք ՚ի կատարումն խոստմանցն, վճիռ-ինդիրք անկրաւութեան, տկարու-թեան ձեռնկալուք, համոյն ասել՝ հեշտասէրք, և սակայն առա-քինասէրք:

Այդ աւադիկ են աշխարհի արդարքն, քաջազունքն պա-տուոյ և լաւութեան՝ զոր յոյժ առ պատուական ունի, և զօր ամենայն քամնհանօք խին և պարծանօք ընդդէմ հանէ տապտ արդարոց Աբեսաղոմնին: Նա և անարդէ ևս զնոսա առ ամբառնալ զկուռս իւր, և պանծայ՝ թէ պա-տիւ և բնիկ լաւութիւն չէք այլ ուրեք՝ բայց առ իւր: Սեղ թողու զանփառութիւն, զնըկնութիւն, զանհարթութիւն և զբնաւ մեղմեհանս առաքինութեան, և յիւր վաստկ ըզ-դիւցազնութիւն և զփառս: Բայց դիւրին յոյժ էր նենդել զվհատ փառացն Աստուծոյ ՚ի զբախտս և ՚ի ձոխապաճոյճ

պաշտօնարկէ անոնի՝ զոր զրօշելոյ իւրում մատուցանէ աշխարհ: Փչել ևեթ շատ էր յամբարտակ անդր գոռոզութեան և ունայնութեան՝ առ անհետ կորուսանելոյ պոչ ցես և զգոյշն նշմարանան:

Արքն առաքինիք՝ յորս այնչափ գովի աշխարհ, եթէ 'ի խոր քննեսցին, 'ի հատարակաց մոլորութենէ ևեթ են որ լինչ են: Բարեկամք հաւատարիմք, այնպէս լոկ· բայց ախորժակ՝ մնափառութիւն կամ շահ յօդէ զնոսա, և ոչ այլ լինչ քան զանձինս սիրեն 'ի բարեկամանն: Ընտիր քաղաքացիք, արդար է· բայց մի միայն կապ և պատշաճք են որ զօդեն զնոսա, փառքն և պատիւք՝ զոր 'ի ծառայութենէ հայրենեացն ժառանգեն: Ճշմարտասէրք, խոստովանիմ· այլ ոչ եթէ զայն խնդրեն, այլ զանունն և զվստահութիւն զոր բերէ նոցա առ մարդիկ: Խոստմանցն ուխտապահք· բայց հպարտութիւն է՝ որ վաստութիւն և դեղեցումն տեսանէ 'ի ժխտելն, և ոչ թէ առաքինութիւն օրինապահ ուխտի խոստմանցն: Վրէժխնդիրք անիրաւութեան· սակայն 'ի պատուհասելն զայն յայլս, յայտ լիմն ամենեցուն առնել կամին՝ թէ բացէ 'ի բաց հեռի են ինքեանք անտի: Տկարութեան ձեռնկալուք· այլ ունել ցանկան զովասանս վեճանձնութեան իբրեանց, և յերեսաց հարստահարութեան և տառապանաց զրկելոցն՝ քաղցր քան զամենայն 'ի սիրտս իբրեանց զրուատիք նոցին են: Սիրով բանիւ, ասէ Գիրն, ողորմածք անուանին, են նոցա ամենայն որ 'ի պէտս հատարակաց առաքինութիւնք, այլ քանզի չեն հաւատացեալք առ Արարիչն, չիք նոցա և ոչ մի վասն անձանց· Պատուական է այր ողորմած, բայց զայր հաւատարիմ գուրծ է գտանել[1]:

Բայց թէպէտ և լաւութիւն աշխարհի չիցէ միշտ տուտ, խոստովանելի է գէթ՝ թէ չէ երբեք հատատուն: Կրօնք միայն անխափ երաշխաւոր են առաքինութեան, զի զորս տայ մեզ պատճառս՝ նոյն են ընդ ամենայն տեղիս: Թող վո-

[1] Առակ· ի· 6:

իսրէն հատուցումն լիցին նմա ամէն և նախատինք առա-
չի մարդկան, ինքն առնուել զեղեցիկ և շքեղ երևեցայ առն
բարւոյ: Թէ և կեանք իւր ՚ի վտանգի կայցեն, ոչ հաճեսցի
պարտ բաշխի տալ վասն նորա զառաքինութիւն: Ծած-
կութիւն և անպատիժն մնալ՝ չեն նմա հրապոյրք ՚ի չարու-
թիւն. զի վկայ միայն յորմէ նայն երկնչի՝ Աստուած է, և
յանդիմանութիւն մնացն խղճի՝ միայն պատուհաս որ զնա
կսփէ: Թէպէտ և շուք և բարբառք բազմութեան յորդո-
րեսցեն զնա ՚ի գործ փառամոլ և անիրաւ, նախամեծար
ընտրեսցի զպարտսն և զօրէնս որ գործովն զայն՝ քան զը-
կայթիս և զպայթիս սիեզերաց՝ որ հաճիցին ընդ այն:
Հուսկ ապա, փոխոխեա որչափ և կամիս զհանգամանս
ձևմարիտ արդարոյն. մարթի աշխարհի փոխել առ ինքն,
կամաց բազմութեան առօրեայ բարձրացուցչաց իւրոց
մարթի վաղիւ ընկենուլ զնա և նիւթն առնել. գոյ շրջել
բախտին, բայց ընդ բախտին ոչ շրջեսցի առաքինութիւնն:

Ոչ ինչ է պիտոյ բերել ասա առ մեզ օրինակս՝ մեծարոյ
առաքինութեան և սուտ գտանելոյ ոչ սակաւ: Թող զի
լի է աշխարհ սուտանուն արդարովք, և ոչ որ անուա-
նեալքն են յաչս մարդկան՝ իցեն և արդեամբք առաջի Ա-
ստուծոյ. անիրաւութիւն աշխարհի՝ առաքինութեան գրէ
միշտ զահարութիւնս մարդոյն: Մարթի անկանել արդա-
րոյ, բայց առաքինութեան միայն է պահպանել կամ հանդ-
նել զնա ՚ի գլորմանէն. նա և է անսասան ընթանայ, զի ՚ի
նոյն օրինս յեցեալ կայ միշտ: Դէպք ոչ համարձակեն
զնա ընդդէմ պարտուցն. զի ոչ ինչ բնաւ փոխոխեն դէպք
յօրինան: Լոյս և բազմութեան աչք՝ ՚ի խաւար և յանա-
պատ հանարեալ են նմա: Համայն ասել, առ ոչինչ գրէ
զմարդիկ, զի տեսօղ իւր Աստուած՝ նա միայն է իւր դա-
տաւոր:

Գտէք՝ թէ կարէք՝ զնոյն հատատուութիւն ՚ի մարդիկ-
զէն առաքինութիւնս: Բաղում այն է՝ զի ՚ի հպարտու-
թեան և ՚ի փառասիրութեան ծնեալք՝ անդ ՚ի սուղ ինչ

վայրկենի և զգերեզմանի իւրեանց գտանեն: Ի տեսիլ աչաց բազմութեան կերպացեալք՝ շինանին առ վաղիւ ՚ի մենութեան և ՚ի խաւարի, իբրև զառաժանայն լինէ բոց յանկարծածափ: Յեղեալք ՚ի հանգամանս լինէ և ՚ի դէպս և ՚ի մարդկան կարծիս՝ տապալին ետ զեռէ ընդ ջախջախ նեցուկան: Անճնիրութեան են պատուղք ժանտք, և միշտ ընդ անկայուն նորա սէրութեամբն անկեալք: Հուսկ ուրեմն, քանզի զաղփաղփուն գործ մարդոյն են, ոչ լինէ իմիք հանգուրժեն՝ նմին հանգուրնակ:

Աշխարհի առաքինուոյն ազէ լոյն ընդ առաջ պատեհ լինէ դէպ՝ անկասկած ազատեալոյ զատելին, կամ զնախանձընդդէմն քարընդոստնելոյ, թէ միայն ՚ի համբաւոյն չանկանիլ և ՚ի փառայ համեստութեան, ոչ մեծ լինէ փոյթ առնիցէ զարդեանցն ճշմարտութեան: Միայն թէ քինախնդրութիւն իւր մի պատուոյն իւրում մեղիցէ, ոչ անարժան լինէ այնուհետեւ իւրում առաքինութեանն եղիցի: Կացի զնա ուր ուրեք և միաբանել կարիցէ զախան իւր ընդ հատարակաց մեծարանն, ոչ լինէ տագնապէացի միաբանել զայն ընդ պատան: Հակիրճ ասացեալ, թէ միայն երևեսցի միշտ այր բարի, այն նմա հաւատար է լինելոյն:

Թուէր նախ ամենայն Իարայէլ գովել զապստամբութիւն Աբեսաղոմայ. Աքիտոփէլ այր խմաստուն և առաքինի համարեալ ժողովրդեան, որոյ խորհուրդք իւր էին իբրև ըզխորհուրդս Աստուծոյ, սակայն թէին ածէ մեղանչական կողմանն՝ յորում գտանէ զհաճոյս ամբոխին և զյոյս իւրոյ բարձրանալոյն, և ոչ արդարութեան՝ որ բաց ՚ի պատուոյն ոչ լինէ այլ առաջի առնէ նմա:

Ոչ, եղբարք իմ, չէք լինէ անյողդողդ ՚ի մարդկօրէն առաքինութիւնս, եթէ ատատուածեղէնն առաքինութիւն ոչ լինիցի նմա ձեռնկալու և ամրութիւն: Ուրուք երախտագործ, արդար, առատ, յատակամիտ. կարէք լինել ապատանի աշխարհին, բայց անպետան լինիք անձանց. կատարէք գործս գովելիս յաչս մարդկան, այլ գործիցէք լինչ

երբեք ձչմարիտ առաքինութիւն: Սիրտ զոր ոչ ընու Աստուած, սուտ և ունայն է՝ ի նմա ամենայն. Թագաւոր ումն ինքնին է որ զայս բարբառի. և ճանաչել զարդարութիւն քո և զզօրութիւն, Աստուած իմ, այն ևեթ է արմատ՝ որ բերէ պտուղս անմահութեան, և աղբիւր սէրն և սէրս միասոյ: Ընդունայն էին ամենայն մարդիկ բնութեամբ՝ յորս էր ոչ պատուաճանգիտութիւն [1]: Արդ զուր է զպատիւ և զլաւութիւն երկրաւոր՝ գրել առոյգ միասս. սրտիւ միայն մեծ է մարդ, և՝ ի սիրտ ունայն Աստուծոյ՝ չինչ քան զաւութիւն և զանարգութիւն մարդոյ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Այլ Թէպէս քաղաքական առաքինութիւնք միայն ևեթ անաւագ լինչ էին, իսկ մեծութիւն և բարձրութիւն հանճարեղ ճարտարութեանց առաւել ևս առիթիւք մեզ երևումն միասոյ: Ելմուկ, Տէր արքայ. զինչ մեծամեծ ճարտարութիւնքն էին՝ բայց յոռութիւնք մեծամեծք, եթէ առեալ Սատանէն՝ ի մեր ևեթ պէտս և ոչ յայլ լինչ վարիցեմք զայն: Զինչ լինելն՝ ի ձեռս մեր. բազում անգամ գործի հասարակաց աղէտից, միշտ պատճառք մերոյ դատապարտութեան և կորստեան:

Զինչ էին Թագաւոր Եռանդուն՝ ի ծնէ՝ ի նահատակութիւն, որ անգամին՝ ի մատաղ հասակին կայծակուն ջուրջ միայնատակեցուցանիցէ, եթէ երկիւղն Աստուծոյ ոչ առաջնորդեացէ նմա և՝ ի չափու ունիցի. ատոյգ մի նորահրատ և ժանտագործ՝ չարեաց ևեթ բօթաբեր յերկիր: Ըստ ածել նորա յարուեան յայն երեւնաւոր, ընդ նմին ածեացեն և աշխարհին տառապանք. և կարի խիստ յանդուգն և խիղախ գործոց առաջարկութիւնք՝ հաղիւ թէ դոյզն լինչ Թումբ ընդդէմ դնիցեն անասասելի ընթացից

1 Իմաստ ԺԳ. 1:

բանութեան. ՚ի շողիւն յաղթութեանցն համարեսցի շաւ-
ցուցանել զկենդանութիւն նոցին կամ զանիրաւու-
թիւն. յոյս ևւեթ յաջողութեան՝ հանցէ իրաւունս արդա-
րութեան զինուցն. որ ինչ գամ մի թուլցի նմա ՚ի փառս՝
օրինաւոր եղիցի. զժամս խոհական և մեծավայելուչ հան-
դրտեան՝ վարկցի դատարկութիւն իմն ամօթալից և ժամս
՚ի փառաց իւրոց գողացեալս. դրացիք իւր որոց կարէ տի-
րապետել՝ ՚ի թշնամիս դարձցին նմա. ժողովուրդք իւր ինք-
նին ապստամբք իւրեանց և արեամբ մատուսցեն նմա զո-
ձառս յաղթանակացն. սպառեսցէ և հիմնայատակ զաշ-
խարհ իւր արասցէ առ այլոց տիրելոյ. յարուսցէ ՚ի վերայ
իւր զազգս և զազինս, զտիեզերաց խաղաղութիւն վըդո-
վեսցէ, արասցէ իւր անուն՝ թշուառացուցեալ զբիւրս
բիւրուց: Ո՛վ հարուած ազգի մարդկան: Եթէ գուցէ ու-
րեք յերկրի ժողովուրդ բաւական ՚ի գովել զինա, չսխալ
ինչ այլ՝ բայց ըղձանալ նմին այնպիսի ոք տէր:

Չանդէս արարէք հանուրց մեծամեծ ձեռնարկութեանց՝
որ անուանի առնեն զմարդիկ. եթէ ամպարշտաց նպատակ
հեալք, համակ ՚ի թշուառութիւն են ազգին և դարուն:
Լայնածաւալ հմտութիւնք մեծամտութեամբ թունեալք՝
ծնեալ են զհոչակաւոր պարապղծս և զվարդապետս սը-
տութեան, որ ՚ի դարս իւրաքանչիւր նշան ամբարձին հեր-
ձուածոց և մոլորութեանց, և ՚ի ծոցի անդ քրիստոսական
կրօնից յարուցին զաղանդս որ պատառեն զայն:

Ձքնաղ և բազմահոչակ հանճարք՝ որ յաջողաբախտ
տուչութեամբքն հուպ տարեալ կացուցին զժամանակ իւ-
րեանց յախորժակս և ՚ի կրթանս հնոց, ընդ ոտւոցն խեղ-
աթիւրել՝ ոչ այլ ինչ թողլն յաշխարհի, բայց գիրս ցո-
փացուցիչս և եղեռնաթիւրս, յորս թոյն կազմեալ ՚ի ձար-
տար ձեռաց՝ ապականէ հանապազ զբարս աշխարհին. և
որ զկնի մեր գալոցն են դարք՝ անոի առնուցուն զմերոյս
ստահակութիւն և զնեխումն:

Դարձարուք յայլ կողմն: Ո՞րպէս երևեցան յերկրի հան-

ձայնքն գերագոյնք, բայց փառատենչիկք և անհանդարտք, ծնեալք ՚ի շարժել զծածուկ զօրութիւնս սէրութեանց և թագաւորութեանց, և՚ի դղրդել զծագս սիրելեաց: Ազգք և թագաւորք խաղալիկ եղեն փառամոլութեան և դաւոյ հնարից նոցին. երկպառակութիւնք քաղաքաց և ազգաց՝ սպալի սեսարանք եղեն, յորս փայլեցին ձիրք նոցա մեծամեծք:

Այլ որ անհնար[1], սակաւն բարձրաշուք տառապելութեամբք բնութեան, բայց անխիղճ և անբարեսէր, կարօղ գտաւ ՚ի դարան առաջինս՝ եկանել կանգնել ՚ի վերայ աւերակաց հայրենի աշխարհին, հերոսարանափոխ առնել բնաւ զազգ մի ղրացի և պատերազմօղ՝ նախանձայոյզ օրինացն իւրոց և ազատութեան, առնուլ մեծարանս հարկի ծառայութեան՝ զոր քաղաքակից իւր չտան և ոչ թագաւորաց իւրեանց. տատապել զգահն, և տեսիլ առնել աշխարհի զայր թագաւոր՝ զորոյ զգլուխն նուիրական չմարթէ թագն զերծուցանել յանօրինակ դատաւճիռք դևսատարտ պատուհասին:

Ոգիք ընդարձակատարք, այլ անհաղաղասէրք և խազմարարք, ամենայնի ժուժկալք՝ բայց միայն ՚ի հանգստեղէ, չըջին անդադար և զանհակատն որ ունի զնոսա և անդէ, և Սամիհոնի նմանեալք, քաւ ՚ի հոգւոյն զոր զգեցեալն էր, առաւել սիրեն կործանել զտունն և ձնլիլ ընդ աւերակօքն, քան չտատանիլ և չարհանել ՚ի վար զձիրս իւրեանց և զգօրութիւն: Վայ դարուն որ հանէ արս այսպիսիս դոյզնագիւտս և զարմանալիս: Եւ յայգ ազգ իւրաքանչիւր եղեալ են այսր խրատք և օրինակք ընտանիք:

Այլ թէպէտ և չիցէ այդ թշուառութիւն իւրեանց դառն, սակայն է գէթ անձանց իւրեանց թշուառութիւն: Հանգոյն իմն անդրէկ նաւու առագաստաւոր վարպետի յաջողակ հողմով, որչափ սրընթաց լցէ՝ նոյնչափ անհրաժեշտ

[1] Առումն անգլիացի՝ Անգլիա ՚ի մէջ ծխ դարու:

է և նաւաբեկութիւնն : Ձկը ինչ բաղմավառնդ քան զձկրս մեծամեծս՝ զորոց զպէտսն ոչ ուղղեցեն հաւատք • ունայն դրուատիք՝ զորս շարժեն երեւելի հանգամանիքդ՝ ապակա- նեն զսիրտ , և ըստ մեծամեծ առաւելութեանցն որովք ոք ծնեալն էիցէ՝ ըստ նմին խոր է և ապականութիւնն և ան- յոյս : Լքեալ Թողեալ Աստուծոյ զամբարտաւանութիւն՝ նմին ինքեան մատնէ զնա • պանծացեալքն այնոքիկ ազք՝ զանիրաւութիւն աշխարհապով ծափահայնութեանցն քա- ւեն յաձախ նշաւակութեամբ հրապարակագոյժ գլխոյն • ախտք խլրեանց՝ խայտառակեալ ծանակեն զձկրս նոցին : Հանճարքն հաստահարուածք՝ ի զօրավիղն սէրութեանց ծնեալք , ոչ ինչ են այնուհետեւ , ասէ Յոբ , բայց տկար ե- ղեգունք՝ անբաւականք ի կանգուն կալ : Ցեսան ոչ սա- կաւք և ի մեծապայծառ քարանց արբութեանն անար- գեալք և Հշնամանօք ընդ գայուս եղեալ գեանաքարշ , և մեծամեծ պարգեւք բնաբոյսք՝ ի մեծամեծ եղկութիւնս մատնեալք սակս • Աստ է պահանջայս ի գերութիւն , ի ցաւս- սուրս երկրի կոչմանէդ [1] :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Պերճապայծառ յաջողուածք և որ ըստ նոցանէն դէպք մեծամեծք՝ ոչ ինչ առաւել արժանի են գովեստից ի Հշնա- միան Աստուծոյ , և ոչ աւելի ինչ քան զձարտարանս նո- ցին՝ երաւունս տան նոցա ի փառս :

Գիտեմ՝ զի աշխարհ փառս ընծայէ այնոցիկ , և բաղում անգամ տուն նմա՝ ոչ առաքինութիւնք , այլ յաջողութիւնք մեծ կացուցանեն զմարդիկ : Երկրակալութիւնք աշխար- հաց , մարտից յաղթանակք , զժուարակինձիւն բանագնաց

1 Յոբ ԻԲ . 19 :

պաշտաւորութիւնք ի գլուխ հանեալք, սատանեալ պահուն հաստատութիւն, այդոքիկ են զոր արձանք և արձանապիղք քարոզեն, որոց և աշխարհ նուիրէ գովութիւնս և կոթողս՝ անմահացուցանել գլխիատակ նոցին:

Ոչ կամիմ ես գոհութեան աշխարհին քանդեացին նշանակք. ամենայն օգտակարք առ մարդիկ՝ արժանի են իւրք ընդհակառակութեան մարդկան: Քանզի բարեաց նախանձառութիւն՝ յարդարէ տէրութեանց հպատակս հնչակեալս, արժան է զի և փոխարինացն հատուցմունք ի նախանձ յորդորեսցեն, և յաջողուածք տեսցեն միշտ զվարձան գինի իւրեանց եկեալ:

Քաղաքային տեսչութիւն չքննէ զսիրտս, զգործս միայն կշռէ. են ի կարգի ատա և վսխակք կարևորք յաշխարհօրէն պայմանի: Որ ինչ միանգամ զարդարէ զնոյն՝ գրեալ է ի փառս, և վարք կամ պատճառք՝ որ անձին միայնոյ անարգանք լցեն, չպիտի խառնել զայն ի յաջողուածն՝ որ զհայրենիսն փառաւորեցին:

Բայց եթէ օրէն լցէ աշխարհի բարձրացուցանել զդիւցազանց իւրոց փառս, ոչինչ արգելու զձեմարտութիւն՝ չհատել իւրև զաշխարհ. եղիւկ. նա և սակաւք իսկ են՝ զորս նա ինքնին չհատիցէ: Զորս անկրկնեալք ժամանակաց և վայրաց հեռացուցանեն յաչաց իւրոց, նոքա միայն յատկահովք են յերեսաց նեռից նորա. որ առաջի աչացն կեան՝ չպարեն ի պարտաէզն, և իբրև ժամ և պարապ առնուցու ձանձչել զնոսա, դադարէ ի զարմանալոյ ընդ նոսա. և զայս միի ի բիծ ինչ տարցուք նմա չարութեան և անիրաւութեան. հաւատալ արժան է նմա, զի հակառակ անձինն խօսի:

Ձասեմ՝ խորամուխ լերուք մինչև ի պատճառս անդր շքեղ գործոցն և նշանաւոր անցիցն անցելոց: Սոցա ամենայն ինչ պայծառ է արտաքոյ, տեսանէք զդիւցազնն. այլ աղէ մտէք ի ներքս, այլ արարէք բուն իսկ մարդոյն. ոչ ինչ այլ գտանիցէք անդ, ասէ Իմաստունն, բայց մոխիր և գայտ. Մոխիր է սիրտ նորա, և հող արհամարհեալ յայս նորա [1]:

1 Իմաստ. ԺԵ. 10:

փառասիրութիւն, նախանձ, յանդգնութիւն, երկիւղ յաշխարհ և անյուսութիւն՝ ծնօղ եղեալ են յերկրի մեծամեծ հանդիսից և ջքնաղ դիպաց: Թերևս ոչ յայլմէ ինչ ի-մէքէ ժառանգեաց Դաւիթ զյաղթութիւնն Ցովաբայ և զվիամոութիւն, բայց եթէ 'ի խանտաւտութենէ նորա ընդ Աբեններ: Սոքա են որ ուժգին դրդեն զմեզ՝ առեալ 'ի կիրթ անկեալ զհետ ընթանալ փառաց, և միշտ իսկ դրեա եթէ՝ որ զմեզ յայն տարեալ հասուցին ճանապարհք՝ նոքին և ընկենուն անտի:

Վասն որոյ ունկն դիք որոց երբեմն մերձ գտան արանց փառաւոր յաջողութեամբք հռչակելոց· 'ի յոգունս՝ ոչ այլ ինչ բայց յանուանէն գտանէին մեծ· մարդն յուրաստ կայր 'ի դիւցազնէն, համբաւ նոցա զամենի հարկանէր յանարգութենէ բարուցն և յօժարութեանցն, յաջողութծոց փառացն մասն լինէր ընտանութիւն, հարկ էր զմտաւածել զժամանակ քաջափայլ հանդիսից նոցին՝ 'ի հաստատել եթէ նոքին իսկ էին այնց արարօղք: Յայն սակս, մեծաշուք շքեղք՝ որ շլացուցանեն զմեզ և զվէպս մեր պաճուճեն, բաղում՝ այն է՝ զի արս արհամարհս և գռեհիկս պատրուակեն 'ի մէնջ:

Ոչ, Տէր ալքայ, չիք ինչ մեծ 'ի մարդիկ՝ բայց միայն որ յԱրարչէն գայ: Ուղղութիւն սրտի, ճշմարտութիւն, անբծութիւն և օրինաւորութիւն վարուց, նուաճութիւն կարեաց, այս են ստոյգ մեծութիւնք և միայն սերտ և սեռն փառք, զոր ոչ ոք կարէ ժխտել մեզ· զոր ինչ յանձինս ևեթ գտանեն մարդիկ, նովին գոգցես յորմէ հատեալքն են՝ շաղախեալ է գայրիւ: Խմաստունն միայն, ասէ Թագաւոր ոմն մեծ, ժառանգէ զհաստատուն փառս· մեղաւորի փառք՝ այսպանք են և ձաղանք· Զփառս խմաստնոյ ժառանգեսցեն, իսկ անմիտք բարբարոսին զանարգանս [1]:

Կրօնք, պաշտօն բարւոյ առ Աստուած, մտերմութիւն ա-

1 Առակ գ. 35:

մենայն պատուհասանաց զոր նայն հրամայէ մեզ առ՝ի պէտս սրտից և մեր, միտք սուրբ և յատակ յամենայն խղճէ, սիրտ ուղղութեամբ յամենայն իրաւունս և յարդարութիւն, անձնահանձ յամենայն ընդդիմակացս՝ որ խոչընդոտան անկանելոյն, պինդ առ ամենայն հրամայեալսն՝ որ շուրջ պատկին սահելուրել ինա, ամենայն ծորելեացս դեր՝ի վերոյ և Աստուծոյ միայն հլու հպատակ, այդ աւադիկ է փառք անվախճան, և հիմն ամենայնի՝ որ մեծ զմարդիկ յարդարիցէ։ Եթէ զնարխադ զայդ խախտեսցես, կործանի շինուածն ողջոյն, լաւութիւնք համօրէն տապալին, և չինայ ինչ, ուան դի մեք միայն մնամք։

Տէր արքայ, լեզի արքայութիւնդ քո զարմանալեօք ընդքանչելի, տարցես միանշե՝ի ծագս երկրի զիտառս անուան քոյ, ամենայն աւուրքդ մէն մի նշան յաղթութեան կանգնեսցեն, յաւելցես այլ ևս նորանոր պատիս՝ի խոյրս թագաւորացն՝ քոյոցդ նախնեաց, սիրելիք ամենայն գովութեամբդ հնչեսցեն, եթէ Աստուած չիցէ ընդ քեզ, և թէ փոխանակ արդարութեան և բարեպաշտութեան՝ հպարտութիւն լինիցի շունչ գործոցդ, ոչ եղիցես թագաւոր մեծ։ յաջողութիւնքդ՝ի մեզս դարձցին, յաղթանակքդ՝՝ի համաշխարհի աղէտս։ լինիցիս ահ և երկիւղ դրացեացդ, այլ ոչ եղիցես հայր ժողովրդեան քումմ։ կարիքդ եւեթ լինիցին քո առաքինութիւնք, և՝ի վերոյ ամենայն դրուագիւ, զոր ոտոչ քեզ մարդահաճութիւն՝ անմեռ ընկերն թագաւորաց, յաչս Աստուծոյ, թերևս և ապատնեաց, ոչ այլ ինչ թուեսցին այնոքիկ՝ քան թէ արդարև խակ յոռութիւնք։

Ա յսուհետև վասն վերհասիտս մանկանս, Տէր Աստուած, փառս ոչ զմարդկայինս զայս ինդրեմք՝ի քէն, արդէն խակ նկարեալ երևի այն՝ի ձակատս իւր, նա և յերակունան խակ խաղայ ընդ արեան նախնեացն իւրոց թագաւորաց։ և անդբատին՝՝ի ծննդենէն մեծ էստուր դու ինա յաչս մարդկան, նբրև զի արարեր ինա ծնունդ արեան դիւցազանց։ այլ զառ

'ի քէն փառան: Զպարգեւս բնութեան՝ որովք ամենաւայուչեր ընա՝ պերճասցո անեղծական փայլմամբ բարեպաշտութեան. յամենայն սիրելի հանգամանան՝ որ այժմէն ժողովրդեան իւրում ցանկալի առնեն ընա, յաւել և զայնոսիկ՝ որ պիտեն հաճոյ առնել ընա յաչս քո. 'ի սերունդ նորա և 'ի քաջութիւն ազգին ապաստան արա զննամս աշխարհակարգ փառացն. ոչ այլ ինչ խնդրեմք առ 'ի քէն, մեծդ Աստուած, բայց դէտ ակն 'ի վերայ դնել պահպանութեան նորա և փրկութեան: Նախնեացն իւրոց պատմութիւնք երաշխաւորեն մեզ զնուք և զբարգաւաճանս ալքայութեան իւրոց, այլ դու միայն էս բաւական երաշխաւոր լինել անմեղութեան և սրբութեան կենացն: Աշխարհի փառք՝ ժառանգութիւն իմն է նմա կարգեալ 'ի հարց անոն իւրոց ըստ մարմնոյ. այլ դու, Աստուած մեծ, հայրդ ըստ հաւատոց, տուր նմա զնմանութիւն՝ զփառս և զժառանգութիւն որդւոց քոց:

Սիրա նորա հանապազ 'ի ձեռս քո լինի, և սիրա նորա մեծ ևս եղիցի քան զյաջողուածս նորա և զյաղթանակս. երկիցէ 'ի քէն, ահաւորդ Աստուած, և թշնամիք իւր սարսեսցեն 'ի նմանէ, սիրեսցեն զնա իւր ժողովուրդք, կացցէ աեսիլ զարմանապատանէ 'ի դարս դարուց. և զի չինայ ինչ մեզ յայնժամ խնէթ զփառաց իւրոց, ոչ ևս ինչ խիք կարօտեսցուք փափաքել 'ի մեր երանութիւն: Ամէն, եղիցի:

ՔԱՐՈԶ Ը

Ի ԿԻՒՐԱԿԻՒ ԾԱՂԻԿԱԶԱՐԴԻՆ

ՅԱՂԱԳՍ ՎՏԱՆԳԻՑ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՄԵԾԱՑ

Ա՛հա թագաւոր քո գայ քեզ հեզ։

Մատթ. ԻԱ. 5։

ՏԻՐ ԱՐՔԱՑ,

Յայլ ամենայն վիճաւորս դործս պաշտաման իւրոյ՝ ըն-դալով լինի և անխոյսութեամբ Թուխ վարեալ Փրկիչն։ Ի ձեռնել ամբոխին յափշտակել հանել զնա՝ ի գահ ազգայա-կան, խոյս տայ՝ ի յայտնել զփառան իւր երեցունց աշա-կերտացն՝ ընտրէ զաննխուռ ուրեք գագաթն հեռաւոր լե-րին, և գնաց ինքնին՝ յօժարեալք՝ ի հուշակ հարկանել զայն, ՝ի սատեհ նորա սիսեղին ծածկել զայն և լուել։

Իսկ այսօր ազգայաբար երևեալ, իբրև թագաւոր որ գայ մնանէ՝ ի ժառանգութիւն սէրութեանն։ Յանձն առնու մեծարանս հուշակաւ, սիրաբար հրաման տայ զանպատճոյճ հանդերձանս իւրոյ յաղթանակին. Ասասկ՝ ելնէ փեսան ի-բենց պիպոյ էն[1]։ Մտանէ՝ ի տաճարն, և մեծասաստ պա-տուհասիւք գարձուցանէ՝ ի տուրբ տեղին զահել մեծվա-յելչութիւնն, զոր անպատեհ և ամօթոյ տուրևատ մեր-

[1] Մատթ. ԻԱ. 3։

ժեալ էր անոի: Ոչ ևս այն այր է, որ յաչաց մարդկան խուսխուսէ· որդի Դաւթի է՝ որ օրհնս ասէ, ինքնասէր իշխանութիւն՝ ի գործ արկանէ, և զԸնտուսալէմ ոչնչի ոտից նստեալ լինել կամի նախանձուն իւրոյ և զօրութեան:

Առատաձեռ ուրեմն օրինակ է նա բարեպաշտութեան առաջադայ: Առանձնական առաքինութիւնք չէն նոցա բաւական, այլ են նոցա և առաքինութիւնք աշխարհակոծք: Չէր լինչ շատ յորդորել զնոսա ցայս վայր՝ ի բարեպաշտութիւն. կարևորագոյն է ցուցանել զօրինակ բարեպաշտութեանն՝ որ նոցա անկ: Թէպէտ և Աբեռաբանն զնոյն վարդապետութիւն առանդէ ամենեցուն, այլ ոչ ամենեցուն զնոյն ոճ· ըստ վիճակացն փոխելոյն կարգք· ըստ բարձրութեանն բազմանան· որչափ բարձք և պատիւք յաւելուն մեզ պարտս առ աշխարհն, նոյնչափ և պահանջեն՝ ի մէնջ աշխարհականաւ առաքինութիւնս· և՝ ի յոռութիւն հատանելոք, եթէ անձանց ևեթ իցեմք պիտանիք:

Արդ, բարեպաշտութեան մեծամեծաց երբեմն վտանգք են խիթալիք, որ զամենայն լաւութիւնս նոցա՝ ի յոռութիւն գիտեն շրջել:

Առաջին՝ բարեպաշտութիւն անպտուղ և չինքն միայն ամփոփեալ, որ քեզեզ զնոսա՝ ի խնամոց և՝ ի պիտոյից աշխարհին:

Երկրորդ՝ բարեպաշտութիւն անզօր, զանգիտուղ և խըղճադատ, որ զգործս նորա և զամենայն վարս՝ ի վարանի կացուցանէ:

Երրորդ՝ բարեպաշտութիւն դիւրահաւան և կարճոգի, հեշտասպասիր՝ ի մուտահաճութեանց, և անբաւական՝ ի թօթափիել զպատրանան:

Այս է, բարեպաշտութեան աւադայ պիտոյ է արթնութիւն՝ ի վերայ աշխարհին՝ որ սայ գործել, արութիւն և մեծախոհութիւն՝ որ տան սահմանել և ձեռն՝ ի գործ առնել, և տպա հմտութիւնք՝ որ չտան թոյլ՝ ի խաբս անկանել, կամ աշխուժական խիզ հլութիւն՝ որ ընդ զգաստ լինել պատրանացն՝ փառս համարի դառնալ անդրէն յետս:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԻՐ ԱՐՔԱՅ,

Ճշմարիտ բարեպաշտութիւն՝ կարդաւորութիւն ընկերութեանն է, որ զիւրաքանչիւր ոք պահէ ի կայի իւրում, զվիճակին յոր եդեալ է զմեզ Աստուծոյ՝ առնէ բուն իսկ ճանապարհ փրկութեան մերոյ, ի գործս՝ զոր Աստուած ոչ պահանջէ ի մէնջ՝ չդնէ լինչ կաւտարելութիւն մուացածին, չեւանէ արտաքս ըստ սահմանն պարտուցն՝ ի տեղծանել նորահնարս, և ի յոռութիւն լինն համարի զառաքինութիւնս որ չեն յանգարի մերոյ պայմանիս:

Ամենայն որ խանգար ածէ բարեկարգութեան հասարակաց, մարդոյն է վնաս, և ոչ եռանդն լինչ և կատարումն առաքինութեան: Ջամենայն գործ սրբութեան փոխանակեալ ի տեղի պարտուց պաշտամանն՝ չառնուն յանձն կրօնք. և որ չէ որ լինչ պարտի ոք լինել՝ ոչ լինչ է առաջի Աստուծոյ:

Ապա է լինչ բարեպաշտութիւն սեփական գոգոյս իւրաքանչիւր վիճակի: Այր աշխարհամարդ՝ չէ առաքինի, եթէ զառաքինութիւնս ևեթ ունիցի զառն առաքականի. Ճանապարհ՝ որ փրկելոց էր զայր հպատակ, մոլորի ընդ այն և կորնչի Թագաւորն. և ուր մարդն անբասիւս գտանիցի ի նմա, իշխանին մարմնի յանցաւոր յոյժ լինել:

Վասն որոյ՝ առաջին վտանգ բարեպաշտութեան մեծամեծաց է ընկրկիլ զնոսա ի հոգոյ աշխարհին և չինքեանս ևեթ ամփոփիլ: Քանզի սովորական սխալ է մեծամեծաց անփութութիւն և սէր անձին դիւրին, յորժամ և պատճառանօք առաքինութեան աքոլեսցեն զայն, առաւել ինասակար լինի և անուղղայ: Մարմնի երբեմն թէ փառք լըսեցուսցեն զմեծամեծան ի հեղգասիրտ պղերգ թմբրութենէն.

բայց որոյ օրինս հաստատեալ է իւր զԹիւր բարեպաշտութիւն՝ զգուշանայ և ՚ի փառաց, և չԹողու լինչ այլ յոյս : Նշմար լինչ պատուոյ և պատկառանաց յերեսաց ազգին և բարձին զոր ունի ոք՝ լուծանէ յամաչս զպատարանս ամօԹալի դատաւորութեանն, և դարձուցանէ առ ժողովուրդն զԹագաւորն՝ որ պարտի նմա զանձն. իսկ իբրև անարժան անձնդխրութիւն զբարեպաշտիկ պարտամբք գայցէ, պատուաւոր լինչ Թուի յաչս իւր. գոյ շինիլ ընդ ախտս, իսկ կարծեալն առաքինութիւն՝ անձին ՚ի փառս դրի :

Բայց, Տէր ալքայ, այր աւազ, այր Թագաւոր՝ չէ անձին միայնում ծնեալ. հպատակացն պարտի զանձն : Ի բարձրացուցանել զինս ժողովրդոց՝ ՚ի նա հաւատացին զքօրութիւն և զիշխանութիւն, և վտխան առին պահելոյն իւրեանց զփոյԹ խնամոյց նորա առ ինքեանս, զժամանակ նորա և զքնութիւնս : Ոչ եԹէ կուռս լինչ կանգնեցին ՚ի պաշտել, այլ վերակացու կարգեցին ՚ի վերայ իւրեանց՝ պահապան լինել նոցա և պաշտպան. չեն աստուածք անպիտանք, որոց աչք գոն՝ և ոչ տեսանեն, լեզու՝ և ոչ խօսին, ձեռք՝ և ոչ գործեն. այլ աստուածք են՝ որ յառաջոյ ընԹանան նոցա, ըստ բարբառոյ Գրոյն, առաջնորդել նոցա և վերամարտիկ լինել : Որ լինչ և եղեն՝ ժողովրդոցն է արարեալ զայն ԱՆարարչին հրամանէ. մնայ նոցա՝ համակ վանդ ժողովրդոցն լինել որ լինչ եղեն : Ա՛յ, Տէր ալքայ, ընտրեԹիւն ազգին եդ նախնւսա զգաւազանն ՚ի ձեռս նախնեացդ, այն ամբարձ զնոսա ՚ի զինուորական վահանին [1] և Թագաւոր քարոզեաց : Ապա այնուհետև պայազատաց նոցին՝ ժառանգութիւն եղև Թագաւորութիւնն. բայց իսկ զբանէ՝ արձակ հաւանութեամբ հնազանդելոցն ընկալան զայն : Իսկ ապա սերունդն եԹէ եբեր զնոսա ՚ի պայազատութիւն գահուն. բայց զերաւունս զայս և զշնորհս՝ հաճոյք կամաց աշխարհին կապեցին նախ ընդ սերնդեան նոցա : Համառօտ

1 Ա՛յս վաղնջուց սովորութիւն էր Գալլիական ազգին :

ասել, քանզի առաջին սկիզբն իշխանութեան նոցա առ՝ի Մէնջ է, պարտ է Թագաւորաց՝ի մեր ակաս ևեթ վարել զիշխանութիւն: Թող անդադար լինին սուտակասպասք ասել, Տէր ալքայ, Թէ տէր ես, և չպարտիս ումեք հա- մարս գործոցդ: Ապաքէն ոչ ումեք օրէն է համար՝ի քէն պահանջել, բայց դու քեզէն քեզ պարտիս զայն, և Թէ իշխիցեմ ասել՝ Գալ՛ւ-ի՛ոյ պարտիս՝ որ քեզ ակն ունի, և համօրէն Եւրոպէի՝ որ՝ի քեզ կառուցեալ սիշ ունի զակն. տէր ես ընդ ձեռամբ կացեալոցդ, բայց զանուն սուկ ունի- ցիս՝ եԹէ լոկ յառաքինութեանցն նկես. ամենայն լինչ քեզ ներեալ է, սակայն ազատութիւնդ այդ՝ խոչ և խուԹ է իշխանութեան, և ոչ Թէ շնորհ լինչ. մարԹի քեզ ապախա- ռանել զյանձանձանօք Թագաւորութեան, բայց հանպոյն անարի տաղտուկ Թագաւորացն պարսաւելոց՝ի մեր պատ- մութիւնս՝ զնին ևեթ անուն ունիցիս Թագաւորի, եԹէ՝ի պանծալի պաշտամանցն յեանեալ դառնիցիս:

Այնուհետև զինչ լինիցի բարեպաշտութեանն ցնորա- կոծ խուճապ՝ որ աւազանէդ և Թագաւորի յառաքինու- Թիւն տայցէ համարել զերկիւղ և զնուաստիանս՝ի զբաղ- մանէ հոգոց աշխարհին, յայլ լինչ չպարապել՝ բայց՝ի գործս կրօնականս՝ իբրև զսոսկական ոք, որում չիք հա- մարս տալ՝ բայց միայն զանձնէ, մենանալ ընդ սակաւուց ոմանց՝ մտերմաց բարեպաշտիկ պատրանացն իւրեանց, և փախչել գրեԹէ՝ի տեսլենէ բոլոր աշխարհի: Տէր ալքայ, իշխան կարգեալ՝ի վարչութիւն մարդկան՝ պարտի ճանա- չել զմարդիկ. ընտրութիւն հպատակաց առաջին աղբիւր է երջանկութեան աշխարհին, և առ ընտրել՝ հարկ է ճա- նաչել զնոսա: Ի պետութեան՝ յորում ոչ լինքնին անձամբ դատիցի իշխանն, ոչ ոք՝ի կարգին գտանի. ընդ վայր հար- կանի քաջութիւն՝ առ համեստութեան չմլեղոյ զանձն, կամ առ մեծանձնութեան՝ չընդունելոյ զպատիւն Թա- խանձանօք և նուաստութեամբ. նենգ խորամանգեալ՝ սայ- Թաքեցուցանէ զյաւէտ ճարտարապետն. դիւրագարձք

ումանք և ապիկարք՝ յառաջին յառաջին աշխատանան, և լաւագոյն հպատակք կան մնան ումեքեա: Բազում՝ այն է, զի Դաւիթ՝ միայն բաւականն ՚ի վերկել զոհերութիւնն, յայսմցուրեան դաշտացն ընդդէմ գազանաց վայրի ևեթ ՚ի գործ արկանէ զքաջութիւն իւր, իսկ անարի զօրապլուխք, յերեսաց միայն Գողիադու զարհուրեալք, կան յառաջնորդութիւն բանակի Տեառն: Բազում անգամ Մուրիքէ, ոչ յոյ հաւատարմութիւն և ՚ի գերս իսկ յիշատակաց աշխարհին արձանագրեալ կայ, որ արիութեամբ իւրով յայտնեալ է երբեմն զեղեռնաւոր դաւաճանութիւնս ընդդէմ արքայի և տէրութեանն, որ լաւութեամբ իւրով և հմտութեամբ՝ միայն կարողն է տալ խորհուրդ բարեաց, և արժանաւոր ՚ի կոչիլ յառաջին բարձս, ՚ի քարշ գնայ առ դուրս տպարանիցն արքունի, փոխանակ զի ամբարտաւանն Համան մոզացեալ կինճացեալ կայ ՚ի վերոյ ամենայնի, և ՚ի չարիս վարի իշխանութեամբն և մտերմութեամբ տեառն իւրոյ:

Ապա կարևոր գործ մեծամեծաց էին աղօթք և առանձնութիւն: Այդոքիկ պիտոյն ՚ի կազմ և պատրաստ յարդարել զնոսա ՚ի խնամս աշխարհին, և ոչ ՚ի խափանել անտի. նոքա զանձինս սրբել պարտին գործակից լինելով փրկութեան և երանութեան ժողովրդոց իւրեանց. զնորհք վճռակի իւրեանց՝ են զնորհք վաստակոց, յանձանձանաց և աքնութեան: Որ զոր խոստացցի նոցա, ասէ Աւետարանն, գտանել զՅիսուս յանապատի կամ ՚ի շուկայսն տանն արքունի, մարգարէ սուտ է նա. Ահաւանիկ յանապատի է, ահա յպէնարանս է, մի հաւատայջիք[1]: Սկսան գտանիցին անդ, և լքեալք թողեալք յանձինս իւրեանց: Աստուած չէ ընդ մեզ ՚ի վճռակս՝ զոր չինդրէ ՚ի մէնջ. և հանդարտութիւն՝ յորում ՚ի բազում անքոյթ ապահովի կարծեմք զանձինս, եթէ ձեռն Տեառն ոչ առաջնորդեսցէ մեզ և պահպանեսցէ

1 Մատթ. իդ. 26:

յէ վաճառ անդ, այն խակ լինի մեղ խորհուրդ անյոյս կորըս-
տեան. բարեպաշտութիւն անգործ և մենակեաց՝ ոչ սուրբ
առնէ զայր թագաւոր, այլ նուաստացուցանէ և՛ ի տուրսն
և ա արկանէ:

Խակ զնաքդ, Տէր ալքայ. մինչդեռ յաշխճանէ իւրմէ և
՛ի տհմէ ծննդենէ իւրմէ կարգեալն աւանդապահ հշխա-
նութեան աշխարհին՝ ամիսոխեացէ զանձն՛ ի դոյզն ինչ բա-
րեպաշտիկ և զանխուռ պարտս, յանձանձանք աշխարհին
անխնամ մնայցեն, իրագործութիւնք զկայ առեալ դադա-
րեացեն, ՛ի ձեռանէ պաշտօնեայք առնիցեն խառնաւալր
զիշխանութիւնն, առեղծ տայցեն օրէնք՝ անիրաւութեան և
բռնութեան, իբրև զՀօտ անհովիւս լինիցին ժողովուրդք,
տէրութիւնն առ հասարակ յաղմնուկ և՛ ի շփոթ, և անդ-
ադա Աբարիչն՝ հայր հասարակաց բարեկարգութեան՝
հեշտալի աչօք կացեալ հայիցի՛ ի դատարկ բարեպաշտու-
թիւն անդր՝ որ զայն խարխարէ. և ժողովուրդք մնասնեալք
՛ի ծուխս ալեաց՝ չունիցին իրաւունս առել ցքնէած և
դրուժան նաւապետան բաղում արդարութեամբ քան աշա-
կերտքն՛ ի ծովուն առ Յիսուս, Տէր՝ ոչ ինչ է քեզ փոյթ
զի կորնչիմք, և կորուստ մեր կամ փրկութիւն չէ կարևոր
ինչ յաչս քո. Վարդապետ, ՚ի ինչ է քեզ փոյթ՝ զի կորնչիմք ա-
ռաքեալք[1]: Խակ արդ զորս բանն ինքնին դատապարտ առնէ՝
կրօնքն համարձակիցին զզեղծմունս այդպիսիս:

Բայց և կրօնք ինքնին չիցեն հարկաւ կապեալ ընդ հա-
սարակաց կարգին: Ընդ նմին կործանի կամ ակարանայ: Ի
թուլութենէ օրինացն ՚ի ցասին միշտ բարք. խառնակութիւն
առաջնութեան՝ մնահաբեր է բարեպաշտութեան ժողովրդոց,
որպէս և երկանկութեան տէրութեանց. բարեկարգու-
թիւն ընկերութեան՝ առաջին հիմն է քրիստոնէական ա-
ռաքելութեանց. պատպանութիւն օրինաց տէրութեան՝
Հանապարհ հորդելոց է առ աւետարանականն: Ի տէրու-

1 Մարկ. դ. 38:

թեան՝ որոյ վարչութեանն չէք ինչ հաստարան՝ Եկեղեցի մի յուսացի լինչ. վասն այսորիկ պետութիւնք՝ յորս ժո-ղովուրդն ե վարիչ, և յորս կցորդ ե իշխանութեան արքային, հանապազ ի վտանգի կան յեղափոխութեանց. ուսոի և որպէս յօրինացն, նոյն և ի հարցն պաշտամանց դիւրաւ ատանդին. ապատամբութիւնք իբրև զմոլորութիւնս անպատուիժ են անդ, և հերձուածոյն անդ գտեալ ե միշտ իւր զատաչին ապաստանն. ի խառնակութեան անդ օրինաց և ի տկարութեան իշխանութեանն՝ նա ինքն զորութիւն զգենու. ի շփոթից և յերկպառակութեանց աշխարհին ե միշտ ծնունդ նորա կամ զարգացումն: Յաշխարհիս մերում, որպէս և յայլս, սակաւ և աղմկեալ արքայութիւնք՝ աղետաբեր թագաւորութիւնք եղեն՝ յաճումն նորա և ի հարստութիւն. և ընդ խախտել քաղաքական յօրինուածոյ թեան՝ ընդ նմին և ողջոյն կրօնք ինքնին ատանին:

Սմին իրի՝ արբակրօն թագաւորք Յուդայ, Տէր ազգայ, զբարեպաշտութեանն ընդ ազգայութեանն խառնէին պարտս: Խարեպարիշան Յովսափատ, յելանելն ի տաճարէն ուր զօրս ամենայն երթայր մատուցանել զուխտս իւր և զպատարագս Աստուծոյ հարցն իւրոց, առաքէր՝ ասէ Գիրն՝ ընդ ամենայն քաղաքս Յուդայ՝ արս յայլոզակս և խմաստուն քահանայս, ի նորոգել զիշխանութիւն օրինաց և ըզպաշտամանն սրբութիւն, որ ի թշուառութեանց առաջնոց թագաւորութեանցն այլափոխեալ յոյժ էին:

Ինքն իսկ Դաւիթ, անխափան յաստուածաքնար հոգեհնութապ երգոցն, որ զբաղումն իւր էին և հեշտալի գրգանք, որ և հրահանգեացեն մինչև ի կատարած զժողովուրդս և ըզթագաւորս, ելանէր կայր անպակաս ի գլուխ բանակաց իւրոց և գործոց աշխարհին. քայց էին աչք իւր յամենայն պետս տէրութեանն. և ինքն միակ ոչ բաւեալ առ ամենայն, խաղայր գնայր մինչ ի ծագս հրէաստանեայց՝ խնդրել արս հաւատարիմս, նատուցանել զնոսա առ իւր, և կցորդս առ

ՆԵԼ ՀՈԳՈՅ՝ ՈՐ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՊԱՇԱՐԵՆ ԶԱՐԹՈՒՆԱՆ ԱՐՔՈՒՆԻ. ԱՒՐ ԻՄ Ի ՀԱՒԱՏՈՅԵԼՈՒ ԵՐԿԻՒ, ԶԻ ՆՈՓՆԻՆ ՆՈՓԱ ԸՆԴ ԻՒ [1]:

ՈՐ ԲԱՐԵՊԱՇՏԱՏՈՅՆՔՆ ԷԻՆ Ի ՆԱԽԻՆԻԱՆ ՔՈ ԹԱԳԱՒՈՐՈՍ, ԱՌԱՒԵԼ ԼԻՔՆԱՆՈՒԷԼՔ ԷԻՆ Ի ԼՆԱՆԱՆ ԺՈՂՈՎՐԴՈՑՆ, ՄԱՆԱՒԱՆԴ ԶՈՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԻ ՅԻՇԱՏԱԿԱՒ ՊԱՏՈՒԷ ԵԿԵՂԵՑԻ [2]. ԼՔԱՆԵՐ ՆԱ ՄԻՆՉԵՒ Ի ՄԱՆՈՐ ԼԱՆԴԼՈՐ ՀՊԱՏԱԿԱՑՆ. ԵՒ ԶԻ ՀԱՅՐ ԷՐ ՆՈՑԱ՝ ՉԼՈՐՇԵՐ ԼԻՆԵԼ ԼՐԱՒԱՐՈՒ: ՆԱԽԱՆՁԱՅՈՂ ԼՐԱՒԱՆՑ ԹԱԳԻՆ, ԿԱՄԵՐ ԱՒԱՆԴԵԼ ԶԱՅՆ Ի ՅԱՅՈՐԴԱՆ ՆՈՒԼԻՆ ՀՔՈՎ ԵՒ ՆՈՒԼԻՆ ՀՆՈՐՀՕՔ՝ ՈՐՈՎՔ ԸՆԿԱԼԵԱԼՆ ԷՐ Ի ՀԱՐՑ ԼԻՐԱՑ: ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԴԻՏԵՐ՝ ԹԷ ԱՆՔԱԾՈՒԹԻՒՆ ԱԼԵԼ ՎԱՐՈՒՑ ՉԷ ՔԱՒԱԿԱՆ ԱՒՆ ԹԱԳԱՒՈՐԻ, ԱՅԼ ԱՌ Ի ԿԵԱԼ ԱՐԲՈՒԹԵԱՄԲ՝ ՊԱՐԱՏԻ ԱՐՔԱՅԱԲԱՐ ԿԵԱԼ, ԵՒ ԵԹԷ ՈՉ ԱՅԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ ԻՅՀ՝ ՉԿԱՐԱՑԵՑ ԼԻՆԵԼ ԱՅԼ ԱՍՏՈՒԾՈՅ:

ԱՊԱՔԷՆ, ՏԷՐ ԱՐՔԱՅ, ԵՐԿԻՒՂԱԾՈՒԹԻՒՆ ԱՒԱՂԱՑ ԱՆՑԱՆԷ ԵՐԲԵՄՆ Ի ՄԻՒՍ ԾԱՅՐ ԽՈՏՈՐՈՒԹԵԱՆ, ԱՐԿԱՆԵԼ ԶՆՈՍԱ Ի ԲԱԶՈՒՄ ԱՆՕԳՈՒՍ ՏԱՂԱՏԱՊԱՆՍ, ԵՒ Ի ԽՈՒՌՆ ՎԱՅՐԱՊԱՐ ՀԱՆԳԱՄԱՆԱՑ. ՊԱՐՏԱՍ ՀԱՄԱՐԵՆ ԶԱՄԵՆԱՅՆ ԹՆՉ ԱՋՔ ԻՐԵՆՑ ՏԵՍԱՆԵԼ ԵՒ ՁԵՌՔ ՉԻՆԵԼ ԶԱՄԵՆԱՅՆ. ԼՐՔ ԿԱՐԵՈՂՔ ԲԱԶՈՒՄ՝ ՈՐՔՔ ՅԱՆՊԱՏԱՍՏ ԱՆՑԱՆԵՆ ՉՆՈՔՕՔ, ՈՐ ՄԱՆՈՒՆՔՆ ԴՈՒՉՆԱՔԵԱՅՔ ԶԱՐԹՈՒՑԱՆԵՆ ԶՄԻԱՆ ՆՈՑԱ ԵՒ ՉՆԱՋԱՆԱՁ. ԶԱՌՆ ՈՐՈՒՔ ՍՈՍԿԱԿԱՆԻ ՊՂՈՏԹ ՈՒՆԻՆ, ԵՒ ՈՉ ԶԱՇԽԱՐՀԱՀՈԳ ԱՌՆ. ՈՒՆԻՑԻՆ ԹԵՐԱԿԱ ՊԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ ՀԲՊԱՏԱԿԻ, ԱՅԼ ՈՉ ՈՒՆԻՆ ՊԻՇԱՆԻՆ: ԲԱՅՑ ՈՉ ՆՈՑԱ Է ԹՈՂՈՒԼ ԼՔԱՆԵԼ ՊՈՒՊԷԱԿԻՆ, ԵՒ ՊԱՐԱՒԵԼ Ի ՄԵԻՆ ՎԱՐԱՆ՝ ՈՐ ՈՉԻՆՉ ՕՉՆԵՆ ՅԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՆ. ՁԵՌՔ ՆՈՑԱ՝ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԱՄԵՆԱՅՆ՝ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ Ի ՎԱՐ ԱՐԿԱՆԵԼ ԶԿԱՐԵՈՐ ՁՕՐՈՒԹԻՒՆՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ՝ ՈՐ ԶԿԱԶՄԱԾՆ ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՐԺԻՆ. ԵՒ Ի ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՄԵԾԱՑ՝ ԱՐԺԱՆ Է ԱՄԵՆԱՅՆԻ ՄԵԾ ԼԻՆԵԼ:

1 Սաղմ. ՃԻ. 6.
2 Սուրբն Լուդուիկոս արքայ Գալլիոյ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Բայց Թէպէտ և առաջին վտանգ նոցա՝ է անգործութիւն, սակայն և տարտամութիւնն և տատամսութիւն՝ զոր տալոր է ղՀետ իւր ձգել զանգիտող և կասկածոտ խղճմտութիւն, ոչ սակաւ երկիւղալի Թուէին և նոքա:

Ոչ եթէ համարձակել կամիցեմ տատանօր զաշխարհական խնամոց թիւնն՝ որ զշահս տէրութեանն քան զԱստուածպաշտութիւնն յառաջադէմ նկրտել, և ոչ զտուողական մոլորութիւնն՝ որ զՀզգութիւն աստուածական օրինացն անմիաբանելի համարի ընդ օրէնս տեսչութեան և ընդ շահս աշխարհին:

Աստուած՝ յօրինիչն տէրութեանց՝ չէցէ և օրինացս տեսչութեան նոցին: Կարգեաց նա իշխանութիւնս՝ որոց չէցէ կալ տանց մերոց. և վնասէին թագաւորք գործք նորա, եթէ չգոյր նոցա իշխել տանց զնեանց և զանխրատութիւն անանձնական ամենակից ունելոյ արքայութեան խրատանց: Ո՞չ տղաքէն յարդարութիւն և յիրաւունս են հասատատեալ ամենք, ոչ օրինք աստուածային դրեալ էցեն ՚ի ձայկատ թագաւորի՝ երբեմն առաջին օրէնք տէրութեան. եթէ հարկ էր միշտ անցանել զնոքօք՝ առ՚ի վնասակարութիւն մարդահոյլ ժողովոյն պահելոյ, կամ օրէնք աստուածեղէնք սուտ լինէին, կամ մարդկան ընկերութիւնք չլինէին գործ Աստուծոյ:

Քանիօն մոլորութիւն մեծ, եղբարք իմ, համարել՝ Թէ որոց ՚ի բարձ հասեալ էցեն՝ չէցէ պարտ մանրակրկիտ լինել ՚ի սուրբ օրինացն խստութիւն, Թէ տէրութիւնք և պետութիւնք ոչ վարէցին ըստ պատուիրանաց կրօնից, Թէ օրէնք Աստուծոյ՝ եւրաքանչիւր ումեք պատուէրք էցեն,

բայց սէրութեանց այլ ինն օրէնք լցեն՝ բարձրագոյն քան զառաւածեղէնն, թէ ամենայն ինչ նուաղելի և անզօրծ լինելոյ՝ եթէ լրոյ աշխարհին առաջնորդ լինիցին պատուէրք քրիստոնէականք, և թէ չկայ հնար լինել այր սէրութեան միանգամայն և այր Աստուծոյ:

Եւ զի՞նչ, եղբարք իմ. արդարութիւն՝ առաքինութիւն և ուխտապահութիւն լցէն ուրեմն եղեւնաւորք վարչութեան աշխարհացս և պետութենէ: Կրօնք՝ որ զերանութիւն և զզգուշութիւն նօթձէ ժողովրդոց և թագաւորաց, եղկոյ՛ ինքն՝ ի խոչ և՝ ի խութ նոցին: Բազում մեզմէ առաւել պինդ կալցի զարքայութիւնս՝ քան զձեռն առաւածայնի որ կանգնեացն զնոսա: Ո՞չ այլ ուստեք լինկալցին ժողովուրդք զլուութիւն և զհաղորդութիւն, բայց եթէ՛ ի խաբանաց և՝ ի դրժանաց առաջնորդացն: Եւ՝ պաշտօնէից թագաւորացն չկայ՛ շահել զհայրենեացն փրկութիւն՝ եթէ ոչ առաժիւք փրկութեան անձանց: Ո՛վ թշնամանաց կրօնիցն և այնչափ արքայից բարեգործաց, որ ոչ այլ իւիք՝ քան թէ նուիմբ եւեթ յաջողեցան՛ ի թագաւորութեան:

Խոստովան լինիմ, Տէր արքայ, թէ յորժամ փառամոլութիւն լցէ թագաւորն և անօրէն ձեռնարկութեանց խոհուիչ, նենգ և դրժողութիւն անհրաժեշտ իմն զոգեաս լինին պաշտօնէից իւրոց, առ՛ի զջարահնար խորհուրդան ծածկելոյ, կամ՝ զունապեղելոյ զանկրաւորութիւնն: Բայց լինի իշխանն արդար և երկիւղած յԱստուծոյ, արդարութիւն և ճշմարտութիւն շատ լինին՛ ի պահել զգահն՝ զոր նոքին ինքեանք կառուցին. Ճարտարութիւն պաշտօնէիցն երևելոյն այնուհետև յարդարատաւութեան նոցին և յուղղութեան, ոչ ևս խարդախութեան և մեղմեխանաց տացին շքեղ անուանքն՝ արուեստ թագաւորելոյ և գործոց հնարագիտութիւն: Բովանդակ ասել, բնր ինձ Դաւիթն և Փարաւոնն՝ բարեկամն ժողովրդեանն Աստուծոյ, և դասին իբրեանց՛ ի սպասաւոր Նաթանայ և Յովսէփայ:

Ապա թշնամանել է զկրօնան, Աւգոստինոս ասէ սուրբն [1], կարծել թէ չէ հարկ խորհուրդ ՚ի նմանէ հարցանել ՚ի տեսչութիւն պետութեանց և թագաւորութեանց: Բայց նոյնպէս արհամարհութիւն է նմա՝ ՚ի մոլարանուն երկիւղածութենէ պատճառս առնուլ վարանաց և տարակուսի, որ ամենայն ուրեք երևոյթ լինչ չարի նշմարեն, և ցնորս լինչ կրօնասիրութեան ընդդէմ բերեն անգադար ամենայն արդարադատ գործոց և հաստատագոյն սկզբանց:

Մարդկեղէն և ապականեալ խնամատութեան է տարտամ և երկնչոտ լինել. քանզի ընդ սուտ կերպարանօք ծրարեալ կայ միշտ, պարտի և միշտ ՚ի խեթի և ՚ի կասկածի լինել՝ թէ գուցէ սրատեսիլ քթթել մի ակն թաքի ՚ի խորս անցեալ նշաւակից զպատրուակն: Իսկ խնամատութիւնն ՚ի վերուստ յերկնից եկեալ՝ անյողդողդ և անծուփս զինեղ յարդարէ. որ ՚ի լոյս ոք եւեթ կամիցի գնալ, նորա յապահովս են ընթացք: Միայն առն առաքինւոյ է բարձրիգլուխ ջոջել. և ձայնատուր լինել զանգիտօղ և զալիալիուն խոթաքիատութեան նենգաւորին. սրբական իմն պերճութիւն՝ վայելուչ է ճշմարտութեան:

Ապա որոյ՝ մոլար ճանաչումն է բարեպաշտութեան՝ նըկատել զինս ՚ի մոխ համակ զանգիտօղ, ապիկար, տարակուսաբեալ, խղճական և կարճամիտ, որ զպատրան առ մեղս ունկնդի և զհարութիւնն առ առաքինութիւնս, որ սոխակի գործել՝ և չիշխիցէ ձեռնարկել, միտատատան ընդ պէտս հասարակաց և ընդ բարեպաշտիկ խեթս կասկածանացն, և ոչ յայլ լինչ ՚ի վար զկրօնան արկեալ՝ բայց ՚ի խուռվ և ՚ի շփոթ հարկանել, ուր պարան էր օրէնս և կարգս հաստատել: Ահա զեղծմունք մարդկան են՝ զոր խառնավար առնեն ՚ի բարեպաշտութիւնն, այլ ոչ ՚ի բնէ բարեպաշտութեանն են: Նշանակ է այդ փանաքի և տկարամիտ ոգւոյ, բայց ոչ հարկ լինչ բարձրութեան և խնամատութեան կրօ-

[1] Ի գիրսն յաշագս Քաղաքին Աստուծոյ:

նից : Միով բանիւ՝ անչափութիւն առաքինութեան է. բայց ոչ անչափութիւն ՚ի նեղքս սպրդի, այլ վախճան առնու առաքինութիւն :

Ոչ, Տէր ողբայ. Ճշմարիտ առաքինութիւն զմիտան ամբառնայ, զսիրտն աղնուացուցանէ, այնդէն զարթութիւն : Որ հզօրն է յաղթել անձին, առ մեծամեծս է ծնեալ : Այլ բարի՝ բաւական է առ ամենայն, յորժամ կարօղ լինիցի վերանալ հաւատովք դէր ՚ի վերոյ ամենայնի : Դիւցազունա՝ դիպուածն զործէ, զայր արդար՝ հանապազորդ քաջութիւնն : Գիտեն կարիք վերացուցանել զմեզ ՚ի յոյժ բարձունս, բայց առաքինութեան միայն է ամբառնալ ՚ի վեր քան զմեզ :

Ո՞ր այն թագաւորութիւն, Տէր ողբայ, շքեղաշուք Իսրայէլի քան զՍաղոմոնին, մինչև հաւատարիմ եկաց ՚ի հարցն օրհնս. որ տեսչութիւն առաւել հանճարեղ և ամէնիշխան : Ամենայն նրբութիւնք քաղաքակրթութեան հասուցի՞ն համբուն յայն սահման զարուեսա Թագաւորելոյ և առաջնորդելոյ ժողովրդոց : Որպիսի փառք և որպիսի մեծավայելչութիւն բակ առեալ կայր զաթոռսին : Մինչ նուաստացուցանէր բարեպաշտութիւն զնոսա : Ո՞ր Թագաւոր եռես երբեք զհպատակս իւր առաւել հըզօրս, զդրացիս իւր՝ երանելի զանձինս համարեալ նիզակակցութեամբ նորին, և զԹագաւորս՝ իշխանս ընդարձակածաւալ և հաստաբուռն պետութեանց քան զնա, ակն ինքենէ ածեալ և զինչեալ ընդ նմա ՚ի մեծարանս՝ արտաքոյ իրաւանց Թագին իւրոյ : Խմաստութիւք այլոց ազգաց ոչ առաքէն անհանճարս համարէին զանձինս առ նովաւ. ոչ ՚ի բացարձակ վայրաց երթային զարմանալ ընդ կարդն և ընդ վայելչութիւն՝ որով վարէր զհնազանդեալսն զամենայն իբրև զայր մի : Ո՞չ առաքէն յաստուածելէն պատուիրանաց անոի զոյս երթոյ նա մեզ՝ զօր ամենայն ուսանիլ Թագաւորել իշխանք. և բարեպաշտութիւն ևկէ՞ ինչ խոչ ընդ ոտն վարչութեան, փոխանակ զի նա միայն երբեր նմա զհնազանդութիւն :

Երանի էր նմա, եթէ չէլանէր ըստ սրտուղի յաւուրց նոց անտի իւրոցն գնացից, և ծերութեանն սխալանք չէին աղաւաղեալ զիւառս Թագաւորութեանն, և խանգարեալ զերջանկութիւն ընդ ձեռամբ կացելոցն: Յայնժամ ակամն նոքա կրեալ վիշտս ահագինս և անկան յերանութենէն, յորժամ եկաց նա յաւ Աստուած հաւատարմութենէն, և ապականեալ յայլազգի կանանց՝ ոչ էս գիտաց չափ ինչ և սահման պղծութեանց իւրոց և հարստահարութեան ժողովրդեանն, և պատրաստեաց որդւոյ իւրում զվատթարն չարութիւնն՝ որ տան ցեղս յաղքայութենէն Դաւթի պատառեաց, և զայլ ոք սրտի նոցա տէր:

Աւանդ մարդիկ յանբաւսիր առնել զխիտս իւրեանց՝ ապարեալ հնարին զառաքինութիւն. որ քանզի անհաճոյ է կարեաց, յանկան անկել՝ ի միտս իւրեանց՝ թէ յերեւեան է այն վարչութեան աշխարհաց և տէրութեանց, և ախոյեան հանել նմա զշահ հասարակաց, առ՝ի գողանալ յաչաց իւրեանց զշահ անձին՝ որ միայն է՝ի մէջ այնմ դիմամարտ: Երկիւղ Տեառն միայն է ապերթ ճշմարիտ խնամատութեան. և որ զմարդն հրահանգէ՝ այն եւեթ պիտէ յոտին կացուցանել զպետութիւնս:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Հոգւոյ ուրեմն երկմտութիւն և վարանք արկանեն յաչս՝ի պաշտօնն մտաց և՝ի պատրանս, որ է վերջին վտանգ բարեպաշտութեան ատենց:

Այո, եղբարք իմ. են և բարեպաշտութեան մոլորութիւնք իւր որպէս ախտից: Ըստ առաւել սիրոյ Ճշմարտութեան՝ առաւել հրապուրեն զմէջ առաւօտապիր կերպարանեալ երևոյթք նորին. առաքինութիւն պարզ և անխարդախ՝ ըստ անձին գոյն զայլս: Որ կրկին զմէջ՝ի կա-

կածուսուԹիւն՝ ԹիւրուԹիւնս մեր է դրեԹէ միշտ. որ հա-
մակ ուզղուԹեամբ և պարզմուԹեամբ վարի, ոչ յոյժ ըզ-
պոյշ կայ ՚ի մանկէ և ՚ի նենգոյ, և արդարք առաւել իմն
յանկ են ՚ի խաբկանս, զի անհմուտ են հնարից խաբէու-
Թեան:

Բայց ևս առաւել բարեպաշտուԹեան մեծամեծաց պարտ
է երկնչել ՚ի պաշարմանէ մտաց և ՚ի պատրանաց. վասն
զի, (Թող զվնասան զոր ածեն), ուղիղ և յատակամիտ
ծնեալք, ասէր երբեմն Աթանաշէս, այնչափ առաւել աեղւոյ
տան մտահաձուԹեանց՝ որչափ խորշին յաշխատուԹենէ
հարցափորձի և ՚ի վարանելոյ ջննուհուԹեան, և համա-
ռօտ և հեշտ վարկանին ըստ խորհրդոյ այլոց գաւառաստան
առնել՝ քան ՚ի խոր քննել և խնամուտ լինել. Զի պաննինգ
ասէին Իշխանաց՝ որ պայծ ըսոր բնուԹեան Իւրեանց դաւիճն՝ պապրէն
խորամանգ խաբէուԹեամբ [1]:

Իսկ աւագացն բարեպաշտուԹիւն քանիօն պաշարմանց
մտաց չառնիցէ զնոսա յանկս: — Պաշարմունք դիւրահա-
ւանուԹեան: ԲարեպաշտուԹիւնն ինքնին բանայ առեալ
զսկանչն նոցա առ ժանուուԹիւն զրպարտուԹեան. և որ-
չափ սիրոյք առաքինուԹեան լցեն, նոյնչափ դիւրաւ յա-
նաւակուԹիւն և յախտս կասկածելի առնին նոցա այնո-
քիկ՝ զորս անարդ յաչալանք խնդրէ կորուսանել: Բայց
կասկածել պարտին յամենայն նախանձաւորուԹենէ որ ՚ի
չնասել նկրտի: Սէրս բարեպաշտուԹիւն ոչ դիւրահա-
ւատ է չարեաց, կամ վոխանակ հրապարակելոյ՝ ծածկէ
զայն զեղծ և անմեղադիր առնէ. ոչ հնարի առեալն առնել
զեղբայրն՝ սերունդ եւրոց, կրթել միայն հաշտեցուցանել
զնա ընդ Աստուծոյ. քանզի շոգմոգուԹիւնք՝ կէաս եղեալ
հայելն ՚ի տապալել մանաւանդ զբախտ այլոց՝ քան ՚ի բա-
րեկարգել զվարսն, և քան զեղբօրն՝ սովորաբար զնա-
խատն մերկանալ չարախօսն:

[1] Եսթ. ԺԲ. 6. ըստ լատին ԹարգմանուԹեան:

Պաշարմունք վտահութեան : Առ նոսա՝ բաղում անգամ կեղծաւորն զառն բարւոյ զտեղի ունի. կերպարանաց բարեպաշտութեան տան մուտս առ ինքեանս, բարձս և պատիս և մեհեմութիւն, որ բուն իսկ բարեպաշտութեան ևեթ անկ էին. զհոգս աշխարհին բառնան 'ի նոսա՝ որ ծանծաղ գիտութեամբն ոչ յայլ ինչ ծնեալ էին՝ բայց 'ի պատրաստել յանձնան ապաստարկութիւնս : Կարգաւոր վարք՝ յաչս նոցա փոխանակ մեծամեծ ճարտարութեանց են և կարևոր պաշտամանց. և նովին իսկ ընդհիւ որով պատուեն զառաքինութիւն՝ ապերախտեն զայն :

Եւ ասա՝ պաշարմունք նախանձայուզութեան : Ասա աւասիկ բարեպաշտադոյն թագաւորք 'ի նախանձաւորութեան իւրեանց արկին 'ի վտանգ զբարեպաշտութիւն իւրեանց : Կոստանդիանոսք և Թէոդոսք տեսին երբեմն զսէր իւրեանց առ Եկեղեցի՝ ընդեալ հակառակ Եկեղեցւոյ, և նախանձու ճշմարտութեան՝ ձեռն տուեալ մոլորութեան : Ինչո՞ւնոյ, Տէր արքայ, չէ արժան ձեռն 'ի կրօնն կարկառել, բայց եթէ 'ի հովանի լինել և պահպանել զայն. և ռանդն նոցա անդ միայն օգուտ է Եկեղեցւոյ՝ ուր 'ի հովուացն խնդրիցի : Ի խնդիրս վարդապետութեան՝ միայն փոյթ և խնամ աւանդակրաց վարդապետութեանն զօրեղ է առ նոսա. այլ ամենայն ձայն արտաքոյ միաբան ձայնի հովուաց՝ կեղակարծ առ նոսա լինիցի : Ասա կալցին անձանց միայն զպատուիս պաշտպանութեան, և զվնաս և զդատաստանի՝ թողեն 'ի նոսա : Հպատակ իւրեանց են եպիսկոպոսք, այլ ըստ հաւատոյն՝ հարք են նոցա : Ծնունդ նոցա ընդ իշխանութեամբ գահուն արկանէ զնոսա, այլ 'ի խորհուրդս հաւատոյ՝ իշխանութիւն աթոռոյն վտանգին համան հնազանդել իշխանութեան Եկեղեցւոյ : Թագաւորք չեն ինչ այլ, բայց առաջին մանկունք նորա. և թագաւորքն մեր միշտ 'ի մեծ պարծանս թագին իւրեանց համարեցան զանուն անդրանիկ որդւոյ նորա : Ոչ այլ ինչ իրաւունք են նոցա՝ բայց միայն տալ 'ի կատարումն ածել

զՀրամանս նորին, և կանխեալով ՚ի հպատակութիւն՝ լինել այլոց հաւատացելոց օրինակ հնազանդութեան: Յորժամ կամեցան ապարձանել անդր քան զսահմանդ անցանել, և յափշտակել զվարդապետութեան իրաւունս՝ զքահանայութեանն պահեաս, զայրացուցին զՀերս Եկեղեցւոյ, թող թէ չբժշկեցին. ամբաստան միջնորդութիւնք նոցա՝ նորանոր վէրս գործեցին, և ծնան ոճիրս նորանորս: Ամենայն հնարողութիւնք հաշտութեան ՚ի խաղաղել զոգիսն ապստամբութեան և ածել ՚ի միութիւն, համարձակեցուցին զնոսա յերկպառակութիւն և ՚ի տապմբակութիւն. և նշխանութիւն նոցա՝ ՚ի միջնորդելն միայնակ առ ՚ի մօտելոյ զնոսա ՚ի ձշմարտութիւնն՝ յաւէրժացոյց հանապազ զմոլորութիւնան: Գոյ նոցա պարտ առնուլ զառաքանակաւն և պահպանել իբրև զԴաւիթ, այլ ոչ ձեւն ՚ի նա արկանել: Կառուցեալ կայ գահն ՚ի նեցուկ և յատաւէն սրբոյ վարդապետութեանն, բայց ոչ արժան ոչ պատշաճ նման՝ լինել այնմ օրէնս, և ոչ առեան՝ ուսոյ վճիռք նորա եկեղեցի:

Ո՛հ. եթէ կարիք և շահասիրութիւն մարդկային չպաշարէին զգահն, բարեպաշտութիւն սրբոյիդ լինէր անշուշտ՝ անեղծեալ յոյս Եկեղեցւոյ. բայց բաղում այն է՝ զի զկրօնասիրութիւն նոցա հակառակ նոցին իսկ շահու դրդեն ՚ի գործ, կամ անոսի պատճառանօք շահու նոցա՝ սան զՀակառակն կրօնից գործել:

Ապա ուրեմն՝ բարեպաշտութիւն մեծամեծաց գրեթէ անճողոպրելի է ՚ի կանխակալ պաշարմանց. բայց յամառութիւն ՚ի պաշարմունս անդ՝ առաւել անդարմանելի առնէ զչարիսն: Նոցա չիք ինչ ամօթ ՚ի խաբկանացն: Եղեւ. և զինաւրդ նոցա անձնապահ լինել անսի: Ամենայն որ շուրջ է զնոքօք՝ գոցեաս նմին չանահնար լինի խաբել զնոսա. նոքա՛ն լինչ զարմանք՝ թէ մտադիւրութիւն նոցա լքուցեալ ուրիք՝ տեղի տայցէ պատրանաց: Խորամանգութիւն ձարտարապետն է և տեղոյ քան զկատարածութիւն. յամենայն

կերպարանս պատճառել, զամենայն վայրկեան ՚ի գործ առնու. և յորժամ բնաւ իսկ գրեթէ մօտաւորքս միտ առնէն զի խաբկինք, բազում անգամ զգուշութիւնք իսկ մեր՝ ձեռն տան նոցա առնել ուրիանել զմեզ ՚ի հալբա:

Սակայն, Տէր արքայ, թէպէտ և չկայ ինչ ամօթ մեծամեծաց պատրիլ, որ անփախուստ եղկութիւնն է գերագահ իշխանութեան, բայց փառք են նոցա խոստովան լինել, թէ խաբեալք եցեն Թերևս: Չկայ ինչ մեծագոյն յայր Թագաւոր քան զկամս Թաւիւղոյ ՚ի պատրանացն, և քան զարիութիւն իւրովի խոստովան լինելոյ զսխալանսն: Արտաշէս ոչինչ նուազել համարեցաւ ՚ի փառաց Թագաւորութեանն՝ ՚ի վկայելն արքունի հրովարտակաւ և, թէ Համանայ խաբեալ էր զանկեղծ բարեմտութիւն իւր: Զար հպարտութիւն է՝ անվրիպելի կարծել զանձն. ակարութիւն է չկշռել յետս նահանջել ՚ի թիւր ընթացից յոր սեռանեմք վարեալս զմեզ: Փոխոխումն որ զմեզ յուղիղն դարձուցանէ՝ կազդուրէ մանաւանդ զիշխանութիւնն, քան թէ վատթարէ: Դառնալ ՚ի վրիպակէ՝ չէ սուտ առնել զանձն. ոչ զյողդողդութիւն վարչութեանն առակել է ժողովրդոց, այլ ցուցանել զուղղութիւն նորա և զարդարութիւն: Ժողովուրդք գիտեն բաւական և սեռանեն առէալ՝ զի խաբեին Թագաւորք, այլ հազիւ երբեք սեռանեն՝ թէ գիտեն զգաստանալ և զսխալանսն խոստովանիլ: Չկայ ինչ երկիւղ թէ գուցէ նուազ առնիցեն զմեծարանս սերութեան՝ որ խոստովան լինիցի զյանցումն և անձամբ զանձն առնիցէ դատապարտ. առ այն նուազեն պատկառանք իւրեանց՝ որ ոչ ճանաչիցէ զայն, կամ որ իրաւացուսցէ. և չկայ ինչ որ այնպէս անարգիցէ զիշխանութիւն ՚ի միտս նոցին, որպէս զանարութիւն դիւրապատիր, և զբարեշուք փառս՝ որ զվրիպանաց և զնաբկանացն խոստովանութիւն անարգութիւն համարիցի:

Խնդ, Տէր Արքայ, զսկանչսդ առ ասպիրատ խորհուրդս և առ վտանգաւոր Թելադրութիւնս չորոմից. այլ քանզի

ընդ քոլով հասարակաց բարեաց ծածկին այնոքիկ, և թէ վաղ թէ անագան մեռաս առ գահն գառանեն, եթէ երբեք յանդգնասից անասցեր նոցա, ընդ առնուդ՝ ի միս զպատանդ՝ փառացդ միայն ինամ տացէ քեզ անդէն յուրատոհկալ յայնցանէ: Առաւել պարծանք են խոստովանել զպատրանան քան ջրմբռնիլ՝ ի պատիս: Յինքնասէր թագաւորի չէք ինչ վայելչագոյն քան ճշմարտութեան և եթէ կամել միշտ սիրել և հպատակիլ: Ահել ինն եղևցի՝ գառնիւթիլ քեզ, յորժամ խարդախանք և շողոմք խայտառակեալ՝ չունիցին այլ իմիք՝ ի քէն սիրն, բայց ոհաճութեան և բարիութեան: Միայն հպարտութիւն թագաւորաց է՝ որ համարձակէ և յանդգնէ զողոքանս և զխորհուրդս չարեաց. և եթէ ճշմարիտ իցէ՝ թէ յաճախ շողոքորթքն են թագաւորաց յոռեցուցիչք, ճշմարտագոյն ևս է՝ թէ յոմն թագաւորքն են որ առնեն և բազմացուցանեն շողոքորթս:

Ի վանդից ասաի զդուշացեալ բարեպաշտութիւն աւագոյց՝ պատիրաւելի եղևցի, և ինքեանք գործուացեն՝ ի նա զփառան և զպատիւ՝ զոր աշխարհի ծաղր կամ պատիր առաքինութեան հիքութիւնք՝ զրեթէ կատարեալ են՝ ի նմանէ. և ոչ ևս լսելի լիցի՝ ի մարդիկ յաւիտեան՝ Թշնամանալից հայհոյութիւն կրօնից, թէ բարեպաշտ թագաւորք առաւել անճահ՝ ի տեսչութիւն են, և թէ մարթի բարեպաշտութեան մեծագործ սուրբս յարդարել զնոսա, այլ ոչ բնաւ մեծ թագաւորս:

Ո՛ տայր, Տէր ողբոյ, թէ լրբախօսութիւնք այսպիսիք չբախէին բնաւ զականջս: Իսկ եթէ տուտակատպատութիւն ժոռացի յաւուր միում հանել զայնս միջև՝ ի գահդ, հատցին Թօմասիեացին անսի փայլատակունք և շանթք՝ յամօթ և ամ՝ ի բերան առնել զՇնամանի առաջնորդութեան և զճշմարիտ փառացդ: Այնպէս լուիցես զամպարիշտ սրտիկանան՝ որպէս հայհոյութիւնս ընդդէմ մեծվայելչութեան թագաւորաց, որպէս Թշնամանս մեծաշուք նախնեացդ, Կալոլոսի մեծի, սրբոյն Լուդովիկոսի, և հօրն քոյ մեծամեծ

հաւուն: Ջերմեռանդն և անկեղծաւոր բարեպաշտութեամբ եղեն նոքա մեծ Թագաւորիք: Վասն գոյզթանական՝ խնամք կրօնիցդ փառաւորեցին զնոսա առաւել: Անբաւելի գովութիւնք Եկեղեցւոյ զնոցանէ՝ ընդ նմին Եկեղեցւոյ կոչեցին յաւէժ: Եթէ բարեպաշտութեան չէր անմահացուցեալ զգործս նոցա մեծամեծս, սուղեալ մնային 'ի շրջանս անդ ժամանակաց, կամ գուշնաքեայ լինէ ևեթ հանդիպելին փառաց:

Լէր, Տէր արքայ, հանգոյն նոցին պաշտպան փառացն Աստուծոյ, և նա ոչ տացէ քոյումդ եղծանիլ բնաւ 'ի յուշս յիշատակէ մարդկան: Եգեալ քո առաջի զմեծամեծար օրինակաւ՝ հաւատարմացո թէ բարեպաշտութիւն ոչ անարգէ զթագաւորս, թէ ախտք միայն անշքացուցանեն զպետսն և անպատուեն զթագաւորս, թէ՝ որ չիշխէ անձին՝ չէ արժանի իշխանութեան, և թէ առ 'ի յատպա յաւիտեանն զոյգ նոցին մեծ լինելոյ յաչս մարդկան՝ պարտ է նոցին նըմանն հաւատարիմ լինել առ Աստուած:

Ո՛վ Տէր, որչափ գտանեաք կան որոգայթք զաթոռովդ արքունի, նոյնչափ կարօտին թագաւորիք պարտակիլ քոյով պաշտպանութեամբդ և օժանդակութեամբ ողորմութեան քոյ մեծի: Այլ քանզի մատաղ մանկութիւն և տղայութիւն անտէրունչ թողեալ անձամբ անձին և յամենայն վտանգս թագաւորութեան՝ առաւել հին պաշարէ արկածիւք զմանուկս զայս մեծաշուք, լեցի խնամոյդ քոյ և հայրապետով զթոյդ առաւել արժանի:

Ամբաւս վաղապոյն զանմեղութիւն սրտին յերեսաց այսպանութեանց որ քամահեն զբարեպաշտութիւն, և յերեսաց վտանգից նոցին իսկ բարեպաշտութեան. չնորհեա նմա զսքբարարսն մարդոյ զառաքինութիւնս, որ և թագաւոր մեծ միանգամայն հանդերձեն. տուր նմա մեծարել զծառայս քո, և ծառայել ինքնին Աստուծոյ հարցն իւրոց մեծավայելուչ փառաւք, որ միայն պատկառելի կացուցանէ զթագաւորս:

Յերկինից ՚ի բարձանց ակնարկեա ՚ի սա, մեծդ Աստուած, և առեա սատ առ ոտս քո զմանուկս զայս վերափառ և պատուական, զիայն շառաւիղ Թագաւորութեանս, զհամբերն Եւրոպէի, զսուրբ առհասարակեայ խաղաղութեան աղգաց և ժողովրդոց: Ո՛չ յուշկին խնամք ողորմութեանց քոց· ապէ հայեաց ՚ի սա, Տէր Աստուած, աչօք և գորովավ համօրէն ապգիս:

Ոչնին դիր նախահաձոյ բարբառոյ անմեղ սրտին՝ որ ասէ սատ առ քեզ, որպէս անդ ուրեմն երբեմն Թագաւոր ոմն սուրբ· Աստուած հարց խոց՝ նայեաց առ իս· գութ արկ ցեն ՚ի քեզ վասնզբս՝ զոր առաջոյ պատրաստեն ինձ հասակս և կարգս, և յետս մանկութեանս պատեսցին զինեւ շուրջանակի· Նայեա սո՞ իս և ողորմեա ինձ [1]: Դու ինքն լեր պաշտպան գահուս և մանկութեանս: Պահպանեա զսերմունքիւն զաւակի Թագաւորաց բազմաց՝ որ չՀանապէ լինչ պարծանս շքեղ քան զլինելն անդրանիկ ՚ի մանկունս քո· Տուր զջրոխան ծառոյի փոյ:

Բայց, Աստուած հզօր, մի պահպանութիւն երկրաւոր Թագիս լեցի միայն քո բարերարութիւնդ: Կեցո՛ զորդի Ադելայդի, զԲլանչեայ և զՂովիզեայ [2], և զբազմաց աստուածասէր դշխոյից, որ բարձեալ բերեն տակաւին զիս առաջի քո ՚ի գիրկս իւրեանց՝ երբև զորդի սիրանուագ զրպանաց և ցանկալի յուսոյն իւրեանց· Կեցո՛ զորդի աղախնոյ փոյ: Եւ քանզի անմեղութիւն յինքն ձգէ միշտ զակն քո զՀաշտ և զսիրալիր, պահեա ինձ զայն, Աստուած իմ, անկասպուտ ընդ Թագիս, զի քեւ յաջողապէս Թագաւորեալ յերկրի, արժանաւոր գտայց Թագաւորել ընդ քեզ յաւիտեան յերկինս· Ամէն, եղիցի:

1 Սաղմ. ՁԸ· 16:

2 Ադելայիդ՝ որպէս տեսաք յերկրորդ քարոզին՝ էր մայր մանուկ արքային, Բլանչ՝ մայր սրբոյ արքային Լուդովիկոսի, Կլոդիւդ՝ հնադոյն սուրբ դշխոյ Գալլիոյ ՚ի վեց դարուն:

ԿԱՐՈԶ Թ

ՅԱՒՈՒՐ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹՈՒՆ

ՅԱՂԱԳՍ ԹԷ Ի ՍԻՐՏՍ ՄԵԾԱՄԵԾԱՑ ՋԻՆՁ ԱՐԳԵԼ ԼԻՆԻՑԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան ՚ի միասին վասն Տեառն և վասն օծելոյ նորա:

Սաղմ. Բ. 2:

ՏԷՐ ԱՐՔԱՅ,

Ամենայն զօրութիւնք երկրի հոլովեալ Թուին այսօր ՚ի մահ դատապարտել զՅիսուս, և մահն Յիսուսի ոչ այլ ինչ է՝ քան թէ յայտ յանդիման դատապարտութիւն կարեաց մեծամեծացն և զօրաւորաց երկրի:

Քահանայապետ է սա յաւիտենական՝ ինքնանուէր ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ, իբրև միայն բաւական զոհ ՚ի քաւութիւն անօրէնութեանց նորա և ՚ի հաշտութիւն առաւածելէն բարկութեանն. սպասաւոր է և առաքեալ Հօր իւրոյ՝ որ իւրով արեամբն վկայէ Աչմարտութեան ա-ռաքելութեան իւրոյ և պաշտամանն. Թագաւոր է՝ որ մնայ հաւատիք իւրով մինանէ ՚ի Ժառանգութիւն տէրութեան տիեզերաց, յանձն իւր միաւորեալ զամենայն անուն վասն ասց՝ որով պէրճանայ մարդկան հպարտութիւն:

Սակայն քահանայապետս այս՝ մնանելոյ է նախանձու

իշխանաց քահանայիցն. ապաստարան այս առաքեալ երկնից՝ զուր ի դէմս զանմեղութիւն իւր ածէ փառասիրութեան և վատութեան պաշտօնէիկ Կայսերն. Թագաւորս՝ որոմ աղքք և ազինք ամենայն առեալ են ի ժառանգութիւն, խաղ առնի անհոգութեան և ընդվայրաքննութեան օտարամուտ ազգային հրէաստանի: Պարտ էր՝ զի ամենայն անուն անուանեալ մեծ ի վերայ երկրի, իշխանաց քահանայիցն նախանձ, վատութիւն Պիղատոսի՝ և Հերովդի անհոգութիւն՝ ի գառակինքեն Յիսուս՝ վայրագակեցուացեն զմեծութիւն նորա և զգօրութիւն. Յանդիման էղէն Բագաւորէ երկի, և այլն:

Յամենայն հրահանգս՝ զոր խաչին տեսիլ մատուցանէ մեզ այսօր՝ չկք ինչ քան զայդ ատանօր մեզ պատշաճագոյն. և զի անմարթ է մեզ յանդիման առնել բարեպաշտութեան ձերում զամենայն մանրամասն հանգամանս ի լուսն, շատացուք ցուցանել ձեզ զոսոխան՝ զոր ի սիրտս մեծամեծաց երկրի գտանէ իւր ձշմարտութիւն. այս ինքն է Յիսուս ի մահ պարտաւորեալ ի մեծամեծացն կարեաց, և կարիք մեծամեծաց գառապարտեալ մահուամբն Յիսուսի:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԻՐ ԱՐՔԱՅ,

Ձշմարտութիւն՝ միշտ առելի մեծամեծաց, ցայսօր ևս գտանէ ի վերայ երկրի զնոյն թշնամիս՝ որ երբեմն բևեռեցին զայն ընդ Յիսուսի ի խաչին. նախանձ հալածէ զայն, անարդ շահասիրութիւն զոհ առնէ, անհոգութիւն արհամարհէ, նա և այսն ևս առնէ:

Բայց յամենայն ախտից՝ զորս ձշմարտութեան կրճխին արկանեն մարդիկ՝ առաւել վատագոյն է նախանձ, զի ա-

ռառել անբժշկական է. այնպիսի է ախտ՝ որ առ ամենայն վարէ, վասն զի և յաչս անձին պատճառի. յաւէժական ոխերիմն է երախտեաց և առաքինութեան. ամենայն զարմանալիք առ մարդկան՝ բորբոքեն զայն և զայրացուցանեն. ոչ խիղք ներէ՝ բայց միայն ախտաւորութեան և անփառութեան. և հարկ է անարժան լինել աչաց ամենեցուն՝ առ արժանաւոր լինելոյ ակնարկութեան նորա և նեղողութեան:

Եթէ սքանչելիք Յիսուսի չէին այնչափ հոչակեալ յերկրին հրէաստանեայց, իշխանք քահանայիցն՝ ոչ այնչափ շլացեալք՝ ի փառաց անոի նորա, չյառնէին ոսոխ անմեղութեան նորա. և նախանձաւորութիւն նոցին չարայաչալ՝ ոչ մահապարտ դատէր զնա, եթէ չէր արժանի եղեալ դրուատեաց և կայթից բազմութեանն. Զի՞նչ արասցուք, զի այրն այն բազում նշանս առնէ [1]:

Մեծահոչակ համբաւ Յիսուսի զայս ազգէ առելութիւն և նախանձ՝ ի սիրտս քահանայապետիցն և քահանայից, աւանդապահաց օրինացն և կրօնից: Այլ աւելի՞ քան զինչ արժան՝ զի միշտ գոգցես արբարանն լինիցի անարգ ախտիս ապաստան, զի պանծալի շնորհք հոգւոյն խաղաղութեան և սիրոյ՝ դառնութիւն և հեռ՝ ի պաշտօնեայսն արկանիցեն, զի յորդաբուխ որայիցն հունձք՝ որ միշտակաց կարօտին մանաւանդ, ՝ի մահանս շարժիցեն զսիրտ սահաւաւոր գործաւորացն, զի հրեշտակք կարգեալք՝ ի սպասս պաշտամանն՝ ոչ ժամանիցեն խլել զգայթագղութիւնս յարքայութենէն Յիսուսի, առանց այլ եւս ինն յաձախ՝ ի տեղին անկելոյ, զի անդամալին յերևելոյ Աւետարանին՝ այս որում չար սովեալ սպրդեալ գտանիցի յիւս սրբագոյն սահարան, և զի բազում անգամ գրեթէ նոյնչափ տառապեսցի Եկեղեցի յիւրեանց սուտ նախանձայուզութեան՝ ի պաշտպանութիւն իւր յարուցելոց, որչափ՝ ի պատերազմօղ մոլորութենէ:

1 Ցովհ. ԺԱ. 47:

Թէ միայն Քրիստոս Յիսուս պատմեալ քարոզեացն, ոչ ա-
ռաքէն հատարակ ամենեցուն են վիտքն՝ որոց սիրեն զնա.
ոչ հաղորդ յաղթանակացն լցեալք, յորժամ վասն նր
միայն պատերազմիցիմք, և ամենայն յաղողութիւնք՝ որ
զաւրքայութիւն նորա բարգաւաճեն՝ ոչ ապաքէն մեր լինի-
ցին: Նա միայն է որ աճեցուցանէ, իսկ ապիկար վաստակք
մեր առ ոչինչ համարին, նրովք մեք ինքնին հաշուիցիմք լինչ
զնոսա:

Ամենայն ժանտ և ժպիրհ կերպարանք միագումար թը-
ւին 'ի սիրտ՝ ուր սիրէ ախտս այս անօրէն. սակայն ախտ
է սա և ժահր լեմն ապականապործ՝ համօրէն արքունեաց,
և յաճախ առաջին պատճառ անկանելոյ թագաւորու-
թեանց. չիք նուաստութիւն՝ զոր ախտս այս ոչ բարկեաց-
ցէ կամ նրաւացուսցէ. և զաղնուախոհ միտս անդամ ըզ-
գաստախարակութեան և ըզնութեան խափուցանէ. և նրբև
թոյնս այս սիւեացի 'ի սիրտս, տեսանիցին այնուհետև հո-
գիք խոհերականք անդ՝ ուր բնութեան մնկեալ էր խակըզ-
բանէ հոգիս վեհս և բարեբոյս:

Առ ոչինչ համարեալ է այնուհետև ուխտանենգութիւն.
քահանայապետքն ինքնին խնդրեն սուտ վկայութիւնս հա-
կառակ Յիսուսի. որոց պարտ էր մանաւանդ տարապիր
առնել զարան վաշխուէրս՝ որ յամօթալից վաճառ հանեն
զձշմարտութիւն և զանմեղութիւն այլոց, ինքեանք ընդ
նոսին ընկերըշակեն, և ձեռն տան մեղայ՝ որ օգնէ ախտից
նրբեանց:

Սմին նրկ չամաչէ ախտս այս՝ ապաւէն առնել նր զա-
նարդ և զամօթալի պաշտպանս: Ազգ անուանարկք և կո-
րըստականք ընդունելի լինին՝ յորժամ նեթէ յանձն առ-
նուցուն կցորդ լինել և ապաս առնել ծածուկ գառնու-
թեանն որ ուսէ զմեզ, և նեթէ բաւական գտանիցին գործ
վատանշան լինել ախտից՝ սիրելի ևս լինին. և որ լինչ զա-
զնիր ևս ցուցանելոց էր զնոսա յաչս մեր՝ իսկ և իսկ սրբէ
զնոսա յամենայն արատոյ: Զպահասեն աշխարհի ազգ այս

պիսիք վաճառեալք անօրէնութեան, որոց գործ այն է միայն առաջի մեծամեծաց՝ սէր և մուր շինել յայնոսիկ, որք անկեալ էին ի թշուառութիւն անհաճոյ նոցին լինելոյ, կամ առաւել հաճոյ գտեալ՝ քան զոր ինքեանք ախորժէին. որք ապականեալք, զորս հալածել արժան էր յընկերութենէ, զոմանն անպակաս ի մեծամեծաց անալ արս՝ որ լսէին նոցա և պաշտպան լինէին: Երախտիս գրեմք զեզանդն՝ զոր ցուցանեն ի շահ մեր, և առաքինութիւն՝ զանարգ սպասաւորութիւնն ընդ որ մեք ինքնին շինիմք ի գաղտնիս: Դովիկ եդովմայեցի, պաշտօնեայ եղեալ նախանձու և առելութեան Սաւուղի ընդ Դաւթի, անդէն սիրելի նմա լինի:

Իսկ ի՞նչ էիցէ բառական սիրտ սեաթորմի և թունեալ մախանաւք: Ոչ միայն գովի նենգաւորութիւն, այլ և անվեհեր ի նոյն մեղս լինի համարձակիլ: Քահանայապետք՝ առնառեալք աքանչելեացն Յիսուսի և արբունութեանն, որոց անմարթ էր տեսանել՝ թէ որդի Դաւթի է և ի զաւակէ Թագաւորացն Յուդայ, և ի բերանոյ նորին խակ լսեալ՝ թէ պարտ է զԱստուածոյն տալ Աստուծոյ, և զկայսերն՝ կայսեր, սակայն խաղմարար զինս հատուածն, և ճշնամի կայսեր և յափշտակիչ տէրութեան նորա, և ամպարիշտ ոմն քակիչ օրինաց և տաճարի հարց իւրոց, հուսկ ուրեմն՝ այր մի ոչնչաքեաց՝ ծնունդ գառհաց և յետին խառնաղանձին:

Ախտս այս գժնդակ՝ մոլութիւն լինն է, որ զամենայն կերպարանափոխս առնէ յաչս մեր, և ոչ մի ինչ այնուհետև իւրով բնիկ կերպարանօքն երևի մեզ: Ի նմանիս յաղթեանակս կանգնէ Դաւիթ ի վերայ փչշտացուոց և ամբարտաւանացն զԹագ տէառն իւրոյ. յաչս Սաւուղի չէ ինչ այլ, բայց գահատեր ոք՝ որ իւրում աթոռոյն ոխն եդեալ է: Ընդ վայր հաւատաւոր Երեմիա զաւուրգութիւն մարգարէութեանց իւրոց արդեամբք երացն և անբծութեամբ կենացն. քահանայքն՝ նախանձաբեկք ընդ հաչակ անուան

նորա, խաբեբայ վնա քարոզեն և մատնառու՝ գուշակ չար աղեաից և սպառապուռ աւերածոյ Երուսաղեմի, ՚ի լքուցանել մանաւանդ զբնակիսն և ձեռն տալ ՚ի թշնամիսն, քան ՚ի խափանել զբնաբարձ սատակումն իւրոց աշխարհին:

Ամենայն ինչ ժանտաբեր լինի ՚ի ձեռս ժանտաժուռս ախտից. բարեպաշտութիւն սերտ վկայեալ՝ ձարտարասոյզ հեղծաւորութիւն է. քաջափայլ արութիւն՝ առ ՚ի ցոյցս խրոխտանաց, կամ՝ բախտ՝ ՚ի պարծանս համարեալ. անուն բարի անչերիւանալի՝ մոլորութիւն ամբոխին, ուր առաւել են կանխակալ կարծիք քան զճշմարտութիւն. ձարտարութիւնք պիտանիք աշխարհին՝ անչափ փառասիրութիւն առագաստ արկեալ անհնարին փոնաքութեան և անբաւականութեան. նախանձ հայրենասէր՝ արուեստ յարդաւոր և կարևոր զանձն ընծայեցուցանելոյ. փառաւոր յաջողուածք՝ բախտաւոր հանդամանաց ՚ի մի վայր հանդիպումն ՚ի քմայ պատահարի քան ՚ի հնարից խոհեմութեան. մեծաշուք զարմի սերունդ՝ անուն մի մեծ յոր պատուաստեալ է ոք, և ոչ ՚ի նախնեացն ժառանգեալ:

Ապա ուրեմն լեզու յաչալիսոյն խառնել զամենայն յոր հասանէ, և այս լեզու ամօթալի՝ լեզու է ոչբունեաց առ հասարակ. այն է որ կապէ զընկերութիւնս և զտուրևառս. ամենայն ոք թաքուցանէ զծածուկ վերս սրտին, և ամենայն ոք յանձն իւր ձարակէ զայն. անուն ախտին ամօթ համարի, խակ ինքն ախտն՝ պարծանս:

Հուսկ ուրեմն պատճառի և ՚ի կերպարանս նախանձաւորութեան և սիրոյ բարեաց աշխարհին. աղգասիրութիւն և խնամ ՚ի պահպանութիւն տաճարին և օրինաց՝ թուին սուրբ առնել զիանդուգնաւորութիւն քահանայապետացն ընդ Յիսուսի:

Նախանձ բարեաց աշխարհին՝ շուք ինն և ջատագովութիւն լինի ախտից այսմիկ օր քան զօր: Թուի թէ զաշխարհէն ևեթ հոգայցեն, և ոչ յայլ ինչ աչս արձակեն բայց ՚ի բարձս իշխանացն. ընտրութեան ալքայեին մեղ դնի՝ իբրև

յանկարծոյն վիճակեցեալ, բայց ոչ եթէ օգուտ աշխարհին է որ դրդէ զմեզ, այլ նախանձ և սրամտութիւն՝ զի մեք անտես եղիցաք. պատիւք՝ որոց տենչայաքն՝ ոչ երբեք արժանեաց են մատուցեալք ըստ մեզ. ընդհակ ակնյայնի և սէրտութեանն բարիք՝ չգոյին մեզ բնաւ զուգընթացք. հայրենասէրս ձևանամք, և զպատիւս և զաւագութիւնս իբր եթէ սիրեմք: Համանայն ինքնասիրական թուին թագաւորութեան՝ զօրութիւն և կրօնք հրկից, բայց ոչ զսէրտութիւնն խորհի տպրեցուցանել, այլ կորուսանել զմտութիւնք: Պաշտօնեայք դրան Դարեհի չարախօս լինին զԴանիէլէ զանցանելոյ զօրինաց Պարսից, բայց ոչ օրինացն մեծվայելչութեան են նախանձախնդիր, այլ փառք և սիրելութիւն Դանիէլի դժպհի ի նոցա:

Սովին յաչալուծս նախանձաւորութեամբ լի է ամենայն յարքունիսն. զանուն ընտիր քաղաքացւոյ ցոյցս առնեն, և զյաչալուծսն ծածկեն ի նեղքոյ. զսէրտութիւնն ունին հանապազ ի բերանի, և զնանաստածութիւն ի սրտի. ընդ ձախողանս իրաց երևին թախծալից, և չլինին գործակից խորհրդոց և հայթայթանաց իշխանացն. և առաւել ընդ պարսաւն ինդան որ անոխ հասանէ նոցա, քան թէ ընդ չարիսն սարջանայցեն՝ որոց մարթի գալ ի վերայ հայրենեացն:

Այդ աւագիկ մի է ի գժնէ արդասեաց թշուառական ախտից: Ժառն քահանայապետաքն՝ զի արիւն արդարոյն անկցի ի վերայ իւրեանց և որդւոց իւրեանց. աւեր տաճարին և քաղաքին սրբոյ, խափան պատարագացն, ցրումն Յուդայ, ամենայնի կորուսաւ՝ ոչինչ երևի նոցա, միայն զի կորիցէ անմեղն:

Եւ բազում անգամ չկցէն երևեալ սրք իշխանականք՝ որ ընդ մխանաց իւրեանց փոխանակեցին զսէրտութիւնն, յեաս ընդդէմ կործանեցին զձեռնարկութիւնս փառասիրացն հայրենեաց, զի մի գուցէ փառքն այն ի նախանձարկուս իւրեանց ցոլասցին. հնարեցան պատահարս՝ որ կա-

բօզ էին տապալել զսէրուԹիւնն, որպէս զի զնախանձ ընդդէմն իւրեանց ընդ աւերակօքն Թաղէացեն, և ամենայնի դուն բացին կորստեան՝ զի զմի ոք այր կորուսցեն: ՊատմուԹիւնք ԹագաւորուԹեանց լի են այսպիսի քաղուածանօք, և գոգ գալք ամենայն տեսեալ են զգժնդակ արդիւնան: Իսկ սեռն և տէրտ նախանձ հատարակաց բաղումն՝ ոչ այլ ինչ հնարի, բայց օգտակար լինել. և առն առաքինեայ և մտերմի սէրուԹեան՝ սպատահարկուԹիւնք իւր փոխարէնք են նմա:

Առաջին ախտ իշխանաց քահանայիցն որ դուէ այսօր զՅիսուս՝ նախանձ էար. իսկ երկրորդ, անարգ օգտակնդրուԹիւն Պիղատոսի որ զնա դատապարտէ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Այո, եղբայրք իմ, յանկուԹիւն մեծ, ատուածդ մեծամեծաց, բախան է: Կայսեր կամին հաճոյ լինել, և կայս հարկ պաշտամանն ևԹե պատասէն. որ ինչ օգնէ նոցա ՚ի բարձրանալ՝ միտանի ամենայն ընդ խղճի մտաց իւրեանց, բարուԹիւն՝ որ ինքնակալ նցէ բախան իւրեանց և զրկիչ ՚ի շնորհաց արքայի, նոցա՝ անմոռ առաքինուԹիւն է: Իսկ երբև Կայսեր ոք յաչաց ելանելոյ՝ քան ՚ի կռվիելոյ մտացն խղճի զարհուրեսցի, եԹէ չև զպատիւ և զլաւուԹիւն առանն հարեալ նցէ, այնուհետև ոչ սիրտ և կամք, այլ ժամ դիպօղ պահասեալ նցէ նմա առ անհնարին ոճիր մեզս:

Զի աւասիկ ՚ի Պիղատոսի բարձն երևի իմն նախ նշմար ուղղուԹեան և բարեբարուԹեան. միտք իւր ՚ի Թիկունս կան անմեղին, Թուի ինքնին ՚ի դատ մտեալ ընդդէմ ոգխաց նորա. չիշխէ արձակել, բայց անձկայ զի ազատեսցի. առաջին աշխՀան փառասիրուԹեան, վատասրտուԹիւն: Սիրեմք զպարան և զպատշաճ և զերաւունս՝ յորժամ ՚ի

շահ կամ 'ի փառս մեզ ինչ լինել 'ի թերևս նորա, յորժամ ակնհայտութիւն ինչ հաճոյից բազմութեան, յորժամ պնդութիւն մեր՝ 'ի հանդիսի զմեզ արտացէ աշխարհասիրել, և յորժամ քաջաբար զօրավիգն ճշմարտութեան լինելով՝ մեծ ևս լինիցիմք յաչս մարդկան, քան թէ թանգուզելով և զինջանելով փառս և դրուատիս խնդրեմք 'ի պարտս մեր, և պրեպէ միշտ անափառութիւնն է որ ճշմարտութեան չափ տագով յարուցանէ:

Վատութեան զհետ գայ երկիւղ: Սպառնան պիղատոսի զցասումն կայսեր. Եթէ զդա արձակէս՝ չես բարեկամ կայսեր[1]: Յայս պատճառ բանաւոր՝ չքանան ամենայն սուրբ իրաւունք արդարութեան և յոչինչ համարին: Չէ արժանի արդարութեան և ստուգութեան թեկն ածելոյ՝ որ զբ կարօղն ինչ առաւել ինչ քան զայն սիրել: Ազնուական հոգւոյ՝ առաւել յոյժ ահագին է գնացք հակառակ պատուոյ և խղճի մտաց, քան զկայսեր բարկութիւն: Բայց սակայն, Տէր արքայ, փառաց իշխանին սպառս տանել է՝ չծառայել ախտից իւրոց. գեղեցիկ յանդգնութիւն է՝ դիմադրաւել սրտմտութեան նորա՝ քան յոխտից հաւատարմութենէ անկանել. և եթէ՝ որ իբրև զքեզդ ինչ իշխանք՝ կարօղ իցեն յուսալ 'ի բարեկամ հաւատարիմ, յայնս խնդրեացեն զինս՝ որ առ սէր իւրեանց քաջալերեալ՝ համարձակեալ իցեն երթեալ նոցա յաչս եւանել: Ըստ յաճախութեան անդադար գովեցս իւրեանց՝ նոյնչափ մեծարոյ եղիցի նոցա այր առաքինի, որ ոչ վիրաւորիցի ընդ սրտիտս բազմութեանն: Այլ այս գիւցազնական սիրասիրութիւն՝ չքնաղագիւտ է յարքունիս. 'ի բոլոր նախարարս աէրութեանն՝ որ այլ օրինս քան զկամս թագաւորին ոչ ճանաչէին՝ հազիւ հազ գտաւ Դանիէլ: Այս ճակատագիր է թագաւորաց. իշխանութիւնն՝ որ խոնէ զինքն զմարդահաճոյս, նոյն նուազ առնէ անդ զբարեկամս:

1 Յովհ. ժթ. 12:

Ա յսպէս ահ ահաձուԹեան կայսեր՝ ասելի արկանէ ըզ-
պիղատոս ՚ի յեսին սահման վատուԹեան, որ լքանէ և
սայ ՚ի ձեռս զՅիսուս: Աղաղակ մոլեգնեալ ամբոխին ոչ
լռէ առանց արեան արդարոյն. բռնուԹեան նոցա ղդէմ
ունել, բորբոքել էր զբոց խռովուԹեանն. լաւ էին անմե-
ղին կորնչել, քան ազգին առ հասարակ ապստամբել ՚ի
Կայսերէ, և հարկ է մեղօք դնել զհասարակաց բարին:

Ա յդ խակ է միշտ պատճառանքն մեծ՝ որով ղեղծանի ա-
սապանին յիշխանուԹեան իւրում. չէք անիրաւուԹիւն
զոր հասարակաց բարին ոչ արդարացուսցէ. կարծել նմին
այնպէս է, որպէս Թէ երջանկուԹիւն և խաղաղուԹիւն
աշխարհին չկարեցեն կալ՝ բայց ԵԹէ մեղօք միայն. և Թէ
կարգ և անդորր տէրուԹեանց՝ համակ յանիրաւուԹենէ
և յանօրէնուԹենէ լցեն, և առ զանձն հայրենեաց նուի-
րելոյ՝ հրաժեշտ տալ պիտոյի յառաքինուԹենէ:

Ոչ, Տէր արքայ. ասացի խակ այլուր, և ոչ երբեք շատ
լինի ասել, օրէնք աստուածային են միայն ոյժ և հաստք
մարդկային օրինաց. որ ինչ զցասումն երկնից շարժէ ՚ի
վերայ տէրուԹեանց՝ զժողովրդոյն երանուԹիւն յօրինեա-
ցէ ոչ. կարգ և օգուտ աշխարհին չլինին մեղաց արդասիք.
չար ծառայուԹիւն է հայրենեաց, յորժամ առաքինք սըր-
բոց պատուիրանաց ծառայեսցէ ոք նմա. բրել է այն գնի-
մունս շինուածոյն՝ առ՚ի շքեղազարդել զայն և ՚ի բարձունս
բարձանց ամբառնալ. խախտել է զկարևոր մոյԹան, և յա-
ւելուլ անոսի սեԹևեԹս՝ որ զկործանումն արագիցեն: Ոչ է
կալ տէրուԹեանց՝ բայց միայն արդարուԹեամբ օրինացն
որ կառուցին զնոսա, և յոլով Թագաւորս կործանեալ է
անիրաւուԹիւն, այլ ոչ երբեք հաստատեալ զգահս. պաշ-
տօնեայք՝ որոց ըստ չափ Թագաւորական իշխանուԹեան
էլեալ լցէ, տկարացուցեալ են միշտ զայն. չէք նոցա ամ-
բարձեալ զտեառն՝ բայց ԵԹէ յաւերակս աշխարհացն.
և նախանձ նոցա, ԵԹէ տկն յօրինաց տէրուԹեանն լցէ
ածեալ, անդ և՛ԵԹ շահատոր եղեալ է Կայսեր:

Արդ խանդանք իշխանաց քահանայիցն հալածէ այսօր զՅիսուս, խնդիրք օրհասիկդրութիւն Պիղատոսի մատնեալ սայ ՚ի ձեռս, իսկ առաջ եղեւնաւոր անփութութիւն հե-
րովդի՝ արհամարհ իմն և այպն կատականաց առնէ:

Ո՛հ. և որո՞ւմ բախտի ակն ունել կարէր Աւետարանին ուսուիմն երևեալ յամբարտաւան և ՚ի հեշտախտասէր ա-
պարանն անդ: Ձնիք ինչ ՚ի արբուհեան ուսմանն՝ որ ոչ մարախեկ ընդ հպարտութեան և ընդ հեշտութեան, և բը-
նակչաց արքունեացն չնիք ինչ մեծ քան զհեշտ ցանկութիւն և քան զփառս: Եթէ ոչ ընդ սովին դրօշիւք լինիցիս դու անդ յանդիման, առ պարտաւադէտ ոք և ոսոխ կալցին ըզ-
քեզ կամ արհարհեացեն իբրև զօտարասեռ ոք, և իբրև զնորեկ ոք որ գայ բերէ ՚ի նոսա լեզու իմն անլուր և զնացս օտարոտիս:

Մեք ինքնին, ՚ի քրիստոսանուէր բեմս յայսոսիկ՝ որոց միայն է տակաւին խօսել առ նոսա զՔրիստոսութեան լե-
զու, գամք յաճախ այսր՝ մեղիւք զատուածծական բար-
բառն, պատկառել յորոց պարտէաքն մարտ դնել, մարդ-
կեղէն իմաստիւք մեղմացուցանել զխստութիւն պատուի-
րանացն սրբոց, մինչեւ համարձակեալ ընդ ախտս նոցին կռուել՝ գրեթէ վաւերական առնել զմտաստաձութիւնս նո-
ցա, և պատճառանօք չատրտուցանելոյ զնոսա ՚ի Քրիստո-
ւթենէ՝ անպիտելի նոցա զայն առնել:

Հերովդի լուեալ զաքանչելիսն քարոզեալս զՅիսուսէ՝ ակն ունէր նշանս ինչ տեսանել գործեալս ՚ի նմանէ, և սո-
վին յուսով ուրախ եղև ընդ գալուստ նորա յարքունիս իւր. ոչ Քրիստոսութեան ինչ փոյթ էր այն, այլ անտաք ընդվայրաքննութիւն՝ որում կամէր գտանգիտ լինել, և զՅիսուս ՚ի հանդէս ածել զբօսանաց իւրոց և դատարկու-
թեան: Զի իշխանք և մեծամեծք յամենայն ժամանակի հանդէս իմն զբօսուցիչ արարեալ են զկրօնսն. մեծասքանչ և ահաւոր խորհուրդք՝ արուեստական նուագացն քաղցրա-
ձայնութեամբք բերկրատաստակք՝ ինչոյս իմն աշխարհա-

կան լինին նոցա ՚ի սնափառութեն. բայց ՚ի զգայական զուարճութենանց ոչ այլ ինչ խնդրեն՝ եւս և ՚ի պարտս անդ հոգևորական պաշտամանն, որ դիմամարտ նոցին կարգեալ էն. ՚ի հաճոյս նոցին՝ հարկ հասանէ կրօնից փոխ առնուլ զհրճուանս և զամենայն կազմութիւն աշխարհի, և հրեշտակավայելուչ հանդիսին՝ ակնահաճոյ նոցին լինելոյ:

Ընդունայն և վայրապար հարց և փորձս առնէ Հերովդէս ՚ի Յիսուսէ. Հարցանէր ինա բանիւք բազմօք[1]. հարցուածք՝ յորս հպարտութիւն և անկրօնութիւն է առաւել քան սէր ճշմարտութեան, և լինին ՚ի պարծիլ մանաւանդ ընդ ատրակուսանս խնդրականացն՝ քան յանկեղծ փափաքանայ փարատելոյ զնոսին. հարցուածք՝ որ յոչ ինչ յանգին, բայց ՚ի հատուցանել զմեզ յանհատանութեան, և բայց ՚ի կուրութենէն՝ յորմէ յառաջ գան՝ չիք ինչ ՚ի նոսա մըտադրութեան արժանի. հարցուածք՝ յորս զյաւիտենական ճշմարտութեանց փրկութեան բանք լինին խթիւ զկեղծաւորութեան և զոչ կարևոր քննութեանց, զորս ՚ի զբաղումն և ՚ի խոյզ և ՚ի խնդիր մարդկան տուեալ է Աստուծոյ. և որ զյաւիտենից երանութիւն կամ զթշուառութիւն սահմանելոցն է՝ այնպէս լինի հայել ՚ի նա, որպէս ՚ի խնդիր ինչ անխաբէր, յորում ստոյ և անստի կերպարանք ճշմարտութեան երևեցին, և ընտրութեան տեղի կայցէ. ապա զարձեալ հարցուածք, որ այսպանութիւն է մանաւանդ հաւատոյ՝ քան պատկառոտ հարց և քնին ճշմարիտ հաւատացելոյ:

Յայդ աւադիկ առնուն ՚ի պէտս զՅիսուս բազումք ՚ի մեծամեծաց. Հարցանէր ինա բանիւք բազմօք. հարցուածք անընդատք զկրօնից, զՅիսուս և զվարդապետութիւն իւր՝ առնեն դատարկ և անոտի նիւթ խօսից և հակառակութեան, փոխանակ յուսոյ և պաշտամանն իւրեանց առնելոյ զնա

1 Ղուկ. ԻԳ. 9:

պատճառս. սեղևկանան հաւատաւեաց հանդերձելոյ կե-
նացն և նորոյ աշխարհին՝ որ մնայ մեզ յետ ելից, և ոչ
նովին մտադիւրութեամբ՝ որով լսէին արդեօք զըրոյցս ան-
ծանօթի ուրուք թերևս և առասպելեալ նահանգի, ուր
մահկանացուի ուրուք չկայէ հասեալ. զգալմանագործ ի-
րացն արդեանց՝ որ գհարցն կրօնս աներկբայ և ստուգա-
ծելէն լինել ցուցանեն՝ նովին երկմտութեամբ ձառեն, ո-
րով զգուշնաքեայ ինչ խնդրոյ պատմութեան անյայտ մնա-
ցելոյ. և անյօժար անխնամ օրինակաւն՝ որով խնդրեն ու-
սանել գհաւատոյն, յայտ առնեն թէ բնաւ իսկ թափուր
են յայնցանէ:

Վասն այսորիկ խոր ինն լռութիւն ընդդէմ դնէ Յիսուս
զրահնդիր հարցուածոցն Հերովդի: Արժանի ոք պատաս-
խանւոյ լինի ճշմարտութեան, յորժամ առ սէր խելա-
մտութեան հարցանիցէ ինչ. և որ սահմն խօսին և վիճին
զկրօնից, ընկեալ է այն յաձախ՝ի սրտից նոցա: Այո՛, եղ-
բայրք իմ. յորժամ պարզ մտօք խնդրիցէ ոք զհաւատս,
անդէն իսկ գտեալ է զճշմարտութիւն. ՝ի գիւտ նորին չէ
հարկ փորել կամ եղանել յանդունդս սանդարամետաց, և ոչ
վերաթռիչ քան զօդս լինել. այլ լսել և եթ նմա՝ի ներքս
՝ի մեզ: Սկիզբ անախելդ և հզո՝ լսէ խոկոյն զձայն նորա.
յերկուանք և խոյզք յամբարհաւաճութենէ շարժեալք,
փոխանակ մերձեցուցանելոյ զայն առ մեզ, կափուցանեն
զաչս առ լոյս նորա. կուրացուցանէ նա զհանճարեղս և
զմեծամիտ դասաւորս խորհրդոց իւրոց, և նոցա միայն
յայտնէ՝ որ պարծին նորա աշակերտ լինել: Հնազանդու-
թիւն ազբիւր է լուսոյ. ձարտարամտել ոք կամելով՝ ա-
ռաւել կս մոլորի. և որչափ երկմտիցէ ոք, այնչափ կս ա-
ռաւել թոյլ տայ Աստուած աձել տարակուսանացն. և-
լեալ գամ մի բանն ըստ չափ, ոչ ինչ գտանէ այնուհետև
իւր խափան. ըստ յառաջադէմն խաղալ՝ յաձախէ փո-
րել իւր խորխորատս: Այսորիկ ազագաւ հերձուածողու-
թիւն՝ ՝ի սկզբան անդ ելից երկնչոտ, երթալով երթայ և

մեծանայ, և յընթացս նը յանչափութենէն հատանի: Զա-
ւակքինն 'ի մէջ մեր ոսոխ կայր նա [1] կարծեցեալ զերծմանց
նեթ պաշտամանն. իսկ ապա ընդ պաշտամանն ևս 'ի կռիւ
եկաց. բողոք բառնայր զմինչ՝ թէ նուաստացուցանեմք
զՅիսուս 'ի պատուոյ միջնորդութեանն, իսկ ապա ծնաւ
աշակերտս՝ որ յաստուածութենէն իսկ և 'ի յաւիտեան-
կան ծննդենէն արկին զնա. նորոգել կամէր զկրօնս, հուսկ
ուրեմն հաճ և հաւան յանձն առ ընկալաւ զամենեսեան,
կամ լաւ ևս ասել՝ չկալաւ և չծանեաւ և ոչ մի. կամէր
պինդ ունել զձայն առաւուածեղէն տաւիցն, և այն ձայն
գտաւ նման ձայն մահու, և մարգարէքն նը տուաք՝ հանին
անոսկ նախանձ իմն մոլեկան և ցնորս երազոց զհանդերձե-
լոցն, զորս եղք նրացն առեցին, և ինքն իսկ ամաչեաց ընդ
այն: Ոչ, եղբարք իմ. հաւատք միայն են կեցո անշարժ՝ որ
զմարդկան միտս պինդ պահէ. եթէ անդր ըստ այն անցա-
նիցէք, չեք ձեզ ճանապարհ արահետս. մտանէք յերկինս
խաւարին և 'ի առուերայ մահու մառախլապատ, ուր
ցնորս եղեռ առանիցէք՝ զչար ծնունդս ապրամիջին. և քան-
զի անսանձ է այնուհետև բանն, չեք և մոլորութեանն չափ
և սահման:

Զի աւասիկ հարցասիրձք հերովդի ածեն զնա 'ի ծաղր
հատուկանաց առնել զՅիսուս. Արհամարհեաց ինա ե հեր-
դէս [2]. և արքունիքն բոլոր ըստ նմին օրինակի առնեն, հան-
դերձ խորհ զբսկանօքն: Առաքինութիւն ամենևին անա-
րատ՝ անհաճոյ եղեալ թագաւորի՝ արժանի լինի նոյնհե-
տայն մոռացութեան և քամահանաց ևս պաշտօնէից դրանն.
նոցա միշտ գոգցես ախորժակ իշխանին յօրինս ճշմարտու-
թեան և քաջութեան է. ամենայն կրօնք նոցա՝ որպէս բա-
նից կարգ է ասել՝ յերեսս իշխանին գրեալ կայ. անդ է օ
րէնք նոցին և աւետարան. և 'ի պաշտամանի իւրեանց չեք լինչ

1 Հերձուածն լութերական և կալւինական:
2 Ղուկ. ԻԳ. 11:

հաստատուն քան զհաճոյս և զանկուածիւնս կուռցն այնմիկ՝ որում երկիր պագանեն:

Վասն որոյ, Տէր ալքայ, առաջին փոյթ Թագաւորացդ՝ ի գահուն յոր նստուցեալ ես վնասա Աստուծոյ, լինելոյ ես մեծարոյ ընծայեցուցանել զկրօնս, զգուշացեալ յամենայն ի գոյն լինէ և թեթև խաղոյ, որ բիծ լինէ դնիցէ փառաւորութեան նորա: Կրասերագոյն ամբ տիոց մեծափառ հաւս հօր քոյ չտեսին զնա երբեք յօրինաց աստի օտարացեալ. այն էին նորա օրէնք ընդ ամենայն ժամանակս և տեղիս. մեծարանք իւր առ կրօնս հարց նւրոց՝ կարկեցոյց ի սպառ առաջի իւր զամպարշտութիւն. բարբառ իւր եղև միշտ բարբառ առաջին քրիստոնէից Թագաւորի, այս ինքն ես պատկառելի բարբառ հաւատոց. յանցանք՝ որում միայն ոչ ներէր, անկրօնութիւնն էր. ամենայն լինէ նմա ի մոլորեալ յայդմիկ առանց խաղոյ էր. և ոչ մի լինէ զուարթութիւն և ոչ զբօսանք համարձակեցոյց բնաւ առաջի նորա զինքըր լինէ ծաղր զաստուածպաշտութեամբ նախնեացն իւրոց. կրօնասէր եղեալ և ի զուարճութիւնս անդ նորահասակ և ծաղկաւէտ ալքրունեացն՝ ոչ լինէ երբեք տուժեցաւ հաւատոք յանհրաժեշտ քրքուանոց և քրքրանոց երիտասարդութեան Թագաւորաց: Ցիրիդ այդմիկ, Տէր ալքայ, ամենայն լինէ մեծ և կշռաւոր լինի ի բերան Թագաւորի. թեթևութիւն լինէ լուկ՝ համարձակութիւն տայ ստամբակութեան ամպարշտութեանն, կամ նոր ամպարիշտս յորդորէ. հաճոյ լինել կարծի զինեամբք եւեղծան առնելով, և կատակք խչնանին՝ հայհոյութիւնք լինին վաղվաղակի ի բերանս զրանկացն:

Այդ են սխալքն՝ զորս մեծամեծք կրճիմ արկանեն ձըշմարտութեան, որք և ի մահ գաստապարտեն զՅիսուս: Ո՞ տայր լինէ յանգ հանել և ցուցանել ձեզ զաւազացն կապիս գաստապարտեալ մահուամբն Յիսուսի:

Աւաղ, և իցէ մի ևեթ յայնցանէ՝ զոր ոչ յամօթ արտացէ խաչն իւր: Մեռանի առ ի վկայելոյ ճշմարտութեան,

որոյ և է առաջին վկայ. իսկ մեծամեծք երկնչին ի չքմեղ-
ռութենէ, և հաղիւ երբեք մերձենայ այն յաճռռա նոցա:
Նա թագաւոր է առ ի զոհ լինել ժողովրդեան իւրոյ. իսկ
փառամոլութեան իշխանաց և թագաւորաց յաճախ զոհ
են ժողովուրդք: Նշանք իշխանութեան նորա, գաւազան իւր
և թագ, են զործիք չարչարանաց նորա. իսկ մեծամեծք ի
պէտս միայն անիրաւ հաճոյից իւրեանց վարեն զիշխանու-
թիւն իւրեանց: Նա ի վիշտս անդ և ի ցաւս իւր՝ յօդուտ
մեր վաստակէ, իսկ մեծամեծք ի զրպանս իւրեանց՝ խոր-
հելոյ անգամ չառնեն արժանի զանձկութիւնս և զառատ-
պանս եղբարց իւրեանց: Նա փոխանակ մեր չարչարի, իսկ
մեծամեծք՝ ամենեցուն վասն իւրեանց չարչարել պարտ
համարին: Գայ նա՝ յամենայն ժողովրդոց կազմել մի ժո-
ղովուրդ, հաշտեցուցանել զազգս ամենայն, զամենայն պա-
տերազմ լռեցուցանել. իսկ զրաիաւորութիւն մեծամեծաց
բորբոքէ զայն և չառնէ զրաւ յերեսաց երկրի: Ջինչ և
առացից. նա թագաւոր է միայն՝ զի փրկիչ է, նշանակք նո-
րա՝ երախտիք իւր են, վսեմաւորութիւնք նորա՝ զանազան
վաստակք սիրոյ իւրոյ առ մեզ, մեծութիւն նորա՝ վասն
մարդկան, ինքն ողջոյն ի մեր պէտս է. իսկ մեծամեծք առ
ոչինչ դրեն զայլս, և վասն իւրեանց և՛ եկեալս յաշխարհ:

Թագաւորաց օրինակ մեծ՝ այդ է ահա, Տէր ալքայ: Ի
դիտակէ խաչին ուսուցանէ զմեծամեծս և զիշխանս աշխար-
հի. Հայեցարուք, ասէ, և ըստ օրինակիս ըստ այսմիկ ա-
րասջիք. լքի ես զարքայութիւն իմ, և խոնարհեցայ ի վա-
ռաց խոց փրկել զծառայս իմ. դուք վասն նոցա միայն էք
թագաւոր, և ամենայն հոդ թագիդ լինելոց է յերկանկու-
թիւն նոցին: Այո՛, Տէր ալքայ, թագաւոր է նա՝ որ այդ
զկեանս իւր ի վերայ ժողովրդեան իւրոյ, և ի ձէնջ ըզ-
սերդ և՛ն խնդրէ առ ձեզն. թագաւոր է՝ որ տիրելոց է
աշխարհի՝ առ ի շահել միայն զայն Աբարչին. վասն նորա
և՛ն պատերազմեցարուք, և միշտ ձեր լեցի յաղթութիւն.
թագաւոր է՝ որ զնաչն կազմէ իւր աթոռ և տեղի ցաւոց

և չարչարանաց· ապէ դուք ՚ի ձերն իսկս և ՚ի տեղի հոգոց և աշխատութեանց հայեսջիք, և մի իսկս ՚ի գահոյս հեշտութեանց և փափկութեանց· Թագաւոր է՝ որ ՚ի սիրտս միայն կամի Թագաւորել· Իշխանութեանդ ձերոյ այն իցէն փառք մեծաշուք՝ եթէ վարեսջիք նովաւ ՚ի ժառանգել զսէր ժողովրդոց ձերոց· Թագաւոր է՝ որ պայ բերել մարդկան ըղխաղաղութիւն, զՀշմարտութիւն և զարդարութիւն, և ոչ այլ ինչ խնդրէ՝ բայց երանելիս առնել զնոսա· Տէր արքայ, Թագաւորեա ՚ի մեր երջանկութիւն, և Թագաւորեացես ՚ի քոյդ:

Փրկիչ իմ, այսօր սկիզբն առնես և դու Թագաւորել ՚ի վերայ հանուրց ազանց· վերջին հեծութիւնքդ՝ նուիրականի իմն երախայրիք են Թագաւորութեանդ, և խաչիս նուաճելոց ես զախերեղս: Մեծդ Աստուած, նա հաստատեսցէ զարքայութիւն պատուական մանկանս, զոր ասաս առ ոսս քո տեսանես· կրօնքն սուրբ՝ օրհնեսցէ զնաւակաւխս նորա և պահպանեսցէ զաւուրս նորա· նախնիքն իւր մեծաշուք՝ բազմեցուցին զայն ՚ի գահ ՚ի միջի մերում, նոյն ինքն պահեսցէ ՚ի նմա զմանուկս վեհափառ, որում չիք ինչ տակաւին մատուցանել քեզ՝ բայց զանմեղութիւն իւր, զՀարցն Հաւատս, զաղէտն որ զարքայական որդեանն պատահեցին, և զսիրայօրդոր խանդաղատական գորով իւրոց հնազանդելոցն:

Կեցո զորդի սրբոց բազմաց և պաշտպանեա Հաւատոցն սրբութեան· նոքա երբեմն զմահ ընդ կեանս խառնեցին և ՚ի բաց եդին զիթագ իւրեանց, երթալ Թափել զժառանգութիւն քո [1]· պահեա մեծապէն մանկանս զիւրն, զի կարօղ լինիցի յաւուր միում հովանի և պահապան լինել ենկերեցւոյ, զոր առ քեզ Հայր այսօր ՚ի ժառանգութիւն արեամբդ քով առացեալ· դարձան եկիր նոքա բարձեալք զսրբանուէր աւարտանան խաչին· աւանդն սուրբ, որով

1 Ջնբուսաղէմ՝ խաչակրացն պատերազմօք:

Ձոխացուցին զԹագաւորեալ քաղաքս զայս, բարեպաշտութեան հարցն պատուական առհաւատչեայն, Ճեպեցէ՛ք՝ մանաւանդ այսօր՝ զընորհս քո՛ի Թիկունս օգնականութեան սորա: Մի՛ Թոյլ զժառանգ այնչափ Թագաւորացդ՝ որ առաջին գոան վրէժխնդիրըք անուանդ քո և փառացդ: Սուրբ բարկութեանդ խնայեաց՛ի սա՝՛ի հարուածանդ վերհասիւս առհմին իւրոյ. տո՛ւր մեզ, մեծդ Աստուած, վայելել՛ի բարերարութեան քումմ, զոր այնչափ ծանրագին գնեցաք. բարեբախտ նշխարս այս բազմաթիւ հոյակապ գլխոց՝ զորս տեսաք անկեալս միահաղոյն, դարման լեզի կորստեանց մերոց, և սրբեսցէ զարտասուս մեր. լցո զսա զմիայնս՝ ամենայն ընորհօքդ, զոր յանապատ դանձդ պահեալ էիր այնչափ ի՛շխանաց, որ Թագաւորելոց էին փոխանակ սորա, և որոց անկ խակ էր Թագն. միացո՛՛ի սա՝ զոր ինչ բաժանելոց էիր ընդ այլս. և արքայութիւն իւր զանդակեսցէ զամենայն օրհնութիւնս և զաղգի ազգի երանութիւնն, որոց ակն ունէաք՛՛ի միոջէ միոջէ Թագաւորութեանց արքայազանցն՝ զորս օրհաս տարաժամ՛ա՛ռ տապար՛՛ի մէնջ. որոց անշուշտ ոչ զլացար զԹագն երկրաւոր՝ յոր կարգեալն էին՛՛ի բնէ, բայց առ՛՛ի հիւԹել՛նոցս զյաւիտեանական յերկինս. Ամէն, եղիցի՛:

ԿԱՐՈՋ Ժ

ՅԱԻՈՒՐ ՏՕՆԻ ՋԱՏԿԻՆ

ՅԱՂԹԱՆԱԿ ԿՐՕՆԻՑ

Մերկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս, յայտ յանդիման խայտառակեաց՝ նշաւակեալ զնոսա յանձին իւրում՝ ի յարութեան իւրում:

Կող. Բ. 15:

ՏԷՐ ԱՐՔԱՅ,

Ընդունայն յաղթանակք աշխարհակալաց՝ տեսիլ ինչ ևեթ էին ամբարհատաճուճութեան, արատասուաց, յուսահատութեան և մահու, զի մարդկային ախտից էին յաղթանակ տխրալի, և զհետ իւրեանց ոչ այլ ինչ թողուին՝ քան զչարաշունչ հետս փառամոլութեան յաղթողացն, և գերութեան պարտեալցն:

Յաղթանակ Յիսուսի այսօր՝ ազգացն իսկ նուաճելոց յաղթանակ է խաղաղութեան, ազատութեան և փառաց:

Յաղթանակէ Թշնամեացն՝ առ ի վերկել զնոսա և հաղորդս առնել իշխանութեան իւրում: Յաղթանակէ մեղայ՝ ջնջեալ և բեւեռեալ ի խաչափայտին զմահահրաւէր ձեռագիրն մերոյ դատապարտութեանս, և բղխեցուցանէ անտի ի վերայ մեր աղբիւր բժշկութեան և շնորհաց: Յաղթանակէ մահու՝ առ ի հաւատարիմ առնելոյ մեզ զանմահութիւն:

Ա՛յս են փառք ստուածպաշտութեան. զուցանէ նախ զնախատինս և զչարչարանս խաչին, այլ յաղթանակ է այն չքեղ, և հանդէս մեծ ընծայեալ երկրի՛ ի մարդոյն: Ձնիք ինչ յաշխարհի մեծ քան զառաքինութիւն, այլ ամենայն պէս պէս փառք՝ կամ՛ ի դիպաց են արգասիք, կամ շահաքորթութեան և մոլորութեան մարդկան դիւաք. խակ սա՝ ՀԱրարչէն միայն է և յիւրաքանչիւր անձնէ: Թագաւորաց և իշխանաց սա ամօթ համարի, և սակայն սուաւ ևեթ է նոցա մեծ լինել, զի սուաւ ևեթ կարեն յաղթօղ լինել թշնամեաց իւրեանց, կարեաց իւրեանց և մահու խակ գըլխովին:

Յայտ արասցուք զՔրիստոսութիւնս զայսոսիկ՝ որ հաւատոց՛ ի մեծ փառս են, և նուիրեսցուք՛ ի պարծանս կրօնիցդ զնորատ աւուրս վերջնոյ, որ է օր մեծ յաղթանակացն Յիսուսի:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԻՐ ԱՐՔԱՑ,

Իշխանաց և աւագանեցն փառաց՝ երեք են երկիւղալից վտանգք՛ ի վերայ երկրի. նախանձուն ժանտութիւն կամ յոգոգութիւն բախտին որ նեմեսցուցանեն զայն. ախտք՝ որ յանարգութիւն ի՛ջուցանեն. և մահ՝ որ թաղէ զայն, և՛ ի պարապաւ փոխէ զնոսոն սըտիանան նազաբանիչս նորին:

Կրօնիք ևեթ յամրի պահեն զնոսա յերեսաց անզերծ վտանգիցդ, յորս նաւաբեկ լինին քնաւ խակ զրեթէ փառք մարդկեղէն. նա բարձր առնէ զնոսա քան զպատուհարս և զմխիթարս, հնազանդէ նոցա զկարիս իւրեանց, և երաշխաւորէ նոցա յեա մահու զփառան՝ զոր թերևս առ կենդանեաւ նոցին զըլացեալ էր չարութիւն: Ա՛յս է այսօր յաղթանակ Յիսուսի, և այս մեծապանծ օրինակ՝ զոր առաջի դնեմք աւագաց երկրի:

Ամենայն փառք սրբութեան նորա և աքանչելեաց ոչ ասպ-
րեցուցին զնա, և անմեղութիւն նորա թուեցաւ անկեալ
ընդ իշխանութեամբք խաւարի որ ընկճեցին զնա: Բայց
յարութիւն նորա կապէ՛ի յաղթական կառս իւր զիշխա-
նութիւնս և զպետութիւնս, փառք իւր ծագեն յաղթա-
նակաւ՛ի միջոյ անսի անարգանաց իւրոց, խաչ իւր նշան
փայլակնացայտ լինի յաղթութեան իւրոյ. Հրեշտակն
մերժեաց զնա, ասելովք ամենայն երկիր պագանեն:

Այո՛, եղբարք իմ. որ զինչ և լցէ փառք մեծամեծաց՛ի
վերայ երկրի, երկիւղ է նմա յամենայն ժամ. նախ՛ի չա-
րութենէ նախանձու՝ որ հնարի ազօտացուցանել զնա:
Եղեւ. այս ճշմարտութիւն չունի լինչ պէտս հաւատոցդ՝
մանաւանդ յարքունիս: Ո՞ր այն մեծապայծառ կեանք ի-
ցեն՝ յորում չգտանիցին արատք. ո՞ր յաղթութիւնք՝ ո-
րոց մի՛ի դիմաց նոցա չելցէ նուաղ՛ի յաղթօղն. ո՞ր այն յա-
ջողութիւնք, յորս կէսք չգրեսցեն դիպուածոյ զնոյն անցս՝
զոր համարին այլք՛ի պարծանս ճարտարութեան և հան-
ճարոյ. ո՞ր այն դիւցազնական հանդէսք՝ զոր ոչ անգոռնի-
ցէ ոք՝ խծբծելով՛ի նոսա վաւթար և գեռնաքարշ միտս.
հակիրճ, ո՞ր իցեն դիւցազունք՝ զորս չարութիւն, և թե-
րևս ճշմարտութիւն իսկ, ոչ՛ի մորդիկ փոխեսցէ զնոսա:

Ցոլքան զայս ևեթ փառս ունիցիս՝ որում աենչայ աշ-
խարհ, աշխարհ քեզ՛ի հենդնի կացցէ. յաւել անդր զա-
ռաքինութեան զփառսն, աշխարհ երկնչի՛ի նմանէ և փախ-
չի, և սակայն աշխարհ ինքնին պատկառէ յերեսաց նորա:

Ո՛չ, Տէր սրբոյ. Թագաւոր երկիւղած Աստուծոյ և
խնամատուն առաքինութեանց ժողովրդոյ, չունի լինչ երկիւղ՛ի
մորդիանէ: Փառք իւր միայն յարուսցեն Թերևս նախան-
ձոտս, բայց բարեպաշտութիւն իւր մեծարոյ ընծայեցուս-
ցէ և զփառսն: Գործոց իւրոց գտանիցին պարտաւադէտք,
բայց բարեպաշտութիւն նորա չատագով կացցէ գնացելոցն:
Յաջողուածք իւր պրպռեսցեն զնախատինս կամ զկասկած
դրացեացն, նա իւրով բարեպաշտութեամբն լեցէ նոցին

ապաւէն և իրաւարար : Ընդեցաք նորա ոչ երբեք զոք յերկեսայս արկանիցեն, զի արդարութեամբ միշտ յայտնի առնիցին : Ոչ կացցէ ոք ՚ի խեթի յերեսաց փառասիրութեան իւրոյ, զի հանապազ յիրաւունս քարոզեսցի փառասիրութիւն նորա : Ոչ դրդեսցէ յաշխարհ իւր զպատուհաս պատերազմի, զի մեզս համարեսցի ածել զայն յանիրաւի յերկիրս օտարին : Հաշտարար եղիցի ազգաց և թագաւորաց. քաւ ՚ի նմանէ պատահել ընդոստ ՚ի լքուածն նոցին և ՚ի զօրանալ իշխանութեան իւրոյ ՚ի վերայ երկպառակութեանց նոցին և անօրութեան : Համեստութիւն իւր լիցի ամրագոյն պատուար աչրութեան իւրոյ. չեցեն նմա պէտք պահապանաց՝ հակիւ առ դուրս ապարանիցն. սիրոք հպատակաց իւրոց պատեսցին զաթոռոնէն, և փոխանակ վըէժինդիր սուսերաց շուրջ փայլակինասցին : Ուամպէտ կացցէ սասան իշխանական ՚ի հնազանդել. այն հրամանք անվրէպ կատարին՝ զոր աչրն ՚ի լուծն ածէ. և անբռնադատ հպատակութիւն՝ լիցի անպարտունչ : Ամենայն զօրութիւն իւր հաշիւ թէ տէր առնիցէ զնա ժողովրդոց իւրոց, իսկ առաքինութեամբն՝ թագաւորաց անգամ եղիցի միջնորդ դատաւոր : Այսպիսի ոք էր, Տէր ազբայ, ի նախնեացն քոց սրբոց [1], զոր հռչակաւ պատուէ Եկեղեցի, և պաշտպանումն համարի թագաւորութեան քում : Թագաւորք դրացիք իւր՝ քաւ ՚ի չյաչալելոյ զիշխանութիւն իւր, երթեալ ապաւինէին յիմաստութիւն նորա, և զպայքարս իւրեանց և զինդիրս ՚ի նա ապաստան առնէին : Առանց յաղթօղ լինելոյ նոցա՝ էր նոցա դատաւոր և իրաւարար, և առաքինութիւն սուկ՝ ապէր նմա ընդ համօրէն Եւրոպէ իշխանութիւն աներկիւղ և շքեղ քան զամենայն յաղթութեանց : Հարստութիւն՝ ծառայս և գերիս միայն պատրաստէ մեզ, առաքինութիւն ևթէ սիրացուցանէ զմեզ ՚ի վերայ մարդկան :

1 Սուրբն ՚ի Թագաւորս Լուդովիկոս :

Ա՛յլ որ գեր՛ի վերոյ կացուցանէ զմեզ նախանձու՝ կը-
ծոնքն, նոյն և պատահարսդ ամենայնի առնէ անըմբռնե-
լիս: Ա՛յ, Տէր արքայ, մեծամեծ յաջողութեանց կատա-
ծելի են միշտ ձախողանք: Առատաձ, որ չներէ սրտից մե-
րոց անդ կապել՝ ուր չեն գանձք մեր և երանութիւն, զգե-
րատաիճան կէտ բարձրութեան մերոյ՝ առաջին սանդղա-
ման առնէ մեզ՛ի վայրկեան: Փառք մարդկան եղեալ վերա-
յեալ յիւր՛ի մեծ բարձրութիւն, զոզջեա իմն ժողովէ
զնոսա: Պատմութիւն աշխարհաց և տէրութեանց
ոչ այլ ինչ է՝ քան թէ զոյգք ակարութեան և յողդող-
դութեան մարդկեղէն էրից. պարագայք ամաց և դարուց
բաժին եղեալ թուին յաջողուածոց և ձախողանաց, և
արդ իսկ տեսաք զերկար և զպերճապայծառ արքայութիւն
Թագաւորութեան [1] յարկածս և յաղէտս վախճանեալ:

Բայց ասատուածասէր և մեծախառն հայր հատուն քոյ՝
յաւերակս անդ մարդկային փառաց գիտաց կանգնել իւր
գյաւէտ պնդակազմն և զանմահական: Ամենայն ինչ շուրջ
զնովս թուէցաւ տապալեալ և խրթնացեալ, բայց յայն-
ժամ տեսաք մեք զնա յայտանկատ. հաւատոցն պարզմը-
տութեամբ և բարեպաշտութեանն պնդութեամբ քան
աշխարհակալութեամբքն մեծ գտեալ, յաջողութիւնք իւր
ծածկեալ էին՛ի մէնջ զհնմարիտ փառս նորա. զբարեդէպ
ելս էրացն ևեթ տեսեալ էր մեր, յայնժամ զառաքինու-
թիւնս նորա տեսաք զամենայն. հարկ էր ապեհից իւրոց
հաւատարել բախտին, զի եռեւս անկեալ զնովս զամենայն
Թագաւորազունս՝ զհաստատանս աթոռոյ իւրոյ, և զկեանս
քո ևս պաշարեալ՛ի վտանգ, զայդ կեանսդ՝ որ խանդաղա-
տելին է ազգիս, և միայն գրաւական ողորմութեանցն Ա-
տուծոյ՝ զոր ունացոյց ժողովրդեան իւրում. հարկ էր կալ
նմա իւրով միայն առաքինութեամբն, զի երևեսցի որ ինչ
էրն բովանդակ. չնաշխարհիկ յաջողութիւնք իւր ժառան-

1 Իմա զԳալլիոյ, մօտ՛ի վախճան մեծին Լուդովիկեայ:

պեցուցին նմա զանուն Մեծ, միաք դիւցազնայինք և քրիս-
տոսերկինք ՚ի տառապանս՝ հատուցումն արարին նմա զա-
նուն զայն և զպարծանս՝ ՚ի դարս դարուց յաւիտենից:

Ոչ, եղբարք իմ, չինչ բայց ՚ի կրօնից՝ որ պատահա-
րաց վեհագոյն գործիցէ զմեզ, այլ ամենայն սկզբնապատ-
ճառք բարւոյ՝ ՚ի ձեռս հիքուԹեան մերոյ Թողուն զմեզ:
Բան, խնամատարուԹիւն, խոստանայր հատուցումն
իւրում խնամանոյն, այլ ոչ տայր. վերջին ևեԹ տպաւէն
վհատուԹեան ոգւոյն՝ պնդուԹիւն հպարտուԹեանն էր,
և անոսի միԹիԹարուԹեան հեԹեԹանք այն էին՝ պատճա-
ռել յարհամարհուԹիւն չարեաց՝ որոց չէր կարի յաղԹե-
լոյ: Վէրք սրտի ոչ ուրէք գտանէ բժշկուԹիւն՝ եԹէ ոչ ՚ի
սրտի. արդ կրօնք ևեԹ արկանեն ապեղանի ՚ի սիրտ: Զրա-
բան պատուէրք խնամատարուԹեան՝ ծաղրալից լինի ան-
զգայուԹիւն քարոզէին մեզ, որպէս այն ԹէԹ կարօղ է-
վեաք շինուցանել զբնաւորական կիրս՝ առանց զբնու-
Թիւնն ևս շինուցանելոյ. իսկ հատուած՝ Թողու մեզ զզգա-
յուԹիւն, բայց հնազանդս կատարէ զմեզ. և այն իսկ զգ-
գայուԹիւն ՚ի պարծանս է հնազանդուԹեանս. սրբական
խնամատարուԹիւն մեր՝ չէ անզգայ վշտաց, այլ յաղԹօղ
է ցաւոց: Բառնալ ՚ի մարդկանէ զզգայուԹիւն կրից՝ զրկել
է զնոսա ՚ի փառաց արԹուԹեան. և հեԹանոսական խնամ-
ատուԹիւն՝ յայն սակս անզգայ կամէր առնել զնոսա, զի
չկարէր առնել հպատակս և համբերօղս. ուստի անէր հը-
պարտուԹեան Թաքուցանել, և ոչ ԹէԹ պարտել զզգա-
յուԹիւնս իւր և զսիրտուԹիւնս. Թատերական քաջա-
զնեան կազմէր, որոց խնամատք մեծամեծք՝ վասն հանդիսատե-
սացն էին, և քան յատուկնուԹիւն ժուժկալուԹեան՝ տեն-
էայր մանաւանդ ՚ի փառս ժուժկալ երևելոյ:

Իսկ հատուած Թողու մեզ զաննեայն պարծանս արու-
Թեանՙ և զպատիւ իսկ նորին չկամի ունել առաջի մարդկան.
զկիրս բնուԹեանՙ Աստուծոյ միայն նուիրէ, և զոհին ոչ
զոք կամի վկայ՝ բայց որ կարողն է միայն լինել վարձահա-

ասէր. նոյն ինքն Աբեթ ասէ հաստատութիւն այլոց ամենայնի առաքինութեանց, զի նա միայն հերքէ ՚ի նոցանէ զամբարտաւանութիւնն որ ապականէ զնոսին կամ ՚ի ցնորս դարձուցանէ:

Վասն որոյ, Թմոլ հաչակեսցի բարձրութիւն և գերազանցութիւն հանճարոյ ձերոյ, մեծ իմն խնամոտութիւն ընծայեսցէ զձեզ իբրև զզարդ և զսքանչելիս աւուրց ձերոց. եթէ արտաքոյ Աբեթ լսեն փառքդ, եթէ որ միայն ՚ի վեր ամբառնայ զսիրտս՝ կրօնքն, չկայ նորա առաջին հիմն, առաջին արիած փորձութեան կործանեսցէ զամենայն շինուածդ խնամոտասիրութեան և պատիր զգօնութեան. այն ամենայն մտրմնաւոր մոլեք և նեցուկք քանդեսցին ընդ ձեռամբ ձերով՝ անպիտանացեալ առ աղէտս ձեր. որոնեսցին մեծամեծ պարծանքդ ՚ի սրտաբեկութեան ձերում, և փառքդ այլ ոչ ևս լսեն՝ բայց բեռն յաւելեալ բարդեալ ՚ի տառապանս ձեր՝ առաւել անտանելի գործել ձեզ զայնս: Պարծի աշխարհ առնել երանելիս, բայց կրօնք միայն կարէն զմեզ մեծ կացուցանել և ՚ի թշուառութեան անդ մերում:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Առաջին յաղթանակ Յիսուսի, կանգնեալ ՚ի վերայ չարութեան նախանձու, և ՚ի վերայ ամենայն ձաղանաց՝ զոր յարոյց նմա ՚ի թշնամեաց նորա. բայց յաղթեաց և մահու, և գերեաց զառաջին գերեվարն ամենայն մարդկան, և դարձոյց ՚ի մեզ զամենայն գերապանծ իրաւունս՝ յորոց անկեալն էաք, և անդրէն պարգևեաց մեզ շնորհօք զյաղթութիւն ՚ի վերայ կարեացս, զոր ընդ անախտութեանն կորուսաք:

Երկրորդ առաւելութիւն կրօնից, վերապոյն կարեաց ամբառնալ զմեզ, որ բարձրապոյնն է ՚ի վերնում փառացն՝

յոր հնար լիցէ հասանել մարդոյ յերկրի ասա: Ա՛յր, եղբայրք իմ, ՚ի նանիր ոանհար լինի աշխարհ բարեպաշտութեան զօր ամենայն անվիտ կառավանօք, ՚ի զուր գրեթէ ամօթ հա մարի առն բարւոյ զառաքինութիւն՝ առ ՚ի զախտին թա քուցանել զամօթ. ընդունայն իբրև ակարութիւն ինն և վտանգ փառաց ցուցանէ զայն՝ մանաւանդ մեծամեծաց. վայրապար համարձակէ նոցա զախտան մեծամեծար օրինա կօք առաջնոցն, և պատմութեամբք թագաւորաց՝ որ զա նառակութիւն վարուց միաբանեցին ընդ հքոյ թագաւո րութեան և ընդ փառս յաղթանակաց և աշխարհակալու թեանց. ախտաւորութիւնք նոցին հասեալք մինչև առ մեզ՝ և ազգաց յազգս յիշատակեալք, եղիցին մինչև ՚ի կատա րած խայտառակ նկարագիրք յերգուսն փառաց հոյանուն հանդիսից նոցին և յայպանուսն պատմութեանցն:

Կա և ըստ չափոյ բարձրութեան նոցին՝ յանարգութիւն արկանէ զնոսա վարուցն անառակութիւն. Պապիա նորա ան գոանէցաս և փառք նորա էցան անարգանօք [1], ասէ Հոգին Աստու ծոյ: Թող զի աշխէհան նոցա՝ կանգնելով զնոսա ՚ի վերոյ գլխոց մերոց՝ յանգիման կացուցանէ զախտս՝ որպէս և զան ձինս նոցին՝ աչաց բազմութեան. քանիօն չիցէ ամօթ, յոր ժամ որ ՚ի բարեկարգութիւն կարեաց ամբոխին ընտրեալքն են՝ ինքեանք լինիցին անարգ խաղալիկ ախտից անձանց և բութեանց, և զօրութիւն և իշխանութիւն և պատկառանք օրի նաց ՚ի նոսա հաւատացն՝ որ այլ ինչ օրէնս ոչ ճանաչեն՝ բայց զկայս յանգիման արհամարհութիւն ամենայն բարե վայելչութեանց, և զնութեանցն խեղեչութիւն: Փոխանակ զի պարտ էր նոցա ուղղել զվարս հասարակաց, նոքա զեղծու ցանեն զայն. և փոխանակ զի ՚ի պաշտպանութիւն առաքի նութեան առեալք են առ ՚ի ՅԱստուծոյ, ախտից պատրա պարան լինին և օրինակ:

Ամենայն փառք մարդկելոյն չունի բնաւ սրբել զկնեղան՝

1 Ա Մակ. Ա. 42:

զոր արկանէ ՚ի նոսա վարուցն անկարգութիւն և մոլութիւն ախտից· պերճախօսչ յաղթանակք ոչ ծածկէն զծանակառնա ախտիցն· գովին արարուածքն, և պարապաւ անձինն· յամենայն ժամանակս երևեալ է, զի անուն հոյակապ՝ առ վարուք դիւցազնին նսեմանայ, և սարդենիք իբր՝ խամրեալ թառամին յերեսաց հիքութեանց իւրոց· աշխարհ՝ արհամարհոտ թուեցեալ առաքինութեան՝ համայն զայն ևեթ յարգէ և մեծարէ· արձանս ամբարտաւանս կանգնէ մեծայաղթ քաջութեանց աշխարհակալաց, հնչեցուցանէ ընդ ամենայն ղդրուագսն հռչակ, երդ լինի քերթողական մեծապանծ նուագէ զնոսա և անմահացուցանէ· ամենայն Ա.քի՛ւնեաս ունի զիւր Համերոս· Հարատարախօսութիւն թափէ զամենայն ոյժ իւր և ղչօրութիւն ՚ի փառաւորել զնոսա· գովութեանցն յօրինուածք՝ ընդհին առլորութեան և անափառութեան, իսկ ՚ի ծածուկ զարմացումն և սերտ և անկիւղծաւոր գովեստք՝ առաքինութեան և առուգութեան միայն ընծային:

Եւ արդարև յիրաւի· բախտ կամ յանդգնութիւն բառական գոյն առնել դիւցազունս, այլ առաքինութեան միայն է արս մեծամեծս կատարել· երկոց յոյժ նուազագունից է յաղթանակս տանել՝ քան անձին յաղթել· դիւրագոյն է յոյժ աշխարհաց տիրել և նուաճել զազգս՝ քան զախտ մի հնազանդել· այսմ միտքան է և հեթանոսացն բարոյական: Մարտք պատերազմաց՝ որոց առաջնորդէ արութիւն, քաջասրտութիւն մեծ և գիտութիւն զինուորական, փարթամ արարուածք քննադատից են, և գիւրին է ՚ի համար զայնս արկանել յընթացս երկայնաձիգ կենաց· և յորժամ ընդ ժամն լինչ ևեթ հարկ նոցն մեծ լինել, բնութիւնն ժողովէ զամենայն զօրս իւր, և հպարտութիւն՝ ընդ առաջ լինչ ժամանակ կարէ ընդ զառիթս առաքինութեան: Իսկ հաւատոցն մարտք՝ հանապազորդք են, գործ ընդ թշնամիս հասեալ է՝ որ ՚ի պարտութենէ անտի իւրեանց բողբոջել բուսանին վերստին: Եթէ վայրիկ մի թուլասցի՝

կորնչեա. յաղթութեանն իսկ վտանգք են. ոչ միայն չօգնէ ինչ հպարտութիւն, այլ և քան զամենայն ախտեանս քո՝ դաղանագոյն գոյանի. որ ինչ գքեզ է՝ ամենայն հակառակ քեզ զին մատուցանէ. սիրա քո ինքնին դարանակալ լինի քեզ. հարկ է անդադար ի կռիւ կալ: Միանգամայն իսկ ատացեալ, մարթի երբեմն ուժգին կամ բարեբախտ քան զքննամիս լինել, այլ մեծ ինն է յոյժ ի վերայ անձին զօրանալ միշտ:

Սակայն այդ իսկ են կրօնիցն պարծանք. Ճարտարմունութիւն իմաստասիրաց հասանէր կայր ի վերայ ամենեցուն կարեացն, բայց ոչ ուսուցանէր պարտել զնոսա, և Ճանաչակալ պատուիրանքն իւր՝ գովութիւնք առաքինութեան էին՝ քան ախտին դարմանք:

Ի պարծանս և ի յաղթանակ կրօնիցն՝ սիրոյ իսկ էր սպառել ամենայն մեծի հանճարոյ և զօրութեան մարդկեղէն մատց՝ յառաքինիս յարդարել զմարդիկ: Եթէ Սոկրատ և Պղատոնք չէին եղեալ վարդապետք աշխարհի յառաջ քան զՅիսուս, և ձեռն արկեալ վայրապար ի կըրթել զվարս և ի խրատել զմարդիկ լսկով զօրութեամբ բանի, զոյր մարդոյն՝ մեծութեան իմաստութեան իւրոյ դրել ի վտառս զառաքինութիւն, կամ նորին իսկ առաքինութեանն գեղոյ. բայց քարոզքն իմաստութեան այնոքիկ՝ չյօրինեցին իմաստուն, և պարտ էր՝ զի անոսի Ճաշակք իմաստասիրութեան՝ նոր իմն յաղթանակս պատրաստեսցեն Ընորհոյ:

Նա հուսկ ուրեմն եղոյց աշխարհի զՅիսմարիսն իմաստուն՝ զոր ամենայն պերճութիւն և հանդերձանք մարդկելէն զգօնութեան՝ անդուստ ի վերուստ ի վաղ ժամանակաց դուշակէր մեզ: Զվտառս իւր զամենայն ոչ ամիսոխեաց նա՝ իբրև վիմասատասիրութիւնն՝ ի ջանալ կազմել հաղիս թէ մի եւեթ այնպիսի ի մէջ մարդկան ի դարս իւրաքանչիւր, այլ եղից խոնեաց նոքօք զբազմաքս, զՅոգատարութիւնս, զանապատս. և սիրելիք համօրէն եղեն նմանաւ նոր իմն վարժա-

ըան, յորում քարոզեաց նա զխնամատուԹիւն առ ամենայն մարդիկ՝ ի հրապարակս ժողովրդեան [1]: Ոչ՝ ի կիրԹ միայն և բարեխըսաս ազգաց ընտրեաց նա իւր խնամատուն. Յոյնն և խուժդուժ, հեռվմայեցին և սկիւԹացին առ հասարակ հրաւիրեցան չխնամատարկուԹիւնն ատտուածային. ոչ գիտեաց նա և ԹԷ պահեաց զբարձրաշուք տեղեկուԹիւն իւրոց խոստմըդոցն. պարզամիտն իրև զհանճարեղն մարգարէացաւ, և տգէտք անգամ եղեն նորա վարդապետք և աւաքեալք. վայել խակ էր Ճշմարիտ խնամատուԹեան՝ լինել ամենայն մարդկան խնամատուԹիւն:

Զինչ և ասացից. ուսումն իւր անմիտ էր առ երեսս, և խնամատարեալք զամբարտաւան միտս հնազանդեցին այսմ չիմարուԹեան սրբոյ. ոչ այլ ինչ քարոզէ նա, բայց խաչս և չարչարանս, և կայսերք աշակերտեցան նմա. նա միայն եկն ուսուցանել մարդկան ԹԷ սրբուԹեան և խոնարհուԹեան և ժուժկալուԹեան մարԹի բազմել՝ ի գահ, և աԹոռոց կարեաց և հեշտուԹեանց՝ լինել աԹոռ առաքինուԹեան և անախտուԹեան. ոչ պարծանք կրօնիցն ատտուածեղինոց:

Սակայն, Տէր արքայ, եԹէ բարեպաշտուԹիւն մեծամեծաց փառք են կրօնից, մեծամեծաց զՃշմարիտ փառան կրօնք միայն նիւԹեն: Յամենայն պատիւս նոցա առաւել պանծալի՝ առաքինուԹիւնն է. Թագաւոր որ իշխան ախտից իւրոց իցէ, որ յանձին իւրում՝ ուսեալ իցէ զհրամանատարուԹիւն՝ ի վերայ այլոց, որ ոչ կամիցի ճաշակել ինչ զիշխանուԹեանն՝ բայց ըստ հոգս և զնեղուԹիւնս զոր պարտքն պահանջեն. որում փոյթ իցէ զիւրոց յանցանացն քան զանոնց գովուԹեանց՝ որ զնոսա յառաքինուԹիւն կերպարանեն յաչս իւր. որ միայն չնորհս ինն սեփական իւրում կարդին համարիցի՝ լինել օրինակ բարի ժողովրդոց, զոր և պարտի խակ. որոց չգուցէ ինչ սանձ և ոչ օրէնք ըղձից իւրոց, բայց ամենայն ըղձից սանձ գնիցէ

1 Առակ. Ս. 20. Ը. 1, 3, 4:

զնոյն ինքն զօրինան. որ տեսեալ զնոսա զամենայն մարդ կազմ ՚ի ապաս ցանկութեանց նոցա, ոչ յայլ ինչ զանձն համարիլն կարդեալ՝ բայց ՚ի պաշտել զպէտս նոցին. որ կարօղ գտլով խառնաւալար առնել զամենայն, յօրինաւորացն անգամ հրաժարիլն վայելից. միով բանիւ, որում շուրջ կայցեն ամենայն հրապոյրք ախտից՝ և ինքն համակ զտաք քինութիւն նոցա ընդդէմ բերիցէ, Թագաւոր ոք այսպիսի՝ հրաշափառագոյն է ՚ի աքանչելիս՝ զոր ցուցանիցեն աշխարհի հաւատոք. մի օր ևեթ յաւուրց նորա առաւել փառացն արարուածս ՚ի հաշիւ արկանէ քան զերկայն ասպարէս ախեզերակաւլն. մին՝ դիւցազն է միոյ աւուր, միւսն՝ բովանդակ կենաց:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ա յտպէս Յիսուս յաղթէ այսօր մեղաց, այլ յաղթէ և մահու. բանայ մեզ զդրունս անմահութեան՝ զոր փակեցին մեղք, և ինքն իսկ ծոց գերեզմանին ծնանի զամենայն մարդիկ ՚ի կեանս յաւիտենականս:

Սաստ է այս վերջին՝ պատկ յաղթանակի կրօնից: Ամպատրաստութիւն ՚ի նոյն վախճան ինքեր զմարդ և զանասունս, ամենայնի հարկ էր մեռանել ընդ մարմնոյն. և այն էութիւն աղնուական՝ որում միայն է ճանաչել և սիրել, ոչ այլ ինչ էր՝ բայց անարդ կոյտ ինչ կաւոյ գուհայ ՚ի դիպուածոյ առեալ կերպարան, և դիպուած ևեթ լուծանելոց էր զայն աննորոգելի: Սնոտի պաշտամունք հեթանոսականք խոստանային նմա ըստ գերեզմանն անդր երանութիւն ինն պատրատրդ, յորում սնոտի ցնորք զգայութեանց գործելոց էին ոգեյն իսկ զերջանկութիւն մարդոյ՝ որում հաւատոյ իրօք միայն գոյ լինել երանիկ:

Կրօնք դրունս բանայ մեզ աղնուագոյն և բարձրանշան

ակնկալութեանց. հաւուցանէ մարդոյն զանմահութիւն, յորմէ կասկած կամքը զնա վինչհաւատոյութեանն ամպարըշտութիւն, և՝ ի տեղի առատապէսպատուհամ դաշտացն և տղայամիտ տեսլեանց երանութեան՝ յորս ցնորեալ դանդաչէը պաշտօնն նանրահաւատ, փոխանակէ զանապատ և զանվախճան ժառանգութիւն դերադոյ բարեաց:

Բայց անմահութիւն՝ անուշակ յոյս հաւատոց, հաւատոց միայն է խոստացեալ. աւետիք իւր՝ վարձք են իւրոց պատուիրանացն. և առ յաւիտեան մի մեռանիցի՝ և և առաջի մարդկան՝ պարտ է կեալ ըստ Աստուծոյ:

Այո՛, եղբարք իմ. նմին խակ անմահութեան անուան, զոր ընդունայնութիւն աւետէ յաշխարհի յուշ յիշատակի մարդկան, չմարթեն մեծամեծքն լինել արժանի արատաքոյ առաքինութեան:

Գրեթէ ցանգ խոչ և խութ և օրհասաբեր կատարած է վիառաց նոցա՝ մահն. անոտի գովեստք՝ որովք պատրեալքն էին՝ ի կեանս իւրեանց, գրեթէ նոյնժամայն ընդ նոսա ի գերեզման տապանին, ոչ երկարակեաց լինէ քան զնոսա լեալ. կամ՝ թէ և մնայցէ լինէ դոյզն նշմար՝ ի մարդիկ, երթեալ շնորհս կալցին չարութեան պարտաւէլեացն՝ քան զբուսաւոյն ընդունայնութեան. գովութիւնք նոցա՝ զերեսաւեաց նոցին ղկեանս կեցին. խակ իբրև ոչինչ կարեն, ոչ լինչ լինին և այնք. շողոմաբարբք խակ նոցա՝ դառնան լինին նոցա պախարակիչք, զի սուտակատպատութիւն յաւերախտութիւն փոխի հանապազ. նոր ակնկալութիւնք՝ նոր ինն լերզու ստեղծանեն. յաւերակս փառաց գնացեալն՝ կանգնին փառք նորեկ կենդանւոյն. ի կողոպուտս նոցա և՝ ի լուսութիւնս պաճուճի ամոռակալն իւր: Մեծամեծքն բուն խակ խաղալիք են ցանկութեանց մարդկան. փառաց նոցին չիք լինչ հաւատոյ հաստատութիւն, ամէն կամ՝ նուաղէ ըստ շահի գովելեացն:

Քանի թագաւորք հուչականունք՝ ի կեանս՝ չթողին յետնոցն և ոչ զանուն իւրեանց: Եւ զինչ նկեն վէպք ոտրու-

թեանց և պետութեանց, քան խուն լինչ նշխար անուանց և արարուածոց՝ վերծեալ յանթիւ խառանէ անսի թաղելոց յանչնչաւակութեան խակզբանէ աշխարհի:

Թող կեցցեն ըստ Աստուածոյ, և յաւիտեան մի կորիցէ անուն նոցա յուշոյ մարդկան. աստուածապաշտ թագաւորք անջնջելի դրոշմեալ կան՝ ի դիրս յիշատակաց սիեզերացոյ: Յաղթանակք և աշխարհակալութիւնք՝ ամենայն դարուց և ազգաց ութեանց են, և գոգցես նմին եղծանեն զմիմեանս՝ ի պատմութիւնս մեր. իսկ մեծատպաւոր գործք բարեպաշտութեան՝ էքնապատիւք, պահեն միշտ անդ անհատաբար զձաձանչ նշուլից իւրեանց: Իշխան բարեպաշտօն որոշի միշտ առ յատկաց՝ ի խառն այլոց իշխանաց. գլուխ իւր և անուն՝ ի վեր և բարձր է քան զամբոխն զայն ամենայն, որպէս Սաւուլն բարձրանայր քան զամենայն ժողովուրդս ցեղիցն. և ըստ հեռանալ երթայ և աճէ ևս փառք նորա, և որչափ յեղծումն և յատկանութիւն գնայցեն դարք, նա այնչափ առաւել նմին տեսիլ մեծապանծ լինի իւրով առաքինութեամբն:

Այո՛, Տէր ազգաց, դուեթ մուտացոնք եղեն անուանք առաջնոց աշխարհակալացն, որ արկին՝ ի Գալիլեա զնախակին հիմունս միահեծան տէրութեանդ. առաւել առատապէսօք և վիպասանութեամբք են ծանօթ քան պատմութեամբք, և ինդրական խակ է՝ թէ նոքօ արժան կարծել զնոսա՝ ի համարի մեծատառ նախնեացն քոց. իբրև թաղեալ նմին մնացին՝ ի հիմունս անդ տէրութեանն՝ զոր կառուցին. և քանզի նոցա՝ որ ձգեաց հասոյց մինչև յորդիս որդւոց զտէրութիւն ազգայութեանն, ոչ զօրեաց յաւէժացուցանել զնշխատակ նոցին:

Խակ առաջին թագաւոր, որ ընդ իւր բազմեցոյց զաստուածապաշտութիւն՝ ի գահն գալիլեական, անմահացոյց զամենայն պարծանս իւր՝ քրիստոնեայ անուամբն: Սերտիւ պահեաց Գալիլեա զնշխատակ մեծին Կլովիսի. հաւատքն եղեն գոգցես առաջին և անվրէպ ժամանակ պատմութեան

թագաւորութեանն, և մեք յայնմ օրէ սկսանիմք ձանաչել զնախահաւս քո յորմէհետէ սկսան և նոքա ձանաչել զՅիսուս Քրիստոս:

Թագաւորքն սուրբք որոց անուանքն գրեալ են 'ի յիշատակարանս մեր, լինիցին ցանգ մեծամեծար շուք թագաւորութեանն, և շքեղ օրինակք դարուց 'ի դարս աւանդեալ յաջորդացն իւրեանց:

Զառաջին հայեցուածս աչաց քոց, Տէր արքայ, սկզբնեալ է'ի վարս բարեպաշտին այնոցիկ արքայից՝ քոյոց նախնեացդ. հանապազօր եւանդն ածէն քեզ յառաքինութիւն 'ի ձեռն մեծազօր օրինակացն: Յիշեա զմեծն Կարոլոս և զԼուդովիկն սուրբ, որ պայծառացուցին զձաձանչ թագիդ զոր կրես՝ անեղծական փայլմամբ արդարութեան և բարեպաշտութեան. և զայս յեղյեղեն զօրհանապազ յունկն մեծութեանդ՝ զգօնութեանն խրատք: Մի և այդչափ խակ 'ի վեր ելաներ. մերձ ես յօրինակս կարևորս քեզ՝ որպէս և սիրելիս, և 'ի մօտագոյն ականէ բղխեն յերակս քո բարեպաշտութիւն՝ ընդ արեան հօր բարեպաշտի և մեծաշուք հաւու հօրդ:

Դու միայն ես, Տէր արքայ, դահու նոցին պայազատ. ինչ թէ և առաքինութեանցն լինիցիս. ինչ թէ մեծապանծ օրինակդ կենդանասցին 'ի քեզ նմանութեամբ առաւել քան անուամբ. ինչ թէ լինիցիս և դու օրինակ յաջորդացն քոց թագաւորաց:

Եթէ դուք դորովոյ մերոյ ոչ պատրէ զմեզ, եթէ մանկութիւն այնքան խնամովք և ընդ այնպիսի ձարտար ձեռօք դաստիարակեալ, յորում բնութեան ազնուականութիւն քան զկրթութեանն կանխել յառաջել թուի զօր ամենայն, ոչ յընդունայն ըղձապատում գուշակութիւնս հանէ զսենչանս մեր, այժմէն իսկ ահա երևի մեզ այսպիսի յոյս, այժմէն առեանեմք յօրացեալ 'ի հեռուստ զառաջին նշոյլս հանդերձեալ բարեկենդանութեան, այժմէն նախնեացդ վիառաւորութիւն նկարեալ 'ի ձակատդ աւետաւորէ մեզ զմեծամեծ

բարեմասնութիւնդ։ Արդ՝ ո՛ տայր, Տէր ալքայ, – և այս ինձ բովանդակիւ զամենայն –, ո՛ տայր թէ յաւուր միում այնպէս մեծ լինիլիր, որպէս եաղ մեղ սիրելի։

Մեծդ Աստուած, եթէ այս իմ ևեթ ուխտք և խընդրուածք էին, վերջինք անշուշտ՝ զորս պաշտօնն իմ, կապեալ այսուհետև՝ գաղանիւ խորհրդովք աեաչուելեանդ՝ ի ի հոգս միոյ յեկեղեցեացդ [1] քոյ, ներսէ ինձ մատուցանել քեզ ի վեհավայր աեղւոջս, եթէ իմ միայն ուխտք և պաղատանք էին այսոքիկ, Էհ, ով եմ ես՝ զի յուսացայց թէ եղանիցեն մինչև յաթոռդ քո։ այլ ազերսք են այսոքիկ թագաւորացն սրբոց՝ որ հովուեցին պետութեանս, և արկեալ զնոցա իւրեանց առաջի յաւիտենական աեղանոյն առ ոտս Գառինն, խնդրեն ի քէն վասն մեծաշուք մանկանս զպատկն արդարութեան, որում ինքեանք եղեն արժանի։

Աղերսք են մանաւանդ բարեպաշտօն ալքայազինն՝ ծնողի սորա, որոյ անկեալ՝ որպէս յուսամք՝ յերկինս առաջի երեսաց փառաց քոց, անլռելի պատասխի ի քէն՝ միոյ միայնոյ ժառանգիս թագին իւրոյ՝ լինել և ժառանգ շնորհացն և ողորմութեանց՝ որովք առնա լինքն կանխեցեր յաւուրս ջադոյն։

Աղերսք են ամենեցուն սոցա խնդ ունկնդրացս, որոց հաւատացեալ զնոսա մանկութեան սորա, կամ կապեալք անընդմիջելի ընդ վեհաւէս անձին իւրում, ամենեն առաջի քո զսիրտս իւրեանց, որպէս զի մանուկս այս մեծագին, զոգեաս որգի եղեալ հեծութեանց մերոց և արտասուաց, ոչ միայն անկորուսս պահպանեսցի, այլ և փրկութիւն եղիցի իւրում ժողովրդեան։

Զինչ և ասացից։ ազերսք են այսոքիկ, ով Տէր, զոր ազգն ողջոյն ուղերձէ առ քեզ այսօր ընդ իմ բերան, ազգ՝ որում հովանի եղեր խակղբանէ, որ և ի վերայ ամենայն մե-

1 Զի ի նմին 1717 ամի բեմբասացութեանս ամբարձաւ յեպիսկոպոսական աթոռ Կէրմանոյ։

ղաց իւրոց՝ մանն է տահաւէն ծաղկաւէտ՝ Եկեղեցւոյ քոյ սրբոյ :

Փակիցես, մեծդ Աստուած, ղգուշթս ողորմութեանց քոց՝ ընդդէմ այսչափ պաղատանաց : Աստուածդ զօրութեանց, դարձ արդ առ մեզ. Աստուածդ զօրութեանց, դարձ[1] : Հայեաց 'ի բարձանց երկնից, և տես՝ մի զանտառակուսիսն՝ զայտանի և զգազանի, այլ զաղէտս առաջին քրիստոնեայ թագաւորութեանն, զայդօրայս սիրելւոյ՝ զոր ձեռն քո անկեաց, և այնչափ վկայից արեամբ առոգեցար. Հայեաց յերկինից և տես, այդ արա այգեոյս այսմիկ զոր փոխեաց ազ քո : Արկ 'ի վերայ նորա զառաջին աչս ողորմութեանդ. և եթէ մեղք մեր տահասցեն տահաւէն դարձուցանել զերեսս քո 'ի մէնջ, գոնեայ անմեղութիւն շնորհաշնորհ մանկանս զոր հատուր 'ի վերայ մեր, հրաւիրեսցէ և տացէ զքեզ ժողովրդեան քոյմ. Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա 'ի քեզ :

Ընտ իսկ տառապեցուցեր զմեզ, Աստուած ահաւոր. դարձիր ընկալեա զարտասուս՝ զոր տան մեզ հոսել այնչափ գանգ և հարուածոք հեղեալք 'ի վերայ մեր 'ի սրտմտութենէ բարկութեան քոյ. վոխանակ աւուրցն ցաւոց և ցասման և վրիժուց՝ շնորհեա աւուրս ուրախութեան և գթութեան. ուր առաւել եղեն պատուհասքդ՝ առաւելեսցեն շնորհք քո, և ցանկալի մանուկս լինցի մեզ պարգև՝ 'ի դարման կորստեանցս :

Արա զսա, Աստուածդ մեծ, թագաւոր ըստ սրտի քումմ այս է՝ հայր ժողովրդեան իւրոյ, Եկեղեցւոյ քումմ պաշտպան, օրինակ վարուց աշխարհին, խաղաղարար մանաւանդ քան յաղթօղ ազանց, դրացեաց իւրոց միշտդ երեւարար՝ քան թէ ահ և երկիւղ. և զի Եւրոպէ առհասարակ նախանձեսցի ընդ երանութիւնս մեր, և յառաքինութիւնս սորա խանդաղատեսցի առաւել, քան թէ ընդ յաղթանակս սորա և ընդ աշխարհակալութիւնան լինելի նախանձաբեկ :

1 Սաղմ. ՀԹ. 15, 16 :

Լուր, Աստուած իմ, սիրալիր և արդար աղաչանաց. և ժամանակեան պարգեւքս՝ լեցին մեզ առհասարակեայ պատրաստելոցդ մեզ՝ ի յաւիտեանս. Ամէն, եղիցի:

ՎԱԽՃԱՆ ՓՈՓՐԻԿ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ ՄԱՍԻԼԵՈՆԻ

ՊԵՏ. ԼԱՆՐԱՑԻՆ ՓՐԱԳԻՐԱՆ
ՀՕՕ. ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ
ՀԱՍՍՌ Ա.Գ.Մ.ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
Ա.Գ.Մ. Ա. ՄՅՈՒՆԻՔԻ
ՄՇԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԱՆԿ

ԳԱՐՈՋ	Ա.	Ի ծննի Տեառնընդառաջին	էջ 7
—	Բ.	Յառաջին կիւրակէն քառասնորդաց	» 23
—	Գ.	Յերկրորդ կիւրակէն քառասնորդաց	» 43
—	Դ.	Յերրորդ կիւրակէն քառասնորդաց	» 63
—	Ե.	Ի չորրորդ կիւրակէն քառասնորդաց	» 79
—	Զ.	Յաւուր մարմնաւորութեան Տեառն	» 95
—	Է.	Ի կիւրակէն ձարչարանաց	» 113
—	Ը.	Ի կիւրակէի ծաղկազարդին	» 129
—	Թ.	Յաւուր մեծի ուրբաթուն	» 151
—	Ժ.	Յաւուր ծննի Զատկին	» 169

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐԻՍ

ՎՐԻՊԱԿ			ՈՒՂԻՂ
Էջ	Տող		
44	27	բաղուկ	բազուկ
161	12	արհարհեացեն	արհամարհեացեն
184	6, 7	’ի ’ի	’ի

3238